



Էջմիւթ 1997^d

ԾԳ ՏԱՐԻ

ԷԶՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՒՈՅ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

Հոկտեմբեր
1997



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ - Օջականախորհուրդ մտորումներ 3

ՊԱԾՏՈՆԱԿԱՆՔ

ԳԱՐԵԳԻՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ - Աստուծո

խոսքից հավիտենական ուժը հայ ժողովրդի կյանքում..... 6

Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական

Կոնդակները և օրհնության գրքերը 9

Հայրապետական գնահատություն..... 26

ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ - Սուրբ Թարգմանիչներ 27

ՍԻԼՎԱ ՍՈՒՔԻԱՆՅԱՆ - Մեծը ապրեցի՞մք ոչ միայն բանակ-

ներով ու հաղթանակներով, այլև մտքի ու հոգու մաքառում-

ներով..... 29

Թարգմանչաց տոմին Օջականում բացվեց առաջնորդարանի մոր

շենքը..... 34

Ս. Մաշտոցի անվան դպրատուն Օջականում..... 37

ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ - Ավարտաճառերի պաշտպանու-

թյուն Հոգևոր ճեմարանում..... 38

ԿՐՈՆԱ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՕԱՀԵ ԱՐՔ. ԱԾԵՄԾԱՆ - Դաթի փիլիսոփայի «Թաղազս
սաղմոսաց Դաթի»..... 46

ՀԱԿՈՐ ՔՅՈՍԵՅԱՆ - Եպիփան Կիպրացու՝ Ս. Մարիամ
Աստվածածնին նվիրված ներքուրդի հայերեն թարգմա-
նությունը..... 58

ԱԶԱՏ ԲՈԶՈՅԱՆ - «Կաթողիկոս Հայոց» տիտղոսի նորովի
ընկալումը Բագրատունյաց թագավորության անկումից հետո..... 72

ԹԱԹՈՒԼ ՍՅՈՒՆԻ - Ե՞րբ է կառուցվել Սիսիանի Ս. Գրիգոր
Լուսավորիչ տաճարը..... 82

ԳԵՂԱՄ ՄԻՀՐԱՆԻ ԲԱԴԱԼՅԱՆ - Տարոնի Ս. Հովհաննես
(Եղորդոտի) վանքի 1445 թվականի կոնդակը..... 88

ԽԱԶԻԿ ՍԱՄՎԵԼՅԱՆ - Ոսկան վարդապետի ուսումնառու-
թյունը Երևանում..... 106

ՍՈՒՍԱՆԻԿ ՆԱԶԱՐԵԱՆ - Նարեկացիական շարժման
վերելքը 18-րդ դարում..... 114

ԱՐՓԵՆԻԿ ՂԱԶԱՐՈՍՅԱՆ - Սեանի Անապատը ԺԷ-ԺԹ
դարերում..... 122

ԴԱՎԻԹ ԳՅՈՒՐԶԻՆՅԱՆ - Հայերենի քառակազմորեն
«ամուլ» կրոնական քառերը..... 138

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

«Վահագն և Անուշ Ծամլյան» հանրակացարանի Քիմեթրիսները	
Մայր Աթոռում.....	146
ՍԱՄՎԵԼ ՍԱՐԿԱՎԱԳ ԽԱՉԱՏՐԹԱՆ - Բաճաճայական ձեռ- նադրություն Գեղարքունյաց թեմում.....	147
Տ. Դավիթ քահանա Կյուրեղյան	149
ԱՐՄԵՆ ՍԱՐԿԱՎԱԳ ԽԱՉԱՏՐԹԱՆ - Բաճաճայական ձեռ- նադրություն Այունյաց թեմում.....	150
Տ. Սահակ քահանա Մարտիրոսյան.....	151
Տ. Գրիգոր քահանա Հովսեփյան	152
ԱՐՄԵՆ ՍԱՐԿԱՎԱԳ ԽԱՉԱՏՐԹԱՆ - Գորիսի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու խաչի օծումը.....	153
Ընդունելություններ Մայր Աթոռում.....	154
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ - Եկեղեցական բեմ. լուրեր	164
«Էջմիածին» ամսագրի մատենագիտությունը	168
ՆՇԱՆ ՍՐԿ. ՀՈՎՀԱՆՆԻՍԹԱՆ - Մատենագիտություն «Էջմիածին» ամսագրի (1974-1983).....	169
«Эчмиадзин» официальный журнал Эчмиадзинского Католикосата.....	194
«Etchmiadzin» official monthly of Holy Etchmiadzin.....	197
«Etchmiadzine» organe officiel du Saint-Siege d'Etchmiadzine.....	200

Խմբագիր՝ ԲԱԳՐԱՏ ԱՐԵՂԱ ԳԱԼՍՏՅԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԷՉՄԻԱԾԻՆ

«ԷՉՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Республика Армения, Эчмиадзин. Редакция журнала «Эчмиадзин».

Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie.

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՉՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ. ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՇ

ԽՍՐԱՊՐԱԿԱՆ

ՕՇԱԿԱՆԱՆՈՐՀՈՒՐԴ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

«Օշակա՛ն, զե՛հ Հայրերի գերեզման»... բայց միայն գերեզմա՛ն: Թող մեր ընթերցողին զարմանալի չթվա մեծ մտածող Միքայել Նալբանդյանի վերոբերյալ Հիացական խոսքերին այսպիսի Հարցով անդրադարձումը:

Եւրաքանչյուր Հայ մարդու Համար բնական արձագանքումով Օշականը դարձել է Հայ գրի, գրականության, մշակույթի և մտածելակերպի ձեւավորման խորհրդանիշը, որովհետեւ այն նույնացել է իր իսկ գրկում Հանգստյան օթեան գտած մեծագույն Սուրբի՝ Հայ ինքնության ճարտարապետ Մեսրոպ Մաշտոցի անվան Հետ: Եվ Սուրբ Էջմիածնի Հովանավորությունը վայելող այս փոքրիկ գյուղը Մաշտոցի այստեղ ամփոփումով վերածվել է պատվարի դեպի Էջմիածին, այսինքն՝ Հայ Հոգևոր կյանքի սիրտը բազմազան խորշակների ներթափանցման Հանդեպ: Հետևաբար, մենք մեր այս խոսքի մի քանի էջի սահմաններում ո՛չ նպատակ ունենք և ո՛չ էլ անհրաժեշտություն ենք տեսնում՝ խոսելու, քննելու, ներկայացնելու կամ Հարգանքի և խոնարհումի բառեր շոյելու անցյալի և Հնության պարունակի մեջ չընդգրկվող ու չտեղավորվող և Հայոց պատմության ու մշակույթի ամեն մի ծալքի մեջ անթեղված ու մշտապես ներկա Մաշտոցյան Հանճարի վերաբերյալ: Նախ, որովհետեւ որևէ Հայատառ գիրք ու Հայաբարձառ խոսք կենդանի և վավերական փաստն է Մեծ Սուրբի կատարած գործի, և երկրորդ՝ ցանկանում ենք խորհրդածել մեր այսօրվա մասին՝ Համեմատության սանդղակ ունենալով նրա կյանքը, գործը և ապրելու տեսլականը:

Դաժան ճակատագրի բերումով կամ չենք վարանում ասելու, մեր անփութության Հետևանքով, մեծավ մասամբ անՀայտության մեջ մնացել կամ էլ անուշադրության են մատնվել մեր սուրբերի ու պատմությունը կերտող երախտավորների գերեզմաններն ու շիրիմները: Թեև դրանք ինքնին ոչինչ չեն կարող ավելացնել նրանց վաստակի ու թողած ժառանգության վրա, բայց դրանց գոյությունը, խնամքը կարևոր են մեզ՝ այսօրվա ապրողներիս Համար, մի տեսակ մխիթարության, տեսողական Հիշողության և Հարատև ներշնչում լինելու առումով: Ծավոք, պատմության ծանր Հարվածները ստիպել են Հարցադրում կատարել, թե որտե՞ղ և ի՞նչ վիճակում են գտնվում այսօր Գրիգոր Լուսավորչի անմիջական Հաջորդների՝ Սահակ Պարթև Հայրապետի ու Թարգմանիչ Վարդապետների, Գրիգոր Նարեկացու և Ներսես Շնորհալու ու շատ շատերի շիրիմները: Բայց, չխոսելով ակամայից կորցրածի մասին և անդրադառնալով նրանց, ովքեր այսօր մեր շուրջն են գտնվում, ձայնում ենք, թե ո՞վ է Հիշում և խնամում մեր աչքերի առջև մացառներով և հողով ծածկվող Հովհան Օձնեցի

Հայրապետի, Մխիթար Գոշ և Վանական Վարդապետների, Մովսես Տաթևացի Հայրապետի ու այլոց Հանգստարանները: Անունների թվարկումն ու Հիշատակությունները կարելի է անվերջորեն երկարել ու գրեթե միշտ ապշահար լինել դառն իրականության առջև: Մի՞թե նրանք տառապեցիկ և կենդանի նահատակներ դարձան՝ սերունդների կամ ավելի ճիշտ այսօրվա ապրողներին անտարբեր վերաբերմունքին արժանանալու համար: Ճշմարիտ և շատ գեղեցիկ է այն արտահայտությունը, որ «նրանք լեռների լուռության և քարանձավների մթուխյան մեջ խորամուկ էին լինում իրենց հոգիներում և այնտեղ փնտրում Աստծուն այնպես, ինչպես ուրիշներ նույն լեռների վրա փնտրում էին ոսկի ու թանկագին քարեր»: Եվ տեղին է հիշել Գարեգին Վեհափառի խոսքը, թե «մեծերի նկատմամբ ունեցած հարգանքով, նրանք չէ, որ պիտի շահեն ու փառավորվեն, որովհետև նրանք իրենց գործով վարձատրված են արդեն իսկ Աստուծո և պատմության կողմից, այլ մենք է, որ պիտի մեծանանք, գորանանք և հարգանքի արժանանանք»:

Սակայն, փառք Աստուծո, որ այսպիսի տխուր բախտի հարժանացավ նաև Հայ լինելությունը որակի վերածող, Կոլյունի արտահայտությամբ՝ «Աստծուն, մարգարեներին ու առաքյալներին Հայախոս դարձնող» և անմարմին հնչյուններն ու բառերը մարմնավորող տիեզերալույս վարդապետ Մեսրոպ Մաշտոցի շիրիմը: Մի շիրիմ, որ կարծես իր մեջ խտացնում է մյուս բոլոր մեծերի հիշատակը՝ դառնալով հավաքավայր ոչ միայն երկրավորներին, այլև երկնավորների համար:

Սակայն ի՞նչ վիճակում էր գտնվում մեծ երախտավորի գերեզմանն ու նրա շրջափակը: Սրանից շուրջ 100 տարի առաջ՝ 1898 թվականին, Օշական, Սուրբ Մեսրոպի շիրմին ուխտի է գալիս երջանկահիշատակ Եղիշե արք. Դուրյանը, որ տխուր գույներով է ներկայացնում իրականությունը՝ մի փոքրիկ դյուղական վայրում, անշուք մատռանանման եկեղեցու մեջ, շուրջբոլորը գրեթե ամայի, միայնակ իր մարմարեինն կախարհչով ամփոփված Հանգչում էր Մեսրոպ Մաշտոցը:

1912 թվականի Թարգմանհաց տոնին այստեղ տեղի է ունենում ազգային-եկեղեցական մեծ հանդես, որի ընթացքում Գևորգ Ե Սուրենյանց Հայրապետը կոչ է ուղղում օջախանցիներին և ամբողջ Հայությանը՝ Հայ դպրության սկզբնավորողի անվան մի դպրոց կառուցել այս վեհավայրում: Հայրապետական կոչին հաջորդում է բուռն աշխատանքը և եկեղեցու հարևանությամբ վեր է խոյանում նաև մի փառավոր դպրատուն, բայց...

Պատմությունն ու ժամանակները այլ բան էին կանխորոշել: Մինչև վերջերս և՛ շենքը, և՛ ամբողջ տարածքը մնացել էին խճուկ և անմխիթար վիճակում: Վախի և սարսափի ծնունդ անտարբերությունից կարծես ժողովուրդն էլ ենթագիտակցորեն էր հիշում իր մեծագործ Վարդապետին, եթե չասենք, որ բոլորովին մոռացել էր թե՛ նրան և թե՛ նրա Հանգստակայանը: Բացի մի քանի աշակերտական պարզ շրջապատությամբ այցելություններից և տարեկան երկու անգամ տեղի ունեցող եկեղեցական

Հանդիսություններից, ո՞վ էր անդրադառնում հրաշագան շիրմին և նրա ներքո ամփոփված անամփոփելիին: Այո՛, այսպես էր, բայց Աստուծո տնօրինությանը փոխվեցին ժամանակներն, ու արժեքները սկսեցին վերազնահատվել նորոպի:

Օշականը ևս սպասում էր իր զավակների խնամքին ու հոգածությանը:

Եվ Գարեգին Վեհափառը իր առաջին իսկ ուխտադնացության ժամանակ, մեծ ցավ և վիշտ ապրելով այս տխուր վիճակի համար, ուխտեց այս վայրը, իր ներքին և արտաքին բովանդակությանը, վերածել Մեսրոպ Մաշտոցին վայել մի կենտրոնի, որտեղից հստակորեն և վայելուչ կերպով վերստին պիտի հնչի Այբ, Բեն, Գիմը. «Երբ ես, Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվելուցս Հետո առաջին անգամ այստեղ, եկա, աչքերս արցունքով լցվեցին, կարծեք սիրտս արյունեց, երբ տեսա այս շենքը ավերակ վիճակում, առանց տանիքի, առանց պատուհանի, առանց դռան: Կարծեք թե լքված, անտեր թողնված ու արհամարհված մի շենք էր: Կարո՞ղ էի դիմանալ, կարո՞ղ էի ես Հանդուրժել, որ Սուրբ գերեզմանի մոտ Մեսրոպ Մաշտոցի մի այսպիսի ավերակ մնա: Որտե՞ղ է մեր Հայությունը, ինչպե՞ս պետք է արտահայտենք մեր կապվածությունը մեր եկեղեցուն»:

Երկու տարիների ընթացքում, իրենց արդար վաստակով ապրող Հայ ազնիվ հոգիները ձայն տվեցին և ձեռք մեկնեցին Հայոց Հայրապետին՝ վերակառուցելով և՛ Մաշտոցի անվան դպրատունը և՛ նորակազմ Արաբա-ծոտնի թեմի առաջնորդարանը, որի առաջնորդանիստը Օշականն է:

Այսպիսին է պատկերը այսօր՝ Օշականը մի փոքրիկ գյուղից վերածվել է առաջնորդող կենտրոնի: Վեհափառ Հայրապետի տնօրինությանը, Սուրբ Մեսրոպի աներևույթ հովանավորությանը, այստեղ պիտի գումարվեն զանազան մշակութային, գիտական ժողովներ և ընդունվեն գործունեության տարբեր ծրագրեր՝ ի բարգավաճումն Հայ գրի, դպրության ու մշակույթի: Այստեղ պետք է գետնիվեն Ս. Սահակի, Ս. Մեսրոպի և մեր մյուս թարգմանիչ վարդապետների ու ոսկեդարյան շրջանի հոգևոր-մշակութային ժառանգությունը ներկայացնող արվեստի ստեղծագործություններ, հրատարակություններ և մի շարք այլ ցուցանմունքներ:

Սակայն այս գեղեցկատես ու փառավոր շինությունները պիտի կենդանանան մեր ուխտադնացությանը, ծնրադրումով և «իմը» լինելու հարազատության ու սեփականության զգացումով, այլապես այդ շենքերն ու պատերը պիտի մնան որպես սոսկ գեղեցիկ ու հերթական պատմական հուշակոթողներ:

Ս. Մեսրոպ Մաշտոցը սպասում է մեզ... ընթանանք դեպի «գերագոյն վարժապետին ուղք» և Ողիշե Դուրյան սրբազանի նույն անխառն զգացումներով «անգամ մըն ալ ծնրադրենք ու թախանձազին խնդրենք իրմէ»:

Ա, Բ, Գ-էդ աղուոր դաս մը տուր ինձի»:

ԱՍՏՈՒԾՈՒ ԽՈՍՔԻՆ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՈՒԺԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԿՅԱՆՔՈՒՄ

«Երկիր եւ երկինք անցնեն, բայց բանը իմ մի անցնեն»:

«Երկինքը և երկիրը պիտի անցնեն, բայց իմ խոսքերը սիտի չանցնեն»:

(Մատթ. Ի. 35)

Այս բառերը այսօր Սուրբ Պատարագի ըմթացքում կարդացված Ավետարանից են քաղված, Մատթեոսի Ավետարանից, ուր մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, այսպիսի խորը, ուժեղ արտահայտությամբ ասում է, որ հավիտենականը երկինքը և երկիրը չեն, հավիտենականը իր խոսքն է՝ ճշմարտությունն է, Աստուծո հայտնությունը և մարդու ընկալումը այդ հայտնության:

Գիտեք, հնավատացյալներ, որ այսօր, մեր Եկեղեցու Սրբազան Հայրերի տնօրինությամբ, Գյուտ խաչի տոնն է: Այն խաչափայտը, որի վրա խաչվեց Հիսուս, կորած էր: Չորրորդ դարի սկզբին Կոստանդիանոս կայսեր մոտ՝ Հեղինե կայսրուհու կողմից գտնվեց Գողգոթայից, և այդ գյուտը Եկեղեցու կյանքում մոր հայտնությունն առաջ բերեց: Եթե երբեք մեր Հայրերը այս բառերն են ընտրել՝ *«Երկինք և երկիր անցնեն, բայց բանը իմ մի անցնեն»*, ես այնպես եմ հասկանում, որ խաչը ըմբռնել են իբրև Հիսուսի-գերագույն խոսք: Բանը քաղը չէ, գիրը չէ, այլ՝ կյանքը, Աստված ինքն է իր խոսքը: Ոչ թե խոսքն ուրիշ է և Բանը՝ ուրիշ, այլ ինքն իսկ է Բանն Աստուծո, որ խաչով տվեց իր ճշմարտության գերագույն արտահայտությունը, սիրո, զոհողության այն արարքի միջից, որ այսօր դարձել է մեր բոլոր քրիստոնյաների նշանը, խորհրդանիշը՝ խաչը:

Ի՞նչ է նշանակում *«բանը իմ մի անցնեն»*: Ահավասիկ, մոտենում ենք այն տարրին, երբ պիտի ողջունենք Քրիստոսի ծննդյան 2000-ամյակը: 2000 տարիներ ի վեր Աստուծո խոսքն է տարածվում, մեթափանցում մարդոց կյանքի մեջ, և քրիստոնեության ուժը այդ խոսքի, Քրիստոսից բխած, Քրիստոսով արտահայտված, խաչով նվիրագործված և հարությամբ պաակված Բանն է խոսքը՝ Քրիստոս: Երևակայեցեք. ի՞նչ ունեին առաջին դարի քրիստոնյաները որպես քարոզության ուժ: Գիտություն՝ ունեին, հարստություն՝, քաղաքական ուժ, իշխանություն՝: Սրանցից և ոչ մեկը, որոնք աշխարհային ուժեր են: Ինչ որ ունեին, իրենց հավատացած ճշմարտությունն էր, իրենց խոսքն էր, Աստվածաշունչն էր, որ իրենց անձերի միջից քարոզվեց, և Աստուծո խոսքը միանեց մարդկությանը: Նիզակից, սրից, զենքից ավելի մեծ ուժը ճշմարտությունն է, որ պիտի ազատի մարդկանց:

Այդ խոսքը մահ գոյի մեջ ամփոփվեց, և այդ գիրը ճանաչվեց, կճանաչվի որպես *Սուրբ Գիրք*, իսկ մեր հայ ժողովրդի բառերով՝ *Աստվածաշունչ Մատյան*: Սուրբ Գիրքը դարձյալ այն ամենից գորավոր ուժն է, որով քրիստոնյաները կառուցեցին աշխարհում Աստուծո ճշմարտությունն արտահայտել գրի և արտասանված խոսքի միջից: Ծճարտությունը գիրը չէ, գրից անդին կյանքն է, որից ձևվել է գիրը, և գիրը, կյանքից ձևված լինելով, Քրիստոսի անձից բխած լինելով, կյանք է, ոչ թե գիտություն, ոչ թե ծանոթություն, ոչ թե հմտություն, այլ՝ ապրված կյանք և կատարված գործ: Այդ ճշմարտությունը Աստուծո է տրված մարդոց և մարդոց կողմից յուրացված ու իրագործված: Այս է քրիստոնեության գիրքը:



Սիրելի հավատացյալներ, հոկտեմբեր ամիսը մեր եկեղեցվո կյանքի մեջ ամենից հարուստ տոնական, ծիսական, սրբախոսական ամիսներից մեկն է: Այս ամսվա ընթացքում մենք ոգեկոչեցինք հիշատակը մեր Թարգմանիչ Վարդապետների՝ գլխավորությամբ Մեսրոպ Մաշտոցի. չորս Ավետարանիչների, 72 աշակերտների, եկեղեցական 12 մեծ Հայրերի, Հովհան Ոսկեբերանի: Բոլորն էլ Աստուծո խոսքի թարգմանները եղան իրենց ժողովրդին: Մեր հայկական գիրը ծնվեց Աստուծո խոսքի, ուժի նկատմամբ մեր ժողովրդի կարոտով, և այդ կարոտի, կարիքի գերագույն արտահայտությունը եղավ Սուրբ Մեսրոպ Մաշտոցը: Գտա՛վ գիրը, որպեսզի Աստուծո խոսքը թարգմանի, ժողովուրդի ձեռքը տա, ժողովուրդը կյանքից բխած գրո՛ւվ իր կյանքն ապրի: Ահա թե ինչու մեզ համար Սուրբ Գիրքը ամենից նվիրական գիրքն է եղել: Մեր հայրերը հայտարարեցին (երանի մեր թուր ժառանգների, սերունդների սրտի մեջ գրված լինեն այդ խոսքերը). «*Հայր մեր զՍուրբ Ավետարանը գիտեմք և Մայր՝ Առաքելական եկեղեցի Ընդհանրապան*» (Մենք իբրև հայր ճանաչում ենք Ավետարանը և իբրև մայր՝ եկեղեցին) (Եղիշե):

- Որդիներ՝ եմք այս ուխտի, - հարց տանք մեզ, - հետևո՞ւմ ենք մեր հորն ու մորը:

Եթե ոչ, ապա որտե՞ղ է մեր որդիությունը, ինչո՞ւ հայտարարեցինք այդ խոսքերը՝ իբրև եկեղեցվո հավատացյալների կյանքի ճշմարան:

Եկեք, հավատացյալներ, դառնանք իսկական զավակներն այդ սուրբ ծնողների՝ Ավետարանի և Ավետարանը կենդանի կերպով մեր ժողովրդի մեջ թարգմանող ու տարածող Առաքելական Սուրբ եկեղեցու:

Գիրը Սուրբ Գիրքը չէ, Սուրբ Գիրքը ավելի է, քան գիրը: Հոգին է, որ արտահայտվում է գրի միջից, ինչպես ասացինք քիչ առաջ և այժմ մեջքերում ենք ձեզ Պողոս Առաքյալի խոսքը. «*Գիրն՝ սպանանէ, այլ հոգին կենցուցանէ*» (Օրենքը, որ գիր է, սպանում է, իսկ հոգին՝ կենդանացնում) (Բ Կորնթ. Գ 6): Ահա Ավետարանը. մեր ժողովուրդը համբուրում է ո՛չ թե արծաթը, ո՛չ թե մազադաթը, այլ այդ հոգու հետ է հաղորդվում, որ այդ գրի, մազադաթի միջից փոխանցված է Քրիստոսից, մեր հայրերի ճամփով՝ մեզ թուրիս: Սուրբ Գիրքը պետք է կարդալ՝ այդ հոգու հետ հաղորդվելու, այլ ոչ թե գիտականություն ցույց տալու համար: Եվ նույն Պողոս Առաքյալը Կորնթացվոց թղթի մեջ ասում է. «*Քանզի մեման չենք ուրիշներին, որ Աստուծո խոսքի վաճառքով են զբաղվում*» (Բ Կորնթ. Բ 17): Ոչ թե ապրողն են, տերն են իրենց խոսքի, այլ վաճառականը, փոխանցում են խողովակի մեման, իրենք, սակայն, այդ խոսքով ներթափանցված չեն, կեղծ ավետարանիչներն են նրանք, ովքեր, առանց հաղորդվելու հոգու հետ, գրի ծանոթությամբ ուզում են իրենց ազդեցությունը տարածել ժողովրդի մեջ: Չեն հաջողի, չեն հաջողվի ^{իրենք} ~~իրենք~~ որովհետև հոգու հետ հաղորդությունն է կարևորը:

Եւ այսօր անձամբ ուղեցինք քարոզել այս բեմից, որովհետև այսօրը պետք է հայտարարենք Սուրբ Գրքի օր՝ մեր ժողովրդի հոգևոր կյանքի սնուցման և հարստացման համար: Այսօր մեզ հետ են Ֆրանսիայից և Նորվեգիայից եկած Աստվածաշնչային Ընկերության մեր սիրելի եղբայրները և քույրերը: Իրենք անցնող տարիներին գործավիճ կամգնեցին մեր եկեղեցուն՝ Սուրբ Գիրքը մեր ժողովրդի մեջ տարածելու համար: Սքանչելի գործակցության մի պատկեր առաջ եկավ:

Քիչ հետո վեհարանում մեծ ունեցք մի փոքրիկ հանդիսություն, որի ընթացքում իրենք էլ պիտի արտահայտվեն: Մենք պիտի ժողովորդին ներկայացնենք չորս Ավետարանիչների մեկնությունը եղող մեր ամենամեծ մտավորական, աստվածաբան հոգևորականներից Պատրիարք Օրմանյանի «Համապատում»: զիրքը: Ես վախազում եմ, որ մեր ժողովրդի զավակները այդ զիրքն ունենան իրենց անկողնու կողքի՝ իբրև թարգմանի՝ զիրք: Ավետարանը երբ կարդան, Ավետարանի հետ ման մրա մեկնությունը կարդան՝ մեր Եկեղեցու այդ մեծ, իմաստուն աստվածաբանի տված բացատրությունների միջից, որպեսզի ճիշտ հասկանան, հաղորդվեն Աստվածաշունչ Մատյանի հոգում:

Այսօր ես խոնարհաբար առաջի Աստուծո փառք եմ տալիս իրեն, որ, այս ամիսը չփակված, մեծ ունեցանք Սուրբ Գրքի գաղափարի, իմաստի, գործածության վրա մտախեղումի, ուշադրության կենտրոնացման այս գեղեցիկ առիթը: Իմ մաղթանքն է, որ մեր ժողովուրդն իմամա գործնականապես իր կյանքի մեջ արժևորել Ավետարանը, այլ ոչ թե ձևականորեն: Այն ժամանակ կարող ենք ասել. «*Երկինք և երկիր անցցեն, թայք թանք իմ մի՛ անցցեն*»:

Որքա՛ն քանդումներ եղան մեր աշխարհում, որքա՛ն եկեղեցիներ, պալատներ, դպրակներ, գրքեր, ձեռագրեր ոչնչացվեցին, սակայն Աստուծո խոսքը մնաց կենդանի և այսօր առավել ևս կենդանի է: Վերագարթոցի այս շրջանում եկեղեցիներում, հիմնադրոք դարի՝ մեր ոսկեդարի Հայրերի մյան, Աստվածաշունչը փոխադրենք մեր կյանքի մեջ և այն նկատենք մեր կյանքի ուղեցույցը, մեր Եկեղեցու պայծառությունը Քրիստոնեական ընդհանուր Եկեղեցու զարգացման և մեր ազգի հոգևոր առողջության ու բարոյական տոկունության համար, հավիտյանս հավիտենից. ամեն:

ԳԱՐԵԳԻՆ Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

26 հոկտեմբերի 1997 թ.

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

ԳԱՐԵԳԻՆ Ա

ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱՄԿՆԵՐԸ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐԸ

**ՍԻՐԵՅԵԱԼ ՈՐԴԻՈՅ ԵՒ ԴՍՏԵՐ ՄԵՐՈՒՄ ԵՒ
ՀԱՐԱԶԱՏԻՅ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅՍ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ ԺԻՐԱՅՐ ԵՒ ՅԱՍՄԻԿ
ԳԱՐՐԻԷԼԵԱՆՆԵՐՈՒՆ
ՈՐ Ի ՊԵՅՐՈՒԹ, ԼԻԲԱՆԱՆ**

Բազում տարիներ է ի վեր Ձեզ անձամբ ճանչնալու ուրախությունն ենք ունեցած և Ձեր մէջ գտած ենք ճշմարիտ և անկեղծ բարեկամներ և մեր ազգին, Եկեղեցիին և հայրենիքին նուիրեալ անձեր:

Դուք ապրեցաք բազում երկիրներու մէջ, ի Սուրիա, յԻրաք, ի Լիբանան, ի Կիպրոս, և ի Միացեալ Նահանգս Ամերիկայի: Հայու հարազատ նկարագրին համապատասխան պարկեշտ ու չարքաշ աշխատանքով, օրինակելի ջանասիրութեամբ ստեղծեցիք Ձեզի և Ձեր զաւակներուն համար բարեկեցիկ պայմաններ և եղաք տիպար հայ ընտանիք:

Դուք գիտցաք միանգամայն Ձեր սեփական ընտանիքէն անդին և վեր՝ Ձեր լիառատ և ամբողջական մասնակցութիւնը բերել նաև Ձեր Մեն Ընտանիքին՝ հայ ազգին և անոր տրուիտը սիրտն ու սնունդին մայրը եղող մեր Հայց. Առաքելական Սուրբ Եկեղեցիին: Ամենուրեք ուր ապրեցաք՝ Ձեր կեանքը ներդաշնակօրէն և օգտաշատ արդիւնաբերութեամբ խառնեցիք Ձեր ազգի և Եկեղեցիի կեանքին:

Վերջին տարիներուն, երբ մեր ժողովուրդի և մայր հայրենիքի տառապալից կեանքի դառնագոյն պահերէն, հայ ազգի դէմ գործուած ցեղասպանութեան և արքայի դժխեմ օրերէն ետք, տեսաք ձեր ազգի դարաւոր երազին իրականացումը Հայաստանի Ազատ ու Անկախ Հանրապետութեան հռչակումով, Ձեր հոգեկան անհոն ուրախութիւնը պերճախօս կերպով արտայայտեցիք զօրավիզ կանգնելով մեր մայր հայրենիքին և Մայր Աթոռ Ս. Էջմիածնին:

Ձեր նուիրումի ալազատ արտայայտութեանց պսակումը եղաւ Հայաստանի մէջ նորակազմ Արագածոտնի Թեմի Առաջնորդադանի վերակառուցումը Օշականի մէջ, Ս. Մեսրոպ Մաշտոցի համբուրելի շիրմի կողքին:

ի գնահատություն Ձեր երկար տարիներու բազմազան նուիրատությունաց և այս վերջին բարերարության՝ այսու Հայրապետական Կոնդակա Ձեզ կը շնորհենք Մայր Աթոռ Ս. Էջմիածնի բարձրագոյն կարգի շքանշանը՝

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԵՒՈՐԻԶ:

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Ձեզի, Ձեր զաւակներուն և թոռներուն պարզևէ քաջաոռողութեան, գործոց լիառատ և յարաճուն յաջողութեան և անսպառ երջանկութեան անխոյարհելի բարիքները:

Ողջ լիութիւն ի Տէր, գորացեալ շնորհօք Ս. Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ս
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 13 Հոկտեմբերի
Թամի Տեառն 1997 և ի թուին Հայոց ՌՆԽԶ
ի Մայրավանս Արքայ Էջմիածնի
Ընդ Քամարաւ Է/ 117

**ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՈՅ ԵՒ ԳՍՏԵՐ ՄԵՐՈՅ ԵՒ
ՀԱՐԱԶԱՏԻՑ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅՍ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾԻՆ
ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ ԺԻՐԱՅՐ ՏԵՐՎԻՇԵԱՆՆԵՐՈՒ
ՈՐ Ի ՄՈՆՐԷԱԼ, Ի ԳԱՆԱՏԱ**

Մեզի համար հոգեկամ ուրախութեան առիթ եղաւ Ձեզ ճանչնալ ի Գանատա Մեր կատարած հովուապետական անդրանիկ այցելութեան և Ձեր վերջերս ի Ս. Էջմիածին և ի Մայր Հայաստան կատարած ոխտազնացական այցելութեան առթիւ: Ձեր մէջ տեսանք մարդկային ազնուութեան ոգիին միացած հայկական ազգային առողջ և հարազատ ապրումներու տեր անձինք:

Գանատայի Հայոց Թեմի Բարեխնամ Առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Թովման Արքեպիսկոպոս Տէրտէրեանէն տեղեկացանք Ձեր բազմօգուտ ծառայութեանց մասին, զորս մատուցիք, և կը շարունակէք մատուցել, մեր թեմի Ազգային Առաջնորդարանին և եկեղեցական-կրթական-մշակութային առաքելութեան:

Բազում նուիրատուութիւններու և քարերարութիւններու պսակը եղաւ Ձեր վերջին քարերարութիւնը, որով հարիւր հազար ամերիկեան տոլարի իշխանական նուիրատուութեամբ մը մեծ սատար հանդիսացաք Հայոց. եկեղեցւոյ Հոգևոր Կեդրոնին՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնին:

Այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզ կը հոչակենք Մայր Աթոռոյս քարերար և ի զնախատութիւն Ձեր բազմարդիւն ծառայութիւններուն և զոհողութիւններուն՝ Ձեզի կը շնորհենք Մայր Աթոռ Ս. Էջմիածնի քարծրագոյն կարգի ջքանշանը՝

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԵՒՈՐԻՉ:

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած որ Ձեզի և Ձեր զաւակներուն և թոռներուն պարզէ ջաջառողջութիւն և երկար կեանք, որպէսզի արդարօրէն և լիովին վայելէք Ձեր քարերարութեանց հոգեշէն և ազգակերտ բարիքները և Ձեր զաւակներուն և թոռներուն մէջ տեսնէք պտղաբերումը Ձեր եկեղեցասիրութեան և ազգանուիրումի ոգիին և շարունակութիւնը Ձեր քարերարական գործունէութեան, ի վայելումն իրենց և մեր բոլորի Մայր եկեղեցիին և Մայր Հայաստանին:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն, և յաւետ օրհնեալ ի Մենք. Ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուալ կոնդակս ի 28 Հոկտեմբերի
Ծամի Տեառն 1997 և ի թուին Հայոց ՌՆԽԶ
Ի Մատակամս Արթուր Էջմիածնի
Ընդ համարաւ Ը/ 113

**ՍԻՐԵՅԵԱԼ ՈՐԴԻՈՅ ՄԵՐՈՒՄ ԵՒ
ՀԱՐԱՋԱՏԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅՍ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԻԱՐ ԷՏՈՒԱՐ ԹՈՒՄԱԵԱՆՅԻ
ՈՐ Ի ԳԱՀԻՐԷ, յԵԳԻՊՏՈՍ**

Բազում տարիներէ ի վեր ուրախութիւնն ենք ունեցած ճանչնալու Ձեզ և Ձեր ընտանիքը: Բաջատեղեակ ենք Ձեր ամբողջամուկը սիրոյն և ծառայութեան մեր հայ ժողովուրդի, յատկապէս Եգիպտահայ մեր սիրեցեալ համայնքի կեանքին, ազգային և մշակութային քնազաւառներուն մէջ:

Վերջերս սրտի խոր գոհունակութեամբ տեղեկացանք Եգիպտահայոց Թեմի բարեխնամ Առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Զաւէն Արքեպիսկոպոս Չիմչիմեասէն թէ արդէն աւարտած էք Ձեր ազգային սպասարարութեան առաջին յիսնամեակը:

Հոգեկան ի՛նչ խոր գոհունակութիւն է անդրադառնալ որ լոյս կէս դար Դուք Ձեր կայողութիւնները, ժամանակը, սէրն ու կապուածութիւնը, բարոյական և միութեական աջակցութիւնը անձնական և ընտանեական մասնակցութեամբ, անսակարկ ու անշահախնդիր և անվերապա կերպով ընծայած էք Ձեր պաշտեղի ազգին, եկեղեցւոյն և մշակոյթին:

Ի գնահատութիւն Ձեր բազմաբեղուն ծառայութիւններուն՝ այսու Հայրապետական կոնդակաւ Ձեզի կը շնորհենք մեր բոլորի Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

Ս . ՍԵՀԸԿ - Ս . ՄԵՍՐ ՈՊ ջքանշանը:

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Ձեզի և Ձեր նուիրեալ Տիկնոջ՝ Ամառիտին և Ձեր զաւակներուն ու թոռներուն շնորհէ քաջատոյջ և երկար կեանք, որպէսզի Ձեր համայն ընտանիքով շարունակէք Ձեր բարեւար և գործօն մասնակցութիւնը մեր ազգային - եկեղեցական, բարեսիրական և մշակութային կեանքին, և վայելէք Ձեր անձնուկ գոհողութեանք բարիքները մեր հայրենիքի և եկեղեցւոյ կեանքի բարգաւաճման և զարգացման պայծառ և պայծառացող ընթացքովը:

Ողջ լերուք ի Տէր, գորացեալ շնորհօք Ս. Հոգւոյն, և յաւետ օրհնեալ ի Մէնջ. Ամեն:

**ԳԱՐԵԳԻՆ Ս
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Տուա կոնդակա ի 6 Հոկտեմբերի
Թամի Տեառն 1997 և ի թուին Հայոց ՌՆԽԶ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ է/ 109

**ՍԻՐԵՑՅԵԱԼ ՈՐԴԻՈՅ ՄԵՐՈՒՄ ԵՒ
ՀԱՐԱՋԱՏԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՋ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԻԱՐ ՃՈՐՃ ՄԱԳԻՆԻՍԵԱՆԻ
ՈՐ Ի ԹՈՐՈՆԹՕ, Ի ԳԱՆԱՏԱ**

Արտի խոր գոհունակությամբ իմացանք Գանատահայոց Թեմի բարեխնամ Առաջնորդ՝ Գեղաշնորհ Տ. Յովնան Արքեպիսկոպոս Տերտերեանէն Ձեր բազում տարիներու հայկական հաւատարիմ ոգիին և պարկեշտ և տոկուն աշխատասիրութեամբ մասին:

Ձեր կեանքը Գանատայի մէջ սկսաք որբութեամբ Ձեր հայ ազգի դէմ գործուած ցեղասպանութեան հետևանքով: Տքնաջան աշխատանքով Ձեր ապրումսը շահեցաք և ապրեցաք հայու վայել և օրինակելի կեանքով:

Վերջերս ազնի գաղափարը ունեցաք Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Կոտայքի Թեմի գործունէութեան համար նուիրելու Մաղկածորի մէջ ամառային ճամբարի շէնք մը:

Ի գնահատութիւն Ձեր բարեբարութեան՝ այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

Ս. ՆԵՐՍԷՍ ՀՆՈՐՀԱԼԻ շքանշանը:

Կ'աղօթենք առ Բարձրեայն Աստուած, որ Ձեզի շնորհէ քաջատոյջ և երկար կեանք, որպէսզի արդարօրէն վայելէք Ձեր գոհողութեանց բարի արդիւնքները ի վայելումն հայ ժողովուրդին, յատկապէս անոր մատղաշ սերունդին:

Ողջ լըրուք ի Տէր, գորացեալ շնորհօք Ա. Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

**ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Տուաւ Կոնդակս ի 8 Հոկտեմբերի
Յամի Տեառն 1997 և ի թուին Հայոց ՌՆԽԶ
ի Մայրավանս Արթը Էջմիածնի
Ընդ համարաւ Է/ 114

**ՍԻՐԵՅԵԱԼ ՈՐԴԻՈՅ ՄԵՐՈՒՄ ԵՒ
ՀԱՐԱԶԱՏԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԻԱՐ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՏԷՔԻՐՄԵՆՃԵԱՆԻՆ
ՈՐ Ի ԹՈՐՈՆԹՕ. Ի ԳԱՆԱՏԱ**

Այստի խոր գոհունակությամբ իմացանք ԳանատաՌայոց Թեմի բարեխմամ Առաջնորդ՝ Գեորգյան Ս. Յովնան Արքեպիսկոպոս Տեոտեղեանէն Ձեր երկար տարիներու Ռաւատարիմ և օգտաշատ գործունէութեան մասին թէ՛ Հայաստանեայց Եկեղեցւոյ ազգային-եկեղեցական և թէ՛ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան բարեսիրական գործունէութեանց բնագաւառներուն մէջ:

Լիբանանի մէջ և անցնող երկու տասնամեակներուն Գանատայի մէջ Դուք լիովին արժեցուցիք Ձեր և Ձեր ընտանիքի կեանքը զայն միախառնելով մեր եկեղեցւոյ և ազգի ընդհանուր կեանքին:

Ի գնահատութիւն Ձեր բազմամեայ և բազմօգուտ ծառայութիւններուն՝ այսու Հայրապետական կոնդակաւ Ձեզի կը շնորհենք Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

Ս. ՆԵՐՍԷՍ ՀՆՈՐՀԷԼԻ քանդանք:

Կ'աղօթենք որ Բարձրեայն Աստուած Ձեզի և Ձեր ընտանիքի բոլոր անդամներուն շնորհէ քաջառողջ և երկար կեանք, և արևու ճառագայթներուն պէս երջանկութիւն ցանէ Ձեր կեանքի ամբողջ տևողութեան վրայ:

Ողջ լըրուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մենջ. Ամէն:

**ԳԱՐԵԳԻՆ Ս
ԿԱԹՈՂԻԿՈՍ ՍՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ**

Տուա կոնդակս ի Ծ Հոկտեմբերի
Թամի Տեառն 1997 և ի թուին Հայոց ՌՆԽԶ
ի Մայրավանս Արքայ Էջմիածնի
Ընդ Ռամարաւ Է/ 115

**ՄԻՐԵՅԵԱԼ ՈՐԴԻՈՅ ՄԵՐՈՒՄ ԵՒ
ՀԱՐԱՉԱՑԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԻԱՐ ԹԱԴԷՈՍ ԶՈՒԼԻԿԵԱՆՆԻՆ
ՈՐ Ի ՄԱՆՉԵՍԹԸՐ, յԱՆԳԼԻԱ**

Սրտի խոր գոհունակությամբ տեղեկացանք Անգլիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Եղիշէ Արքեպիսկոպոս Կիզիրեանէն, որ Դուք բազում տարիներէ ի վեր անխոնջ և անշահախնդիր նուիրումով Ձեր սպասը կը բերէք մեր սիրեցեալ Բայ ժողովուրդին, յատկապէս Մանչեսթըրի մեր Ա. Երրորդութիւն եկեղեցւոյ համայնքին:

Ձեր ծնողքէն, յատկապէս Ձեր հօրմէն և մեր եկեղեցւոյ ամենէն ընտիր Բայ հոգևորականներէն հոգեւոյս Տ. Խորէն Ասագ Բահանայ Քույիկեանէն ժառանգած Ձեր եկեղեցասիրութեան ոգին գիտցաք գործնապէս արժեցնել Ձեր անձնուէր աշխատանքովը յօգուտ Մանչեսթըրի մեր հաւատացեալ ժողովուրդին:

Ի գնահատութիւն Ձեր բազմամեայ և բազմավաստակ ծառայութիւններուն՝ այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք մեր եկեղեցւոյ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

Ս. ՆԵՐՍԷՍ ՀՆՈՐՀԸԼԻ քանջանք:

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած որ Ձեզի և Քույիկեան ընտանիքի բոլոր անդամներուն շնորհէ կատարեալ և տևական առողջութիւն, գործոց լիառատ յաջողութիւն և անսպառ երջանկութիւն:

Ողջ լընուք ի Տէր, գորացեալ շնորհօք Ա. Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

**ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ**

Տուաւ Կոնդակա ի 31 Հոկտեմբերի
Թամի Տեառն 1997 և ի թուին Հայոց ՌՆԽԶ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/ 120

**ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՈՑ ՄԵՐՈՒՄ ԵՒ
ՀԱՐԱՉԱՏԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅՍ ՍՐԲՈՑ ԷԶՄԻԱՄՆԻ
Տ. ՍԻՈՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԱԴԱՄԵԱՆԻՆ
ՈՐ Ի ՎԱՌՆԱ, Ի ՊՈՒԼԿԱՐԻԱ**

Ձեր քաճաճայական ձեռնադրությունն և արեղայական ուխտադրությունն ասոյին ահա անցան տասը տարիներ, որոնց ընթացքին Դուք Ձեր հաւատարիմ ծառայութիւնը ընծայեցիք Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, Ձեր հոգեւնունդ մօրը, և Պոպկարիոյ մեր հաւատացեալ ժողովուրդին:

Ձեր տասնամեայ եկեղեցական ծառայութեան ընթացքին Դուք ցուցաբերեցիք ամբողջական նուիրում մեր Սուրբ Եկեղեցիին և հայ ժողովուրդին:

Ի գնահատութիւն Ձեր հոգևորական սպասաւորութեան այսու Հայրապետական կոնդակաւ Ձեզի կը շնորհենք

ՄԱՆԻՇԸԸԿԸԳՈՅՆ ԾԵՂԿԵԸՅ ՓԻԼՈՆ

կրեղու իրաւունք և պատիւ:

Կ'աղօթեմք առ Բարձրեալն Աստուած, որ Ձեզի պարգևէ քաջառողջութիւն և երկնք տարիներ, որպէսզի նորանոր և աւելի արդիւնալից պտղաբերմամբ արժանորէք Ձեր հոգևորական առաքելութիւնը ի սպաս մեր Ս. Եկեղեցոյ և Պոպկարիոյ մեր սիրեցեալ ժողովրդեան:

Ողջ լերուք ի Տէր, գորացեալ շնորհօք Ս. Հոգւոյն, և յաւետ օրհնեալ ի Մեծշ. Ամէն:

**ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Տրուա կոնդակս ի 20 Հոկտեմբերի
Թամի Տեառն 1997 և ի թուին Հայոց ՌՆԽԶ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/ 118

**ՍԻՐԵՅՏԵԱԼ ՈՐԴԻՈՅ ՄԵՐՈՒՄ ԵՒ
ՀԱՐԱՋԱՏԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅՍ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱՏՆԻ
ՏԷՐ ՅՈՒՍԻԿ ՔԱՀԱՆԱՅ ՅԱՐՈՒԹԻՆԵԱՆԻՆ
ՈՐ Ի ԹԲԻԼԻՍԻ, ՎՐԱՍՏԱՆ**

Արտի խոր գոհունակությամբ տեղեկացանք Վրաստանի Հայոց Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Գևորգ Արքեպիսկոպոս Սէրայտարեանից Ձեր բեղուն և օգտաշատ եկեղեցական ծառայությանց մասին, որ կը մատուցէք ի սպաս Թբիլիսիի Ա. Գևորգ եկեղեցու և շրջանի մեր հաւատացեալ ժողովրդին:

Ի գնահատութիւն Ձեր նուիրեալ սպասաւորութեան, հաւատարիմ ոգով Ձեր տարած աշխատանքներին, այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք

ՔԸՀԸՆԸՅԸԿԸՆ ԼԸՆՋԸԻՄԸ


կրելու իրաւունք և պատիւ:

Մեր աղօթքն է և Հայրապետական թելադրութիւնը որ այս պարգևատրումը դառնայ նոր խթան առաւել ինքնընձայումի և յարաճուն աշխատանքի մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի հայկեան այգոյն՝ Հայաստանեայց Առաքելական Ա. Եկեղեցոյ հոգեշէն և ազգակերտ առաքելութեան մէջ:

Ողջ լերուք ի Տէր, գորացեալ շնորհօք Սուրբ Հոգոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

**ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Տուաւ Կոնդակս ի 8 Հոկտեմբերի
Յամի Տեառն 1997 և ի թուին Հայոց ՌՆԽԶ
ի Մայրավանս Արքոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/ 113



**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ
ՈՒՂՂԵԱԼ ԱՌ
ՄԱՐԱՇԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆ. ԵՒ
ԳԵՐՄԱՆԻԿ-ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆՆ
ՈՐ Ի ՀԱԼԷՊ. Ի ՍՈՒՐԻԱ**

Սրտի խոր գոհունակությամբ իմացանք Ձեր 24 Սեպտեմբեր 1997 թուակիր նամակէն, որ սեփական կեդրոնի շէնք էք կառուցած Նոր-Գիւղի հայաճոճ շրջանին մէջ և 2 Նոյեմբերին պիտի կատարէք նորակառոյց Ձեր մշակութային օճախին բացումը:

Հայրական քաղցրագոյն սիրով կ'ողջունենք Ձեր այս պատուաբեր իրագործումը որ վստահաբար պիտի վերածուի բարիքներու մշտաճիւղ և առատաբոխ աղբիւրի մը Ձեր հայրենակիցներու, մանաւանդ նոր սերունդի անդամներուն, և ողջ Հայէպահայութեան համար:

Մեր ազգի՝ որպէս քրիստոնէայ ազգ ծննդավայրէն, մեր Ս. Եկեղեցւոյ Մայր Աթոռ Ս. Էջմիածնէն կը յղենք Ձեզի Մեր օրհնութիւնները և բարեմաղթութիւնները, աղօթելով առ Բարձրեալն Աստուած, որ զօրացնէ Ձեզ քրիստոնէական և առաքելաշունչ մաքուր հաւատքով, Ս. Գրիգոր Լուսաւորչի անմար կանթեղի անշէջ յոյսով և մեր մշակոյթի հոգեշէն ներգործութեամբ:

Ողջ լեռուք ի Տէր, զօրացեալք շնորհօք Սուրբ Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնք. ամէն:

**ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Տուաւ Գիրս Օրհնութեան
ի 14 Հոկտեմբերի 1997
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/ 76

**ԳԻՐ ՀԱՅՐԱԿԱՆ ՕՐՆՀՈՒԹԵԱՆ ԵՒ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ
ՈՒՂՂԵԱԼ ԱՌ
ԴՈԿՏ. ԱՐՄԷՆ ՀԱԽՆԱԶԱՐԵԱՆԻՆ
ՈՐ Ի ԳԵՐՄԱՆԻԱ**

Արտի խոր գոհունակությամբ տեղեկացա՞նք Ամերիկահայոց Արևմտեան Թեմի Բարեխնամ Առաջնորդ Գերաշնորհ Տ. Վաչե Արքեպիսկոպոս Թովսեփեանէն, որ յառաջիկայ Նոյեմբերի 14-ին (1997) Լոս Անճելոսի մէջ Ամերիկահայ ճարտարագետներու և Գիտնականներու Ընկերակցութեան ճախաձեռնութեամբ պիտի ճշուի Ձեր ճարտարապետական գիտական գործունէութեան 25-ամեակը:

Քաջածանօթ եմք Ձեր կատարած երկար տարիներու բազմաջան աշխատանքներուն՝ նուիրուած հայ ճարտարապետական կոթողներու փաստագրման, նկարահանման և ուսումնասիրութեան այնքան կարևոր գործին: Ձեր կարելիութեան սահմաններուն մէջ ոչինչ խնայեցիք ոգեւանդ կերպով յառաջ տանելու համար հայ ճարտարապետական արուեստի գիտական ղեկավարութեան և լուսաբանման աշխատանքը, թէ՛ Մայր Հայրենիքի՝ Հայաստանի մէջ, թէ՛ Արևմտահայաստանի տարածքին վրայ, և թէ՛ Պարսկաստանի մէջ:

Ի գնահատութիւն Ձեր 25 տարիներու հետևողական և արդիւնալից գործունէութեան, Ձեզի կը շնորհեմք Մեր այս

**ՀԷՅՐԵԿԵՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ
ՀԷՅՐԵՊԵՏԵԿԵՆ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԳԻՐԸ:**

Այստեղ, ի Մայր Աթոռ Ս. Էջմիածին, կ'աղօթեմք առ Բարձրեալն Աստուած, որ Ձեզի պարգևէ քաջաոգիչութիւն, որպէսզի երկար տարիներ դեռևս շայունակէք Ձեր նուիրեալ աշխատանքը ի սպաս հայ ճարտարապետութեան և հայ ճոր սերունդի մէջ աճող արժէքի գիտակցութեան և գնահատանքի մշակման:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն, և յաւիտ օրհնեալ ի Մեճք. ամէն:

**ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ**

Տուաւ Գիրս Օրհնութեան
ի 15 Հոկտեմբերի 1997
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/ 77

**ԳԻՐ ՀԱՅՐԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ
ՈՒՂՂԵԱԼ ԱՌ
ՏԷՐ ԵՒ ՏԻԿԻՆ ԶՕՀՐԱՊ ԵՒ ԷԼԷՆԱ
ՏԱՏՈՒՐԵԱՆՆԵՐՈՒՆ
ՈՐ Ի ՌԻՕ ՏԷ ԺԱՆԷՅՐՕ, Ի ՊՐԱԶԻԼ**

Հոգեկամ խոր ուրախությամբ տեղեկացանք Պրագիի Հայոց Բարեխնամ Առաջնորդ Գերաշնորհ Տ. Տաթև Արքեպիսկոպոս Ղարիպեանցին Ձեր երկար տարիներու նուիրեալ գործունէութեամբ մասին ի սպաս Ռիօ ՏԷ Ժամելյոյի մեր սիրեցեալ հայ համայնքին:

Մեզի որքա՜ն գոհունակութիւն պատճառեց այն իրողութիւնը, որ դուք անսակարկ և անվերապահ ոգիով և ամբողջական նուիրումով ոչինչ խնայեցիք Ձեր կարելիութեան սահմանին մէջ սեծապէս զգտակար հանդիսանալու համար ոչ միայն Ռիօ ՏԷ Ժամելյոյի մէջ բնակող Ձեր հայ եղբայրներուն և քոյրերուն, այլ նաև Պրագիի այլ շրջաններէ, Մայր Հայրենիք Հայաստանէն այցելող ձեր ազգակիցներուն:

Ի գնահատութիւն Ձեր բազում տարիներու հաւատարիմ ծառայութեան մեր Ա. Եկեղեցւոյ, մեր ազգին, Պրագիի հայութեան և Մայր Աթոռ Ս. Էջմիածնից Ձեզի կը շնորհենք Մեր այս

**ՀԱՅՐԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԳԻՐԸ:**

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Ձեզի պարգևէ քաջատոյգ և երկար կեանք, որպէսզի յիովին վայելէք Ձեր գոհողութեանց բարիքները ի բարին մեր հայ ժողովրդին և ի փառս Աստուծոյ:

Ողջ լերուք ի Տէր, գորացեալ շնորհաց Սուրբ Հոգւոյն, և յաւետ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

**ԳԱՐԵԳՈՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Տուա Գիրս Օրհնութեան
ի 15 Հոկտեմբերի 1997
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/ 78

ՍԻՐԵՅԵԱԼ ՀԱՐԱԶԱՏԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅՍ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ, ԵՒ

ՍՊԱՍԱԻՈՐԻՆ ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅՍ ՏԵԱՌ ՄԵՍՐՈՊԱՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ ՈՐ Ի ՎԻԵՆՆԱ, յԱՒՍՏՐԻԱ

Սրտի խոր գոհունակությամբ տեղեկացանք Աստրիոյ Հայ Առաքելական Եկեղեցւոյ վարչութեան, որ արժանաւայել շուքով պիտի մշտի Ձեր ծննդեան վաթսուհինգամեակը և Աստրիոյ մէջ Ձեր հովուական և Առաքնորդական ծառայութեան 35-ամեակը:

Ձեզ անձամբ և մօտէն ճանչցած ենք Մեր դարեկանքեան ուսանողութեան օրերէն ասդին: Քաջատեղեակ ենք Ձեր աստուածատուր կարողութիւններուն և ձիրքերուն, գորս Ռուք գիտցաք իմաստաւորել և արժեցնել Ձեր տքնաջան աշխատանքով թէ՛ գիտական-գրական և թէ՛ հովուական-վարչական մարզերու մէջ:

Հայց. Եկեղեցւոյ սէրն ու մախանձախնդրութիւնը եղան Ձեր արեան մէջ շաղախուած գոյութեանկան տարրեր: Ձեր գիտական պայտումներով յայն հմտութիւն ձեռք բերիք Հայ Եկեղեցւոյ պատմութեան, գրականութեան, ծէսին, կանոնական դրութեան մասին և զայն ի սպաս դրիք հայ թէ օտար գիտական շրջանակներուն, Հայց. Եկեղեցին յայնօրէն ծանօթացնելով բոլորին:

Աստրիոյ մեր սիրեցեալ հօտին հանդէպ երեսունհինգ տարիներ շարունակ ցոյց տուիք հովուական հոգածութիւն թէ՛ եկեղեցական, թէ՛ կրթական, թէ՛ մշակութային և թէ՛ վարչական բնագաւառներուն մէջ, միշտ անոնց մէջ վառ պահելով Ս. Գրիգոր Լուսաւորչի հաւատքն ու Մայր Աթոռ Ս. Էջմիածնի սէրն ու օրհնաբեր հովանին:

Ի գնահատութիւն Ձեր բազմամեայ և բազմաբեղուն ծառայութեանց, ուրախութիւն ունինք Ձեզի շնորհելու Մեր այս

ՀԵՅՐԵԿԸՆ ՕՐՀՆՈՒԹԵԸՆ ԵՒ

ԳՆԸՀԸՏԸՆՔԻ ԳԻՐԸ:

Կ'աղօթենք առ Աստուած, որ Ձեզի շնորհէ քաջատողջութիւն և երկար տարիներ, որպէսզի առաւել ևս ճոխացնէք Ձեր սպասը Հայց. Եկեղեցւոյ կեանքին մէջ յԱստրիա և ընդ հովանեաւ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան որ ի Ս. Էջմիածնի:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մենք. ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան

ի 16 Հոկտեմբերի 1997

ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի

Ընդ համարաւ Է/ 80

ԳԻՐ ՀԱՅՐԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ

ՏԻԱՐ ԱՐՇԱԿ ԳԱԼԵՆՏԵՐԵԱՆ ՈՐ Ի ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍ, Ի ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՍ ԱՄԵՐԻԿԱՅԻ

Բազում տարիներ է ի վեր Ձեզ անձամբ ճանաչալու լսոյթներ ենք ունեցած և մօտով հետևած Ձեր կրօնասէր և եկեղեցանուէր ոգիին և աշխատանքին: Աւելի քան յիսուն տարիներ է ի վեր «Հայց. Առաքելական Եկեղեցասիրաց Եղբայրակցութեամբ» մէջ գործունեայ և առաջնորդող դեր էք կատարած մեր հաւատացեալ ժողովուրդի կրօնական առողջ դաստիարակութեան մարզէն մենս. միշտ հաւատարիմ Քրիստոսի ուսուցումներուն և Հայց. Առաքելական Եկեղեցւոյ հարազատ դասնութեան և ասանդութեան:

Հիսիսային Ամերիկայի Արևմտեան Թեմի Բարեջան Առաջնորդ Գեղարշնորհ Տ. Վաչէ Արքեպիսկոպոս Յովսէփեանէն տեղեկացանք, որ վերջին տարիներուն բազմօգուտ ծառայութիւններ էք մատուցած յատկապէս Լոս Անճելոսի մեր սիրեցեալ ժողովուրդի հոգևոր կեանքին՝ ոյժ տալով «Եկեղեցասիրաց Եղբայրակցութեամբ» գործունեութեան ծաւալման:

Ի գնահատութիւն Ձեր նուիրեալ և բազմամեայ ու բեղմնալից ծառայութեանց Ձեզի կը շնորհենք Մեր այս .

ՀԱՅՐԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԳԻՐԸ:

Կ'աղօթենք առ Ամենաբարին Աստուած, որ Ձեզի պարգևէ երկար տարիներ առողջութեան բարիքներով, որպէսզի շարունակէք Ձեր ծառայութիւնները Աւետարանի ուսուցումներուն տարածումով և «Եկեղեցասիրաց Եղբայրակցութեամբ» գործունեութեան պտղալից արդիւնատրութեամբը, ըստ Աւետարանի խօսքին «ընդ միոյ երեսուն, ընդ միոյ վաթսուն, ընդ միոյ հարիւր» (ՄԱՐԿ. Գ. 20):

Ողջ լերուք ի Տէր. գօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն, և յաւետ օրհնեալ ի Մենք. ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուա Գիրք Օրհնութեան
ի 24 Հոկտեմբերի 1997
ի Մայրավանս Արքով Էջմիածնի
Ընդ համարաւ Է/ 81

ԳԻՐ ՀԱՅՐԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ

ԱՌ

ՍՈՒՐԲ ԽԱՉ ՎԱՐԺԱՐԱՆՍ ՈՐ Ի ԹՈՐՈՆԹՕ, Ի ԳԱՆԱՏԱ

Սրտի խոր գոհունակությամբ տեղեկացանք Գանատայի Հայոց Թեմի Բարեխնամ Առաջնորդ՝ Գեորգեոս Ս. Յովնան Արքեպիսկոպոս Տերտերեանէն, որ ՍՈՒՐԲ ԽԱՉ ՎԱՐԺԱՐԱՆԸ արդէն իսկ բոլորած է իր գործունէութեան 20-ամեայ հանգրուանը:

Մենք անձամբ ճանչցած ենք Վարժարանի հետևողական աշխատանքը, որ նպատակաւոր ուղղութեամբ է դէպի հայ մատղաշ և պատանի սերունդի հայեցի առողջ կրթութիւնը: Հայերէն լեզուի, հայոց պատմութեան, հայ գրականութեան և առհասարակ՝ հայ մշակոյթի կենդանի և առոյգ պահպանութեան նուիրումը ՍՈՒՐԲ ԽԱՉ կրթական օճախը անցնող քսան տարիներու ընթացքին քաջօգուտ ծառայութիւններ մատուց հայակերտութեան նուիրական առաքելութեան մէջ:

Մեր մշակոյթի վառ օճախներէն՝ Կ. Պոլիսի հայ կեանքի աւանդութիւնը ժառանգած՝ Դուք գիտցաք Ձեր ազգային եկեղեցական նախաձեռնութիւնը արժեքնել Գանատայի օրհնեալ հողին վրայ:

Դանի՛, քանի՛ տասնեակ հայ ընտանիքներ երախտապարտ են ՍՈՒՐԲ ԽԱՉ Վարժարանին, որովհետև իրենց հարիւրաւոր զաւակներուն համար հայ տոհմային աւանդութիւններու վառարանը եղաւ ան, ուր քիւրել հնչեցին հայոց ոսկեղնիկ լեզուն, երգն ու պարը, և հայոց պատմութեան էջերը բացուեցան մեր եկեղեցւոյ սուրբերուն և հայրենիքի հերոսներուն, մեր մշակոյթի կերտիչներուն սրբարար և հայրենակերտ սխրագործութեանց այնքան հարուստ և պերճախօս պատկերներով:

Մեր քրիստոնէական, հատուցի ազգային օճախ և Հայց. Առաքելական եկեղեցւոյ Մայր Աթոռ Ս. Էջմիածնէն քի՛ւր օրհնութիւն Ձեզ. Հոգաբարձութեան, Տնօրէնութեան, Ուսուցչական կազմի անդամներուդ և աշակերտներուդ, ծնողներուդ, բարերարներուդ, նուիրատուներուդ, բոլոր վաստակաւորներուդ այս երախտարժան և ազգաշէն գործին: Թող 20-ամեակը դառնայ նոր ու յարաճուն իրագործումներու մղիչ ոյժ, որպէսզի առանել ևս ծաղկի և բարգաւաճի ՍՈՒՐԲ ԽԱՉ ՎԱՐԺԱՐԱՆԻ կրթական-դաստիարակչական գործունէութիւնը ի բարին և ի վաղելում մեր հայ ժողովուրդի զաւակներուն ի Թորոնթօ, յերկիրն Գանատայի:

Ողջ լերուք ի Տէր, գորացեալք շնորհօք Աւրբ Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մենք. ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուա Օրհնութեան Գիրք

ի 27 Հոկտեմբեր 1997

ի Մայրավանս Արքայ Էջմիածնի

Ընդ համարաւ Է/ 83

ԳԻՐ ՀԱՅՐԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ

ԱՌ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ ՈՐ Ի ՄՈՆԻԷԱԼ, Ի ԳԱՆԱՏԱ

Սրտի անհուն ուրախությամբ տեղեկացանք Գանատայի Հայոց Բարեխնամ Առաջնորդ՝ Գերաջնորդ Ս. Յովնան Արքեպիսկոպոս Տերտերեանցին, որ այս տարի հանդիսատեր և արժանավայել ջուշով պիտի նշեք Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Մոնրեալի մասնաճիւղի 40-ամեակը:

Հայրական բաղբրագոյն սիրով կ'ողջունենք և Մայր Աթոռ Ս. Էջմիածնէն Ձեզի կը յղենք Մեր այս

ՀԵՅՐԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԳԻՐԸ:

Բարձրօրէն կը գնահատենք Հ.Բ.Ը. Միութեան քառասնամեայ երախտարժան գործունէութիւնը Մոնրեալի մէջ. Գանատական օրհնեալ հողի վրայ: Ձեր մատուցած ծառայութիւնները մարդասիրական, կրթական և մշակութային մարզերու մէջ բարիքներու առատահոս աղբիւր մը եղաւ մեր սիրեցեալ Գանատահայ ժողովուրդին համար:

Մեր աղօթքն է առ Աստուած որ երկնային երանաւտ կեանքի մէջ հրճուեցնէ հոգիները այն բոլոր անձերուն, որոնք անցնող քառասուն տարիներու ընթացքին իրենց գերագոյն կարելին ի գործ դրին քառասնամեայ վատտակը իրագործելու համար և այժմ երկինքէն կը դիտեն այդ մեծ գործին բարեւար արդիւնքները ի վայելումն մեր ժողովուրդեան:

Հ.Բ.Ը. Միութիւնը Աստուծմէ ներշնչեալ և մոլորեալ անձերու տեսիլքով, իմաստութեամբ և զոհողութեամբ օրհնութիւն եղաւ ամբողջ հայ ժողովուրդին համար, ի Մայր Հայաստան և ի սփիւռս աշխարհի: Ներկայիս ան կը շարունակէ յարաճուն արդիւնատրութեամբ իր բարիքները լայնօրէն ընձեռել վերստին անկախացեալ մեր հայրենիքին, մեր Հանրապետութեան, Հայոց Առաքելական Ս. Եկեղեցւոյ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնին և սփիւռքահայ մեր ժողովուրդին, իմաստուն ղեկավարութեամբ իր նախագահին՝ Տիկին Լուիզ Մամուկեան Սիմոնին:

Մեր ազգային քրիստոնէական ծննդավայրին՝ Ս. Էջմիածնի մէջ սրտեռանդն կ'աղօթենք որ Աստուած զօրացնէ Հ.Բ.Ը. Միութեան կեդրոնական վարչութիւնը, յատկապէս Մոնրեալի Հ.Բ.Ը. Միութեան վարչութիւնն ու բոլոր անդամները, որպէսզի առաւել ևս ծաղկի և քարգաւաճի Հ.Բ.Ը. Միութիւնը Գանատայի և ամբողջ աշխարհի մէջ:

Թող 40-ամեակը դառնայ վերանորոգության, վերաշխուժացման նոր առիթ և մղում վասն առաել պտղաբերման Հ.Բ.Ը.Մ.-ի բազմօգուտ գործունեության մեր Հայրենիքի վերականգնման և հայ ժողովուրդի զարգացման համար:

Ողջ լեռուք ի Տէր. զօրացեալք շնորհօք Սուրբ Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մենջ. ամէն:

ԳՅՐԵԳԻՆ Ս

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Օրհնության Գիրս

ի 27 Հոկտեմբեր 1997

ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի

Ընդ համարաւ Լ/ 82

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը, Վիրահայոց թեմի առաջնորդ Գևորգ Արք. Սերայդարյանի ներկայացմամբ բարձրորեն գնահատելով թեմի հոգևոր սպասավորներ Նինոծմինդայի Խոջաբեկ Գյուղի Ա. Սարգիս եկեղեցու հովիվ Տ. Եղիա քին. Թազայանի, Ախալքալաքի Ա. Խաչ եկեղեցու Տ. Շմավոն քին. Սաղոյանի և Ախալցխայի Ա. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու Տ. Ռուբեն քին. Սաղոյանի հոգևոր գործունեությունը, 1997 թ. հոկտեմբեր 8 թվակիր կոնդակներով նրանց շնորհել է **ԱՎԱԳՈՒԹՅԱՆ** տիտղոս և պատիվ:

ՍՈՒՐԲ ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐ

Մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի հարությունից մոտ 400 տարի հետո, քրիստոնեությունը դեռևս շարունակում էր տարածվել ողջ աշխարհում: Հայոց երկրում ևս ձգտում էին շատ ավելին իմանալ Մեծ Վարդապետի ուսուցումներից: Սակայն հայերենով գրված գրքեր չկային: Քրիստոնեության պետական կրոն հռչակումով է՛լ ավելի էր մեծացել հունարեն և ասորերեն լեզուներով գրականության կիրառությունը: Հատկապես Աստվածաշունչ Մատյանը և հոգևոր գրականությունը այդ լեզուներով էին:

Ս. Սահակ Պարթևը, 387 թ. դառնալով Կաթողիկոս, իր հիմնական նպատակն է դարձնում մայրենի լեզվով գիր ու գրականության ստեղծումը: Աստիճանաբար իր շուրջն է համախմբում նույն նպատակով տոգորված մտավորականներին, այդ թվում նաև Ս. Մաշտոցին: Ստեղծված թարգմանիչ-թարգմանչերի խումբն ի գործ էր լիովին բավարարել եկեղեցու իրական պահանջը, որ էր հայերենով կատարել եկեղեցական պաշտամունքներն ու Սուրբգրային ընթերցումները: Ս. Մեսրոպն այն միակն էր, ով լիովին էր ըմբռնում ժամանակի հրամայականը, այսինքն՝ ունենալ Հայ դպրոց և հայ դպրություն:

Արշակունի Վռամշապուհ արքան և Սահակ Պարթև Հայրապետը ցնծությամբ լսեցին երանաշնորհ վարդապետի որոշումը և աշակերեցին նրան: Դանիելյան գրերի օգտագործման անհաջող փորձի հաջորդեց Մաշտոցի մոտի մեծագույն երկունքը: Աստվածային տեսիլի ներշնչմամբ, 406 թ. նա իր Սուրբ աջով հայրաբար կերտեց հայոց լեզվի ամբողջական նշանագրերը: Իրեն նախափորձ-նմուշ, Մեսրոպն իր երկու աշակերտների՝ եկեղեցյաց գավառի Հովհաննի և Պաղնացի Հովսեփի օժանդակությամբ Աստվածաշնչից հայերենի թարգմանեց Սողոմոնի Առակաց գիրքը: Հայ ոսկեդենիկ լեզվի Աստվածաշնչական առաջին խոսքերը եղան. «Մանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ, ընդունել զդարձուածս բանից, ի միտ առնուլ զարդարութիւն ճշմարիտ, եւ ուղղել զիրաւունս...», ուր, զարմանալի զուգադիպությամբ թերևս, հանդիպում ենք Մեսրոպյան Այբուբենի 36 գրերին՝ ասե՛ն մասնավորաբար ընտրված, նորաստեղծ գրերը փորձելու հնարագիտությամբ: Այս սկզբնական Աստվածաշունչ Մատյանի ամբողջական թարգմանությունը, որ մշակումներով ու լրացումներով տևեց շուրջ 30 տարի: Գլխավոր թարգմանիչն ու ղեկավարը Ս. Սահակ Պարթևն էր: Սյուս թարգմանիչներն էին Ս. Մեսրոպ Մաշտոցը, Եզնիկ Կողբացին, Հովսեփ Պաղնացին, Կորյուն Սեանչեյին, Ղևոնդ Վանանդեցին, Հովհան Եկեղեցացին: Եվ, ի վերջո, Աստվածաշունչը հայերենախոս էր. Աստված խոսում էր հայերեն: Անկրկնելի թարգմանության շնորհիվ, Տիեզերական Գրքի հայերեն օրինակն անվանվեց Թագունի թարգմանությանց: Այս ձեռնարկումը հիմնարկե՛ք էր ծավալվող հոգևոր-մշակութային նոր շարժման, որը փոքր-ինչ հետո պարզեկու էր մեզ մեր ՈՍԿԵԴԱՐԸ:

5-րդ դարում հունարենից և ասորերենից հայերենի թարգմանվեցին թագմաթիվ այլ երկեր, այդ թվում՝ Աթանաս Ալեքսանդրացու, Բարսեղ Կեսարացու, Սեբերիանոս Դարաղացու, Կյուրեղ Նրուսադեմացու. Եփրեմ

Խորի Ասորու, Հովհան Ոսկեբերանի, Գրիգոր Նազիանզացու, Գրիգոր Նյուացու, Պրոկոփի, Դիոնիսիոս Թրակացու, Փիլոն Երրայեցու, Տիմոթեոս Կուզի, Պորփյուրի, Արիստոտելի, Պատմի գործերը: Այդ երկերի որոշ մասն այսօր պահպանվել է միայն հայերենով (հունարեն բնագրերը չեն պահպանվել):

Ս. Թարգմանիչների ծավալած ազգապահպան գործունեության արդյունքը եղավ նաև հայ գրականության սկզբնավորումը: Դարերի հարասունությանը հանձնվեցին Սահակ Պարբեի և Մեսրոպ Մաշտոցի շարականները, Կորյունի, Ղազար Փարպեցու, Մովսես Խորենացու, Եզնիկ Կողբացու, Եղիշեի և այլոց պատմագրական, աստվածաբանական և փիլիսոփայական երկերը:

Թարգմանչական ու Ավետարանչական մեծածավալ շարժման կարևոր դրսևորումներից եղան նաև Սահակ-Մեսրոպյան վարժարանները, որոնք դարձան հայ գրականության ու մշակույթի հետագա զարգացման, ինչպես նաև հայ ժողովրդի ինքնության պահպանման վեմը: Հունիսի վերջին դամ հուլիսի սկզբին է նախ Օշականում տոնվում Սրբոց Թարգմանչաց Սահակ Պարբեի և Մեսրոպ Մաշտոցի հիշատակը, այս, հոկտեմբերին՝ Ս. Մեսրոպ Մաշտոցի ու նրա դաստիարակած Բարգմանչաց սերնդի (Հովսեփ, Հովհան, Ղևոնդ, Կորյուն, Եղիշե, Եզնիկ, Դավիթ Անհաղթ, Մովսես Խորենացի, Մամբրե Վերծանող, Արժան, Մուշե, Խոսրով, Ղազար Փարպեցի և դարերի հեռավորությունից իսկ Սահակ-Մեսրոպյան հոգևոր բուրայում բրձված Գրիգոր Նարեկացի, Ներսես Կյայեցի և ուրիշներ), որը տոնն է նաև հայ դպրության ու մշակույթի:

Հոգևոր լուսավորության ոսկեդարը մեր Եկեղեցին օժտեց ազգային նկարագրով և ինքնուրույնությամբ: Ուսուցումը Եկեղեցում ու վաթժարաններում, Թարգմանչությունը, ներին ու արտաին առաքելությունը եղան Ոսկեդարյան Եկեղեցու նկարագիրն ու արժանիքը: Այդ ժամանակի հայտնի Ս. Ավետարանն իր հայրը համարեց, իսկ մայրը՝ Եկեղեցին: «Հայր մեր՝ զսուրբ Ավետարանը գիտեմք, եւ մայր մեր՝ զառաքելական Եկեղեցի Կաթողիկէ», - ահա Ոսկեդարյան այն ոսկեղենիկ նշանաբանը, որ հարազատորեն որդեգրվեց հետագա բոլոր դարերում և նույնն է նաև ոչսուր:

Հայ ժողովրդի պատմության տարրեր ժամանակահատվածներում Ս. Թարգմանիչներին են նվիրվել ներդրողներ, բանաստեղծություններ, հոգևոր ու ժողովրդական երգեր: Վարդան Արևելյան հորինել է «Որք զարդարեցին» շարականն իր կանոնով, ուր օրհնաբանվում է Թարգմանիչների ազգուններ գործը:

Սուրբ Թարգմանչաց տոնը հայ ժողովրդի հարգանքի տուրքն է հայ գրին, դպրությանն ու մշակույթին, դրանց երախտավորներին:

ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՄԵՆՔ ԱՊՐԵՑԻՆՔ ՈՉ ՄԻԱՅՆ ԲԱՆԱԿՆԵՐՈՎ ՈՒ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐՈՎ, ԱՅԼԵՎ ՄՏՔԻ ԵՎ ՀՈԳՈՒ ՄԱՔԱՌՈՒՄՆԵՐՈՎ

Ամեն տարի, հոկտեմբերին, Հայոց եկեղեցին վառում է իր տոնական կանթեղները՝ ոգեկոչելու համար մեր Սուրբ Թարգմանիչների խնկիլի հիշատակը։ Թարգմանիչները՝ Ս. Սահակ-Մեսրոպյան դպրոցն անցած լուսն փաղանգը, Հայոց եկեղեցու պայծառ սրբերն են, ովքեր լծվեցին մեր մշակույթի ստեղծման, զարգացման և պահպանման Եվրոպական գործին։ Նրանք Ս. Մեսրոպի շնչով, ոգով, անմարելի հոռնությամբ վառված, Եշամարան ունենալով ստորմոնյան պատգամը՝ «Հանաչել զլիմաստութիւն և զխրատ, իմանալ զքսնս հանճարոյ», լուսավորեցին Հայոց աշխարհը և զարձան այն վեմը, որի վրա քարձացավ ազգային գոյություն և միասնության ամխորտակելի տանալը։ Նրանց տաղանդը, հոգի, ներշնչման և հավատի շնորհիվ Աստվածաշունչը հայացվեց, որը իր վսեմ պարզությամբ հիացրել է օտարներից՝ արժանացնելով «թագուհի Թարգմանության» քաճոր գնահատականին։

Եվ ահա այս տարի ևս Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցի էր եկել Ամենայն Հայոց Գարեգին Ա. Կաթողիկոսն իր շխարհով՝ մեր մեծերի հիշատակի առջև ծուկելի իջնելու, մեկ անգամ ևս փառաբանելու այն սերնդին, որը ստեղծեց Ռսկեդարը և իր շունչն ու ոգին փոխանցեց նաև Խաչոդեցիին։ Իրենց խոնարհությունն էին մեծ Սրբի հիշատակին բերել նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանները, մարգային տեղական իշխանությունների Երկայացուցիչները։ Ուխտավորաբար Օշական էին եկել և հավատավոր հայ ժողովրդի գավակները։

Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում մատուցվեց Սուրբ Պատարագ։ Օրվա պատարագիչն ու ֆարգիսսն էր Տ. Հայկազուն Ծ. Վրդ. Նաչապետյանը։

Հայր Սուրբն իր ֆարգում անդրադառնալով օրվա խորհրդին, Եջեց, որ Հայոց եկեղեցին Սրբի շատ ունի, քայց Թարգմանիչները եղան մեծ ու հավերժական, ֆանգի Երանք ժողովրդին տվեցին լույս և իմաստություն, պաշտպանեցին ու անաղարտ պահեցին ազգի ոգին, անխոցելի դարձրին Հայոց եկեղեցին։

«Եւ յորժամ կամեցաւ Աստուած որոշել զսուրբն ի միջոյ ձեռնասուն աշակերտացն և խառնել ի գունդս սրբոցն, թեթևացեալ և սթափացեալ ի ցաւոցն, և կանգնեալ Նստաւ ի ժողովոյն միջի և Համարաճեալ զձեռնսն Հանապազատարածս յերկինս, զԱմենասուրբը զՆորրորդութիւն աւրհնէր, և յանձն առնել զաշակերտեալսն ամենապահ շնորհացն Աստուծոյ, զի կայցեն Հաստատուն ի Հաւատս եւ ի վարս ուղղութեան, առանց գայթակղութեան կատարեացեն զարգարութիւն սուրբ Հարց՝ մերձաւորաց Բրիստոսին»։

Ահա այս բառերով է նկարագրում մեր մեծ վարդապետի՝ Մեսրոպ Մաշտոցի մահվան անարի առջև կանգնած իր աշակերտներից Կորյունը։

Սահակ Կաթողիկոսի մահվանից հետո, մոտ վեց ամիս շարունակ տեղապահական պաշտոն կատարելուց հետո, Մեսրոպ Մաշտոցը զգում էր, որ մահը մոտ էր։ Եվ, չըջապատված իր աշակերտներով, Հանկարծ կարծես Սուրբ Հոգին կյանքի վերջին ցոլքն էր տալիս նրան։ Մեծ վարդապետը կանգնում է և իր աշակերտներին այս պատգամն է թողնում, որ «կայցեն Հաստատուն ի Հաւատս և ի վարս ուղղութեան»։ Հաստատուն մնան իրենց Հավատքի մեջ, իրենց կայանքի մեջ և առանց գայթակղության կատարեն Սուրբ Հայրերի արդարությունը, որոնք մոտ են Բրիստոսին։

կատարել ըստ դրաբարում բազմաթիվ խմաստներ ունի. նշանակում է ոչ միայն մի բան առնել և ձևականորեն կատարել, այլ նաև այդ պատգամը վերցնել և յուրացնել, սեփականացնել և սեփականացնելով այնպես պահել, որ էություն մասնիկ դառնա. որ անհրաժեշտության դեպքում իր իսկ կյանքով կատարի, նույնիսկ իր արյան գնով այդ փոխանցի հաջորդ սերունդներին:

Այսօր, համատարվոր հայորդիք, մեր թարգմանիչ վարդապետների տոնն է: Թարգմանիչ ըստը ներկայիս առօրյա խոսակցական ծիրի մեջ չատնել խմաստ ունի, նշանակում է մի լեզվից մեկ այլ լեզվի թարգմանելու գործընթաց: Սակայն մեր նախնիները ոչ թե Աստվածաշունչը լուր թարգմանեցին, այլ, թարգմանություն հետ մեկտեղ, այն ապրեցրին, հայացրին, կյանք տվեցին, այնքան կյանք տվեցին Սուրբ Գրքին, որ այն կարճ միջոցում հայ ժողովրդի համար դարձավ կյանքի ձև: Եվ այն մարդիկ, ովքեր դարեր ի վեր իրենց սրտերը կարծրացրած, փակել էին իրենց հոգու դռները քրիստոնեության դեմ, հանկարծ անկյունադարձային շրջումով փոխեցին իրենց դիրքորոշումը, բացեցին իրենց ճանապարհները հանդեպ քրիստոնեության և սկսեցին սաղմոսներ երգել՝ ստորին խավի ուսմիկից սկսած մինչև բարձրաստիճան հոգևորականը: Եվ այդ ամենը շնորհիվ թարգմանիչ վարդապետների: Նրանք Աստծուն ծանոթացրին, Աստծուն իջեցրին հայ հոգու մեջ: Ահա այդ է իսկական թարգմանությունը: Աստծու զգացումը կաթեցրին մեր սրտերում: Մինևույն ժամանակ թարգմանիչները դարձան հայելի մեր ժողովրդի, իրենց կյանքերով ոչ թե սոսկ աղոթքներ դարձան, այլ՝ ապրելակերպ, իրենց կյանքով իսկ մեր ժողովրդի թարգմանիչները Աստծուն:

Մեր եկեղեցին որեէ մեկին դուրսի սրբերի դասը չի կարգում: Կարծես թե ամեն մի վարդապետ, որ թարգմանիչ կոչումն է ստացել, ոչ միայն ներկայացնում է ինքն իրեն, իր ժամանակը, այլ նաև հարյուրամյակներ մեր ժողովրդի երկար, տառապալից պատմության մեջ: Խնամարի մեջ կարծեք թե հրեղեն պուճեն յինեն՝ առաջնորդելու մեր ժողովրդին դեպի Աստված, դեպի Արարիչ: Սուրբ Մեսրոպյան կարելի է որակել որպես մեր ժողովրդի ամենամեծ զավակը: Նա կարողացավ ամենադժվար պահերից մեկում գտնել մի միջոց, որ է հայոց դիրք, որով կարողացավ զինել մեր ժողովրդին՝ վեր խոյացնելու ամուր մի միջնաբերդ, որի առջև խոնարհվեցին թշնամու լարած բոլոր որոգայթները:

Մեր բազմաթիվ սրբերից շատերի ամփոփման վայրերը չգիտենք, որպեսզի զնանք և երկրպագենք նրանց: Սակայն, փառք Աստուծո, որ ողորմաց և բաշխեց մեզ, որպեսզի անհայտության մեջ չզատնվեն փառավորադույնների փառավորագույնի՝ Սուրբ Մեսրոպ Մաշտոցի մասունքները, որպեսզի մենք այսօր կարողանանք գալ այստեղ և նորոգել մեր ուխտը, ձերադնել և աղոթել այն հնչյուններով, որոնց հայագիր հանդերձ շնորհեց երանելի Մաշտոցը: Նրա պարգևած տառերով մենք պարտավոր ենք կազմել միայն սուրբ բառեր, որոնք ոչ միայն պետք է մեր շրթներին արտաբերվեն, այլև բխեն մեր սրտերից և հոգիներից, որպեսզի բարձրանան առ Բարձրյալը: Եվ այն ասեն է, որ մեծն Մեսրոպն ընդունելի կհամարի մեր այս ուխտագնացությունը իր անյուշին:

Տակավին հաջորդ վարդապետներից հիշել է մեր օրացույցը եղիշին, մի

սլատմիչ, որը միայն մեկ ճակատամարտ է նկարագրել, սակայն որը դարձավ մեզ համար ոգեշնչող ուժ՝ գալիք դարերին դիմագրավելու գործում, հաղթահարելու համար ամեն տեսակի մարդկային զրկանք: Նա, որպես հրեղեն մի լույս, մեզ լուսավորում է: Եվ դուր չէ, որ երբ հայր որևէ մի տեղ օրհասական մի հնչում է գտնվում, Եղիշեի չլնին է կարգում, նրանում պրկած հերոսների կյանքն է վերստեղծում: Այդ են վկայում Սարգարապատը և այսօր Ղարաբաղում կռվող մեր մարտիկները:

Ոչ պակաս հեղինակություն է նաև Մովսես Խորենացին, մի սլատմիչ, որը պեղեց, հանեց մշուշից այն ամենը, ինչը հայկական էր, անկախ նրանից քրիստոնեության, թե հիթանոսության կնիքով էր կնքված: Տպավորված հայի սպանդով, նա է, որ ասում է, թե չնայած մենք փոքր անու ենք, ասական բաղում գործք արութեան գտանին եւ ի մերում աշխարհի եւ արժանի դրոյ հիշատակիք»:

Պիտի հիշատակեր, մարմնացներ մագաղաթների վրա այն սիրագործությունները, որ մեր նախնիներն էին կատարել՝ զբանով իսկ սլատղամելով իրեն հաղորդող սերունդներին, թե ո՞վ ենք մենք և ի՞նչ ենք մեզանից ներկայացնում որպես ազգ և եկեղեցի:

Դավիթ Անհաղթ փրկիսոփա: Նա փրկիսոփայությունն ուսանել է Ալեքսանդրիայից մինչև Աթենք: Նա այնտեղ ոչ միայն ուսանել է հունարենը, փրկիսոփայական տարբեր ուղղությունները, այլև հմտացել զբանցում, որի արդյունքում կարողացել է անհաղթ լինել իր խոսքով և իր մտքով, որն էլ բերել է Հայաստան աշխարհ, որպեսզի մեր քրիստոսահիմն կրոնը ամուր հիմքերի վրա դնի:

Մեր ժողովուրդը դարմանահրաշ կերպով տարածել է թարգմանիչներին 5-րդ դարից էլ այն կողմ և ընտրել տարբեր ժամանակներում լույսի նման փարոսներ:

Նարեկացի. առանձնահատուկ մի Սուրբ, որ կարողացավ Աստվածաշունչը ամբողջությամբ յուրացնել և դառնալ խոսնակը ոչ միայն մեր ժողովրդի, ոչ միայն մեր ժամանակի, այլև այդ դարերի անհատակ և անվերջ հոսանքների և ալիքների կուտակմամբ կարծես դարձավ զգացողը, ապրողը համայն մարդկության, բազմաթիվ շարիքների, տառապանքների մեկնիչը և դրանց ներման համար աղբյուրը ու խնդրողը Աստծուն, որպեսզի կարողանա Աստծու գութն իջեցնել և մարդկությանը հուսադրել, որ ինքը, որպես մարդ, որպես մի ճղճիմ գոյություն, կարողանար վերանալ և միավորվել իր Արարչի հետ:

Ներսես Շնորհալի. հեռավոր Կիլիկիայի, Հռոմկլայի բերդում ծվարած, թշնամիներով շրջապատված այդ մեծ վարկի տեր Հայրապետը կարողացել է իր շարականներով սրբերի և անմահների դասը կարգվել: Բազում իր շարականներով, բազում իր աղոթքներով, մտահոգված հայ ժողովրդի ամեն մի տարրով, գինվորականից սկսյալ մինչև ռամիկն ու իշխանավորը, նա կարողացել է բոլորին անխտիր Աստուծո խոսքը հասցնել:

Սիրելի Հավատացյալներ, մի քանի վարդապետների անուններ են գետեղված օրացույցում որպես ճշմարիտ թարգմանիչներ և, ինչպես ասացի, սրանք միայն ներկայացուցիչներն են, քանզի մենք գիտենք, որ մեր եկեղեցին տոնախմբում է հիշատակը մեր վարդապետների մինչև Գրիգոր և Մովսես Տաթևացիներ: Սակայն դրանից հետո էլ ունեցել ենք հանճար

ունեցող, տեսիլք ունեցող վարդապետներ մինչև Սիմեոն Երևանցի, Օրմանյան և, ինչու չէ, մինչև Գարեգին Հովսեփյան: Բայց այսօր, սիրելի Հավատացյալներ, մանավանդ մեր մայրենի հողի վրա, տարիներ ի վեր հեռու մնալով Հավատքից, այսօր Մեսրոպ Մաշտոցը մեզ դիտում է, թե մենք, որպես իր ավանդի կրողները, ինչ ձևով ենք արժապանքում այն աշխատանքին, որն ինքը և իրեն ազնվորեն հետևող վարդապետները կատարեցին և շարունակեցին: Մենք միայն մեր անցյալով չենք կարող Հպարտանալ, մենք միայն հնություն պահպանող ժողովուրդ չենք կարող լինել: Այդ դեպքում ո՞չ ներկա ունենք և ո՞չ էլ գալիք: Այսօր էլ մենք սկսեք ունենք ճանապարհներ Հարթող անձնավորությունների, որոնք կառավարողն են մոլորողին, որովք կկարողանան Հասնել մեր ժողովրդի նկույթյան պահերին այսօրվա պայմաններում, որպեսզի մենք Հպարտորեն կարողանանք փաստել մեր ճշմարիտ քրիստոնյա լինելը, Մեսրոպին Հարազատ լինելը, Աստվածաշունչ գիտենալը:

Նախ մենք պետք է գիտենանք մեր արժեքները, և միայն դրանց իմացումը բավ չէ: Հարկ է, որ անունների խորքը թափանցել կարողանանք, որպեսզի դռները, դռները այն ոսկե Հանքը, որ այսօր այժմեակներին կարող ենք վերցնել և օգտագործել ոչ միայն մեր ներկայի կարիքներին և պետքերին Համար, այլ նաև ապագային:

Ես մաղթում եմ, որ այս ուխտագնացությունը Մեսրոպ Մաշտոցին և մեր Թարգմանչաց, մեր սրտերը նորոգի, մեր Երդումը՝ Հավատարիմ մնալու Հայաստանյայց եկեղեցու այն ավանդներին, որ թողնելն մեր նախնիքը, կնորոգի և կզորացնի մեր հոգիները: Եվ դրանով զորացած, Հավատացեք, մենք կարող ենք ոչ միայն 1700-ամյակ նշել, այլև 2000 էլ, 3000 էլ:

Թող Աստված ընդունի մեր այս ուխտագնացությունը, նորոգի մեր Հավատքը, ամրացնի և անասան պահի մեր եկեղեցին այժմ և միշտ և Հավիտյանս. ամեն:»

Թարգմանչաց սոցիե կարծես Ս. Սահակն էր ֆարգում, րե ինչպես մեծ ու խոնարհ լինել, ասես Մաշտոցն էր հորդորում՝ չվախենալ դժվարություններից, Դանգլի Այր, Բեն, Գիմ-լ ճրա համար կլինեն զեն ու զրահ, Եզնիկը՝ ուղեցույց՝ հավաստի պաշտպանելու, որմըր գատելու հատիկից, Եղիշեն հայրենասիրության կրակ է վառում, Խորենացին ուսուցանում է հայոց պատմությունը, Շիրակացին իմաստության ջահը ձեռքին ուղեկցում է բնության, տիեզերքի գոյությունից մեջ, Նարեկացին համարձակություն է ցերեպալին հայ հավատի յանձնաձև է տալիս և սովորեցնում աղոթել աստվածային շարականքով, և ուղիսես ժամանակի հոլովություն միմյանց հաջորդեցին հայոց ռզու և իմացության միաս գորպետներ՝ Օձնեցին, Տարեւսցին և Առաքել Այուսեցին, Գանձակեցին, Դավիթմեցին, որոնք իմաստության վառարանների վերածննդին հայոց վաճենը: «Թարգմանիչներ» անվանված հոգևոր-մշակութային հզոր շարժումը հայոց 5000-ամյա պատմության անդաստանում եզակի և անկրկնելի մի երևույթ է: Այդ ցրանց ջանքերով էր, որ ազգը համայնաբնից մեկ-միասնական դրոշի ցերեք և կարողացավ ցուցատարի փորձությունները ետ վանել ու իմացության լույսով նվաճել սեփական գոյության իրավունքը: Թարգմանիչները ոչ միայն հսկայեցեցին տարաշխարհիկ հոգևոր արժեքները, այլև հիմք դրեցին ազգային, սեփական, ինքնուրույն գրականության, ճարտարապետության, երաժշտության, սլատմագրության, բժշկության, մանրանկարչության, աստվածաբանության, միլիտանտության, որով այսօր

մեեք իրավունք եմք վաստակել աշխարհի ֆաղափակիրք հանրության լիիրավ անդամը մեզ համարելու: Այդ նրանք էին, որ գրեթե ոչնչից ստեղծեցին ինքնատիպ, ազգային ու համամարդկային մի մշակույթ, որ աշխարհի ու ազգերի խոռվահույզ ծովում չես շվաթի ոչ մեկի հետ: Եվ ապրեցինք ոչ միայն բանակներով, ոչ միայն հաղթանակներով, այլև մտքի և հոգու մաքառումով: Մինչ հիմեցեորդ դար, մեր նախնիները կարծես մղել էին իրենց աշխարհիկ քոլոր նակատամարտերը: Թարգմանիչներով սկզբնավորվեց այս բիրտ աշխարհի վրա մի նոր գոյամարտ, ուր մեծաթիվ բանակների փոխարեն մտքի ու հոգու զորապետները մեզ տարան նոր ու անծանոթ ուղիներով, որով հնարավոր եղավ ապահովել մեր հանրության հավերժությունը երկրային այս կյանքում: Թարգմանչաց տունը հուզիչ, տպավորիչ ու ամոռաց է, ֆանգի այդ օրը ներկաները եկեղեցու խնկարույր մթնոլորտում խոնարհվում են Տիրոջ սեղանին ոչ միայն մաքրելու հոգիները աշխարհի գծած քարֆերից, այլև մերձենում սրբազան սյն խորհրդին, որով ապրել է մի ողջ ժողովուրդ: Երջանիկ էր այդ օրը Ամենայն Հայոց Կաթողիկոսը, որովհետև նա իր մեծ նախորդների շավիղներով է անցել, իմացության ջահը տարել է իր հայոց զավակներին, որտեղ էլ նրանք հանգրվանել հեն. գաղութներում, թե հայրենի շենքերում ու ֆաղափներում, զորամասերում, թե դպրոցներում՝ յուրաքանչյուրին տալով չունեցածն ու պակասը: Գարեգին Վեհափառը հոգով խաղաղ է և բախտավոր, որովհետև եկեղեցու ծոցում ծառայում է հոգևորականների նվիրյալ մի աստղաբույլ, ինչպես Գանձասարի եկեղեցու ֆահմայի՝ Տեր Հովհաննեսի նման հայրենասեր, խիզախ հոգևորականը, որը ոչ միայն պահեց-պահպանեց պատերազմի տարիներին Գանձասարի եկեղեցին, այլև գնաց-խառնվեց մահապարտների գնդին, կովեց խիզախորեն թշնամու դեմ և նորից վերադարձավ իր ֆահմայական ծառայության: Հայրտ է տիպար հոգևորական Ամերիկայի Արևելյան թեմի առաջնորդ Նաժակ արքեպիսկոպոս Պարսամյանով, որը 1988 թ. երկրաշարժի րոթը լսելով, անմիջապես երևանում քացեց ՀՕՖ-ի գրասենյակը՝ ճեքուկ կանգնելով մեղալին, կարոտյալին: Ամենածանր տարիներին նա չմոռացավ իր Հայրենիքը և արեց կարելին քնական ու ֆաղափական աղետներից երկիրը դուրս բերելու ճանապարհին: Հայոց Հայրապետը ուրախ է նաև Արագածոտնի թեմի առաջնորդ Նավասարդ եպիսկոպոս Կնոյանով՝ ժրջան, ագնիվ մի հովիվ, որը պաշտպանում է իր հոտը ամենատարբեր ոլորտներից, ինչպես ինքն է վկայում: «Այս երկու տարում արվել է այնքան եկեղեցական-հոգևոր վարչական, շինարարական աշխատանք, որ չի արվել նախորդ տասը տարիների ընթացքում»: Նրա ասածի ամենախոսուն ապացույցն էր այդ օրը ճարտարապետական մի նոր կառույցի՝ առաջնորդարանի շենքի քացումը, որի հովանավորն է Բեյրութի մեր հայրենակից Ժիրայր Գաբրիելյանը: Սրբազան հոր ջանքերով և անմիջական հսկողությամբ վերանորոգվել են Օշականի դպրատունը, Ապարանի Սբ. Խաչ եկեղեցին, վերանորոգվում են Կաթրիի Սբ. Աստվածածին եկեղեցին, Գառնահովիտի եկեղեցին և այսպես շարունակ: Նավասարդ սրբազանը վերջերս էլ ձեռնամուխ եղավ Արագածոտնի «Շողակն» թեքի հրատարակությանը, որը ոչ միայն նորաստեղծ թեմի հավատացյալներին, այլև մարզում ու նրա տարածքից դուրս ապրող մարդկանց հնարավորություն է տալիս ի մոտ ծանոթանալ թե՛ առօրյա կյանքին վերաբերող տեղեկատվությանը և թե՛ հոգևոր-մշակութային ոլորտում կատարվող իրագործումներին: Ահա այսպիսի հոգևորականներով է Հայոց եկեղեցին մոտենում երրորդ հազարամյակի սահմանագծին:

ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՏՈՒՆ ՕՇԱԿԱՆՈՒՄ ԲԱՑՎԵՑ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՆՈՐ ՇԵՆՔԸ

Հոկտեմբերի 11-ին Հայ Առաքելական Եկեղեցին և Քայ ժողովուրդը տոնեցին Թարգմանչաց՝ Քայոց գրերի և Սուրբ Գրոց թարգմանության ճիշատակի օրը: Ամենայն Հայոց Գարեգին Ա. Կաթողիկոսը ավանդույթի համաձայն այդ օրն այցելեց Օշական՝ իր հարգանքի տուրքը մատուցելու Օշականում հավերժորեն անմահացած Աբ. Մեսրոպ Մաշտոցին:

Օշականի Աբ. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում մատուցվեց Աբ. Պատարագ /պատարագիչն էր Հայկազուն Յ. վարդապետ Նաջարյանը/:

Հավարտ Սուրբ Պատարագի տեղի ունեցավ Արագածոտնի թեմի Ռոզեոր կենտրոնի՝ առաջնորդարանի համդիսավոր բացումը: Արարողությանը ներկա էին եզրիպտոսի թեմի առաջնորդ Զավեն արք. Չինչիմյանը, Մայր Աթոռի միաբանության անդամներ, թեմական խորհրդի անդամներ, բազմաթիվ ուխտագնացներ: Արարողությանը ներկա էին նաև սփյուռքահայ բարերարներ տեղ և տիկին ժիրայր և Հասմիկ Գաթրիեյանները, որոնց հովանավորությամբ էլ կառուցվել է առաջնորդարանի շենքը:

Թեմի առաջնորդ Նավասարդ եպս. Կճոյանը, շնորհակալություն հայտնելով Հայոց Հայրապետին ու բարերարներին շենքի կառուցման համար, հայտնեց, որ 1995 թ., առաջին անգամ այցելելով Օշական, վեհափառ Հայրապետն ուխտեց բարեկարգել Աբ. Մեսրոպ Մաշտոց եկեղեցու հարակից տարածքը: Վերակառուցվեցին դարասկզբին կառուցված շինությունները: Նախորդ տարի բացվեց Մաշտոցի անվան դպրատունը, այս տարի՝ առաջնորդարանը:

Կատարելով համդիսավոր բացումը, Ամենայն Հայոց Հայրապետը, դիմելով ներկաներին, ասաց.

«Մերելի թեմակալ առաջնորդ սրբազան, մեծարգո մարգարե Արագածոտնի, Հարգարժան քաղաքապետներ Աշտարակի, Ապարանի և այլ քաղաքների, թեմական խորհրդի անդամներ, ոչականցի Հարագատ եղբայրներ և քույրեր, մանավանդ սիրասուն փոքրիկներ, դպրոցական աշակերտներ և Հարգարժան այցելուներ արտասահմանյան երկրներից.

Այսօր իմ հոգին ավելի է լցվել, քան ինչ որ կարող է տանել: Այն Հավատարմությունը, այն կապվածությունը, որ դուք ցույց եք տալիս Սուրբ Մեսրոպի կտակին, այդ Հավատարմությունն է այն գաղտնի ուժը, որ պահում է և պահելու է և զարգացնելու մեր ժողովուրդը իր մայր Հայրենիքում, Հայաստանում:

Այսօր մենք եկել ենք ոչ թե մի սովորական Պատարագի ներկա գտնվելու, այլ ծնկաչոք ուխտ կատարելու: Ուխտը Աստծու և մարդու միջև դաշինքն է մարդու և Աստծու Հարաբերության այն անխորտակելի ուժն է, որ երբ մեկը մի ուխտ անի, մինչև իր կյանքի վերջը կյանքի ողջ ուժով այդ ուխտը արժեցնի, արդարացնի Աստծու աչքին: Այսօր եկել ենք ուխտի, ոչ թե գերեզմանի: Գերեզմանը մեզ Համար է չինվել, ոչ թե Մեսրոպ Մաշտոցի: Մեսրոպ Մաշտոց, Եղիշե, Մովսես Քերթոզահայր, Դավիթ Անհաղթ փրկասփա, Գրիգոր Նարեկացի, Ներսես Շնորհալի. ահա ընտրելագույն անուններ, որոնք Համախմբվել են այսօր Սուրբ Մեսրոպ Մաշտոցի շուրջը.



ԿԵՐԵԱԲԱՍՈՒ ԴԱՅՐԱՆՈՒԹՅԱՆ, ՄԱՍՏՆԱՌԱՌԻ ՄԱՐԿԱՐԱՆ ԴԱՅՐԻ ԵՎ ԲԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՄԱՍՆԱՌԱՌԱՆԻ ՆՈՐ ՇԵՆՔԻ ԲԱՏՄԱՆ ժԱՄԱՆԱԿ

ինչպես ասողերը արևի շուրջը: Եվ անոնք դուրս են եկել իրենց շիրմաներից, նրանք գերեզմաններում չեն կարող պարփակվել: Եթե նրանց գերեզմանները նրանց մարմինների համար մի բանտ է, գերեզմանը նրանց հոգիների համար մի այնպիսի թևածուռ է դեպի հավիտենություն, որ մինչև օրս, ահավասիկ 15 դարեր ի վեր մեր մեջ ապրում են նրանք, և այսօր ինչ ուրախ եմ, որ դուք եկել եք Սուրբ Մեսրոպ Մաշտոցի հետ հաղորդությունը վերակենդանացնելու ձեր հոգիների ու ձեր կյանքերի մեջ:

Սիրելիներ՛, մենք մեր Հայոց Առաքելական Եկեղեցին՝ այս ժողովրդի հոգևոր տրոփող սիրտը, ուզեցինք առավել ևս մոտեցնել մեր ժողովրդին: Այս եկեղեցին իմը չէ, մեր բոլորինն է, մենք ենք եկեղեցին, քարը չէ եկեղեցին, մեր հավատքն է եկեղեցին: Դրա համար Արաբաժոտունի թեմը հիմնեցինք, որպեսզի ժողովրդին մոտենա եկեղեցին, և ժողովուրդը եկեղեցիով հարստանա, հավատքով զորանա և հայրենասիրությունը եկեղեցու միջից կարողանա արտահայտել որպես իր ուխտը դեպի հավիտենականություն: Երբ ես, Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվելուցս հետո, առաջին անգամ եկա այստեղ, աչքերս արցունքով լցվեցին, կարծեք սիրտս արյունեց, երբ տեսա 1912-ին շինված այս շենքը ավերակ վիճակում, առանց տանիքի, առանց պատուհանի, առանց դռան: Կարծեք թե լքված, անտեր թողնված ու արհամարհված մի շենք էր: Կարո՞ղ էի դիմանալ, կարո՞ղ էի ես հանդուրժել, որ Սուրբ գերեզմանին մոտ Մեսրոպ Մաշտոցի մի այնպիսի ավերակ մնա: Որտե՞ղ է մեր հայությունը, ինչպե՞ս պետք է արտահայտենք մեր կապվածությունը մեր եկեղեցուն: Խոսքով չի լինի:

Հավատքը կյանք է: Ահա թե ինչու Արևմտյան Հայաստանից գաղթած և Ամերիկա գնացած մի հայ գաղթական՝ Կորոյան ազգանունով, աշխատելով գործարանում, իր երկար տարիների խնայողությունը բերեց և հայրենի հողի հետ խառնեց, և, ահավասիկ, մենք ունեցանք Սուրբ Մեսրոպ Մաշտոցի անվամբ կնքված դպրության տուն: Անցյալ չորեքշաբթի, երբ եկա այստեղ Գևորգյան Հոգևոր Ճեմարանի ուսուցչական կազմի հետ միասին և այստեղ ժողով գումարեցինք իմացական, կրթական, մտավոր աշխատանքների մասին, մտածեցինք, որ հառնեց Սուրբ Մեսրոպը, գերեզմանից դուրս եկավ, այցելեց մեզ և ասաց. «Ապրե՛ք երեխեք, որ հառաջ եք տանում, կենդանի եք պահում մեր ավանդը»: Եվ ես, ինչպես անցյալ տարի ասացի, այս տարի ևս կրկնում եմ. Ես այս օրը հույսկում եմ Օշականի օր՝ Սուրբ Մեսրոպ Մաշտոցի հիշատակով թրծուն և ներշնչող, և այնքան ժամանակ, որքան Աստված ինձ կյանք տա, ես այս օրը այստեղ կլինեմ:

Սիրելիներ՛, անցյալ տարի մենք կատարեցինք Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան դպրության տան բացումը: Այս տարի ուրախությունս կրկնապատկվեց, բազմապատկվեց: Ես իմ սիրելի բարեկամներին՝ Ժիրայրին ու իր նվիրյալ տիկնոջը՝ Հասմիկին, իրենց զավակներին տարիներ ի վեր ճանաչում եմ: Հայեալ քաղաքի նեղլիկ փողոցների մեջ չարքաշ աշխատանքով, Իրաքի մեջ, Լիբանանի մեջ, Կիպրոսի մեջ, Ամերիկայի մեջ իր քրտնաջան, հարատև և ստեղծագործ հոգիով ապրեց հայությունը իր ընտանիքում: Առաջին արժանիքը, որ ես տեսա նրանց մեջ, նյութական առավելությունը չէ, այլ՝ հոգեկան կապվածությունը մեր եկեղեցուն, մշակույթին: Եթե նա մի օր հայկական մի թերթ չկարդա, ապա բժշկի կարիք կունենա: Այդ աստիճանն ա կապված է մեր եկեղեցուն, մեր մշակույթին, գրականությանը: Ինձ էլ

Ս. ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ԴԳՐԱՏՈՒՆ ՕՇԱԿԱՆՈՒՄ

Օշականում՝ Սր. Մեսրոպ Մաշտոցի մվիրական շիրմի կողքին, վերակառուցյալ շենքում հաստատվեց Սր. Մեսրոպ Մաշտոցի անվան Դպրատունն ընդ հովանյալ Ամենայն Հայոց Կաթողիկոսության՝ Մայր Աթոռ Սր. Էջմիածնի, և գործակցությամբ Արագածոտնի թեմի: Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի կողմից Դպրատան վարիչ-տնօրենն է նշանակվել Հայաստանի Պատմության Պետական Թանգարանի նախկին տնօրեն պարոն Ալֆրեդ Շահնազարյանը, որն ունի իր մնալուն գրասենյակը նորահաստատ Դպրատան շենքում:

Դպրատունը լինելու է Սր. Մեսրոպ Մաշտոցի ժառանգությանը մվիրված գիտական աշխատանքի, գիտաժողովների, ցուցահանդեսների, գրադարանային, թանգարանային, ուսուցման, հայագիտական, մասնավորապես՝ Մաշտոցագիտական, ինչպես նաև հանդեսների և հոգևոր-մշակութային արարողությունների կենտրոն:

Այստեղ ժամանակի ընթացքում համախմբվելու են Սր. Մեսրոպ Մաշտոցի, Սր. Սահակ Պարթև Հայրապետի, Թարգմանիչ Վարդապետների, Ոսկեդարյան մշակույթի և առհասարակ Սր. Մեսրոպի ժառանգությանը մվիրված գիտական և գրական աշխատություններ, հրատարակություններ, հոդվածներ:

Մայր Աթոռը կոչ է անում քոլոր մշակութասեր անձանց և հաստատություններին գորավիզ կանգնել Մայր Աթոռի այս նոր նախաձեռնությանը, իրենց կարելիության սահմաններում Ս. Մաշտոցի անվան դպրատանը՝ օժանդակ համդիսանալով գրքերի, վավերագրերի և գեղարվեստական գործերի մվիրատվություններով:

Վարիչ-տնօրենի հետ կապ հաստատելու համար օգտվել հետևյալ հեռախոսահամարից՝ /8.243/ 3.61.50

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՒՒ

**«ԱՄԵՆ ԻՆՉ ՍՈՒՐԲ Է ԱՅՆՏԵՂ,
ՈՒՐ ՆՎԻՐՈՒՄՆ Է ՇՆՐԱԴՐՈՒՄ»**
*(Ճեմարանավարտ ութ սարկավագներ պաշտպանեցին
ավարտանառները)*

Ամեն մի ժամանակաշրջան իրենն է թելադրել մարդկությանը, սեփական կնիքը բողոք ապրած տարիների վրա՝ ապագային փոխանցելով ապրածն ու չապրածը՝ ֆննելու, դասեր քաղելու, վերաթմբելու և, ինչու չէ, նույնիսկ վերսկսելու և վերանորոգելու։ Այս իմաստությամբ հարստացած է կերտել իր պատմությունը հայ կարողությունը՝ սեփական հարատևության մեծագույն խորհուրդ-առնականության նկատմամբ գիշեր ու գրչությունը, հոգու և մտքի հարստությունը։ Այսպես դարեր ի վեր, միշտ և հավիտյան...

Այս թելադրանքով նաև հիմնվեց Գևորգյան Հոգևոր ձեմարանը՝ երջանկահիշատակ Գևորգ Դ Կաթողիկոսի նախաձեռնությամբ, որ իր անցած 43-ամյա փառահեղ ուղին պսակեց փառքի ու անմահության այն դասիներով, որոնց կրողները եղան հայ ժողովրդի երախտավոր զավակներից շատերը։

Ճիշտ նույն թելադրանքով հայոց պատմության հետագա ընթացքին փորձեր արվեցին՝ վերաբացել հոգևոր մտքի այս դարանոցը, որ սակայն գեղեցիկ ու անմեկնելի երազի փոխվեց՝ ներառելով նաև երջանկահիշատակ վազգեն Ա Վեհափառ Հայրապետի գահակալության տարիները։

Իսկ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Հայրապետը իրականությամբ կերպավորեց այդ երազանքը և այսօր, հոկտեմբերի 30-ին, ութ տասնամյակների հեռվից, կրկին ուրախությամբ և աշխույժով շնչեց Գևորգյան Հոգևոր ձեմարանը, զի, վերաբացումից հետո, առաջին անգամ, կոմիտայան շնչով պատկերազարդված սրահում, ի մի եկան հոգու և մտքի սպասավորները՝ հավաքելու առատ հունձքը, որ տարիների իրենց ֆրոնտալն աշխատանքի արդյունքն է, մերօրյա վավերագրությունը։

Ձեմարանավարտ ութ սարկավագներ՝ Սամվել սարկավագ Խաչատրյանը («Հնդկահայ գաղութը և Մայր Աթոռի նվիրակությունը Հոդկաստանում»), Տիգրան սարկավագ Սանույանը («Հայ եկեղեցու գույքի և կալիքի բուժարարությունները Հայաստանում 1920-1925 թթ.»), Նշան սարկավագ Հովհաննիսյանը («Մատենագիտություն «Էջմիածին» ամսագրի 1974-1983 թթ.»), Գեղամ սարկավագ Մարտիրոսյանը («Հայ եկեղեցու բարեկարգության խնդիրները 20-րդ դարում»), Խորեն սարկավագ Ստեփանյանը («Հայ եկեղեցական և խաղաղական գործիչների վերաբերմունքը ԽՍՀՄ-ում հանդիպելով Հայաստանի ազատագրության հարցը 18-րդ դարում»), Արթուր սարկավագ Պողոսյանը («Հատկանշական վաճառք և նրա վաճառական դպրոցը»), Հրաչ սարկավագ Հովհաննիսյանը («Վաղարշապատի դպրոցը 17-րդ դարում») և Հայկ սարկավագ Գամաղելյանը («Վահան Մայրապետի վարդապետ Պարսամյանը»), իրենց հոգևոր հայրերի, ուսուցիչների, ինչպես նաև ձեմարանի սանների ներկայությամբ և Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ, ուսանողական վեց տարիներին ձեռք բերած յուրօրինակ հաշվետվությունն էին ներկայացնում։ Ավարտանառների պաշտպանությունը ոչ միայն սարկավագների գիտելիքների քննությունն էր, այլև նրանց մտքի վերլուծական կարողության գնահատանքը, որ առավել ամրագրվեց ավագներից փոխանցված հոգևոր կյանքում հետագա գործունեության հարդորով։

Նորին Սուրբ Օծությունը, ունկնդրելով սաների խոսքը, լսելով համձնատոգովի գնահատումը, ցերեկների հետ կիսեց իր մտածումները, հույս եայտնեց, որ գրելիք հետագա թեզերն առավել խոր միտք և հարցի հրատապություն կունենան, որովհետև այսօրվա փորձի պակասն իրենց այլևս զգացնել չի տա: Շարունակելով իր միտքը, Վեհափառ Հայրապետն ի մասնավորի ասաց.

«Ես ցանկանում եմ, որ բոլորիս Հիշողության և ուշադրության մեջ այս պահը արձանագրվի որպես մի Հիշարժան երևույթ, որն արձանագրվելու է նաև Գեորգյան Ճեմարանի պատմության մեջ: Քանի տարիներ ի վեր նման նիստ չի գումարվել այս շենքում: Ես ցանկանում եմ, որ Գեորգյան Հոգևոր Ճեմարանի անցյալում եղած այս ավանդությունը ոչ թե պահվի ձեռագրերում, այլ խորքային, բովանդակային տեսակետից դառնա նույնիսկ Հառաջալի դեպի մեր գիտական աշխատանքը: Դրա համար ես գնահատում եմ այս երևույթը, գնահատում եմ տեսչությանը, տեսուչ Հայր Սուրբին, որ վերջին շաբաթվա ընթացքում կազմակերպեց այս նստաշրջանը, նաև բոլոր գիտնական և դասախոս մտավորականներին, ովքեր ղեկավարեցին մեր սարկավազների առաջին պրպտողական-քննարկական, ուսումնասիրական այս աշխատանքը: Իմ գնահատանքն եմ հղում նաև մեր սարկավազներին, ովքեր թեև լարված աշխատեցին, բայց ոչ տակավին լիովին դոհացրեցին, որովհետև թե՛ այս ղեկուցումներից իմ ստացած տպավորությունը և թե՛ որոշ թեզերի աչքի անցկացումը ինձ համար պարզ դարձրին, որ շատ ավելի խորը ուսումնասիրություններ պետք է լինեն ավարտաճառերը, քան ինչ որ մենք այս վերջին շրջանում թերևս ունեցել ենք:

Այստեղ ես պիտի հետևյալն ասեմ: Այն սարկավազները՝ ութը անձերը, ովքեր այստեղ ներկայացրին իրենց ավարտաճառերը, և որոնց մասին մենք լսեցինք ղեկուցողների, ընդդիմախոսների ու հարց տվողների տեսակետները, պաղ ջուր չխմեն այս սրահից գնալուց հետո և ասեն՝ մենք ավարտեցինք: Նկատողություն անող ընդդիմախոսները շատ քաղաքավարի գտնվեցին, շատ ավելի ասելիք ունեին, քան ասացին: Հետևաբար, իմ ցանկությունն է, որ նրանք այս նկատողությունների հիման վրա իրենց աշխատանքները ավարտած չնկատեն, այլ գնան, վերլուծության ենթարկեն:

Այս հանգրվանին ես ուզում եմ ասել, թե ինչ է ավարտաճառի ըմբռնումը, ինչու ենք գրում ավարտաճառ: Որպեսզի տիտղոս առնենք, որպեսզի մակդի՞ր առնենք, թե որպեսզի նպաստ բերենք, մի քայլ արձանագրենք դեպի խորք, դեպի հառաջ այն գիտության ծով աշխարհին մեջ, որ գտնվում է մարդու առջև և, մանավանդ, Հայ ժողովրդի առջև, երբ մեր պատմությունը, մշակույթը, արժեքները տակավին չեն Հայտնաբերված այն ամբողջականությամբ, Հարազատությամբ, առարկայականությամբ, ինչ որ ես հասկանում եմ, թե պետք է լինի: Երկու տեսակ թեզեր կամ ավարտաճառեր կան աշխարհում: Կան ավարտաճառեր, որոնք նորույթ են բերում, նոր լույս են սփռում գիտելիքի, մի հարցի, մի պատմական շրջանի, մի դեպքի, մի երևույթի, մի գաղափարի, մի արժեքի վրա, և կան թեզեր, որոնք եղած նյութերի դասավորումն են, կոխված գետիներին վրա քայլվածք են, այլ ոչ թե նոր երևույթներ Հայտնաբերելու առաջադրանք: Եվ, քնականորեն, ես հասկանում եմ, որ սարկավազական առաջին աստիճանի վրա այդպիսի խորքային, որակային բարձրության թեզեր սպասելը դժվար է: Բայց փորձը կարևոր է: Երբ դա երկրորդ աստիճանը ավարտաճառի՝

աբեղայական աստիճանը, որ վարդապետության թեկնածության համար է, այդ թեգերը պետք է լինեն այնպիսին, որ երբ քննարկվեն քննիչ հանձնախմբի կողմից, առաջարկվեն հրատարակության: Հրատարակությանը փորձաքար է: Ես գիտեմ, որ եղել են ավարտաճառեր, որոնց համար արխիվները փորձարկներում, երբեք լույս չէին տեսել: Հարյուրավոր արխիվների փորձարկներում, երբեք լույս չէին տեսել: Համապարաններում:

այդպիսի ավարտաճառեր կան աշխարհի բոլոր համապարաններում: Ես ուզում եմ մի կարևոր երևույթի ևս անդրադառնալ: Որևէ մի թեգ առհասարակ բաղկանում է չորս գլխավոր մասերից.

ա) Հարցադրում. ինչի՞ մասին ես ուզում գրել և ինչո՞ւ ես գրում: Ինչպես ճարտարապետն է իր մտքում գծում իր շենքի նախագիծը, դա իր առաջադրանքն է:

բ) Ներկայացնում է մինչ այդ կատարված աշխատությունների, եզրակացությունները: Երկրորդ, որը կլինի Հոդի ուսումնասիրությունը, այսինքն՝ եթե ուզում եմ այդ շենքը կառուցել, արդյոք Հոդը, դիրքը, այսինքն՝ եթե ուզում եմ այդ շենքը կառուցել, արդյոք Հոդը, դիրքը, բարձրությունը, թեքվածությունը թույլատրում են: Ուրեմն, նախքան բարձրությունը, թեքվածությունը թույլատրում են: Ուսումնասիրել, իմանալ, թե շենքի կառուցումն սկսելը, գետնի պետք է իմանալ, թե մինչ ինքը այդ մասին ի՞նչ է արվել: Դրա համար նա պետք է իմանալ, թե մինչ ինքը ի՞նչ անձեր, ի՞նչ նյութեր և ի՞նչ գրքեր են շոշափվել իր նյութի առնչությամբ, դրանք պետք է ուսումնասիրել, որպեսզի կարողանա այդ ուսումնասիրությունների հիման վրա տեսնել իր բերելիքը: Այս տեսակետով, ուրեմն, երկրորդը կլինի նյութի նախընթացի ներկայացումը:

գ) Երրորդը կլինի իր նյութի պարզաբանումը, վերլուծումը՝ անալիզը:

դ) Եվ չորրորդ բաժինը՝ եզրակացությունը, իր ուսումնասիրած նյութի կարևորությունը այդ ընդամանում եղած ընդհանուր նյութերի մասին:

Ես այստեղ մի փոքրիկ փակագիծ եմ բանալու: Այսօրվա ներկայացված ութ ավարտաճառերից մեկի վրա ես ուզում եմ ձեր ուշադրությունը հրավիրել և, որովհետև ես էի առաջարկել այդ նյութը, դրա համար եմ ուզում այդ մեկը լինի: «Բարեկարգության հարցը 20-րդ դարում», թե ի՞նչ եղավ 20-րդ դարում Հայ Եկեղեցու բարեկարգության մարզում:

Եկեղեցին երբեք չի եղել կայունացած վիճակում, Եկեղեցին զարգացողական ընթացք է ունեցել դարերի ընթացքում: Առաջին դարի Եկեղեցին չէ այն, ինչ որ էր չորրորդ դարի Եկեղեցին, և չորրորդ դարի Եկեղեցին չի եղել այն, ինչ որ եղել է 14-րդ դարի Եկեղեցին: Եկեղեցին նույնն է երեկ և այսօր, նույն և հավիտյան, բայց իր արտահայտության եղանակի մեջ նա ժողովրդի կարիքների համաձայն փոխել է գործելու որոշ եղանակներ՝ առանց իր էության մեջ ինքնության այլափոխման: Արդ, այս հարցը 20-րդ դարում դրվեց մեր Եկեղեցու համար: Ես հիշում եմ, երբ առաջին անգամ իմ թեգի նյութն առաջարկեցի դասախոսիս, «Հայաստանյայց Եկեղեցին և Քաղկեդոնի ժողովը», կտրուկ մերժեց: Ասաց, թե չես կարող մի թեգում ներկայացնել ամբողջ պատմության ընթացքին Քաղկեդոնի ժողովի մասին եղած երևույթները: Դու պիտի նեղացնես դաշտը, որպեսզի խորացնես մշակումը: Ասաց, ուրեմն առաջին վաթսույն տարիները պիտի առնես, ոչ թե 1800 տարիները: 60 տարվա մեջ ի՞նչ պատահեց, 451 թվականից մինչև 511 թվականը, պետք է ուսումնասիրես, այլ ոչ թե ընդհանուր կերպով խոսես Հայ Եկեղեցու մասին, ուր նորություն բերող ոչինչ չի կարող լինել: Ուրեմն,

ասաց, անկոխ գետիններով պիտի անցնես, չհրատարակված փաստաթղթեր պիտի թարգմանես, և այդ պարագային կընդունենք քո թեզը, այլապես չենք ընդունի: Նման կերպով էլ ես մտածեցի, թե բարեկարգության հարցը ողջ Հայ եկեղեցու մեջ բավականին ընդարձակ կլիներ, մանավանդ սարկավազության աստիճանի վրա, տակավին փորձի պակաս ունեցող մի անձի համար, հետևաբար ասացի 20-րդ դարը:

Արդ, հարցադրումը: 20-րդ դարում եղել են մտածողներ, որ նախաձեռնել են աշխատանքներ, և մենք ցանկանում ենք այդ աշխատանքները լուսարանել այսօր: Ոչ թե բարեկարգության մասին տեսակետ հայտնել, այլ ի՞նչ է կատարվել այդ ուղղությամբ: Եվ այն է մեկական գլխով ներկայացնել, թե ի՞նչ է կատարվել Կոստանդնուպոլսո Պատրիարքությունում, ի՞նչ է կատարվել Երուսաղեմի Պատրիարքությունում, ի՞նչ է կատարվել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում և հետո ի՞նչ է կատարվել Լիբանանում Կիրիկիո Կաթողիկոսության վերահաստատումից հետո և 1917-ի ժողովը: Ամենից կարևորը, ամենից լուրջ գործը, որ արել է, խորեն Մուրադբեկյան Կաթողիկոսն է արել, երբ 1937 թ. իր կոնդակը հրատարակեց: Այդ օրվան Գերագույն Հոգևոր Խորհուրդը մշակել էր զեկուցում, մի ընդարձակ գրություն, որ համատեստորեն Հայ եկեղեցու բարեկարգությունը համապարփակող, ընդգրկող մի այնպիսի պատկերացում է տալիս, բոլոր հարցերը դրված են ճիշտ Հայեցակետով, ճիշտ կտրվածքով, ինչպես ասում են: Այդ մասին դրվեցին հոդվածներ, տպագրվեցին գրքեր:

Երկրորդ՝ հարցերից առաջինը կլինի՝ պատմական տեսակետից ի՞նչ կատարվեց, ապա թե՛ ըստ էության, ըստ բովանդակության ի՞նչ կատարվեց: Եվ այսպես. առաջին հարց՝ եկեղեցական արարողությունների հարցը. Հասկանալի է ժողովրդին, թե Հասկանալի չէ, ի՞նչն է սկզբնականը, ի՞նչն է հետսամուտը, ի՞նչն է նետելին, ի՞նչն է խոտելին՝ այս բոլորը պետք է քննարկվեն ըստ բովանդակության: Տեսեք, երկու բաժին ենք ունենում այստեղ. մեկը՝ պատմական զարգացումը՝ ի՞նչ է կատարվել, մյուսը՝ ի՞նչ հարցերի ըստ էության անդրադարձանք:

Տեսեք, մեկ հարցում արվեց, բայց այդ հարցումը պատասխան չստացավ: Հարցը վերաբերվում է տոմարին: Այս մասին Հայր Բագրատն ասաց, թե սարկավազը գրեւ է, որ խանգարում է Հայ եկեղեցու միությանը: Դա եկեղեցու միությանը չի խանգարում: Եկեղեցին չի դադարել մի լինելուց, բայց խանգարել է եկեղեցու ծիսական դրությանը: Ծիսական կիրարկության եղանակը մեր ժողովրդի մեջ չփոթ է ստեղծել, թե ինչպես, օրինակի համար, մի քաղաքում՝ Երևանում, Լիբանանում կամ Ամերիկայում, մենք հունվար 6-ին ենք տոնում Սուրբ Մովսեսը, Երուսաղեմում և Ռուսաստանում կամ Վրաստանում տոնվում է 19-ին: Դա խանգարում առաջ կրերի ոչ թե եկեղեցու միությանը, ըստ էության միությանը, այլ այդ եկեղեցու միասնական ծիսական արտահայտության եղանակում:

Ապրեք, և թող այսօրվա ուրախությունը առավել կրկնապատկվի այն օրը, երբ այս նույն սրահում դարձյալ կհավաքվենք՝ ունկնդրելու ձեր վարդապետական թեզերի պաշտպանությունը»:

Հավարտ իր հայրակաճ խրատ-հորդորի, վեհափառ Հայրապետ սարկավազներից Նվիրեց մեկական ժամացույց, որպեսզի, կրելով այն, Երանմշտապես հիշեն ժամանակի անկրկնելիության, անցավորության, մահ՝

անպարագրելիության մասին, այսինքն՝ ժամանակը երբեք չլսվեց այդ փոփոխականության, այլ փորձեց արժևորել այն իրենց բարի ու խամտալից գործերով, առարկայով, այլ փորձեց արժևորել այն իրենց վեհացնող գիտելիքներ ամբարներով, իսկ միտքը խորացնող, մտքին թև տվող, հոգին վեհացնող գիտելիքներ ամբարներով, իսկ այս ողջ հարստության բազմ ու պսակը եղող ճշմարտությունը լինի նրանց միակ ռեզիլիենցը, որովհետև բանկ է ժամանակը, սակայն ավելի բանկ է ճշմարտությունը...

«ԱՄԵՆ ՄԱՐԴՈՒ ՀԱՄԱՐ Ի ԲՆԵ ՄԻ ԿՈՉՈՒՄ ԿԱ»

Մեծ գրող Բալզակի այս խոսքերը, թերևս իմաստացած են իր ժամանակաշրջանում կյանքն իրավամբ ապրող և կյանքի էջերի սևին ու ճերմակին մոտիկից փայտանք մարդու եզրահանգումով, ում համար վիշտը, դժբախտությունը, տխրությունը, թշվառությունն ու տառապանքը միախառնվելով, մշտապես ծնունդ են տվել լավին ու քարուն, գեղեցկին ու վսեմին: Սակայն եթե մե՛ր օրերի վկայագիրը լինեք, համոզված եմ, որ անպայման պիտի շարունակեք միտքը՝ Ամենայն Հայոց վեհափառ Հայրապետի մասին խոսելիս: Այդ ժամանակ երևի այսպես կհնչեին Բալզակյան ճշմարտությամբ շնչող խոսքերը, ամեն մարդու համար ի բնե մի կոչում կա, սակայն բացառիկ են այն մարդիկ, ովքեր կարողանում են միանգամից համատեղել մի քանի կոչումներ՝ դրանցից յուրաքանչյուրին տալով առանձնակի շուք, նույն բարձրության աստիճանի վրա պահելով, և ոչ միայն պահելով, այլև դարձնելով կյանքի նպատակ, ձգտում, դավանանք...

Այս համոզումով և իրենց առաքելության բարձր գիտակցումով էին հոկտեմբերի 30-ին Գևորգյան Հոգևոր ձեմարանի նույն սրահում գտնվում նաև Հայոց փիլիսոփայության ակադեմիայի նախագահության անդամները՝ ակադեմիայի պրեզիդենտ Գևորգ Բրուտյանը, ՀՀ Ազգային Ակադեմիայի փոխպրեզիդենտ Սերգեյ Համբարձումյանը, Երևանի Պետական Համալսարանի փիլիսոփայության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան Էդուարդ Մալգարովը, Երևանի Պետական Համալսարանի նախկին պրոռեկտոր Լյուդվիգ Կարապետյանը:

Հայոց փիլիսոփայության ակադեմիան, պրեզիդենտի թափարակ իսկ ասած, իր բնույթով երկրորդն է ողջ աշխարհում: Եվ այսօր համաձայն ակադեմիայի նախագահության որոշման, իրենց բարձրագույն պարգևը՝ «ՌԱՎԻԹ ԱՆՀԱՂԹ» մեդալը, որպես երախտիքի ու խոնարհության դրսևորում, առաջինը շնորհում էին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբրելին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ որպես լավագույն փիլիսոփայի ու մտածողի:

Խոսելով Նորին Սրբության փիլիսոփայական հարուստ մտքի խորության, գրած հետաքրքիր հոդվածների մասին, ակադեմիայի պրեզիդենտն արգամձակելի ճշեց,

«Հարգարժան Հոգևոր Հայրեր, Գևորգյան ձեմարանի սիրելի սպեյսեր.

Ես և իմ գործընկերները, որ ներկայացնում են Հայոց փիլիսոփայական ակադեմիայի նախագահությունը, եկել ենք այստեղ մի վսեմ առաքելությամբ: Հայոց փիլիսոփայական ակադեմիայի նախագահությունը որոշում է ընդունել իր բարձրագույն պարգևը՝ եռամսհ փիլիսոփա Դավիթ Անհաղթի անվան Հուշամեդալը Հանձնել Ամենայն Հայոց Կաթողիկոս Գաբրելին Ա-ին:

Լսելով Ձեր սաների ճառերը, ես որոշ չափով ընդարձակեցի իմ գիտելիքները, նաև հասկացա, որ պետք է բացատրեմ որոշ հասկացություններ, որոնք

կհիմնավորեն մեր այս որոշումն ու գործելակերպը: Առաջինը փոխտոփայություն մասին է: Փոխտոփայությամբ տարբեր ժողովուրդներ ներկայանում են աշխարհին: Երբ Հույներ ենք ասում, մենք նախ և առաջ նկատի ունենք Պլատոնին, Սոկրատեսին, Արիստոտելին: Իսկ այսօր փոխտոփայության մասին խոսելիս, հիշում են Հայաստանը, մեր փոխտոփայական ակադեմիան, որովհետև, Հայաստանից բացի, միայն մի երկիր ունի նման ակադեմիա: Ընդ որում հեշտ չէր հիմնադրել այդպիսի ակադեմիա, քանի որ պետք էր նաև 20-րդ դարի խոշորագույն փոխտոփաների համաձայնությունը՝ այսպիսի ակադեմիա Հայաստանում ստեղծելու: Այն ոչ միայն ստեղծվեց 11 տարի առաջ, այլև արդեն 11 տարի է, ինչ այդ ակադեմիայի անդամ են աշխարհահռչակ փոխտոփաներ Ամբրիկայից, Անգլիայից, Հունաստանից, Կանադայից, Նոր Զելանդիայից և այլ երկրներից: Այժմ մեր 39 ակադեմիկոսներից 20-ը այդ երկրներից են, և բոլորի համար էլ Դավիթ Անհաղթը եռամեծար է, որովհետև նա այն իմաստասերն է, որ պատիվ կբերեր ցանկացած ժողովրդի: Դավիթ Անհաղթի անունը կրող մեզալը, որպես բարձրագույն պարզև, ամբարշտվեց նաև 1980 թվականին, երբ համաշխարհային չափանիշներով Հայաստանում ու այլ երկրներում՝ Հունաստանում, Ամբրիկայում, Բուլղարիայում և այլն, նշվեց Դավիթ Անհաղթի 1500 տարին: Մի մարդ, որ, այլ երկրների փոխտոփաների հետ բանավիճելիս, այնքան բարձր է պահել փոխտոփայության պատիվն ու փոխտոփայական գիտելիքների այնպիսի իմացություն է ցուցաբերել, որ անվանվել է եռակի մեծ և անհաղթ փոխտոփա:

Մեր պատմության քառուղիներում այնպես է պատահել, որ մեր եկեղեցին և հոգևոր հայրերը առանձնահատուկ առաքելությամբ են հանդես եկել: Պատմությունը մեզ պարտադրել է, որ մենք հարգանքով վերաբերվենք մեր հոգևոր հայրերին, որովհետև նրանց կատարած Հայապաշտպանության գործը, Հայ մտքի զարգացման գործում, անուբանալի է: Հիանալի կերպով շարունակում է մեր լավագույն Կաթողիկոսների ավանդույթը և ամեն ինչ անում է մեր ժողովրդի համար Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը: Որպես գրչի մարդ, ես պետք է ասեմ, մենք բարձր ենք գնահատում նրա գրչի արգասիքը հանդիսացող ստեղծագործությունները: Նա մոտ է մեր հոգուն նաև որպես գրչակից, որպես ստեղծագործող և ամեն կերպ պաշտպանում է Հայ գիտությունը:

Այժմ մենք հրատարակում ենք Հայոց փոխտոփայական ակադեմիայի օրգանը: Այն առաջին ամսագիրն է գիտության բնագավառում անգլերեն լեզվով, անգլիախոս երկրների համար: Մեր Հայրապետը մեծ եռանդով ու ջանասիրությամբ է պաշտպանում այնտեղ տեղ գտած դադափարները, օժանդակում ամեն կերպ: Ամսագրի հենց առաջին համարում առաջին հոդվածը Վեհափառ Հայրապետին է: Ու կարող եմ շարունակել, այլ կովանհներ ևս բերել մեր որոշման օգտին, բայց կարծում եմ, որ այսքանն էլ բավական է՝ հասկանալու համար, թե ինչու մենք Հայաստանում Դավիթ Անհաղթ առաջին մեզալը՝ մեր բարձրագույն պարզևը, շնորհում ենք Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսին:

Ակադեմիայի պրեզիդենտ Գևորգ Բրուսյանի ձեռնից ընդունելով պատվավոր պարգևը և շնորհակալություն հայտնելով բարձր գնահատանքի համար, Նորին Արքեպիսկոպոս իր ուրախությունը կիսեց ներկաների հետ:

«Ես իմ շնորհակալությունն եմ Հայտնում այս անակնկալի համար: Պիտի ասեմ, որ Դավիթ Անհաղթի մեզալը երբ տեսա, նկատեցի ինձ ուղղված նրա խորունկ

Հայացքը. մտածեցի՝ թե ինչպես պետք է իբր այդ նայվածքի դիմաց պայծառ դեմքով ներկայանամ: Ուրեմն, պետք է ավելի շատ աշխատեմ, որպեսզի իմացության արժեքներին, գաղափարների ճշմարտություններին փնտրողների ճիշդ չափաչափ հայության միջից և չտարվենք միայն տնտեսական, տեխնոլոգիական այն հարցերով, որ քամում են մարդու էությունը, երբ այդ մարդը չի կարողանում հոգեկան և իմացական բարձունքներին հասնել՝ ըստ իր աստվածային կոչման: Հեռուալսող, մաղթում եմ ի բոլոր սրտե ամենքիս նորանոր հաղթանակներ գիտության բնագավառում»:

Հայոց փիլիսոփայական ուկադեմիայի նախագահության անդամները Նորին Առաք Օծությանը հանձնեցին նաև փիլիսոփայությանը վերաբերող գրքեր:




Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով ավարտվեց հանդիսությունը՝ Գևորգյան Ճեմարանի հարուստ ու ավանդաշատ պատմությանը մի նոր էջ հավելագրելով: Իսկ ներկաներից յուրաքանչյուրին, հատկապես Ճեմարանի սաներին մեզ մեզմե է միայն հիշեցնել, որ ով էլ լինե՛ք և կամ ուր էլ ապրե՛ք, միևնույնն է, ձեր կյանքի յուրաքանչյուր օրը անպայման մի նպատակի նվիրե՛ք ու ամեն երեկո կտեսնե՛ք, որ քարի գործ է կատարվել: Նաև չմոռանա՛ք, որ նվիրումն է արարում քարին կամ, ամերիկյան մեծ գրող, իմաստասեր ու բժիշկ Օլիվեր Հոլմսի քառերով ասած. «Ամեն ինչ սուրբ է այնտեղ, ուր նվիրումն է ձերադրում»:

ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ



ԿՐՈՆԵՐԸ ՆԸՍԻՐԸ ԿԸՆ



ՇԱՀԷ ԱՐՔ. ԱՔԵՄԵԱՍ

ԴԱՌԹ ՓԻԼԻՍՈՓԱՅԻ «ՅԱՂԱԳՍ ՍԱՂՄՈՍԱՏ ԴԱՌԹԻ»

Հայ ձեռագիր և երև ապագիր Աստուածաշունչներում մեջ, Սաղմոսաց գիրքին իրրու նախադրութիւն կամ յառաջարան կը գտնուի գրութիւն մը, նետեռնալ վերանգրով. **Նրանեղոն Նալիփանու Նալիսկոպտի իրպարացու Յաղագս Նրոց Սաղմոսարանին:** Գրութիւնը կը սկսի այսպէս. «Զամեմայն ինչ գոր ասաց իայրն մեր Աթանաս...»:

Ձեռագիր Աստուածաշունչներու ցուցակագրութեան ընթացքին, մեր ուշադրութիւնը գրանցին նրկորդ և երրորդ նախադրութիւնները, որոնք կ'ընկերանային առաջինը, սակայն քաղցատարք քիչ քիտով ձեռագիրներու մեջ, ընդամենը երեւուն և մէկ ձեռագիրներ: Բոլորին մեջ, Նրորդ, նախադրութիւնը կը սկսի հետեռնալ քառերով. «Աթանասի Նալիսկոպտի Աղեփսանդրացույ գամեմայն Սաղմոսաց Դաքի...»: Աթանասի անունը իրրու վերնագիր գործածուած չէ, այլ ուղղակի գրութեան առաջին քունը և, որմէ ետք կը շարունակուի գրութիւնը:

Նրկորդ տեղը գրառող նախադրութիւնը, երբեմն անվերնագիր և, սակայն երբ ձեռագիրը ունի վերնագիր մը գրութեան գլուխը, այդ կրնայ ըլլալ. «Դաքի փիլիսոփայի Յաղագս Սաղմոսաց Դաքի» և կամ «Նալիփանու իրպարացու Յաղագս Սաղմոսաց Դաքի»: Սակայն երբեք պարագանքուն, նոյն գրութիւնը և որ կը դադարէ և որ կը սկսի հետեռնալ քառերով. «Արդ ատեալ ատէ գեղջիւր իւրոյն...»: Նրկու հեղինակներու վերագրուած անց գրութիւնը ցարդ իրատարակուած չէ. գայն իրատարակելը և ներկայ ուսումնասիրութեան մը պատկեր:

Սաղմոսաց տոյն նախադրութեան իրատարակութիւնը պատրաստելու իամար քաղցատուած ձեռագիրներում քիւն և տաներիւք, միակ ձեռագիրները, որոնց մանրակապաւնները մեր տրամադրութեան տակ կրցանք ունենալ: Ասոնցմէ երեւը անվերնագիր հն, վեցը՝ նախադրութիւնը կը վերագրեն Նալիփանի հեղինակութեան, իսկ մնացեալ չորսը՝ Դաքի փիլիսոփային: Տանաւորը մնացեալ ձեռագիրներէն՝ ուրք կը վերագրեն գայն Դաքի փիլիսոփային, իսկ մնացեալ տալը՝ Նալիփան իրպարացին:

Հեղինակի ճարըը

Երբեք նախադրութիւններում ընթերցումը կը թողու առաջին տպաւորութիւն մը քէ՛ նրկորդ և երրորդ նախադրութիւնները չեն գործածեր նոյն լեզուն: Անկի խոր ընթերցում մը ցոյց կուտայ քէ առաջին և երկրորդ նախադրութիւնները դժուար է որ նոյն հեղինակին պատկանին, ըստ պարունակութեան, որոյնհետեւ

¹ Մատենադարան քի. 177, 182, 183, 186, 187, 188, 202, 203, 205, 348, 349, 350, 353, 354, 2585, 2628, 4113, 4114, 4806, Նորատու՛մ քի. 428, 1826, 1830, 1127, 2564, 1828, վեցերի քի. 1, 2, 7, 13, վեցեր քի. 71, Բրիտանական Թանգարան 8833:

² Մատենադարան քի. 177 «Ա.», վեցերի քի. 1 «Բ.», 2 «Գ.», 7 «Դ.», 13 «Ե.», Նորատու՛մ քի. 1826 «Զ.», 1830 «Ը.», 428 «Ո.», 256 «Թ.», 1127 «Ժ.», 1828 «ԺԱ.», վեցեր քի. 71 «ԺԲ.», Բրիտ. Մատ. քի. 8833 «ԺԳ.»:

նույն հարցերը կը ֆննարկեն, սակայն տարբեր բացատրութիւններ կուտան ֆննարկուած նոյն հարցերուն: Ուրեմն, որոշելու համար թէ երկրորդ նախադրութեան հեղինակը նախաժողովին է թէ Դաւիթ Փիլիսոփան, անհրաժեշտ եղաւ բացատրութիւն մը փնտռել, ներքին ու արտաքին փաստեր որոնել, որոշելու համար երկրորդ նախադրութեան հեղինակը:

Ա. ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Տրամաբանօրէն, դժուար է բացատրել թէ ինչու՞ նոյն հեղինակէն երկու գրութիւններ պիտի հետեւէին իրարու իբրեւ Սաղմոսաց նոյն գիրքին յառաջաքան, մասնաւոր երբ անոնք երկուքն ալ կը փորձեն բացատրել Սաղմոսներու վերնագիրները, հաստատելու համար նոյն կարծիքը թէ Դաւիթ մարգարէն ինքն է Սաղմոսներուն «պատեան»ը: Երկուքն ալ նոյն ճամբաներով կ'երթան դէպի նոյն եզրակացութիւնը, սակայն գործածելով տարբեր տուեալներ: Աւելի դժուար է բացատրել որ նոյն հեղինակը ներկայացնէ տարբեր փաստարկութիւններ, բացատրելու համար Սաղմոսներուն վերնագիրները, կարծէք թէ խօսքը Սաղմոսաց գիրքի երկու տարբեր բնագիրներու մասին: Նոյնքան դժուար է ընդունիլ որ նոյն հեղինակը տարբեր խմբաւորումներու բաժնէ Սաղմոսները, տարբեր վերնագիրներու մասին խօսի եւ, վերջապէս, որ մեր հայրերը ընտրած ըլլան երկու գրութիւններ նոյն հեղինակէն իբրեւ ներածական Աստուածաշունչի նոյն գիրքին, քաջ գիտալով անոնց պարունակած տարբերութիւնները:

Մեր կարծիքով, գտնուած են ձեռագիրներ, ուր Դաւիթ Փիլիսոփայի անունը անտեսուած է եւ երկրորդ նախադրութիւնը կցուած է առաջինին, որուն վերնագիրը կը յիշատակէ նախիւմ կիպրացիին իբրեւ հեղինակ: Այսօր իսկ, երեւ ձեռագիրներ վկաններն են այդ իրողութեան: Նման բնագիրներէ ընդօրինակողներ կ'կատարեն ինքն իրենց ընդօրինակածը իրարու միացուած երկու տարբեր նախադրութիւններ են եւ անջատած են զանոնք, երկրորդին վերագրելով առաջինին հեղինակին անունը: Հաւանաբար երկու աւանդութիւնները ծնունդ առած են մօտ 2-րդ դարէն մը. սկզբնական գրութիւնը վերնագրուած եղած է Դաւիթ Փիլիսոփային անունով, ապա ինկած է Դաւիթի անունը եւ երկու նախադրութիւնները միացուած են եւ, ամենէն ետք, վերանշատումի ժամանակ, առաջինին անունը գետեղուած է հեղինակին պակասող անունին փոխարէն:

Մեր կարծիքը թէ Դաւիթ Փիլիսոփան է երկրորդ նախադրութեան հեղինակը կը հիմնաւորուի արտաքին վկայութեամբ մը եւ երկու գրութիւններուն ընդհանրական ընդհանրութեամբ:

Բ. ԱՐՏԱՔԻՆ ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ՄԸ

Գրիգոր Որդի Աբասայ ԳԻՐԳ ՊԱՏՃԱՌԱՅ ծանօթ աշխատութեան մէջ կը գտնենք Դաւիթ Փիլիսոփային անունը, իբրեւ հեղինակը Սաղմոսաց գիրքին մի քանի «Յառաջաքան»ներու³: Անկէ առաջ, յիշատակուած կան, " Ս. Հարց գրուածներէն" գլուխին տակ, մեզ հետաքրքրող երկու գրութիւնները. "գ. Ս. Աբանասի Յառաջաքանն Սաղմոսաց" (թղ. 42ա-48):

"դ. Նախիւմնու իկարացու առաջաքանք Սաղմոսաց" (թղ. 48բ - 58ա):

Երկրորդ գլուխին տակ, որ է "Տոհմային Մատենագիրք", կը գտնենք.

³ Լ. Տաշեան, Ցուցակ Հայ. Ձեռագրաց Մղր. Մխթ. Ի Վիեննա, էջ 213 - 217:

4 Հանդես Ամսօրեայ, 1907, էջ 113, Ն. Ակինեանին յօդուածին մէջ: Ակինեան սխալ էջաթիւեր ցոյց կուտայ Եպիփանի նախադրութեան: Հ. Տաշեանի նկարագրութեան մէջ, Եպիփան կ'արարացիին գրութիւնը կամ անոր նկարագրութիւնը կը գտնուի թղ. 56ա - 60ա:

Ուրեմն, Պատճառաց Գիրքին հեղինակը կը յիշատակէ երեք “առաջաբանք” Սաղմոսաց գիրքին, իր գիրքին այն մասին մէջ. “Որոշում ընձեռնի Պատճառք եւ Նախադրութիւնք հենց եւ նորոց կտակարանաց”: Դժբախտաբար չունինք այս երեք գրութիւններուն լման նկարագրականը, որ կայ Պատճառաց Գիրքին մէջ: Պիտի բաւականանանք Հ. Տաշեանի ըրած ամփոփումով միայն, Դաւիթի գրութեան մասին գաղափար մը կազմելու համար: Վերել մէջքերուած վերնագիրին եւ անոր յաջորդող նախադասութիւնէն ետք, Հ. Տաշեան կ'աւելցնէ. “Այս մասն այլեւայլ մանրարածամուծնք ունի: Այսպէս՝ ա. թղ. 50ր. “Վասն երգչացն: Ամենայն սաղմոսաց գրոյս միայն միաբուն պատճառք ինքն է սփանջելին Դաւիթ, եւ ի նմանէ շահեալ եւ պայծառացեալ այլ՝ այլուր ջահացուցին լոյս” եւն:” Արդ, մեր ուսումնասիրած գրութիւնը կ'աւարտի նման նախադասութեամբ մը. “Արդ ամենայն սաղմոսաց պատճառ ինքն սփանջելին Դաւիթ է եւ ի նմանէ այլքն պայծառացան”: Սակայն, ըստ Հ. Տաշեանի նկարագրականին, Դաւիթի գրութիւնը ո'չ միայն չաւարտի որ այստեղ, այլ կը շարունակուի:

Այդ շարունակութեան մէջ կը գտնուի երկրորդ նախադասութիւն մը, որուն համապատասխանը կայ մեր հրատարակած նախադրութեան մէջ. ք. թղ. 51ա. “Վասն վերնագրացն: Այլ գանգաւելոյ վասն վերնագրացդ այս ինչ է պատճառք. զի զոր ասաց զսաղմոսն՝ զպատճառն առընթեր իւրաքանչիւր ումեք ի սաղմոսացդ վերագրեաց, որպէս ումեք յայլոց մարգարէիցն. այլ յետոյ այլ՝ զայսպիսի հետազօտեցին խնդիրս” եւն: Ասոր համապատասխանող նախադասութիւնն է. “Այլ գանգաւելոյ վերնագրացդ այս ինչ են պատճառք. քանզի ոչ որ ասաց զսաղմոսդ զպատճառսն առընթեր իւրաքանչիւր ումեք ըստ սաղմոսին վերնագրեաց, որպէս ումեք յայլոց մարգարէից”: Երկու տարբերութիւններ կան երկու իրարու համապատասխանող նախադասութիւններուն մէջ: Նախ՝ մեր հրատարակած գրութիւնը աւելի ամփոփ է եւ ունի ժխտական “ոչ” մը, որ աւելի ճիշտ իմաստ մը կուտայ նախադասութեան: Երկրորդ՝ մեր գրութեան մէջ, այս նախադասութիւնը կը գտնուի միւսէն առաջ, մինչդեռ Հ. Տաշեանի մէջքերածը, կը հետեւի նախորդին: Հ. Տաշեան կը յիշէ երկու կտորներ եւս, սակայն անոցն համապատասխան նախադասութիւններ չկան մեր գրութեան մէջ: Ուրեմն, Աթանասի գրութեան նման, Դաւիթի բնագիրը աւելի երկար գրութիւն մը եղած է քան Աստուածաշունչերուն մէջ պահուածը, արտայայտութեան ձեւերուն մէջ տարբերութիւններ կան, ինչպէս “ոչ”-ի մը պակասը երկար բնագիրին մէջ, որ նախադասութեան ամբողջ իմաստը կը փոխէ, ինչպէս նաեւ ետ-առաջութիւն մը ընդհանուր խմբագրութեան մէջ:

Վերոյիշեալ տեղեկութիւնները բաւարար են հաստատելու համար թէ Աթանասի որդի Գրիգորի նման հեղինակութեան մը համար, որ եղած է Հայ մատենագրութեան պատմութեան մը առաջին հեղինակը, ինչպէս Ակինեան կը սիրէ որակել զայն, Դաւիթ փիլիսոփան է հեղինակը, Աթանաս Աղեքսանդրացիի եւ Եպիփան Կիպրացիի կողմէն՝ միայն Հայ հեղինակը Սաղմոսաց գիրքի յառաջաբանի մը: Աւելին՝ վերել յիշուած երկու վկայութիւնները կը հաստատեն նաեւ թէ մեր Աստուածաշունչերուն մէջ պահպանուած գրութիւնը մաս մըն է միայն Պատճառաց գիրքին մէջ նկարագրուած Սաղմոսաց յառաջաբանէն, վերագրուած Դաւիթի փիլիսոփային:

Գ. ՆԵՐՔԻՆ ՓԱՍՏԵՐ

Լեզուական տարբերութիւններ: Պիտի բաւէ բաղդատել Եպիփանի «Յաղագս երգոց Սաղմոսարանի» կոչուած նախադրութիւնը «Յաղագս Սաղմոսաց Դաւիթ»

ճախադրութեան հետ. ըստ լեզուի եւ ըստ բովանդակութեան, համոզուելու համար թէ երկու տարբեր հեղինակներու գործեր են անոնք: Եպիփանի գրութիւնը ոսկեդարեան դասական գրաբարով շարադրուած թարգմանութիւն մըն է. մինչդեռ միւսին լեզուին մէջ կան Յունարան Դպրոցի գործածած բառարանէն բառեր եւ ոճեր. որոնք օտար են ոսկեդարեան գրաբարին:

Ուշագրաւ պարագայ մըն է ընդերկարեաց բառին գործածութիւնը երկրորդ Նախադրութեան մէջ: Բառը կը գտնուի ՃԺԹ սաղմոսէն կատարուած մէջբերումի մը մէջ. Վա՛յ է ինձ՝ զի ընդ երկա՛ր եղեւ պանդխտութիւն իմ:

Մեր բնագիրին ձեռագիրներէն ոմանք ունին «ընդերկարեաց» բայը. մինչդեռ ուրիշներ փոխած են զայն. ըստ Սաղմոսի ընդունուած բնագիրին, ընդ երկար եղեւ ձեւին: 2. Տաշեանի Յուցակէն մէջբերուած բնագիրին, ընդ երկար իսկական ճախադրութիւնը «Անպարագիծ աստուածեղէն տառիցն յոգիս արդարոց անձանց ձեւացելոց, առ ի մարդիկ վերածելոց...» ցուցմունք մըն է թէ Դաւիթ Փիլիսոփայի բնագիրը աղաւաղումներ կրած է. ո՛չ միայն յապաւումներով, այլ նաեւ լեզուական «սրբազանութիւններով»: Անտարակոյս որ մեր ունեցած գրութեան հիմքին կայ յունարանութիւններով շարադրուած սկզբնական բնագիր մը. որ գրուած պէտք է ըլլայ Դաւիթ Փիլիսոփայի Բարձրացուցէ՛-իմ ոճով:

Պարունակութեան տեսակէտով, տարբերութիւնները մեծ են եւ բազմաթիւ: Դաւիթի վերագրուած ճախադրութիւնը, իր ազնատուած վիճակին մէջ, ունի երկու մասեր. առաջինը կը բնութագրէ մարգարէական ոգին, սակայն յատուկ տեսակի այն մարգարէութիւնը որ կ'արտայայտուի երգով, նուագով ու պարով. ինչպէս սաղմոսները: Դաւիթ մարգարէի պարագային, ան կը շեշտէ իւրով օծումին ազդեցութիւնը, որով Դաւիթ կը մարգարէանայ ո՛չ միայն բանիւ, այլեւ երգով, նուագով եւ պարով: Իր օրհներգութիւններուն կը մասնակցին նաեւ իր ձեռքերը, իր ամբողջ էութիւնը: Մարգարէն, իր իսկ շինած գործիքներուն վրայ, կը ենչեցնէր Ա. Հոգին: Հեղինակը կը մէջբերէ Հին Կտակարանին մէջ յիշատակուած մասնաւոր պարագաները, ուր մարգարէութիւնը կ'արտայայտուի երգով, նուագով ու պարով, փաստելու համար թէ Դաւիթի սաղմոսները իսկական մարգարէութիւն են, Ա. Հոգիով ներշնչուած, ճախատեսելու համար Քրիստոսի մարդեղութիւնը, չարչարանքները, թաղումը, յարութիւնը եւ ամբողջ մարդկութեան փրկութիւնը. «մինչեւ ի գալուստ քանին»: Մարգարէութեան կնիքն է իւրով օծումը:

Եպիփան չունի նման մօտեցում, այլ իր գիտցածը սաղմոսներու մասին կը վերագրէ Աթանասի եւ Ա. Հոգիէն ստացած իր ներշնչումին:

Դասաւորումի եւ ցուցակագրութեան տարբերութիւններ: Երկրորդ մասին մէջ, հեղինակը կը ներկայացնէ Սաղմոսներուն դասաւորումը, «ըստ երբայեցւոց»: Տեսակաւորումը կը հետեւի ո՛չ թէ իւրաքանչիւր սաղմոսի պարունակութեան, այլ վերնագիրներուն: Ան կը նշէ 82 սաղմոսներ «ի Դաւիթ» վերնագիրով գատորոշուած, մինչդեռ Եպիփան նոյն տեսակի սաղմոսները կը հաշուէ 81 հատ եւ կը բաժնէ զանոնք երկու տեսակներու. Դաւթայ՝ 72 սաղմոս, իսկ ի Դաւիթ՝ 9 սաղմոս, ընդամենը՝ 81: Արդ, Հայերէն թարգմանութեան մէջ չունինք Դաւթայ ձեւը սաղմոսներու վերնագիրներուն մէջ: Ուշագրաւ է որ Յունարէն Աստուածաշունչի գիտական հրատարակութեան մէջ, թիւ 16, 25, 26, 27 եւ 36 սաղմոսներուն վերնագիրները միայն ունին սեռական ձեւը, որ կը համապատասխանէ Եպիփանի յիշած Դաւթայ ձեւին: Այս պարագային եւս, Յունական բնագիրին հրատարակիչը կը

յիշէ չորս ձեռագիրներ, որոնք պահած են ի Դաւիթ ընդհանրացած ձեւը, յիշեալ հինգ սաղմոսներու պարագային եւս⁵:

Եպիփանի Գալատացիներուն կը թուէ սաղմոսներու երկու ցուցակներ, շատ պարզ ձեւով. Դաւթի՝ 82, Սողոմոնի՝ 2, Կորնալի՝ 11, Ասափայ՝ 12, Մովսիսի՝ 1, Էթեմայ (Էմանայ)՝ 1, ալիուիա՝ 17, «առանց գրոց», ալսինքն անվերնագիր՝ 19: Ան կը վերջացնէ ցուցակը. «Եւ եւ անուամբ որ վերնագիր ունին, եւ ոչ յայանի թէ ո՛րք են, միանգամայն՝ ճԾ»: Այս ցուցակին կը հետեւի նոր հատուած մը, ուր կ'ըսուի թէ՝ «մանկուսն երրայեցոց» հինգ մասերու կը բաժնեն Սաղմոսաց գիրքը. «Դաւթայ գրին ՀԲ: ի Դաւիթ Թ: Ասափայ՝ ԺԲ: Անգէի եւ Զաբաբայի Զ: Առանց անուան ԺԶ: Մովսիսի Ա: ալիուիա է: աշտինանաց ԺԳ»: Եպիփանի երկու ցուցակները տարբեր կարծիք կը յայտնեն սաղմոսներու հեղինակի մասին.

Առաջինը՝ որ իր Գալատացիներու ամբողջ պատճառն է, կը պնդէ թէ՝ «Ինքն Դաւիթ էր պատճառք ամենայն սաղմոսացս, որպէս եղեզն գրչի որ թացեալ եւ ներկեալ լինի, այսպէս եւ երանելին Դաւիթ ներկեալ շնորհօք հոգւոյն սրբոյ...»: Իսկ երկրորդ ցուցակին մէջ կը ներկայացնէ երրայեցիներու աւանդութիւնը, սակայն նախորդ ըսածին հակառակը կը գրէ. «Գրոցս սաղմոսաց այսպէս է որոշութիւն որ ի նշմարիտ օրինակաց, որպէս ոմանք կարծեցիք՝ թէ ամենայն սաղմոսքն՝ Դաւթի ասացեալք, են այլ եւ այլոց մարգարէից...»:

Երկրորդ Գալատացիներու հեղինակին մօտեցումը եւ ցուցակագրութիւնները տարբեր են: Ան նախ կ'ըսէ թէ եկեղեցիին ունեցած 150 սաղմոսները զանազան վերնագիրներ ունին, ոմանք՝ «ըստ երրայեցոց» եւ ոմանք՝ տարբեր: Արդ, մեր հեղինակը կը սկսի թուել սաղմոսները, որոնք իւրաքանչիւր վերնագրի տակ կ'իյնան, «ըստ երրայեցոցն»: Բաղդատուած Եպիփանի յիշած «երրայեցոց» ցուցակագրութեան, թիւերը տարբեր են, մէկէն միւսը: Մեր կարծիքով, իւրաքանչիւրը աչքի առչելու ունի Երրայակոն տարբեր բնագիր մը, որը անպայմանօրէն Երրայեքէն կրնար չըլլալ, այլ, հաւանաբար, արտագաղթած Հրեաներու շրջանակին մէջ գործածուած Յունարէն թարգմանութիւն մը: Մեր ուսումնասիրութեան սահմանէն դուրս կ'իյնայ պրպտիլ այս պարագան, մեզի համար իմանալանը ճշելն է տարբերութիւնները երկու Գալատացիներուն, հաստատելու համար թէ չեն կրնար երկուքն ալ նոյն գրիչն ելած ըլլալ:

Բացի բունական տարբերութիւններէն, որոնք յստակ կերպով կը վերաբերին Սաղմոսաց գիրքի երկու տարբեր աւանդութիւններու, երկու Գալատացիներուն երեք ցուցակներուն մէջ, սաղմոսներու վերնագիրները չեն համապատասխաներ հայերէն թարգմանութեան վերնագիրներուն, որոնք ընդունուած են Հայ Աստուածաշունչի աւանդութեան մէջ: Սաղմոսաց գիրքի գիտական հրատարակութիւնը միայն կրնայ պատասխանել այն հարցին թէ ո՞ր աւանդութեան հետեւած են Սաղմոսաց գիրքին Հայ թարգմանիչները. վերնագիրներու պարագային:

Մեկնողական տարբերութիւններ: Վերնագիրներու մեկնութեան մէջ եւս, երկու հեղինակները կը ներկայացնեն բազմաթիւ տարբերութիւններ: Իբրեւ օրինակ յիշատակենք անոնցմէ մին:

Հայերէն թարգմանութիւնը, հետեւելով յունական բնագրին, 17 սաղմոսներու վերնագիրներուն մէջ ունի «Օրհնութիւնք աշտինանաց» բացատրութիւնը: Եպիփան երկարօրէն կը մեկնաբանէ երգ աստիճանաց բացատրութիւնը, նախ մէջքերելով Թէոդոտոնի մեկնութիւնը, որ է «երգ ելլց», ապա Սիմաֆոսի եւ Ակիւղասի մեկնութիւնը, որ է՝ «երգ յեւս»: Իսկ ինք, կը մեկնաբանէ եւլ բառը՝

⁵ Alfred Rahlf, *Psalmi cum Odis*, Gottingen, 1967.

իրքն ակնարկութիւն Հրեայ ախտը ակնարկում վերադարձին Բարեկունքն նրաւադէմ. գոր Դաւիթ մարգարէացած է յառաջատեսող հոգւոյն ազդեցութեամբ: Սակայն, նախատեսելով որ ռմանք պիտի չուզեն վերադառնալ «Յղճալի փաղաւն նրաւադէմ», յորդորած է բոլորին ըլլալ սիրով եւ միաձայն եւ ըսած՝ «Զի՞ ռարի կամ զի՞ վայելուչ. զի բնակին եղարք ի միասին» (Աղմ. ՃԼԲ): Իսկ սաղմոսներու նոյն խումբին բոլոր ակնարկութիւնները երթալու նրաւադէմ, բարձրանալու Սիոն, բնակութիւն հաստատելու այնտեղ եւ անոր բարձունքին բարձրացնելու իրենց օրհնութեան երգերը, նպիփան չի՞ մեկնաբաներ զանոնք իրքն Տաւարի նաւապարհին երգուած աղօթքներ. այլ իրքն ախտը վերադարձի յորդորներ:

Նպիփանի երկար մէջքերումներուն հակադրաբար. իր կուտ ոճով, Դաւիթ կը մեկնէ նոյն քաջատրութիւնը աւելի պարզ եւ յստակօրէն. «Եւ գորս ի մուսս եւ յիս տաճարին երգէին՝ աշտինանաց զայն կոչեն»:

Դ. ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Վերալիշեալ բոլոր ցուցմունքները համոզիչ կը դարձնեն փաստը թէ Դաւիթ փիլիսոփային անունը պատահականօրէն չէ՝ պահուած որոշ ձեռագիրներու մէջ իրքն հեղինակը ներկայացուած գրութեան, որ է Սաղմոսաց գիրքի նախագրութիւն մը: Բաւ պիտի ըլլար ուշադրութեամբ կարդալ սոյն նախադրութիւնը զգալու համար Դաւիթի յատուկ՝ յստակ մտածումի եւ պարզ ու միաձուլ ոնի մը գոյութիւնը, առաջին տողէն մինչեւ վերջինը: Հեղինակը իր տեսութիւնը ունի Դաւիթի մարգարէութեան էութեան եւ անոր բնոյթի մասին. կը հիմնադրէ զայն եւ կ'անցնի քաջատրելու թէ ինչու՝ Հրեական աւանդութիւնը անվերջադիր թողած է քաղաքի սաղմոսներ, իսկ յետագային ուրիշներու վերագրուած են անոնք, երբ Դաւիթ ինք է անոնց հեղինակը:

Դատելով Աթանասի նախադրութեան լեզուին մէջ եւս նշմարուող յունարան եզրերէն եւ մանաւանդ այն իրողութենէն որ բոլոր ձեռագիրները, որոնք ունին Աթանասի այս նախադրութիւնը, ունին նաեւ Դաւիթի նախադրութիւնը, կը կարծենք թէ փաստ մը եւս կ'աւելնայ թէ Մովսէս եւ Դաւիթ Աստուածաշունչով զրադած են եւ Աղեքսանդրիայի մէջ տիրող բնագիրը՝ եւ անոր մասին մեկնութիւններ բերած են Հայաստան: Խորհնացիին տեղեկութիւնը իր եւ ընկերներուն մասին թէ՛ իրենց բերած արուեստով վերանայած են Յունարէն օրհնակին վրայէն կատարուած թարգմանութիւնը, ձրի խօսք մը չէ՝ բերելու:

Դաւիթի նախադրութեան մէջ, յատուկ ուշադրութիւն կը տրուի թուանշաններու խորհուրդին, ինչ որ կը յիշեցնէ Աղեքսանդրիոյ Պոտրիենան մտածողութեան կերպ մը: Դաւիթ մարգարէի պատրաստած առաջին բնադրին լարերուն հօքը թիւին խորհրդանշական քաջատրութիւնը, տասը թիւին ունեցած կապակցութիւնը կատարելութեան գաղափարին հետ, կորսուած Առակներուն երեք հազար թիւը եւ հինգ հազար կորսուած սաղմոսները եւ, վերջապէս, յատուկ շեշտը՝ թէ նկեղեցիին աւանդուած սաղմոսներուն թիւն է հարիւր եւ յիսուն, բոլորը կը յայտնաբերեն Աղեքսանդրիոյ իմաստասիրական շրջանակներուն մէջ թափանցած երեւական մտածողութեան մը մտածողութիւնը, որ է փնտռել իրերու եւ երեւոյթներու թափուն իմաստը բնութեան տուած նշաններուն եւ մանաւանդ՝ թուանշաններուն մէջ: Մտածելու այս կերպէն ծնունդ առաւ քրիստոնէական մտածողութիւնը, իմաստասիրական եւ աստուածաբանական իր գոյգ ուղղութիւններով, հիմնուած՝ յայտնուած գրականութիւնը մեկնաբանելու եւ տրամաբանօրէն վերլուծելով հասկնալու սկզբունքին վրայ:

Այլապես ուշագրաւ է որ՝ Աթանասի գրութիւնը կը պարունակէ Աստուածաշունչի ամբողջ կանոնը եւ թէ գրչագիրներուն մէջ պահուածը մէկ մասն է միայն անելի ընդարձակ գրութեան մը, ըստ Պատնառաց գիրքի եեղինակին: Նոյնը եւ անելին՝ Դաւիթի գրութեան պարագային: Աստուածաշունչի Յունարէն թարգմանութիւններու գիտական ուսումնասիրութիւնները հաստատած են թէ Աղեփանդրիայի Հրեական միջավայրին եւ քրիստոնեայ շրջանակներուն մէջ, լարուածութիւնը հետզհետէ անելի զարգացած է հորորդ եւ չորրորդ դարերուն, Աստուածաշունչի Յունարէն ընթերցումի ձեւին մէջ, ոչ թէ լեզուական այլ եւ մեկնողական տեսակետէն: Գիտե՞նք նաեւ թէ՛ քրիստոնէական աշխարհին մէջ, չորս տիրական անուններ կան Աստուածաշունչի բնագիրին ուսումնասիրութեան մարզին մէջ: Ասոնք են Աթանաս, Եղիփան, Որոգինէս եւ Յերոնիմոս: Մովսէս եւ Դաւիթ ծանօթ եղած են Աղեփանդրիայի երկու միջավայրերուն՝ հրեական եւ քրիստոնէական, ինչպէս կը յայտնուի Սաղմոսի ճախարհութիւններու ընթացքին վկայութիւններէն: Այժմ ունե՞նք փաստ մը թէ աթանասեան ազդեցութիւն մը ընդունած է Հայաստան, ոչ միայն աստուածաբանական գրութիւններու թարգմանութեամբ, այլեւ աստուածաշնչական բնագիրի եւ անոր մեկնութեան մարզին մէջ: Աղեփանդրեան ազդեցութիւնը քերականութեան մին է փիլիսոփոս Դաւիթ մը, որ չի՝ կրնար տարբեր ըլլալ Անյաղթէն:

Ներկայ հրատարակութիւնը

Դաւիթ Փիլիսոփայի Սաղմոսաց գիրքին ճախարհութիւնը հրատարակելու համար, իբրեւ հիմք-բնագիր ընտրեցինք Երուսաղէմի Ձեռագրատան թիւ 1926 ձեռագիրը, ընդօրինակուած Կիպրոսի Մաղուսա քաղաքին մէջ, 1908-ին: Ձեռագիրը մասնակի Աստուածաշունչ մըն է, որ կը սկսի Սաղմոսաց Գիրքին երեք ճախարհութիւններով եւ կը պարունակէ, Սաղմոսներէն ետք, իմաստութեան գիրքները, Յոբ, Նաայի, տասներկու մարգարէները, Նրեմիա, Բարուք, Դանիէլ՝ եւ Նգեկիէլ: Բաղդատիւ է ետք Դաւիթ Փիլիսոփայի ճախարհութիւնը նոյնին միւս օրինակներուն հետ, գտնա՞ծ թէ իր ենութեամբ, քայք մանաւանդ՝ բնագիրին ընտիր եւ խնամուած նկարագիրով, լաւագոյնն էր իբրեւ հիմք ծառայելու ընդդէմ միւսներուն:

Տարբերցուածները քաղուած են հետեւեալ ձեռագիրներէն.

(Ա) Մատնադարան թիւ 177, ընդօրինակուած Կիլիկիոյ մէջ, ԺԳ. դարուն:

(Բ) Վենետիկ, թիւ 1, դարձեալ Կիլիկիա, 1319-ին ընդօրինակուած:

(Գ) Վենետիկ թիւ 2, 1641-ին ընդօրինակուած, տեղը՝ անյայտ:

(Դ) Վենետիկ թիւ 7, ընդօրինակուած Լեհաստանի մէջ, 1656-ին:

(Ե) Վենետիկ թիւ 13, ընդօրինակուած 1635-ին, տեղը՝ անյայտ:

(Զ) Երուսաղէմ թիւ 1926, իբրեւ հիմք-բնագիր օգտագործուած, ներկայ հրատարակութեան համար, մէկ փոփոխութեամբ, որ է Բորովամ անունը, որ մեր ձեռագիրին մէջ կը կարդացուի Որոքովամ:

(Է) Երուսաղէմ թիւ 1930, Կիլիկիոյ Սիս մայրաքաղաքէն, 1323-ին օրինակուած:

(Ը) Երուսաղէմ թիւ 428, ընդօրինակուած Պոլսոյ մէջ, 1620-ին:

(Թ) Երուսաղէմ թիւ 2561, ընդօրինակուած Պոլսոյ մէջ, 1670-ին:

(Ժ) Երուսաղէմ թիւ 1127, ընդօրինակուած Տիգրանակերտի մէջ, 1635-ին:

(ԺԱ) Երուսաղէմ, թիւ 1929, տեղը եւ թուականը անծանօթ, հաւանաբար ԺԷ դարուն ընդօրինակուած:

(ԺԲ) Վիեննա, քիւ 71. Տեղը եւ թուականը անձանօթ, հաւանաբար ԺԴ. դարու ձեռագիր:

(ԺԳ) Բրիտանական Մատենադարան, քիւ 8833, տեղը եւ թուականը նույնպէս անձանօթ. թերեւս ժէ դարէն:

Տարընթերցուածներուն գլխաւորները, որոնց համաձայն կարելի է խմբաւորել բնագիրներու ընտանիքները. հետեւեալ թիւերով նշանակուածներն են.

(1) զեղջիւր փոխանակ զարուակ ընթերցուածին:

(2) Հանցե գնախնիս եւ զխաչրիս Տեառն Բանապազ փոխանակ Բանապազ ...:

Այս նախադասութիւնը պակասաւոր է եւ թերեւս այդ պակասութիւնը սրբագրելու համար եղած են փոփոխութիւնները ընդօրինակողներուն ձեռքով. որոնք կարդացած են զայն ի պատրաստութիւն քանդակող պատարագաց Բանցե գնախնիս եւ զխաչրիս Տեառն Բանապազ: Կը կարծենք թէ նախադասութեան սկիզբը ինկած է մաս մը, որ պիտի կապէր այս նախադասութիւնը նախորդին, ամբողջացնելու համար իմաստը, որ է թէ սաղմոսասաց մարգարէն իր խօսքն ու երգը կը միացնէր նուագարանին, ընծայելու համար զանոց Տիրոջ, իբրեւ իր հոգիին պտուղներուն մշտական պատարագը:

(19) Բովանդակ ունի եկեղեցի փոխանակ ամբողջ բովանդակութիւն եկեղեցոյ:

(20) ըմզ երկար եղի փոխանակ ընդերկարեաց քային, որ յունարանութիւն մըն է: Երկու պարագաներուն գրիչին կատարած սրբագրութիւնը կուգայ հայացումի մտահոգութենէն, ինչպէս նշեցինք ուսումնասիրութեան ընթացքին:

Զորս այս "սրբագրութիւնները", այլ մանր տարընթերցուածներու հետ, կը գտնուին գլխաւորաբար Դ., Ե. եւ Ժ. ձեռագիրներուն մէջ: Մեր բաղդատած ձեռագիրները կարելի է բաժնել երկու գլխաւոր ընտանիքներու. Դ. եւ Ե. խումբը, որոնց կը միանան երբեմն Ը., Ժ. եւ ԺԳ.ը եւ միւսները, որոնք կը հետեւին իբրեւ բնագիր գործածուած Զ. ձեռագիրին:

Ստորեւ հրատարակուած բնագիրին մէջ մեր միջամտութիւնը իջեցուցինք նուագագոյնի. որ է յատուկ անունները սկսիլ գլխագիրներով եւ հատուածները անջատել իրարմէ, ըստ իմաստի պահանջին: Կետադրութեան մէջ, առաւելագոյն չափով հետեւեցանք բնագիրին, բացի վերջակետներու պարագայէն:

Կը յուսանք թէ որ մը բարեբախտութիւնը կ'ունենանք գտնելու Դաւիթ Փիլիսոփայի ամբողջական գրութիւնը Սաղմոսաց գիրքին մասին, հոգ չէ թէ պահուած ըլլայ տեղ մը, իբրեւ նպիփան կիպրացիի հեղինակութիւն մը:

Դաւթի փիլիսոփայի, Յաղագս Սաղմոսաց Դաւթի.

Արդ առեալ, ասէ, Սամուէլ զարուակ ⁶ եւդոյն եւ աւծ զԴաւիթ քագաւոր կատարմամբ: Եւ խաղաց ի վերայ նորա հոգի⁷ Տեառն յարեմ յայնմանէ: Եւ ապա առեալ Դաւիթ աստուածային իմաստութեամբ, առնէր երգս արիմութեան, նուագս անուշարարս սաղմոսաց, ոչ միայն ի բանից, այլ նուագաւորէր⁸ երգով ձայնից. ի

⁶ զեղջիւր Դ. Ե. Ժ

⁷ զեղջիւր Դ. Ե. Ժ

⁸ նուագարար ԺԲ նուագաւոր Ա, Բ, Դ

պատրաստ⁹ քանեղէն պատարագաց հանապազ¹⁰ գնախնիս եւ զխայրիս հանցե¹¹ տեսուն: Եւ առեալ ի ձեռն փայտ եւ աղիւս, նարտարապետեալ կազմէ գործի աւրեհուքեան, որպէս¹² անասուն ձեռացն եւ մատամբքն ի ձեռն բանին կցորդեսցի¹³ յաստուածաւրեհունքինսն .է. աղի յարմարեալ քնար, է անգամ յաւուրն նուագէր տեսուն, ըստ .է. շնորհաց հոգւոյն, զոր նորին որդին Յիսուս առեալ տայ եկեղեցւոյ իւրում: Վասն այսր խորհրդոյ միւս եւս այլ կազմէ գործի, ժ ունելով աղիւս, ըստ ամենակատար .Ժ. եկին, ի նոյն խորհուրդ ամենակատարութեան, զոր ի ձեռն Սուրբ Հոգւոյն կոչի սաղմոսարան, այսինքն է նուագարան: Այս երկոքին գործիք էին երանելոյն Դաւթայ, որ միշտ զՀոգին Սուրբ հնչեցուցանէր¹⁴: Զի այսու աւրեհակաւ, յառաջ իսկ¹⁵ քան զԴաւիթ վարժեալ էին եւ այլ մարգարէքն յաւրեհութիւնս¹⁶ Տեսուն երաժշտականաւ: Եւ Մարիամ մարգարէ, ժողովն Ահարոնի, թմբկաւ եւ պարում երգէր տեսուն, ի կարմիր ծովուն: Եւ Սաւուղ ի Սամուէլէ աւժեալ զիպեսցիս ասէ պարուց մարգարէից, ի Բամայ իջելոց. եւ առաջի նոցա սրինգ. եւ քնար եւ թմբուկ եւ փող. եւ ինքեանք մարգարէացեալք: Եւ խաղասցէ ի վերայ քո հոգի տեսուն եւ մարգարէացես ընդ նոսա:

Եւ եթէ ոչ գիտէր նուագել որ մարգարէանայր, գայլ ոք կոչէր նուագածու եւ իրրեւ նուագէր. գայլ հոգին ի վերայ մարգարէին եւ մարգարէանայր: Կոչեա ինձ սաղմոսասաց ասէ նղիսէն ցորոքովամ¹⁷ արքայ իսրայելի. եւ Յովսափատ արքայ Յուդայ: Իբրեւ ածին եւ նուագեաց, եկն հոգին ի վերայ նղիսէի եւ մարգարէացաւ նոցա վասն ինքնագիտ ջրոյն եւ վասն յաղթութեան Մովսարացւոց:

Եւ ինձ թուի թէ այսր աղագաւ երգէին, քանզի յանշունչ կուտն մոլեալ¹⁸ էին մարդիկ, միշտ նուագարանաւ մոլեալ¹⁹ պարէին: Վասն որոյ ամենիմաստն Աստուած հոգւովն հնարեալ, որպէսզի նովին նախանձովն նախանձեալ, նուագերգութեան զաստուածայինն սաղմոս պարագրելով, յաւժարութեամբ յորդորելով յաստուածգիտութիւն, իրաշալի²⁰ երգով զվայրենամիտսն որսասցեն ի կեանս եւ զդեւս ի նոցանէ ի քաց մերժեսցեն²¹:

Եւ ունի սաղմոս զքազմադիմի զիմաստութիւն. զԲրիստոսի մարդեղութեան, զչարչարանացն, զթաղմանն եւ զյարութեան եւ զքովանդակ փրկութեան մարդկան, մինչեւ ի գալուստ քանին:

⁹ պատրաստութիւն Դ, Ե, Ը, ԺԳ

¹⁰ հանցէ Դ, Ե, Ը, ԺԳ

¹¹ Տեսուն հանապազ Դ, Ե, Ը, ԺԳ

¹² որպէսզի Ա, Ե, Ը, Թ, Ժ, ԺԲ, ԺԳ

¹³ կարգեսցի Գ, Թ կցորդեսցէ Ա, Դ, Ե, Ը, Ժ, ԺԲ, ԺԳ

¹⁴ հնչեցուցանէին Ե

¹⁵ իսկ - Ա, Ը

¹⁶ յաւրեհութիւն Ա, Ը

¹⁷ զորորովամ Բ, Գ, Դ, Զ, Է, Ը ցլովրամ Ա

¹⁸ մոլորեալ Ա, Գ, Դ, Ե, Ժ, ԺԲ

¹⁹ մոլորեալ Դ, Ե, Ը, Ժ

²⁰ հեշտալի Ա, Գ, Դ, Ե, Թ, Ժ

²¹ մերժիցին Գ մերժիցեն Դ, Ե, Ը, Ժ

Սակայն բազում սաղմոսք ծածկեցան սորա. որպես եւ այլ մարգարէիցն մարգարէութիւնք. որպէս .Վ.²² առակքն Սողոմոնի. իսկ սորա .Բ.²³ արեւմտութիւնքն:

Եւ ամբողջ բովանդակութիւնն եկեղեցւոյ²⁴ ձԾ սաղմոս, զանազան ունելով վերնագիրս: Են որ ըստ երբայեցւոց եւ են՝ որ արտաբայ ցոցին: Եւ ունի երբայեցւոցն այսպէս. Դաւթի, որդւոցն Կորիսայ, Ասափայ, Իդիթովմայ, Մովսիսի. ալէլուիա, անանուն:

Եւ են՝ որ անվերնագիր իսկ են, որք յայլոց ոգւոցն դրոշմեալ լինէին. երեմիայի, Անգեայ, Եզեկիէլի եւ Ջաֆարիայի, եւ առաջին գերեւոցն, եւ աղաւթք ուրկի եւ այլ ինչ:

Եւ են ըստ երբայեցւոցն անվերնագիր սաղմոսք ժԹ: Եւ են այսօքիկ. ձԴ. ձԵ. ձԶ. ձԺ. ձԺԱ. ձԺԲ. ձԺԳ. ձԺԴ. ձԺԵ. ձԺԶ. ձԺԷ. ձԺԸ. ձԺԹ. ձԺՅ. ձԺԶ. ձԺԷ. ձԺԸ. ձԺԹ. ձԺՄ: Միանգամայն սաղմոսք ժԹ: Եւ են սաղմոսք Դաւթի .Բ. Գ. Գ. Ե. Զ. Է. Ը. Թ. Ժ. ԺԱ. ԺԲ. ԺԳ. ԺԴ. ԺԵ. ԺԶ. ԺԷ. ԺԸ. ԺԹ. Ի. ԻԱ. ԻԲ. ԻԳ. ԻԴ. ԻԵ. ԻԶ. ԻԷ. ԻԸ. ԻԹ. Լ. ԼԱ.

ԼԲ. ԼԳ. ԼԴ. ԼԵ. ԼԶ. ԼԷ. ԼԸ. ԼԹ. Խ. ԽԲ. ԽԳ. ԽԴ. ԽԵ. ԽԶ. ԽԷ. ԽԸ. ԽԹ. Կ. ԿԱ. ԿԲ. ԿԳ. ԿԴ. ԿԵ. ԿԶ. ԿԷ. ԿԸ. ԿԹ. Զ. ԶԵ. ԶԶ. ԶԺ. ԶԺԱ. ԶԺԲ. ԶԺԳ. ԶԺԴ. ԶԺԵ. ԶԺԶ. ԶԺԷ. ԶԺԸ. ԶԺԹ. ԶԺՄ: Միանգամայն սաղմոս Դաւթի ՁԲ: Սաղմոսք որդւոցն Կորիսայ ԺԱ. եւ են այս. ԽԱ. ԽԲ. ԽԳ. ԽԴ. ԽԵ. ԽԶ. ԽԷ. ԽԸ. ԽԹ. ԶԳ. ԶԴ. ԶԶ. ԶԷ. ԶԸ. ԶԹ. ԶԺ. ԶԺԱ. ԶԺԲ. ԶԺԳ. ԶԺԴ. ԶԺԵ. ԶԺԶ. ԶԺԷ. ԶԺԸ. ԶԺԹ. ԶԺՄ: Միանգամայն ժԲ: Սողոմոնի. ԻԱ. ԼԱ.: Թէմիայի, իսրայելացւոց Ա. ԶԸ.: Մովսէսի Ա. ԶԹ.: Առանց անունն. սաղմոսք ԻԲ. Ա. Բ. ԳԱ. ԳԲ. ԳԳ. ԶԱ. ԶԺԱ. ԶԺԲ. ԶԺ. ԶԺԱ. ԶԺԲ. ԶԺԳ. ԶԺԴ. ԶԺԵ. ԶԺԶ. ԶԺԷ. ԶԺԸ. ԶԺԹ. ԶԺԱ. ԶԺԲ. ԶԺԳ.: Միանգամայն ԻԲ.: Անանուն ասին աստիճանացդ. այլ Դաւիթ գղոսա ասաց. յորժամ շրջէր փախստական տեղւոյ ի տեղի ո՛չ պակաս քան զամս երկուստսն. ասաց զձԺԹ. սաղմոսն. վայ. է զի ընդերկարեաց(20) պանդխտութիւն իմ:

Անվերնագիր ասին ԽԲ. եւ ԶԱ. այլ ասաց գղոսա Դաւիթ. զմի՛դ՝ յորժամ դարձաւ յառաջին հալածեանցն եւ եկն ի խորանն տեառն ասէ. մտից առաջի սեղանոյ Աստուծոյ: Եւ զմի՛դ՝ յապաշխարութեան: Ասացին ոմանք եթէ է. ամ ի գրի ապաշխարեաց: Ես գթիւ ամացն ոչ գիտեմ, բայց զայս հաւատեալս գտի. զի հիւանդութիւն ծիրակա՛ն ախտին, ի երամանէ Աստուծոյ ի վերայ հասանէր սորա վասն յանցանացն: Եւ մինչ²⁵ յայնպիսի հիւանդութեան էր. ասաց զսաղմոսն .Զ. Թէ ողորմեա ինձ Տէր զի հիւանդ եմ ես:

Այլ զանազանելոյ վերնագրացդ այս ինչ են պատճառք. քանզի ոչ որ ասաց զսաղմոսդ զպատճառն առընթեր իւրաքանչիւր ումեք ըստ սաղմոսին վերնագրեաց²⁶, որպէս ոմանք յայլոց մարգարէից: Եւ քանզի ի տարակուսանս էր յանճարինս եւ զպատճառն համառուս գտանել զսաղմոսին եւ զժամանակին

²² Գ. Բ. Դ. Ե. Ը. Թ. Ժ

²³ Ե. Բ. Թ

²⁴ Բովանդակ ունի եկեղեցի Դ. Ե. Ը. Ժ

²⁵ Մինչեւ Դ. Ե. Ը. ԺԳ

²⁶ վերնագրեաց ըստ սաղմոսին Դ. Ե. Ը. ԺԳ

հաւաստիս²⁷, յորում զսաղմոսն ասացեալ²⁸ լինէր, վասն այսօրիկ հարկեցան ըստ գիւտին այսպէս զդոսա վերնագրել: Այսպիսի՝ ինչ. զոր Սողոմոնի ի կիր առեալ՝ Սողոմոնի անուանեցին. եւ զոր մի ոք ի դասագլխացն հրգչացն՝ առանձնակ. եւ զոր համարէն, հրգչացն՝ ալիւալիւ եւ զորս ի մուտս եւ յիւս տանարին հրգէին՝ աշտինանաց զայն կոչեն, եւ զորս յայտնագոյնս ինչ Դաւթի միայն, զայնոսիկ՝ Դաւթի՝. եւ զորս ի մաւակատիւ տանն առնել՝ մաւակատեաց. եւ զորս յարձանի՝ արձանագիր. եւ զորս ըստ աւուրց շարաթուց՝ այնպէս եւ զորս այլինչ: Իսկ զորս ոչինչ այնպէս գտեալ՝ անվերնագիր, զայն քարձեալ թողիմ, զոր յետոյ այլ՝ ըստ ի կիր արեւմտեանցն անուանեցին երեմիայի եւ Եզեկիէլի, Անգեայ եւ Զաբաբիայի, եւ զոհոթեան եւ յարութեան, եւ աղաթ ուրկի եւ որ այլ ինչ: Արդ՝ ամենայն սաղմոսաց պատնառ ի՛նքն սխանչելին Դաւիթ է. եւ ի նմանէ այլ՝ն պայծառացան:

Սաղմոսք Տուրնջեան:

ա. ժամն սղման. ը:	բ. ժամն իթ.
գ. ժամն սղման. լ.	դ. ժամն խա.
ե. ժամն սղման. ծ.	զ. ժամն գ.
է. ժամն սղման. կէ.	ը. ժամն ձը.
թ. ժամն սղման նիգ.	ժ. ժամն ճծ.
ժա. ժամն սղման. նժ.	ժք. ժամն նի.

Կանոն գիշերոյ. Աղմ. Տրագի. Երեմ. Տի. Տիր.

ա. ժամն սղման. եթ.	բ. ժամն իթ.
գ. ժամն սղման. ծդ.	դ. ժամն Խ.
ե. ժամն սղման. գ.	զ. ժամն խ.
է. ժամն սղման. լա.	ը. ժամն ձ.
թ. ժամն սղման. ձա.	ժ. ժամն դԽ.
ժա. ժամն սղման. ճդ.	ժք. ժամն ծգ.

²⁷ հաւաստի Բ, Դ, Ե, Ը

²⁸ հաւաստեալ ժԲ

ՀԱՎՈՐ ՔՅՈՍԵՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

ԵՊԻՓԱՆ ԿԻՊՐԱՅՈՒՄ. ՄԱՐԻԱՄ ԱՍՏՎԱԾԱԾՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՆԵՐԲՈՂԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Տիեզերական եկեղեցու երևելի երախտավորներից մեկն է այս հեղինակը (315-403), որի աստվածաբանական ժառանգությունը կարևոր և հաճախարարելի է ի խնդիր եկեղեցու պատմության, դավանական, մեկնաբանական մտքի հետազոտման: Նվազ կարևոր չեն մատենագրական այն միավորները, որոնք նպաստամատույց են աստվածախոսական ավանդույթի ուսումնասիրության համար: Այդպիսիներից են ճառերն ու ներբողները, որոնք պատկանելի թիվ են կազմում Ա. Նվիրվածի ժառանգության մեջ: Խնդրո առարկա ներբողը Տիրամորը նվիրված՝ հեղինակի բազմաթիվ երկերից մեկն է:

Ներբողի հունարեն բնագիրը (Τὸς ἐκλογμποῦτας μαρμαρυγὰς τῆς θεοτόκου...) արժանացել է մեկից ավելի հրատարակությունների¹: Հայերեն թարգմանությունը հրատարակվում է առաջին անգամ:

Նոր Հայկազյան բառարանի հեղինակներն իրենց ձեռքի տակ են ունեցել այս ներբողը և ըստ մեկնայի զգալաբարձր նրա հարուստ բառագանձը²: Սակայն քանի որ, ինչպես երևում է. ներբողը պարունակող վեցնախկյան ձեռագրում բացակայել են և այլուստ ևս անհայտ են եղել «համբաձայն» (փխ. «ճրքածայն»), «ամենամատ», «որոտատեսակ» («որոտատեսիլ»), «ամուսնափորձ» բառերը, դրանք բնականաբար տեղ չեն գտել բառարանում:

Թարգմանությունն, աննշան շեղումներով, համաձայն և համընթաց է հունարեն բնագրի՝ բացառությամբ «ΟΘεν και τήν πόλιν /ερουσαλήμ καταλβόντες, χρώσεται ἀπ' αὐτῶν ὁ ἀσκήρ... ἵνα τοῦτων ἐρωτῶντων παρὰ τῶν ἀπιστῶν ἱερῶν, λανερῶν γένῃται πᾶσι τὸ οὐρανὸν και τῆς μυστήριον»³ («Ուստի եւ ի Բաղաճն Երուսաղէմ հասեալ վրդովեցան, քանզի ծածկեցաւ ի

¹ Տե՛ս P. Petavius, S. P. N. Epiphaniï Opera, t. II. Parisiis, 1622, p. 291-300, G. Dindorf, Epiphaniï ep. Constantiæ opera, t. IV, 2, Lipsæ, 1862, p. 46-59, Migne, PG, t. 43, col. 485-501.

Մատենագիտական տեղեկություններն ըստ Bibliotheca Hagiographica Graeca (= Subsidia Hagiographica, 8a), t. III, p. 166 (N^o 1143):

Հայտնի են նաև ներբողի դպրերեն, ասորերեն, արաբերեն և սլավոներեն թարգմանությունները. M. Geerard, Clavis Patrum Graecorum, v. II, Ab Athanasio ad Chrysostomum, Brépols-Turnout, 1974, 335 (N^o 3771):

² Տե՛ս «թոնիր», «ճրածայն», «նախալստեան», «որովայնագգեաց», «աներկրագործելի», «շահագգեաց», «ոխիմ» բառերի տակ. «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» (ՆԲՀ), Վեցնախկ, 1838, 1837, հտ. Ա, 141, 629, 818, 1008, հտ. Բ, 392, 535, 688:

³ Migne, PG, t. 43, col. 500 B-D.

նոցան է աստղն: [Եւ է՞ր վասն յ զի հարցանելն նոցա զանհաւան քահանայսն՝ յայտնի ամենեցուն լիցի խորհուրդն]՝ բառերի միջև ընկած հատվածի, որ բացակայում է հայերեն թարգմանության մեջ: Բացը լրացված է «Եւ է՞ր վասն» հարցական արտահայտությամբ:

Ելնելով ներքոդի հայերեն թարգմանության լիզվառնական առանձնահատկություններից՝ հեթադրելի է, որ թարգմանությունն իրականացվել է և դարձում: Ներքոդում Աստվածածնին հատկորոշող որակումներն ու արտահայտություններն ընտանի, հոգեբուխ դրսևորումն են Տիրամոր Ոկատմամբ հղած այն խոնարհ պաշտումի, որ Արևելաբիստոնեական միտքը կարողացավ բյուրեղացնել հայտնութեանական պարզությամբ: Տիրամորը նվիրված այս և սրա մեջն երկերի հայերեն թարգմանության շնորհիվ նորոգվում է կենդանի կապը սրբազան ավանդույթի հետ: Դեռ ավելին, այդ ավանդներն իր մեջ անթեղած հայրախոսական աստվածաբանության նվաճումները ոչ միայն մատչելի են դառնում հայ ընթերցողին, այլև զգալիորեն նպաստում է այն Եկեղեցու մարիամաբանության զորացմանը: Հատկանշական է այն իրողությունը, որ այս ներքոդից մի հատված (տե՛ս տարընթերցում 93-108), իբրև դավանական տեսակետից կարևոր վկայություն, հյուրընկալվել է Ա. Գրիգոր Տաթևացու Ոսկեփորիկում⁴:

Ներքոդը հրատարակվում է համաձայն Մաշտոցի անվան Մատենադարանի թիվ 993 (թ. 37թ-40ա), 3772 (թ. 72թ-79թ) ձեռագրերի:

A = 993

ժամանակ՝ 1456 թ.: Վայդ՝ վերին նորավան: Գրիկ՝ Մատթեոս: Մաղկոդ՝ Եսայի: Ստացող՝ Թադեոս, Ստեփանոս եղբայրներ: Թեքք՝ 769: Նյութ՝ բուղբ: Գրություն՝ երկայուն: Գիր՝ բոլորգիր:

B = 3772

ժամանակ՝ ժե դար: Գրիկ՝ Ստեփանոս, Թումա սարկավագ: Ստացող՝ Թամթա, Վահրամ մահտեսի, Հովհաննես: Թեքք՝ 527: Նյութ՝ բուղբ: Գրություն՝ երկայուն: Գիր՝ բոլորգիր⁵:

Արքայն Եպիփանու Կիպրացույ եպիսկոպոսի Գովեստ ի սուրբ Աստուածածին եւ միշտ Կոյսն Մարիամ

Զքահաւորեալ Աստուծածնին¹ նառազայթս, զանաւոր անհասանելի զարուբիւնն երկնից սքանչացումն եւ բնութեան² երկրի խորհուրդ կամեցայ³ ես՝ տառապեալս ի կատարեալագոյն միտս, որ ի սրտի իմում ի ներքս խալտացեալ

⁴ «Գրիք որ կոչի Ոսկեփորիկ՝ արարեալ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Տաթևացուն...», Կ. Պոլիս, 1746, էջ 351-352:

⁵ Մատենագիտական տեղեկություններն ըստ Յուզակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հտ. Ա. Կառմեյրի, Օ. Եզանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթրյան, խմբագրությամբ՝ Լ. Խաչիկյանի, Ա. Մնացականյանի, Երևան, 1985, էջ 454-455, 1080: M. van Esbroeck, U. Zanetti, Le manuscrit Érévan 993, - "Revue des Études Arménienes. Nouvelle série, t. XII, 1977, p. 131 (թիվ 22):

խորհուրդը ի խորագոյն յատակս բարձրագոյն տեսութիւնս կամեցեալ սխալեցեալս,
դողումն դժնդակ եւ երկիւղ բազում ըմբռնեաց զիս, սիրելիք: Քանզի յիշատակ
սարսուռի⁵ տեսութեան դողացուցանէ զանձն իմ եւ զգայարան սիրտս ոչ նուազա-
զոյն տանջէ, այլ զաւրաւորագոյն⁶ չարչարէ, քանզի հարկէ զմիտս մեծութեանս
յիշատակ⁷ որպէս անհասանելի խորհրդոց⁸ զասելն ոչ զաւրելով: Քանզի Ե՛վ ոք⁹
բաւական է զայսպիսի խորհուրդ պատմել կամ Ե՛ր բերան բարբառիցի.
«Ժածկեցաւ»¹⁰ ասելն ոչ զաւրեմ:

Բայց այժմ համարձակեցայց խաւսել վասն Աստուածածնին, որպէս եւ¹¹ հասու
լինիմ, եւ դարձեալ երկնջիւմ¹² ոչ ունելով լեզու արժանապէս ասել զմեծամեծսն, զի
նորածայն¹³ եւ¹⁴ ծանրալեզու¹⁵ որպէ՛ս¹⁶ ասացից վասն մեծանուն եւ սուրբ
ամուսնափորձին եւ Աստուածածնի Կուսին Մարիամու Մար Տեառն: Վասն որոյ
ոչ դիւրապէս խաւսի լեզու մարդոյ¹⁷, քանզի նորածայն առ այս եւ ամփոփի
շաղկով¹⁸ ոչ արժանապէս ուսանել¹⁹: Քանզի սա եւ զերկնային զաւրութիւնսն
ընդաստացայց, զի զարմացան ամենայն²⁰ զարի²¹ Հրեշտակք, Իշխանութիւնք,
Աթոռք, Տէրութիւնք, Քերովրէք, Սերովրէք եւ ամենայն դասք զուարթնոցն
երկիւղել եւ դողութեամբ մեծաւ²² ըմբռնեալք: Քանզի տեսանէին ի վերայ երկրի
զայն²³, որ յերկինս էր, եւ սարսէին: Տեսանէին զկայսն երկին եւ Աթոռ եւ անիւ
ըմբռնեալք լինէին: Տեսանէին զանսկիզբն յԱթոռ²⁴ քերովրէական եւ յարգանդ
Կուսին եւ սարսէին: Ո՛վ հրանելի Արամատ²⁵, ուստի բուսաւ ծաղիկն Յեսսեա: Վասն
որոյ մարգարէն նսայի, որպէս ծիծառն հնչելով երեղէն լեզուաւն բարբառեցաւ²⁶,
«Յարիցէ գաւազան յարմատոյն Յեսսեա եւ հլցէ ծաղիկն յարմատոյ անտի եւ
հանգիցէ ի վերայ նորա հոգի երկիւղի Աստուծոյ»²⁷: Քանզի յարմատոյն Յեսսեա
էր Դաւիթ արիայ եւ ի ցեղէն²⁸ Ռաբայ էր սուրբ Կոյսն, սուրբն սրբոց²⁹ արանց
դուստր, որոյ ծնաւղին Յովակիմ եւ Աննա, որք եւ³⁰ Աստուծոյ հաճոյ եղին ի
կենդանութեան իւրեանց, որք եւ պտուղ այսպիսի բուսուցին զսուրբն Մարիամ,
տաճար Աստուծոյ միանգամայն եւ Մայր: Բայց Յովակիմ եւ Աննա եւ Մարիամ
երեւեհանցն³¹ յայնպէս³² սպասաւորեցին նորորդութեան: Քանզի Յովակիմ թարգ-
մանի Պատրաստութիւն Տեառն, զի ի նմանէ պատրաստեցաւ տաճար Տեառն սուրբ
Կոյսին: Եւ Աննա դարձեալ որպէս³³ Շնորհք թարգմանի, քանզի Շնորհք առին
Յովակիմ եւ Աննա ի ձեռն աղաթիցն եւ զայնպիսի սուրբ Կոյս ստացան, զի
Յովակիմ ի լերինն յաղաթս կայր³⁴ եւ Աննա՝ ի դրախտին իւրում³⁵: Եւ յորժամ
յղացաւ Աննայ, ծնաւ նրկին³⁶, եւ Աթոռ քերովրէական զսուրբ Կոյսն Մարիամ:
Քանզի սա նրկինք³⁷ եւ Աթոռ եւ Տաճար գտանի, զի Մարիամ կոչի Տիրուհի այլ³⁸
եւ՝ Յայս, քանզի զՏէրն ծնաւ՝ զԿոյսն ամենայն աշխարհի զՔրիստոս: Թարգմանի
դարձեալ Մարիամ Զմուռ ծովային, որ ասի վասն անմահութեան, զի համդերձեալ
էր զանմահութեան մարգարիտն ծնանիլ ի ծովու, այսինքն՝ յաշխարհի, քանզի ծով
ասէ միանգամայն զարշխահս³⁹, որում Կոյսն⁴⁰ զխաղաղութիւն ալեացն

1* Նսայի ԺԱ 1-3:

* Աննայի եղութեան այս պարագաների մասիմ պատմվում է հետևյալ պարականոնում.
«Պատմութիւն յղութեան եւ ծննդեան սուրբ Աստուածածնին յՅովակիմայ եւ
յԱննայէ, որ առնառաք երեշտակապետից» տե՛ս Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ.
2890, ք. 180ա-182բ, տե՛ս նաև «Անկանոն գիրք Նոր Կտակարանաց», Վեներկի, 1898,
էջ 284-285:

պարգևեաց՝ զնաւահանգիստն խաղաղութեան ծնանելով զՔրիստոս³⁷։ Եւ մանաւաճե՛ իւս³⁸ դարձեալ պարկեշտ³⁹ աղջկանն Մարիամու⁴⁰ երանելի անունն լուսաւորեալ⁴¹։ Բանգի լուսաւորեցաւ յՈրդւոյն Աստուծոյ եւ լուսաւորեաց զհաւատացեալս զծագս երկրի յերրորդութիւն Սուրբ. Բանգի⁴² երրորդութեան հարսն է պարկեշտ եւ⁴³ սուրբ Կոյսն Մարիամ, ամենառաքինի⁴⁴, աշխարհի զարդն, առ որ Գաբրիէլ եկեալ⁴⁵ ասէր. «Ուրախ լիւր, բերկրեալ. Տէր ընդ քեզ»^{2*}։ Յուշ արար Գաբրիէլ եւ Հայր յերկնից առհաւատչեա զՍուրբ⁴⁶ Հոգին առաքեաց։ Խաւսեցաւ զԿոյսն սուրբ միածին Որդւոյն Աստուծոյ, երկնային հարսն, զոր Հայր սրբեաց եւ Որդի բնակեաց եւ Հոգին հովանաւորեաց, Բանգի հարսն եւ առագաստ Տեառն եւ ի նմանէ ելանէ Փնայն Քրիստոս։ Կուսական զգեստն, ըստ մարգարէին Դաւթայ երգաւորութեան, «Թարեւու եդ զխորան իւր եւ ինքն որպէս փեսայ. զի ելանէ յառագաստէ իւրմէ»^{3*}։ Ո՛վ փեսայի փափագումն զյոյժ պարկեշտն զիւր աղախին եւ զհարսն խաւսեցաւ մայր Գարրիէլ առիթ եղիւ Կուսին երկնից եւ երկիր միանգամայն մերձեցուցանելով զիւր սփանչելիսն, որում մարգարէին յայտնապէս քարոզեցին՝ զհարսանեացն կարգ պատմելով։ Որպէ՛ս կոյս երկնաւոր գտանի հարսն միանգամայն եւ մայր զառ ի հարսանեաց ընծայս առեալ զՍուրբ Հոգին, իսկ վարձանս՝ զերկինս միանգամայն եւ զդրախտն։ Կամէր այնոյնհետեւ տեսանել Կոյսն, որում փափագէր եւ ասէր։ Ո՛ւր է փեսայն, որում գեղեցկութեանն ցանկամ⁴⁷։ Ո՛ւր է գեղն, որ Բանգ քարեգական ցանկալի է ամենառելի փառաւ⁴⁸։ Ո՛ւր է անշէն լոյսն, որում փափագեալ խնդրեմ։ Ո՛ւր է արեգակն, զորոյ զննանչն հայցէի։ Ո՛ւր է սերովքէից քնարն։ Ո՛ւր է քերովքէից անքուն ակն Քրիստոս։ Ո՛ւր է երեշտակացն երկրպագելի⁴⁹, զոր Գաբրիէլ գուշակեաց։ Ո՛ւր է միայնն միայնոյ միածին Որդին Հաւր⁵⁰, զոր Կոյսն սիրով խանդաղատէր⁵¹ միանգամայն, եւ հայցելով ողջունէր։ Առ որ Գաբրիէլ եկեալ ասէր.

Ուրախ լիւր, բերկրեալ, Տէր ընդ քեզ։

Ուրախ լիւր, բերկրեալ, ուրախութիւն անսպառ, սուրբ Կոյս։

Ուրախ լիւր, բերկրեալ, ջառագգեաց Կոյս՝ անշէն մառաքայթ պայծառացեալ Բանգ քարեգակն⁵¹։

Ուրախ լիւր, բերկրեալ՝ քաղում առաքինութեամբ զարդարեալ⁵²։

Ուրախ լիւր, բերկրեալ, անդէն արեգականն պայծառագոյն լոյս։

Ուրախ լիւր, բերկրեալ, իմանալի կարթին կեր, Բանգի կարթեր ի քեզ⁵³ Աստուածութիւնն։

Ուրախ լիւր, բերկրեալ, իմանալի փառացն տապանակ։

Ուրախ լիւր, բերկրեալ, սափոր ոսկի՝ զերկնային մանանայն ունելով⁵⁴։

Ուրախ լիւր, բերկրեալ, որ քաղցրութեամբ մշտնջենաբուղիս աղբերն չծարաւիս յագեցուցիր։

Ուրախ լիւր, բերկրեալ, իմանալի ծով գերկնային մարգարիտն ունելով զՔրիստոս։

Ուրախ լիւր, բերկրեալ, պայծառ երկինք՝ զանտանելին ամենեցուն ի քեզ տանելով զՔրիստոսն։

2* Ղուկ. Ա. 28։

3* Սաղ. ԺԸ 6։

Ուրախ լեր, բերկրեալ, ֆերովքեանման⁵⁵ փայլուն Աթոռ Աստուածութեան:

Ուրախ լեր, բերկրեալ, պայծառ երկին, զանտանելի երկնի եւ երկրի ունելով գործիստոս⁵⁶:

Ուրախ լեր, բերկրեալ, որ գերկինս պարունակելով եւ գլխատուածն անտանելի ի քեզ տարեալ եւ ոչ նեղեցար:

Ուրախ լեր, բերկրեալ, սիւնատեսիլ ամպ՝ գլխատուած ունելով, որ յանապատի աշխարհիս⁵⁷ առաջնորդեաց մեզ ի կեանս⁵⁸:

Ուրախ լեր, բերկրեալ, լուսափայլ հորոյ Աստուածութեան անկիզբի ընդունարան:

Ձի՞նչ ասացից եւ կամ զի՞նչ խաւսեցայց, որպէ՛ս հրանցից զամենարմատ փառսն, քանզի⁵⁹ քայց միայն ըստ Աստուծոյ Աստուած գեր ի վերոյ ամենեցուն է, քանզի գեղեցկագոյն քան գերովքեան եւ գերովքեան եւ քան զամենայն զաւրս հրեշտակաց բնաւորեցաւ, առ որ⁶⁰ մարդկային լեզու ոչ կարէ⁶¹ քաւական լինել ի⁶² գովութիւն, բռնի թէ եւ ոչ հրեշտակաց⁶³, քանզի եւ նոքա արեւնութիւն եւ հրգս եւ պատիւս ի փառս մատուցանեն, այլ եւ ոչ այնպէս ըստ արժանաւորութեան⁶⁴ ասել կարացին, զի ուրախ լինէին հրեշտակք՝ որպէս թէ նոքա միայն ունիցին գլխատուած, որոց⁶⁵ ամենասուրբ Կոյս վերագոյն բնաւորեցաւ գլխատուած, որ յերկինս ի վերա երկրի⁶⁶ ծնանելով, զի այսպէս ձգեսցէ զզաւրս հրեշտակաց յերկիր⁶⁷ ընդ մարդկան, քանզի սա երկնի եւ երկրի միջնորդ եղեալ՝ միաբանութիւն արար:

Ո՛վ երանելի⁶⁸ Կոյսոյ, մաքուր աղանձի, երկնաւոր հարսն Մարիամ, որ եւ երկնեմ եւ Տաճար եւ Աթոռ⁶⁹ Աստուածութեան, որ գիպակն⁷⁰ արեգականն յերկնից յերկիր ծագեցեր գործիստոս⁷¹, երկնաւոր ամպ, որ զորոտումն Հոգւոյն Սրբոյ Ի քեզ ծածկեալ էր, աշխարհի լսելի արարեր⁷², որ գտնդատարափ⁷² Հոգւոյն Սրբոյ առ պտղաբերութիւն հաւատոյ ամենայն աշխարհի սրսկեցեր⁷³:

Ուրախ լեր, բերկրեալ, դուռն երկնից, յաղազս որոյ մարգարէն աղաղակեաց ասելով. «Ահա դուռն փակեալ, ոչ ոք, ոչ ոք մտցէ ընդ նա եւ ոչ ոք ելցէ, քայց միայն Տէր Աստուած Իսրայելի»⁷⁴: Եւ եդիցի դուռն փակեալ առաջնորդին, վասնզի Ինքն կոչեցի առաջնորդ⁷⁵ եւ ի նա յուսասցին ամենայն հեթանոսք⁷⁶:

Յաղազս այս դրաւ⁷⁷ եւ յերգս երգոցն յայտնարար մեզ եւ հաւաստարար զանունն ասէ՝ աղաղակելով իմաստունն. «Պարտեզ փակեալ, աղբեր կնքեալ»⁷⁸, քանզի⁷⁸ փակեալ եւ կնքեալ մնաց ի կուսութեան սուրբ եւ պարկեշտ աղբիւն Մարիամ:

Ո՛վ լուսաւոր ամպ, որ զմշտնեցնաւորն գլխատուած Բանն [ունիս]: Վասն⁷⁹ որոյ մեծածայն ասեր նսայի. «Ահաւասիկ Տէր նստեալ ի թիթիւ ամպ եկեացէ նգիպտոս»⁸⁰:

Անտաշելի լեռն, որ զապառած⁸⁰ վէմն ունիս գործիստոս: Յաղազս որոյ իմաստնագոյնն Դանիէլ ասաց. «Հատաւ վէմն առանց ձեռնի»⁸¹, այսինքն՝ առանց առն զհաստատուն⁸¹ վէմն ծնաւ գործիստոս Կոյսն Մարիամ⁸²:

Անշարադրելի տանար, որ գերկնային վէմն ունիս գործիստոս⁸³:

4* Երգ Դ 12:

5* Նսայի ԺԹ 1:

6* Դան. Բ 34:

Որոտառեսակ⁸¹ ամպ, որ գիպյալն է ճերմա որովայնագգեստ կրես: Եւ վկայէ բանիս իմում աստուածեղէն⁸² Գիրն ասելով. «Որովայն էո շեղջ ցորենոյ՝ ցանկեալ շուշանաւ⁸³»^{7*}:

Աներկրագործի անդաստուն⁸⁷, որ զրանն որպէս զեատ ցորենոյ ընկալեալ եւ զորայն ի վեր անեցուցեալ⁸⁶:

Իմանալի թոնիր, որ զեւրն եւ զհացն կենաց ունիս:

Սուրբ Մայր Փրկչին, որ զԲանն Աստուած⁸⁸ ի էէն մարմնացեալ ծնար, առ որ եսայի ասէ. «Ահա Կոյս յղասցի եւ ծնցի Որդի եւ կոչեսցեն զանունն նորա իմանուել»^{8*}. այսինքն՝ ընդ մեզ Աստուած:

Ո՛վ Կոյս անարատ⁹⁰ սուրբ Մայր⁹¹ Տեառն⁹²:

Ո՛վ⁹³ երջանիկ հարսն անբաժանելի Սուրբ Երրորդութեանն:

«Երանելի ես դու ի կանայս», որ ծնար յերկրի որպէս տղա զյառաջ քան զյաւիտեանսն Աստուած:

«Երանելի ես դու ի կանայս» ամենեցունցն Ստեղծչի եւ Նախալստեան Բանին Աստուծոյ Մայր յերկրի:

«Երանելիս ես դու ի կանայս». զորոյ ի ստեանցդ դիեցաւ, որ կերակրէ զամենայն:

«Երանելի ես դու ի կանայս», որ այժմ ծնար զերբեմն Ստեղծաւորն ի հոգոյ զԱդամ ի դրախտին:

Երանելի ես Աստուածածին սուրբ Կոյս Մարիամ, քանզի Աստուածածին ես, որ զմարմնացեալ Բանն Աստուած առ ի էէն ծնար:

Աստուածածին ես, որ միայն միայնում զՄիածին Որդին Աստուծոյ ծնար:

Աստուածածին ես, որ զԲանն Աստուած ի կերպարանս ծառայի յղացար:

Աստուածածին ես, զի զԱստուած Բանն ընկալեալ մարմնացեալ ծնար՝ ոչ առժամանակեա Աստուած ծնար. այլ՝ զյաւիտեանականն, որ յառաջ քան զգեզ եւ զամենայն էր:

Անսպի տշխար, որ զգառն Քրիստոս ծնար⁹⁴:

Երինջ անփորձ լծոյ ամուսնութեան⁹⁵, որ զնշմարիտ որքն զՔրիստոս ծնար⁹⁶:

Իմանալի սեղան հաւատոյ⁹⁷, որ զհացն կենաց պարգեւեցեր աշխարհի:

Զի՞նչ⁹⁸ ասացից կամ զի՞նչ խաւսեցայց. զիա՞րդ⁹⁹ երանեցից զսորա զամենարմատ փառս, զի յաղագս սորին յայտնիկ կուսի ի ճեռն մարգարէին ասէ Աստուած. «Ի էէն ելցէ ինձ իշխան Իսրայէլի, եւ ելք նորա ի սկզբանէ աւուրցն յաւիտեանից ծնցի»¹⁰⁰, եւ մնացորդ հղթարց նորա դարձցին առ որդիսն Իսրայելի: Եւ կացցէ եւ տեսցէ եւ հովուեսցէ զեաւտ իւր զաւրութեամբ Տեառն^{9*}:

Ո՛վ սուրբ Կոյս յաւիտեանական լուսոյն անապական¹⁰² Մայր լուսոյ¹⁰³, որ լուսաւորեաց յերկինս եւ զգարս¹⁰⁴ հրեշտակաց,

Լուսոյ¹⁰⁵, որ լուսաւորեաց զսերովքէսն անպատում,

Լուսոյ, որ լուսաւորեաց պայծառ¹⁰⁶ ջանիւք հառապայթից զարեգակն,

Լոյս¹⁰⁷, որ լուսաւորեաց զտիեզերս Սուրբ Երրորդութեամբն,

7* Երգ. է 2:

8* Եսայի է 14:

9* Միքիա ե 2-4, Մտք. Բ 6:

Լոյս, որ ասաց. «Ես լոյս յաշխարհ եկի»^{10*},

Լոյս, որ վերացաւ եւ լուսաւորեաց գերկինս եւ գերկիրս ամենայն¹⁰³,

Ո՛վ ամենասուրբ Կոյս, որ ընդաւտարացուցէր գգիւորութիւնս¹⁰⁹ հրեշտակաց, քանզի աւտար¹¹⁰ սփանչելիք ի յերկինս¹¹¹, զի «կին զարեգակն զիւրեալ արկեալ է»^{11*},

Զարմանք¹¹² սփանչելիք ի յերկինս, կին եւ զլոյս ի գիրկս բարձեալ բերէ,

Զարմանք սփանչելիք ի յերկինս, կնոջ Որդի եւ յաւիտենիցն Հայր զոյ,

Զարմանք սփանչելիք ի յերկինս, Կուսի առագաստ՝ փնայ ունելով զՔրիստոս զԱստուած եւ Որդի Աստուծոյ,

Զարմանք¹¹³ սփանչելիք ի յերկինս, Կուսի Տղայ, Տէր բնաւորեալ հրեշտակաց¹¹⁴,

Ո՛վ ամենասուրբ Կոյս, Մայր Փրկչին, որ զանակզբեականն ծնար զՔրիստոս զՀաւր աթոռակից Որդին զհամագոյ¹¹⁵ Սուրբ Հոգւոյն զյառաջն քան զյաւիտեանս հանդերձ հարբ եւ Սուրբ Հոգւոյն, որ գերկինս բանիւ խոնարհեցոյց¹¹⁶,

Ով ամենասուրբ Կոյս, որ զհուր Աստուածութեան անկիզբար¹¹⁷ որպէս իմանալի մարեմի ունիս¹¹⁸,

Իմանալի թոնիր¹¹⁹, որ զհուր եւ զհաց կենաց շերմ ի կերակուր աշխարհի շնորհեցեիր¹²⁰, «Առեմ, կերայք, այս է մարմին իմ որ վասն ձեր եւ քաղցաց քաշխի ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց»^{12*},

Փարթամ¹²¹ է կուսական սեղանս ո՛վ սիրելիք, ամենաբարի կերակրովք առ ի վայելումն տիեզերաց, որ զլուսաւոր ճրագն, որ փայլէ յերկինս եւ յերկրի, կրեաց զՔրիստոս¹²², առ որ մարգարէն Զաքարիա ասաց. «Ահա աշտանակ եւ չափ ի վերա նորա»^{13*}: Զոր¹²³ եւ Դաւիթ արեւհերբական բերանով¹²⁴ գոչէ¹²⁵, «Յրագ ոսից իմաց քան Քո եւ լոյս տայ շաւղաց իմոց»¹²⁶ 14*:

Ո՛վ կուսական աշտանակ¹²⁷ զանանցանելի լոյսն պայծառագոյն քան զարեգակն ունելով:

Ո՛վ կուսական աշտանակ, որ զանտանելի¹²⁸ հրոյն զբաց ի լուսաւորութիւն տիեզերաց տարար¹²⁹,

Ո՛վ լուսեղէն աշտանակ¹³⁰, որ զխաւարն հալածեցեիր եւ զլոյսն նշուլացուցեիր¹³¹,

Ո՛վ կուսական աշտանակ, որ եւ հրեշտակաց ցլաւիտեանականն շնորհեցեիր զլոյս¹³²,

Ո՛վ կուսական աշտանակ, որ զհուրն եւ զձէքն անորոշաբար բերես ի լուսաւորութիւն¹³³,

Ո՛վ կուսական աշտանակ, որ զերեւելուսեան հուրն¹³⁴ աննուագելի ի համագոյց ի քարճութեցն Աթոռոյն առեալ ի լուսաւորութիւն տիեզերաց նահանջեցուցեիր¹³⁵,

Ո՛վ կուսական աշտանակ, յաղագս որոյ ի ձեռն մարգարէին ասաց Աստուած. «Անդ ծագեցից եղջիր ի Դաւիթ, պատրաստ արարից գերագ Աւծելոյ իմոյ»^{15*}:

10* Յովհ. ԺԲ 48:

11* Յայտ. ԺԲ 1:

12* Մտք. ԻԶ 28:

13* Զաք. Դ 2:

14* Աղմ. ՃԺԸ 105:

15* Աղմ. ՃԼԱ 17:

Ո՛վ արժունական¹³⁶ թագ, որ զմարգարտատեսիլ եւ զծանրագին անցն ունելով զՔրիստոս, ով արժունական ծիրանիդ, որ զերկնի եւ զերկրի զթագաւորն զգեցուցեր զՔրիստոս զտնաւորինական մարմնոյն զծիրանական զգեստն, որ անարատ ֆրիստոնէից անատմն փայլեն¹³⁷:

Անհասանելի Գիր^{137ա}, որ զՈրդի եւ զԲան Հաւր ընթերցար աշխարհի¹³⁸,

«Երանելիս ես դու ի կանայս», որ զմարմնացեալն ի Քէն զԲանն Աստուած ծնար¹³⁹.

Բան՝ զՈրդի Հաւր¹⁴⁰,

Բան՝ նախալաւիտեանցն¹⁴¹ Աստուած,

Բան՝ զանսկիզբն եւ զմշտնջենաւորն,

Բան՝ զեանգոյնն¹⁴² եւ զանբաժանելին ի Հաւրէ եւ ի Սուրբ Հոգւոյն,

Բան, որ հանդերձ Հարբ¹⁴³ եւ Սուրբ Հոգւովն երկրպագի եւ փառաւորի:

Բան՝ զաթոռակիցն Հաւր,

Բան՝ զնստեալն ի վերայ ֆերովքէից¹⁴⁵,

Բան, զոր չորէկերպեան¹⁴⁶ կենդանիքն փառաբանեն¹⁴⁷ ասելով. «Սուրբ, Սուրբ, Սուրբ Տէր Սաբաւովք. լի եց երկինք եւ երկիր փառաւ քո¹⁴⁸»^{16*},

Բան¹⁴⁹, որ զերեշտակս արար,

Բան, որ զԻշխանութիւն եւ զՊետութիւնս արար¹⁵⁰:

Բան, որ զերկինս ձգեաց եւ զերկիրս հաստատեաց,

Բան՝ զճշմարիտն Աստուած՝ զՅիսուս Քրիստոս, զՏէրն մեր, զոր ծնար ամենասուրբ Կոյս եւ յետ ծննդեանն մնալով Կոյս: Ով¹⁵¹ ամենասուրբ Կոյս, որ զմարգարիտն ծնար եւ զթագաւորական պսակն երևցեցեր¹⁵²:

Ո՛վ երջանիկ¹⁵³ Կոյս¹⁵⁴, որ ի բազում¹⁵⁵ ծաղկանց դրախտին զաշխարհ անուշահոտութեամբ լցուցեր,

Շուշան անսպի¹⁵⁶, սուրբ Կոյս, որ զանթառամ զվարդն ծնար զՔրիստոս¹⁵⁷,

Այգի նշմարութեան՝ բազմաբեր եւ անկթելի կուսութեամբ, որ ոչ բաժակեալ րրեցար եւ ողկուզաբերեցեր զհասեալ ողկոյզն Քրիստոս,

Ջի՛արդ շառաւելեցուցեր¹⁵⁸ զնա, աղե՛, հաւանեցո զմեզ, ո՛վ սուրբ Կոյս,

Ջի՛արդ Մայր Աստուծոյ եղեր¹⁶⁰ յերկրի՝ զնախալաւիտեան Բանն Հաւր ընկալեալ յորովայնի:

Կոյս՝ անշաղախ եղէ բնակեցելոյն յիս Բանին Աստուծոյ, անփորձ հարսանեաց զեմամնուէլն յանապական արգանդի կրեցի, նմանեալ ֆրեբովքեական աթոռոց գտայ: Եւ յիճէն Բանն Հաւր մարմին եղեւ, անսկիզբն Աստուած եւ անտեսանելի տեսարար եւ տնաւորինարար յիճէն մարդացաւ՝ զփորձառն ոչ գիտելով՝ զնախալաւիտեանականն Աստուած ծնայ Յիսուս Քրիստոս: Եւ այժմ Յոյս եմ յետ ծնանելոյս, մաքրագոյն քան զառաջիկան ոչ որպէս ամենայն կին, քանզի անմամն եմ իմն եւ նոցայն, որ առ ի մէնջ եմ իրքս ոչ զիտաց բնութիւն մարդոյ զիմ ծննդեանն աւրինակ, քայց միայն բնակեալն յիս Աստուածորդին Աստուծոյ Քրիստոս¹⁶²:

Ո՛վ սուրբ Կոյս սոսկալի սպաս եկեղեցւոյ մեծի հանդիպեալ խորերդոյ, փահեցալ կոչեմ զԿոյսս, միանգամայն եւ՝ սեղան, որ զհացն երկնային րբերելով յիճեման զՔրիստոս հո մեզ ի թողութիւն մեղաց:

Ո՛վ որովայն անշաղախ, որ զծիրն երկնից ունիս¹⁶⁴ եւ զանտանելիմ Աստուած ի քեզ տարեալ կրեցեր.

Ո՛վ որովայն լայնագոյն քան զերկինս, որ զԱստուած ոչ նեղեցար¹⁶⁵:

Ո՛վ որովայն, եւթնաշրջանակ երկին եւ եւս¹⁶⁶ մեծագոյն քան զնա հանդիպելով.

Ո՛վ որովայն քարծրագոյն քան զեւթն երկինս եւ լայնագոյն.

Ո՛վ որովայն ութերորդ երկին եւթն հաստատութեանցն վերագոյն.

Ո՛վ որովայն եւթնալոյս շնորհ, որ զանանցանելի լոյսն ունիս զՏէր մեր Յիսուս Քրիստոս¹⁶⁷: Զի՞նչ ասացից եւ կամ զի՞նչ խաւսեցայց վասն պարկեշտ եւ սուրբ Կուսիս, քաղճանքս¹⁶⁸ քարշեն զիս առ ի յասել յաղագս Աստուածածնիս եւ երկիւղ ունի զիս առ ի լնուլ. միտքս կոչէ զիս եւ երկիւղս ի քաց մղէ. ումն ձգէ զիս եւ ումն յետս առնու: Եւ վասնզի պաշարեալ եմ յերկոցունց՝ պատեհագոյն եղիցի ինձ խաւսել յաղագս մեծանուն Կուսիս: Քանզի ասեմ զսա երկին եւ աթոռ, միանգամայն եւ խաչ, վասնզի, զսուրբ գիրկս իւր տարածեալ, կրեաց զՏէրն:

Ո՛վ աթոռ բերովրեակամ եւ խաչատեսակ երկին, յաղագս որոյ ի ձեռն գրոց յերկինս կարկառիմ եւ տեսանեմ զսա երկրպագեալ ի հրեշտակաց: Ուստի նախ Գարրիէլ ողջունէր զԿոյսն ասելով¹⁶⁹.

«Ուրախ լեր, բերկրեալ, Տէր ընդ քեզ»¹⁷⁰:

Ուրախ լեր, բերկրեալ, պայծառ երկին,

Ուրախ լեր, բերկրեալ, որ զփայլատակեալ արեգակնն ունիս զՔրիստոս յերկինս՝ պայծառ քանիւք եւ նառագայթիւք:

Անբովրէ քաղմաչեայ¹⁷⁰ եղեւ մեծանուն¹⁷¹ սուրբ Կոյս¹⁷²՝ անհասանելի տեսութեան անիմանալի իմն ծածկոյթ: Վասն տնաւրինական մարմնոյն գտաւ զերազանցեալ քան զանբովրէս՝ եւ զքերովրէս, քանզի նոքա ի քաց քառնան՝ ոչ կարացեալ¹⁷³ հայել առ իմանալի^{173a} հուր^{173b} Աստուածութեան: Իսկ սա հստակ¹⁷⁴ աչաւ հայեցեալ¹⁷⁵ գոյ ընդ անհասանելի եւ ընդ անփուն ակն Քրիստոս, որում փափագէր սիրով եւ համբուրէր զՈրդին: Զիմուորութիւնք հրեշտակաց պատուանդան ընդ ոտիւք Փրկչին անկանէին, զի տեսանել եւ հպել չհանդուրժէին: Իսկ սա շրթունս ի շրթունս մերձեցուցանելով համբուրէր զանհասանելին¹⁷⁶:

Ո՛վ սուրբ¹⁷⁷ Կոյս՝ անհասանելի¹⁷⁸ խորհրդոյ բերաւդ մեզ զարմանս, որ երեքադճեան հաւատ քարոզեցեր տիեզերաց: Վերագոյն քան զհրեշտակս եղեւ Կոյսս եւ մեծագոյն քան զանբովրէսն եւ զքերովրէսն հանոյ եղեւ քաղաւորին Քրիստոսի որպէս արժանաւոր Մայր եւ Աղախին պատուեցաւ յԱստուծոյ:

Սուրբ Մայր անշաղախ, որ զյառաջ քան զքեզն ծնար զՔրիստոս, որ ասաց. «Յառաջ քան զլինելն Արքամու եմ ես»¹⁸⁰: Որ զգարայքն փառաւորեաց եւ զմտւորն մեծարեաց, քանզի Կոյս եւ Մայր եւ այր զծիրն երկնից ունելով զանտանելիմ Աստուած բերէին յինքեանս երեք՝ հաւաստեալ նորադրութեան սպասաւորելով: Յորժամ Կոյսն անախտաբար զՏէրն երկնի եւ երկրի ծնեալ ի մատր հոյ յայրին, յայնժամ եւ պարուց հրեշտակաց զԿոյսն շրջապատեալ գոչէին ասելով. «Փառք ի քարծուսն Աստուծոյ եւ յերկիր խաղաղութիւն եւ մարդկան

17 * Ղուկ. Ա 28:

18 * Յովհ. Ը 58:

հանութիւն»^{19*}: Ուստի եւ հովիւք բացաւքեայք զայսպիսի փառաբանութիւնս ի հրեշտակացն լուեալ յաղագս Փրկչին եւ փութով ընթացեալք երկրպագեցին Լուսոյն. եւ տար սքանչումն տեսին ամէն, զԱղախին Տեառն, Մայր Նորին եւ զերկրային Կոյսն, երկմային Հարսն: Վասնզի սա Հարսն եւ առագաստ եւ Մայր յայրին երեսեցաւ. յորժամ զի լոյսն Քրիստոս ծնաւ ըստ մարգարեական բանին նսայեա, եթէ՝ «Մանուկն ծնաւ մեզ, Որդի եւ տուաւ մեզ, որոյ իշխանութիւն Իւր ի վերայ ուսոյ Իւրոյ, եւ անուն կոչի նմա Հրեշտակ մեծի խորհրդոյ, Աստուած, Հզաւր, Իշխան խաղաղութեան, Հայր հանդերձեաց աշխարհին»^{20*}:

Իսկ ապա ասէ յետ այսորիկ. «Մոգք արեւելից լուսաւոր աստեղէ առաջնորդեալք եկին յերկրպագութիւն ծնիցելոյն ի Բեթղեհմ: Ուստի եւ ի քաղաքն եղուսաղէմ հասեալ վրդովեցան քանզի ծածկեցաւ ի նոցանէ աստղն: Եւ է՞ր վասնզի հարցանելն նոցա զանհաւան քահանայսն յայտնի ամենեցուն լիցի խորհուրդն: Ուստի եւ զկնի դիտելոյն ամենեցունց յայտնի դարձեալ աստղն մոգուցն մինչեւ եկեալ եկաց ի վերայ մանկանց յայրին, մանաւանդ թէ յերկինս, քանզի ուր Քրիստոս է, անդ երկինք եւ, վասնզի այրն երկինք երեսեցաւ յերկրի: Իսկ նոցա տեսեալ զաստղն՝ մանաւանդ զՔրիստոս, խնդային խնդութիւն մեծ: Եւ խոնարհեալ երկրպագեցին, եւ հանեալ ոսկի, եւ կնդրուկ, եւ զմուռ մատուցին. ոսկի՝ որպէս թագաւորի, կնդրուկ՝ որպէս Աստուծոյ եւ զմուռ՝ որպէս անմահի, մանաւանդ թէ՝ որպէս թաղումն ընդունողի ընծայեցին ամենեցուն Արարչի եւ Ստեղծողի Քրիստոսի, զոր ծնաւ երկնային Հարսն Մարիամ երկին եւ Աթոռ Աստուածութեան եւ տաճար անպատում սպաս դրախտին: Հրեշտակք Եւայի մեղադրէին, քայց այժմ զՄարիամ փառաւորէին»^{19*}.

Որ զսկարութիւն¹⁸⁰ կանանց շուրջանակի փառաւորեաց,

Որ զկործանեալն Եւայ կանգնեաց եւ զդրախտն երաց ի ձեռն աւագակին, դարձեալ զԱղամ եմոյծ անդրէն,

Ի ձեռն քո միջնորմ ցանկոյն քակեցաւ եւ թշնամութիւն լուծաւ,

Ով սուրբ Կոյս Աստուածածին ի ձեռն քո երկնաւոր խաղաղութիւն Յիսուս Քրիստոս տիեզերաց շնորհեցաւ,

Ի ձեռն քո մարդիկք հրեշտակք եղեն,

Ի ձեռն քո սիրելիք եւ ծառայք որդիք Աստուծոյ կոչեցան,

Ի ձեռն քո ծառայակիցք հրեշտակաց մարդիկ արժանաւորեցան լինել,

Ի ձեռն քո գիտութիւն երկնաւոր եւ փառաբանութիւն յերկրէ յերկինս առաքի,

Ի ձեռն քո համարձակութիւն մարդիկ յերկինս առ Բարձրեալն ընկալան,

Ի ձեռն քո Խաչ ծագեաց ընդ ամենայն երկիր, յորում Որդին քո խաչեցաւ,

Ի ձեռն քո մահ կոխեալ լինի եւ դժոխք աւար հարկանի,

Ի ձեռն քո կուտք կործանեցան եւ գիտութիւն երկնաւոր գտաւ,

Ի ձեռն քո զՄիածին Որդին Աստուծոյ ծանեալ, զոր ծնար ամենասուրբ Կոյս զՏէր մեր Յիսուս Քրիստոս, զոր ամենայն հրեշտակք արեւմբն ընդ նոսին եւ ազգք մարդկան երկրպագեն ասելով՝ անսկիզբն Հայր, անսկիզբն Որդի, անսկիզբն Հոգի Սուրբ. Երրորդութիւն անբաժանելի համագոյ, որում փառք յաւիտեանս¹⁸¹:

19 * Ղուկ. Բ 14:

20 * Նսայի Թ 8:

Տարրերըցումներ

Խորագիր. Ե Հիեկերորդ աւուրն երանելոյն Եպիփանու Եպիսկոպոսի ասացեալ գովեստ Աստուածածինին:

Բնագիր. 1 Ա աստուծային (Θεός, Θεῖχος) փխ. Աստուածածին (Θεοτόκος) 2 Բ քնակութեան: 3 Ե կամեցեալ: 4 Ա քարճրագոյն միտս զքարճրագոյն տեսութեան բերել սփանչելիս փխ. կատարելագոյն... զսփանչելեացս: 5 Ա սառստալի: 6 Ե հառքագոյն: 7 Ա մեծութիւն տեսութեանս փխ. մեծութեանս յիշատակ: 8 Ե խորհրդոյ: 9 Ե Զի ո՞վ է փխ. Քանգի...ոք: 10 ծածկի: 11 Ա չիք եւ: 11ա ԱԵ համրաճայն փխ. նրբաճայն (դրել ենք ըստ վեցեոսիկյան ձեռագրի [ՆԲԸ, Ա, 1008], որը համեմարշխ է հունարեն բնագրին. ἰτχνόθαυος): 12 Ա չիք եմ: 13 Ե զի այսպէս փխ. որպէս: 14 Ե լեզու մարդո խոսի: 15 Ա առնել զասելն փխ. ուսանել: 16 Ե զարմացոյց փխ. ընդոստացոյց, զի զարմացան ամենայն: 17 Ա չիք զարք: 18 Ե չիք մեծաւ: 19 Ե զնոյն փխ. զայն: 20 Ե յԱթոռոյ: 21 Ա Մարիամ փխ. Արմատ: 22 Ե բարբառի: 23 Ա գեղէն փխ. ցեղէ: 24 Ե սուրբ: 25 Ե չիք եւ: 26 Ա երեքին: 27 Ե չիք Ե յայտնապէս: 28 Ե Պատրաստութիւն Տեառն թարգմանի: 29 Ե զարձեալ փխ. որպէս: 30 Ե աղաւթեր փխ. յաղաւթո կայր: 31 Ե երկին ծնաւ: 32 Ե երկին: 33 Ե չիք այլ: 34 Ե Դարձեալ Մարիամ թարգմանչի: 35 Ա զմիանգամայն աշխարհս: 36 Ե չիք Կոյսն: 37 Ե գՔրիստոս նաւահանգիստն: 38 Ե չիք եւս: 39 Ա չիք պարկեշտ: 40 Ե Մարիամայ: 41 Ա թարգմանի Լուսաւոր իմ անուն: 42 Ա քանգի փխ. քանգի... եւ: 43 Ե չիք պարկեշտ եւ: 44 Ե ամենայնիւ առաքիցին: 45 Ա չիք եկեալ: 46 Ե Ա զՍուրբ: 47 Ե վայելչութեան քաղճամ փխ. գեղեցկութեանն ցանկամ: 48 Ե պայծառագոյն է գեղեցկութիւնն փխ. ցանկալի է... փառաւ: 49 Ա երկրպագուին: 50 Ե չիք Հաւր: 51 Ա փափագէր փխ. խանդաղատէր: 51ա ԱԵ չիք անշէշ...զարեգակն (դրել ենք ըստ վեցեոսիկյան ձեռագրի [ՆԲԸ, Բ 668], որը համեմարշխ է հունարեն բնագրին. τὸ ἄσβεστον τοῦ ἡλίου λαμπρότερον θάς): 52 Ե Ուրախ լեր... զարդարեալ... ջահագեցաց Կոյս: 53 Ե ի քեզ կարթի: 54 Ե ունելով Մանանայն: 55 Ե քրոյքեակնն բնութեան փխ. քրոյքեակնման: 56 Ա չիք Ուրախ լեր... գՔրիստոս: 57 Ե երկրի: 58 Ա առաջնորդ է փխ. առաջնորդ է մեզի կեանս: 59-60 Ե չիք քանգի... առ օր: 61 Ե լինին փխ. կարէ: 62 Ե առ ի փխ. լինել ի: 63 Ե չիք թուի... երեշտակաց: 64 Ե այլ ոչ արժանապէս փխ. այլ եւ... արժանաւորութեան: 65 Ե առ որ փխ. օրաց: 66 Ա ի յերկրի փխ. ի վերա երկրի: 67 Ա չիք յերկիր: 68 Ե ամենասուրբ փխ. երանելի: 69 Ե Աթոռ եւ Տեառն: 70 Ե զփայլակնն յերկնից յերկիր ունելով գՔո: Լուսաւոր ամպ, որ զամենալոյսն երկնից զփայլակն ծագեցեր գՔրիստոս փխ. զփայլակն... գՔրիստոս: 71 Ա թափուցեալ, ենչեցուցեր աշխարհի փխ. ծածկեալ էր, աշխարհի լսելի արարեր: 72 Ե զանճրեւ փխ. զտեղատարափ: 73 Ե ցանցեր փխ. սրակցեր: 74 Ա միայն փխ. Իսրայէլի: 75 Ե առաջնորդ կոչեսցի: 76 Ա հեթանոսք հուսացին: 77 Ե Վասն այսր Կուսի փխ. Յաղագս... դրան: 78 Ե միայն սուրբ եւ պարկեշտն Մարիամ զլուսաւոր աղաւթին յիցեան ունելով գՔրիստոս Աստուած առ որ փխ. քանգի... Վասն օրոյ: 80 Ե զանշարժելի փխ. զապառած: 81 Ե գեաւատոյ փխ. զհաստատուն: 82 Ե գՔրիստոս ծնանելով Կուսին փխ. ծնաւ... Մարիամ: 83 Ե չիք Անշարագրելի...

գՔՔԻստոս: 84 B Ուտատտտեխի փխ. Ուտտտտեխսկի: 85 B սստտուածային: 86 B ցանկապատեալ շտշամամֆ: 87 B Անեոդագործ երկիր: 88 A թուսուցեր գորոցն փխ. եւ գորացն... անցուցեալ: 89 B Հաւր փխ. Աստուած: 90 A անծանակ փխ. անարատ: 91 B Մայր սուրբ: 92 B Տեառն, երանելի ես դու ի կանայս: 93-94 B երանելի ես դու ի կանայս, յորոյ ստինս դիեաց, (Վեհետիկ. ձեռ. «գստիմսդ դիեցաւ»։ ՆԲՀ, Ա, 623), որ դարմանէ զամենայն արարածս: Երանելի ես դու ի կանայս Աստուածածին Կոյս, զի ոչ ժամանակեան Աստուած ծնար, այլ Աստուած մշտնջենաւոր, որ յառաջ քան զքեզ եւ զամենեսեան Աստուած եւ Տէր ի լէն մարմնացաւ: Անարատ մորենի, որ գԳառն ծնար գՔՔԻստոս փխ. Ո՛վ... Քրիստոս ծնար: 95 B չիք լծոյ ամուսնութեան: 96 B որ գորթն ծնար փխ. որ զծնարիտ... ծնար: 97 B հաւատոյ սեղան: 98 A եւ զի՞նչ: 99 B որպէս: 100-101 B չիք ծնցի... Տեառն: 102 B չիք անապական: 103 B լուսոյն Մայր: 104 A զգարութիւնս փխ. եւ զգարս: 105 B չիք Լուսոյ: 106 B պայծառութեամբ: 107-108 A Լուսոյ, որ լուսաւորեաց զծագս տիեզերաց, Լուսոյ, որ համբարծաւն ի յերկինս եւ լուսաւորեաց զամենեսեան ի յերկինս եւ յերկրի փխ. Լոյս... ամենայն: 109 B զարմացուցեր զգարս: 110 A ատար փխ. զարմամֆ: 111 B եւ փխ. ի: 112-113 A Ատար փխ. Զարմամֆ (եռնարեն քնագրում Θάυρα [զարմամֆ] Ἐτεροσ-ի. ἀλλότριος-ի[ստար] փոխարին): 114 B հրեշտակաց քնաւորեցաւ: 115 B զհամագոյակից: 116 B Հոգւոյն, որ զերկինս բացիւ կամարագործեաց զամենկնելին յերորդութենէն, որ միայնում յամենասուրբ երորդութեան զհամագոյականն ծնար գՔՔԻստոս փխ. Հոգւոյն... բացիւ խոնարհեցոյց: 117 B անբոցակեզ ի քեզ կրեցեր: 118 B մորենւոյն ունելով: 119 B հնոց փխ. թռնիր: 120 B ջամբեցեր աշխարհի առ ի կերակուր ընծայելով: Վասն որոյ եւ Փրկիչն աշխարհի ասաց Քրիստոս փխ. չերբ... շնորհեցեր: 121-122 B Յաճախապէս կուսական ամեն առաքին ի սեղանս, ո՛վ սիրելիք, բազում բարեաց պատճառի առ վայելչութիւն աշխարհի պարգեւելով: Անարատ Կոյս եւ Մայր Քրիստոսի, որ զիմանալի արեգակնն, որ ծագեր ի յերկինս թուսուցեր ի յերկրի գՔՔԻստոս փխ. Փարթամ... գՔՔԻստոս: 123 B Մանաւանդ փխ. Զոր: 124 B երգողական բարբառով փխ. արեւներգական բերամով: 125 B զնոյն բարբառի փխ. գոչէ: 126 B «ձրագ ոտից իմոց եւ լոյս շաւղաց իմոց բանք քո»։ 127 B աշտանակ կուսական: 128 B զանշէջ փխ. զանտանելի: 129 B աշխարհի ունելով փխ. տիեզերաց տարար: 130 B աշտանակ կուսական: 131 B որ վասն աշխարհի ցուցեր երագ եւ զիաւարեալս լուսաւորեցեր փխ. որ ...նշուլացուցեր: 132 B ով աշտանակ կուսական, որ զիաւար հալածեցեր եւ զլոյս հաստատեցեր փխ. Ով... զլոյս: 133 B անտանելի առ ի լուսաւորութիւն մատուցեր փխ. Ով... լուսաւորութիւն: 134-135 B մի լոյս անշէջ համագոյական ի բարձր աթոռոյ առեալ առ ի լուսաւորութիւն աշխարհի ցուցեր փխ. հուրն... ճանաչեցուցեր: 136-7 A Մարիամ Կոյս, պսակ թագաւորական, որ զքաղմագին մարգարիտն ունիս գՔՔԻստոս, թագաւորական ծիրանի, որ զերկնի ու երկրի Թագաւորն զգեցուցեր՝ գտնաւորինական մարմնոյն զանաղո զգեստն, փխ. Ով արքունական... փայլեն: 137 A նամակ փխ. Գիրք: 138 B աշխարհս ընթերցար: 139 B Հաւր փխ. Աստուած: 140 B Հաւր Որդի: 141 B յառաջ քան զյաւիտեանս: 142 B համագոյական փխ. զհանգոյն: 143 B ընդ Հաւր փխ. հանդերջ Հարր: 144 A չիք եւ փառաւորի: 145 B որ ի քերովրէիցն նստի: 146-147 B քառակերպեան: 147 B արեւեկն փխ. փառաքանեն: 148 B չիք ասելով... Քո: 149-150 A չիք Բան...արար:

151 A չի՛ մնալով... Ով: 152 B հիւսեր: 153 B ամենասուրբ փխ. երջանիկ: 154 A 151 A չի՛ մնալով... Ով: 152 B հիւսեր: 153 B ամենասուրբ փխ. երջանիկ: 154 A Կոյս, որ գերկնային փառսն շառտեղեցուցեր: 155 A բազմութիւն փխ. բազում: 156 B անարատ փխ. անսպի: 157 B ծաղիկն ծնանելով գՔրիստոս փխ. զվարդն... Քրիստոս: 158 B չի՛ք բաժակեալ: 159 B Ողկուզաբեր երկիր, որ զանհոսանացեալ ողկոյզն բուսուցեր գՔրիստոս, զիարդ բուսուցեր փխ. ողկուզաբերեցեր... շառտեղեցուցեր: 160 B անուանեցար ի վերա փխ. եղեր: 161-162 B Բան Հաւր յառաջ քան զյաւիտեանս ընկալար ի յղութիւն Կոյս անապական, տաճար եղեր տաճարական, որ բնակեաց ի քեզ Բանն Աստուած՝ անփորձ ամուսնութեամբ գեմանուէլն յորովայնի կրեցեր եւ անապական արգանդի՝ մնանեալ աթոռոյ բերովբեականի, յորում Բանն մարմին եղեալ անսկիզբ եւ անբերելոյ էր: Եւ ել տնտիրնաբար, որ մարմնացաւ Աստուած՝ անփորձ ունելով զԳառն Աստուծոյ: Հիացմամբ, ասէ սուրբ Կոյսն, որ յառաջ քան զյաւիտեանս գՔրիստոս Աստուած ծնա, քանզի Կոյս եւ այժմ յետ ծննդեանն մաքրագոյն քան, որ յառաջն էի: Առանց ցաւոց ծնա՝ ոչ որպէս ամենայն կանայք, քանզի անմեան է իմս եւ նոցայն՝ առ միմեանս իրք: Ոչ գիտաց մարդկային բնութիւն զիմ ծնունդս, քայց միայն, որ յիս բնակեցաւ Աստուած փխ. զմխայալաւիտեան... Քրիստոս: 163 A չի՛ք սուրբ: 164 B Ո՛վ սուրբ Կոյս գերկինս շուրջ պարունակելով փխ. Ո՛վ որովայն... ունիս: 165 A նեղեցեր զքեզ բնակեալն Աստուած: 166 B Ով որովայն եւթնապարունակ եւ առաւել եւս փխ. Ով ... երկին եւ եւս: 166-167 B չի՛ք մեծագոյն... Քրիստոս: 168-169 B փափագս ձկնեցուցանէ զիս ասել վասն սուրբ Աստուածածնիս, երկիւղս արգելու զիս առ ի լոն, ոչ համարձակապէս ունել լեզու եւ ասել, միտքս յորդորեն, եւ դողումնս ի քաց դնէ. ոմն յառաջ քարշէ եւ ոմն ի վերջ ձգէ, եւ վասնզի մեղեալ եմ յերկոցունցս: Լաւագոյն է իմձ խաւսել վասն հեղեկաւոր եւ սուրբ Կուսին: Քանզի ասեմ զսա երկին եւ Աթոռ միամզամայն եւ խաչ, քանզի սուրբ գիրկս սփռեալ զՏէրն ընկալաւ, որպէս Աթոռ բերովբեական, խաչատեսիլ երկնաւոր, վասնզի ի ձեռն գրոց յերկինս յառեալ տեսանեմ զսա եւ ի երեշտակաց երկրպագեալ: Ուստի եւ Գաբրիէլ ողջոյն Կուսին ասէ փխ. Բաղձանաւա... ասելով: 170 B չի՛ք բազմաչեալ: 171 B չի՛ք մեծանուն: 172-173 B սրբազան անուն եւ բազմատեսիլ անհասանելի զարութեան, որպէս ծածկոյթ իմանալի ի ձեռն տնտիրնութեան մարմնոյն գտեալ քան զսերովբեան գեր ի վերոյ, քանզի նոքա զառնան՝ ոչ կարելով փխ. Կոյսս...կարացեալ: 173ա A ի փխ. առ իմանալի (հուր Աստուածութեան՝ νοητόν πῦρ τῆς Θεότητος): 173բ B լոյս փխ. հուր: 174 A սաստկագոյն փխ. հստակ: 175-176 B հաշելով զանհասանելին Քրիստոս ցանկ համարելով ողջուներ: Ջարձ հրեշտակաց ի ներքոյ անկանելով ոտից Փրկչին՝ ոչ տեսանելով եւ ոչ մերձեալ իշխելով: Եւ սորա շուրթն առ շուրթն մերձեցուցեալ զանհասանելին ողջունէր փխ. հայեցեալ... զանհասանելին: 177 A չի՛ք սուրբ: 178-179 B որ զանհասանելի խորհրդոց բերես զսքանչացումն զերեւփափագելի զհաւատսն աշխարհի քարոզելով, հրեշտակաց վերագոյն եղեալ եւ մեծագոյն քան զբերովբեան: Ընդ որ հայելով արքայն Քրիստոս որպէս արժանաւոր Աղախին եւ Մայր պատուեալ յԱստուծոյ: Մեծ սքանչելիք տեսանեմք, զաղախինն Տեառն՝ Մայր Տեառն եւ գերկրաւոր Կոյսն՝ երկնաւոր Հարսն եւ առագաստ եւ Մայր երեւեցաւ յայրին, ուր յայնժամ զՄանուկն ծնաւ գՔրիստոս, ըստ մարգարէութեան ձայնին Նալիայ, թէ՛ «Մանուկ ծնաւ մեզ Որդի եւ տուաւ մեզ»: Ո՛վ երկնաւոր Հարսն Մարիամ, որ եւ երկին եւ Աթոռ եւ Տաճար Աստուածութեան եւ անճառելի

դրախտին զարդ: Հրեշտակք եւայի մեղադրէին, իսկ այժմ զՄարիամ փառաւորեն փխ. անհասանելի... փառաւորէին: 180-181 Ա Որ զտկարութիւն կանանց տիապէս փառաւորեաց,

Որ զանկեալն զեւայ յարոյց եւ զարտաքս հանեալ ի դրախտէն զԱդամ յերկինս առաքեաց.


Որ զդրախտն երաց եւ ի ձեռն աւագակին դարձեալ տնկեաց զԱդամ, քանզի ի ձեռն սորա զմիջնորմն ցանկոյն քակեաց. այսինքն զՔշնամութիւնն:

Ո՛վ ամենասուրբ Կոյս ի ձեռն քո երկնային խաղադութիւն պարգեւեցաւ աշխարհի.

Ի ձեռն քո ծագեաց Խաչն ընդ ամենայն տիեզերս, գորւէ Որդի քո կախեցաւ Քրիստոս Աստուած մեր,

Ի ձեռն քո մահ կոխի եւ դժոխք աւերին.

Ի ձեռն քո զմիածին Որդին ծանեաք, զոր դու ծնար. ամենասուրբ Կոյսդ, զՏէր մեր Յիսուս Քրիստոս, որում ընդ Հարբ եւ Սուրբ Հոգւոյն փա՛ռք յաւիտեանս, փխ. Որ զտկարութիւն... յաւիտեանս:



ԱՅԱՅ ԲՈՁՈՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր

**«ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՅՈՑ» ՏԻՏՂՈՍԻ ՆՈՐՈՎԻ
ԸՆԿԱԼՈՒՄԸ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՅ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ
ԱՆԿՈՒՄԻՑ ՀԵՏՈ**

Քրիստոնեական Հին Եկեղեցիները ինքնահաստատման ճանապարհին ստեղծում էին սեփական Աթոռների առաջնությունը Հավաստող տարբեր կոմաններ, որոնք Հաճախ Հանդես էին գալիս առանձին եպիսկոպոսական Աթոռները Քրիստոսի, նրա առաքյալների և քրիստոնեական սրբերի Հետ կապող ավանդությունների, եկեղեցական պատմությունների և վարքերի տեսքով: Եկեղեցիների Համար մեծ կարևորություն էին ձեռք բերում քրիստոնեության Համար զոհված մարտիրոսների մասունքների սրբացումը, եկեղեցու Համար դարեդար ավելի ու ավելի մեծ նշանակություն ստացող եկեղեցու վարչության սրբագործումը, քրիստոնեական եկեղեցու պաշտոնեության կապումը վաղ քրիստոնեության դարաշրջանի եկեղեցու կառուցվածքի Հետ, առանձին սրբավայրերի վերածումը Համաքրիստոնեական արժեքների:

Դեռևս քրիստոնեության տարածման առաջին դարերին քրիստոնեական եկեղեցին, մյուս կրոնական խմբերից առանձնացնելու և իր ճշմարտացիությունը Հավաստելու մտահոգությամբ, սկսեց մշակել բազմացող աղանդներից և Հերձվածներից տարբերակվելու սեփական չափանիշերը: Տիեզերական եկեղեցիների Համար այդպիսի կարևորագույն չափանիշեր դարձան.

ա) Հավատի ուղղափառությունը (օրթոդոքսություն),

բ) եկեղեցու ընդհանրականությունը (կաթոլիկություն),

գ) առաքելականությունը:

Այս երեք Հատկանիշերը միասնականորեն են Հանդես գալիս Հին Եկեղեցիների ինքնությունը Հաստատող Ե-է դարերի պատմագրական երկերում և վավերագրերում:

«Ուղղափառություն» ասելով Հին Եկեղեցիները Հասկանում էին Քրիստոսի Հավատի ուղղափառությունը, որը նրանք ըստ ավանդության ստացել էին Ավետարանի խոսքի և Սուրբ Հոգու միջոցով և փորձում էին այն անաղարտ պահել, Տիեզերական եկեղեցում ամեն մի կրճիմ և անՀամաձայնություն լուծելու Համար Հրավիրելով եկեղեցական ժողովներ: Այդ ժողովներում նրանք լուծում էին դավանաբանական բոլոր այն տարաձայնությունները, որոնք առաջացել էին ժողովների միջև անցած ժամանակաշրջանում, փորձում էին ապացույցել, որ սեփական եկեղեցու դավանանքն ուղղափառ է և բխում է ավետարանական դրույթներից և Նիկիայի Տիեզերական ժողովի (325 թ.) որդեգրած սկզբունքներից: Տիեզերական եկեղեցու որոշումները պարտադիր էին բոլոր եպիսկոպոսական Աթոռների Համար: Ժողովների որոշումները լրնգունող եկեղեցական գործիչները և նրանց Հետևորդները դուրս էին Համարվում Տիեզերական եկեղեցու

կառուցվածքից: Այդ աղանդների մեծագույն մասը, ժամանակի ընթացքում չկարողանալով դիմանալ Տիեզերական Եկեղեցու Հիմնական Աթոռների¹ մրցակցությանը և ապավինելով Հռոմեական կայսրության ներսում ընդգդմադիր ժամանակավոր քաղաքական ուժերին, նրանց հետ միասին Հետգհետե դուրս մղվեցին պատմության թատերաբեմից: Այդպիսի հզոր շարժումներ էին արիոսականությունը, ապոդինարականությունը, նեստորականությունը, եվտիքեականությունը և այլն²: Հերձվածողական շարժումների երկարակեցությունը պայմանավորված էր նաև Հռոմեական կայսրությանը Հակամետ քաղաքական ուժերի կենսունակությամբ և երկարակեցությամբ:

Հռոմեական կայսրությունից Բյուզանդիայի առանձնանալու հետևանքով, նոր նշանակություն սկսեց ձեռք բերել Կոստանդնուպոլիսը, որն իր առջև խնդիր էր դրել իրեն նեթարկել Մերձավոր Արևելքի բոլոր եկեղեցական Աթոռները: Այդ խնդիրը բխում էր նաև Բյուզանդական կայսրության արտաքին քաղաքականությունից, որը ջանք էլ էր խնայում կայսրության սահմաններում պահել Մերձավոր Արևելքը: Կայսրության Արևելյան տարածքներում իր Համար Հոգ դետած Հերձվածներից ամենաերկարակյացն էր նեստորականությունը, որը, սկիզբ առնելով Անտիոքում և նեստորի անձով իբրև պատրիարք Հաստատվելով Կ. Պոլսի Աթոռի վրա, Եփեսոսի (431 թ.) Տիեզերական ժողովում Հայածվեց կայսրության տարածքներից: Այս Հերձվածը երկար ժամանակ դործում էր Սասանյան Պարսկաստանում որպես ինքնուրույն եկեղեցական կաղմակերպություն, որպես Հռոմեական կայսրությանը Հակադիր եկեղեցական և քաղաքական ընդդիմություն, վայելելով Սասանյան պետության Հովանավորությունը:

Այս գործընթացի հետ միաժամանակ, արդեն քրիստոնեական առաջին ժողովների դարաշրջանում, Տիեզերական Եկեղեցու մի շարք Աթոռներ պայքար էին մղում Նախագահության՝ քրիստոնեական աշխարհում առաջինը ճանաչվելու Համար³: Այդ պայքարն արտացոլվել է քրիստոնեական Եկեղեցու գրեթե բոլոր Տիեզերական ժողովներում: Բյուզանդական Եկեղեցու նոր պառակտման դուռ բացեց Քաղկեդոնի (451 թ.) Դ Տիեզերական ժողովը, որից հետո Բյուզանդական Եկեղեցուց առանձնացան մի շարք եպիսկոպոսական և պատրիարքական Աթոռներ, Կովկասում սկսեց առանձնանալ և Կ. Պոլսի Աթոռին Հակադրվել Հայոց Եկեղեցին՝ Վրաց և Աղվանից Եկեղեցիների հետ միասին:

Դ դարում քրիստոնեական Եկեղեցու եպիսկոպոսական Աթոռներն իրենց սահմաններով կրկնում էին Դիոկղետիանոս կայսեր կողմից կատարված Հռոմեական պետության վարչական բաժանումը: Եկեղեցական թեմերի կաղմավորման այդ սկզբունքը կիրառվում էր նաև Հետագա կայսրերի օրոք, ժամանակի ընթացքում

¹ Եկատի ունեմ Հռոմը, Կոստանդնուպոլիսը, Անտիոքը, Ալեքսանդրիան:

² Տիեզերական Եկեղեցուն Հակադրված աղանդների թվարկում պահպանել են բազմաթիվ Հայերեն մատյաններ (տե՛ս, օրինակ, Մաշտոցի անվան Մատենադարան, Թ. 583):

³ Տիեզերական Եկեղեցու Եվրոպեանությունն առնելով, քրիստոնեական աշխարհում Եկատի ունեին Նիկիայի (325 թ.) ժողովի կանոնները ընդունեան քրիստոնեական երկրները: Այն գրեթե ամբողջությամբ Համապատասխանում էր Հռոմեական կայսրության տարածքի վարչական բաժանմանը: Սկզբնական շրջանում Տիեզերական Եկեղեցու կաղմում էին իրենց առնում նաև Սասանյան Պարսկաստանում բնակվող քրիստոնյաները (տե՛ս St.Gero, Barsauma of Nisibis and Persian christianity in Fifth century, Lovanii 1981 (OCCO. vol.426, Sub., 1. 63)):

յուրացնելով նրանց կատարած վարչական փոփոխությունները: Է դարում Հերակլ կայսրը ևս փորձեց երկրի բանակաթեմային կառուցվածքի տարածքային բաժանման սկզբունքները Համապատասխանեցնել Եկեղեցու թեմական բաժանումներին: Այս գործընթացը Հետագայում ևս խորացվեց և իր քայքայմանը Հասավ միայն ժԱ դարի կեսերին:

*
*
*

Ե դարի կեսերին անողոք պայքարից Հետո քրիստոնեական Եկեղեցու Աթոռների մեջ առաջին պլան մղվեցին Հռոմը և Կոստանդնուպոլիսը, որոնք իրենց մեջ բաժանեցին գրեթե ողջ քրիստոնեական աշխարհը Արևելքի և Արևմուտքի միջև: Նրացից յուրաքանչյուրը փորձում էր սեփական Աթոռի իրավասություններին ենթարկել դիմացիներն: Այս երկու Հոգևոր կենտրոններն էլ ունեին իրենց իշխանությունը Հզորացնող զուգահեռ քաղաքական իշխանություն: Սակայն տարբեր էր նրանց կախվածությունը քաղաքական իշխանություններից: Եթե Կոստանդնուպոլսի պատրիարքությունը Հնազանդ կցորդն էր Բյուզանդական կայսրերի վարած քաղաքականության, ապա Հռոմի պապությունն իր վարած քաղաքականության մեջ շատ ավելի անկախ էր և Արևմտյան Եվրոպայի ամենաՀզոր քաղաքական ուժերից մեկն էր, որը կարող էր պայքարի մեջ մտնել նույնիսկ Եվրոպայում ձևավորված կայսրությունների դեմ: Բյուզանդական Եկեղեցին որպես ամբողջի մի մաս ձուլված էր պետությանը: Եկեղեցու այս տիպը յուրացրեցին նաև արևելյան մի շարք եկեղեցիներ, ինչպիսիք էին Հայկականը, վրացականը: Այս նույն եկեղեցական կազմակերպությունից բավական ազդվել է նաև Արևելքում ձևավորված եկեղեցական կազմակերպության մի այնպիսի տիպ, ինչպիսին, ասենք, Ասորական Եկեղեցու տարբեր թևերն էին, որոնք, չներկայացնելով որևէ ասորական ազգային ամբողջական քաղաքական կազմակերպություն, ստիպված էին ի սկզբանե իրենց ծառայություններն առաջարկել սեփական ժողովրդի Համար օտար քաղաքական ուժերի, նրանց, ովքեր տվյալ պահին իշխում էին իրենց թեմերի տարածքների վրա: Այս վերջին տիպի եկեղեցիները ազգային երանդ չէին կարող ձեռք բերել և մնացին ապագային կազմակերպություններ:

*
*
*

Հայոց Եկեղեցին դարերի ընթացքում ձևավորել է սրբությունների իր Համակարգը, մշակել ազգային Հաստատությունների Հետ իր Հարաբերությունները, որոնք ժամանակի ընթացքում ենթարկվում էին միայն փոքրիկ սրբազրությունների⁴: Նույն բանը կարելի է ասել նաև Հայոց կաթողիկոսական նոտարատան վավերագրերում օգտագործվող ափսոսանքի մասին:

⁴ Հայոց Եկեղեցու տեցած ուղու պատմության Համառոտ ակնարկը տե՛ս վերջերս Հրապարակված K.Maksoudian, Chosen of God. The Elevation of the Catholicos of All Armenians (from the Fourth Century to the Present), New York 1995 գրքում: Ծավով պիտի նշեմ, որ այս արժեքավոր ուսումնասիրության Հայերեն թարգմանությունը (Հայր Գրիգոր Վարդապետ Մադուռայան, Ընտրեալդ յԱստուծոյ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի

Տիտղոսների այդ շարքի մեջ առանձնանում է «Հայոց Կաթողիկոս» տերմինը, որը Հայ պատմագրության և մատենագրական տարբեր գործերում հիշատակվում է ի սկզբանե, և դարեց: Հնագույն այս տիտղոսի ամբողջական տարբերակն էր «Կաթողիկոս Հայոց Մեծաց» արտահայտությունը: Այդ են վկայում և դարի Հայ պատմագրության գրեթե բոլոր հուշարձանները: Դ դարում Հայոց Կաթողիկոսարանը փոխարինելու եկավ Հայոց քրմապետության ինստիտուտին: Թագավորի կողքին մինչ այդ Թագավորի պաշտոնը զբաղեցնում էր նրա ազգակից քրմապետը: Այդ նույն տրամադրանքով քրիստոնեություն ընդունած Հայաստանի Հոգևոր առաջնորդը կրկին նույն ազգատոհմից (Արշակունի կամ Պաշկունի) էր, սակայն Թագավորական ընտանիքին թշնամացած ճյուղից: Սակայն այդ չխանգարեց արդեն Ս. Գրիգոր Լուսավորչին Հակայական իշխանություն ձեռք բերել Հայաստանում:

Հետաքրքիր է այն պարագան, որ Կաթողիկոսական տիտղոսը Թագավորականին նման ուներ նույն կառուցվածքը. «Թագաւոր Հայոց Մեծաց» և «Կաթողիկոս Հայոց Մեծաց»: Տիտղոսի այս ձևակերպումը Հանդիպում է արդեն Ագաթանգեղոսի, Բուդանդի, Խորենացու, Փարպեցու երկերում: Ճիշտ է, Դ դարի կեսերին Հայաստանը բաժանվեց երկու մասի, սակայն Հայոց Կաթողիկոսական ինստիտուտը չբաժանվեց: Այլ հարց է, որ Հայոց Կաթողիկոսարանը մնաց պարսկական կողմում, և արդեն Ս. Սահակին և Ս. Մեսրոպին Հատուկ կայսերական թույլտվություն էր պետք գրել ու գրչությունը Բյուզանդիայի տարածքում գտնվող Հայաստանի մասում տարածելու համար: Կարելի է ենթադրել, որ այստեղ գործավարող եպիսկոպոսական Աթոռները ուղղակիորեն չէին եթարկվում պարսկական մասում նստող Հայոց Կաթողիկոսին, որը շարունակում էր զուգահեռաբար գոյություն ունենալ Հայոց Թագավորության ինստիտուտի կողքին:

Այս դրությունն ամենայն հավանականությամբ շարունակվում է մինչև Մորիկ կայսեր (582-602 թթ.) իշխանության շրջանը: Վերջինս, Նորովի բաժանելով Հայաստանը Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև, առաջին անգամ Հայոց Կաթողիկոս է ձեռնադրել տալիս Բյուզանդական կողմում: Այդ մասին Հովհաննես Դրասխանակերտցին ցավով գրում է. «...բայտ Հրամանի կայսերն Մօրկայ զԹրհան...կացուցանեն կաթողիկոս Թունական կողման... բնակեցուցանելով զնա ի քաղաքագլխի Աւան...իսկ մեծ Հայրապետն Աբրահամ...ընակէր ի Պարսից Բաժնի...հակաթոռ գոյով՝ յերկուս Հատուածն բաժանեալ լինէր միատարր միութիւն Հայրապետական աթոռոյն. և ապա ոչ սակաւ հակառակութիւն կրեալ լինէին կողմանքն երկուքին»⁵: Դրանից հետո, Հատկապես Հերակլ կայսեր իշխանության տարիներին, թեպետ Բյուզանդական կայսրերը հաճախ միջամտում են Հայոց Կաթողիկոսարանի գործերին, սակայն Հայոց եկեղեցու միասնականությունը չի խախտվում:

ընտրութիւնը, Թարգմանիչ՝ Նելլի Բարթյան, Երևան 1995) երբեմն Համարմբ չէ բնագրին:

Այս հարցերին նվիրված, Հնում Հրապարակված, այխատնքներից ուշադրության արժանի է՝ Վ. Հացունի, Կաթողիկոսական ընտրութիւն և ձեռնադրութիւն պատմութեան մէջ, Վենետիկ 1890, օւսումնասիրութիւնը:

⁵ Թովհանէս Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, Տփղիս 1912, էջ 72:

ակնհայտ է, որ մինչև ԺԲ դարի 40-ական թվականները Հյուսիսային Ասորիքում Հաստատված կաթողիկոսարանը հույս էր փայփայում վերադառնալ Անի:

1065 թ. Թավադուրում վախճանվեց Խաչիկ Բ Անեցին: Սակայն բյուզանդական քաղաքականությունը, որի նպատակն էր քաղկեդոնականությունը Հաստատել Հայոց եկեղեցում և Կաթողիկոսական Աթոռը Հպատակեցնել Կոստանդնուպոլսի Պատրիարքությանը՝ իր նպատակին չհասավ: Հայկական տարածքներից Հեռացված Հայ իշխանները և Հատկապես Կարսի վերջին Թագավոր Գագիկը Արասյանը, որը կայսրությունից տարածքներ էր ստացել Սեբաստիայի և Պիզուի կողմերում, Կոստանդնուպոլսում կարողացավ պաշտպանել Հայոց եկեղեցու ինքնուրույնությունը և Հասավ նրան, որ բյուզանդական կայսրը Թուլյատրեց նոր Հայոց Կաթողիկոսի ընտրությունը: Հայոց երկրից դուրս բերված Հայկական զինված և քաղաքական ուժերի ղեկավարները Համաձայնեցին կաթողիկոս ձեռնադրել Բյուզանդական կայսրության պաշտոնյա, Գրիգոր Մազիստրոսի որդուն՝ Վահրամ Պաշտպանուն, որին անվանեցին Գրիգոր Բ Վկայասեր:

Հայաստանի քաղաքական ճակատագրի Համար այս բախտորոշ ժամանակաշրջանում գումարվում է Հնում արդեն Հայտնի սկզբունքով Հայոց իշխանների ժողով, «որք մնացեալ էին ի Թագաւորացն Հայոց խնդիր արարին գտանել զմի ոք արժանաւոր»⁷: Պաշտպան Հայոց պատմության մեջ ամենաճանաչմամայիններից էր: Հայաստանի տարածքի վրայից վերացել էր Բագրատունյաց Թագավորությունը, Հայկական իշխանական տների Հիմնական մասը, Հանձնելով իրենց պապենական տիրույթները, դուրս էին եկել Հայրենի տարածքներից և բնակություն Հաստատել Բյուզանդական կայսրության արեւելյան սահմաններում: Օգտվելով անիշխանական այս վիճակից, սելջուկ-թյուրքերը կարողացան բավական Հեշտությամբ տեղ դառնալ ողջ Հայաստանին: Հայաստանը զրկվեց և՛ Թագավորական, և՛ կաթողիկոսական իշխանություններից, այդ իշխանությունների կրողները Հայտնվեցին Բուն Հայաստանի տարածքներից դուրս:

Հայաստանից դուրս Հաստատված տարբեր իշխանություններն էին այժմ որոշում Հայոց քաղաքական կյանքի գլխավոր Հարցերը: Մանազկերտի ճակատամարտից (1071 թ.) Հետո Հայաստանում ստեղծվեցին նոր քաղաքական միավորներ: Կաթողիկոսական Աթոռը դուրս գտնվելով բուն Հայաստանի՝ Մեծ Հայքի տարածքից, ժամանակի ընթացքում ընտելացավ տեղական իշխանություններին և իր տեղն էր փորձում գտնել Կապադովկիա, Հյուսիսային Ասորիք և Կիլիկիա տեղահանված Հայ ազգաբնակչության կողքին: Ֆիլարտոս Վարաժնունին ԺԱ դարի 70-ական թվականներին փորձում է միավորել Հայաստանից դուրս եկած Հայկական զինական ուժերին: Այս նպատակին Հասնելու Համար Ֆիլարտոսն իր իշխանության տարածք է Հրավիրում Գրիգոր Բ Վկայասերին, սակայն վերջինս նախընտրում է Ֆիլարտոսին ուղարկել Հայոց կաթողիկոսական իշխանության բարձրագույն նշանները (Լուսավորչի աջը, Վարազա Ս.Նշանը), քան ինքը ենթարկվել նրա իշխանությանը: Ֆիլարտոսը Գրիգոր Վկայասերի խորհրդով Հոնիում կաթողիկոս է ձեռնադրել տալիս Պետրոս Գետադարձի ազգական Սարգսին: Այս ձեռնադրությունից Հետո Գրիգոր Վկայասերը գործունեություն է

⁷ Մատթեոս Ուռուտեցի, Ժամանակագրություն, Վաղարշապատ, 1898, էջ 185, Մ. Օրմանեան, Ազգապատում, Կոստանդնուպոլսի 1912, 8 870:

Մելիք Շահի բանակի մաս էր կազմում նաև Հայկական զորաբանակը¹⁰։ Ամենայն Հայկականությունը Զալալ եղ- Դին Դաուլա Մելիք Շահից (1072-1092)¹¹ Բարսեղ Ա Անեցի Կաթողիկոսը նաև խնդրել էր իր տիրապետության սահմաններում իրեն ճանաչել միակ Հայոց Կաթողիկոս։ Այդ է պատճառը, որ այդ ընդունելությունից Հետո, «Եւ ելեալ արքունական Հրամանօք Տէր Բարսեղն գնաց մեծաւ ուրախութեամբ, և արք փառաւորք ի սուլտանէն զհետ իւր, և եկեալ Հասանէր ի Զահան գաւառին. և յարեաւ ի վերայ Տեառն Թէոդորոսի, որ Հրամանաւ Փիլառոսոսին նստեալ էր Կաթողիկոս ի Հոնին. և Տէր Բարսեղն ընկնելոյր յաթոռոյն զՏէր Թէոդորոսն և առեալ ի նմանէ զքօղն և զգաւազանն և զսուրբ Նշանն Տէր Պետրոսի՝ և արար միաճնծամ զՀայրապետութիւնն իւր, և անտի եկն ի քաղաքն ՈւռՀա»։ Բարսեղ Ա-ի այս քայլի նպատակն էր Հայոց Կաթողիկոսական Աթոռի միասնականության ապահովումը։ Հետագայից է, որ Մատթեոս ՈւռՀայեցիին փորձում է արդարացնել Բարսեղ Ա-ի այնպիսի Մելիք Շահին. «Եւ արդ այս ոչ է մեղադրելի գնալ Հայրապետին առ այլազգի Թագաւոր և առեւ խաղաղութիւն սրբոյ Եկեղեցւոյ. զի յաղաքս խաղաղութեան գնաց սուրբն Բարսեղ(Կեսարացի - Ա.Բ.) առ անօրէն Յուլիանոս Թագաւորն, և սուրբն Ներսէս առ ուրացոյն Վազէս Թագաւորն Յունաց, և սուրբն Մարութա առ Յազկերտ Պարսից արքայն, և վարդապետն Նանան(ձեռագրերից մեկում՝ ՅօՀան) առ Թագաւորն Քաղզէացւոց, և Քրիստոս եկեալ առ Հրէական ազգն»¹²։

Հայոց Եկեղեցու ազդեցության ոլորտի այս աշխարհագրական ընդլայնումն արդեն արժանագրված է խաչակրաց արևելքի ԺԲ դարի Բ կեսի պատմիչ Վիլհելմ Տյուրքու աշխատության մեջ, երբ խոսում է Իննոկենտիոս Բ-ի ժամանակ Հայոց Կաթողիկոս Գրիգոր Գ Պաշլավունու և Կաթողիկ Եկեղեցու փոխՀարաբերություններին մասին։ Հոսմի Պապությունը, որն մինչ այդ միայն առանձին փոխՀարաբերություններ էր ունեցել Հայոց Եկեղեցու Հետ և նրա տարածքային տարածվածությունը Թ դարում տեսնում էր միայն Հայաստանում (տե՛ս Նիկողայոս Ա Պապի Թուղթը՝ ուղղված Ալոտ Ա Բագրատունուն¹³), ապա ԺԲ դարում Հայոց Կաթողիկոսությունը ենթակա տարածքներ է Համարում Կապադոկիան, Մեզիան, Պարսկաստանը և իրկու Հայաստանները. «Cui synodo interfuit maximus Armenorum pontifex, immo omnium episcoporum Capadocie, Medie, Persidis et utrusque Armenie princeps et docteur eximus, qui Catholicus dicitur»¹⁴։

Հայոց Կաթողիկոսության դերի ու քաղաքական նշանակության և այդ տիրողների նոր ընկալման մասին են խոսում նաև ԺԲ-ԺԳ դարերի արաբական և ասորական սկզբնաղբյուրները։ Դեռևս դարասկզբին իր Հայ-ասորական եկեղեցական փոխՀարաբերություններին նվիրված մենագրության մեջ անվանի

¹⁰ Պուգանի բանակում Հայկական զորաբանակի առկայության մասին տեղեկացնում է Մատթեոսը, տե՛ս ՈւռՀայեցի, էջ 237։

¹¹ C.E.Bosworth, The Islamic Dynasties, Edinburg 1980, p. 115.

¹² Մատթեոս ՈւռՀայեցի, էջ 241։

¹³ Պ. Անանյան, Զաքարիա Հայոց Կաթողիկոսի և Ալոտ իշխանաց իշխանի թղթակցությունը Փոս Պարտիարքի և Նիկողայոս Ա. Պապի Հետ, Վենետիկ, 1892, էջ 82։

¹⁴ Guillaume de Tyr, Chronique/ éd. critique par R.B.C. Huygens, Turnhout 1986, 15,18, p. 699, l.15 (Corpus Christianorum, Continuatio Mediaevalis, Bd. LXIIIA).

Ժամանակի ընթացքում, ԺԱ դարից հետո, քաղաքական փոփոխությունների հետևանքով Հայոց Կաթողիկոսների տիտղոսից կամաց-կամաց դուրս է մղվում «Մեծաց» ցուցիչը և նրա փոխարեն արդեն ԺԲ դարում սկսում է օգտագործվել «Ամենայն» հասկացությունը: Այս «Ամենայն Հայոց» բանաձևն արդեն արձանագրված է Գրիգոր Գ Պալլավունեոս ընտրության կապակցությամբ Մատթեոս ՈւռՀայեցու երկում: «Ամենայն Հայոց Կաթողիկոս» բանաձևումն արդեն առկա է ԺԲ դարի 60-70-ական թթ. Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների վավերագրերում: Կոստանդնուպոլսի Պատրիարքների գրած թղթերի թղթառաջ-դիմումներում «Կաթողիկոս Ամենայն Հայոց» տիտղոսը փոխարինելու է դալիս մինչ տյո ավելի հաճախ օգտագործվող «Կաթողիկոս Հայոց Մեծաց»-ին: «Ամենայն Հայոց Կաթողիկոս» տիտղոսն ավելի մեծ հաճախականությամբ օգտագործվում է ԺԳ և ԺԴ դարերում: Այս տերմինի օգտագործումը հատկապես հատկանշական է, երբ այն օգտագործում են ժամանակակից հակաթոռ կաթողիկոսներ՝ Աղթամարի Հայրապետ Զաքարիան և Սաի կաթողիկոս Կոստանդինը, ԺԴ դարի երկրորդ տասնամյակում¹⁹: Նկատելի է, որ Կաթողիկոսական Աթոռը «Ամենայն Հայոց Կաթողիկոս» տիտղոսի մեջ դնում է նոր իմաստ՝ Հայոց եպիսկոպոսական թեմեր են կազմվում Հայաստանի սահմաններից դուրս (Կիլիկիա, Հյուսիսային Ասորիք, Բալկաններ, Եգիպտոս), այնտեղ, ուր բնակություն էր հաստատել Հայ բնակչությունը: Հայոց Կաթողիկոսարանը ողջ Հայ բնակչությունը և Հայկական պետական միավորները իր հովանու տակ համախմբելու քաղաքականություն էր որդեգրել: Ինչպես տեսանք, քննարկվող եզրի այս նոր ընկալումն արդեն արտացոլված է ԺԲ-ԺԴ դարերի սկզբնաղբյուրներում:



¹⁹ Լ. Ոսկիկյան, ԺԴ դարի Հայերեն ձեռագրերի Հիշատակարաններ, Երևան, 1950, էջ 68, 73, 85-86:

ԹԱԹՈՒԼ ԱՅՈՒՆԻ

ԵՐԲ Է ԿԱՌՈՒՅՎԵԼ ՍԻՍԻԱՆԻ
Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՏԱՃԱՐԸ

Սյունիքի մարզի Սիսիան ֆաղափ հյուսիս-արևմտյան դարավանդին է գտնվում Սյունի վանքը՝ հայկական ճարտարապետության նշանավոր կոթողներից մեկը:

Պատմա-ճարտարապետական գրականության մեջ Սյունի վանքը սխալմամբ անվանում են «Սիսավանի եկեղեցի» և «Սուրբ Հովհաննես»:

Վանքի իսկական անվանումը՝ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ», հաստատում են տաճարի վրա առկա երեք վիմագերի արձանագրությունները, որոնցում եկեղեցին կոչվում է «Սուրբ Գրիգոր» և «Սիւնի վանից եկեղեցի», ինչպես նաև Սյունյաց տան պատմիչ Ստեփանոս Օրբելյանի հետևյալ միակ հիշատակությունը Սյունի վանքի մասին. «Սիւնի վանքը», «որոյ եկեղեցին չմեղ եւ նորակերտ ձեռով կանգնեալ գմրեթայարկ խորան երկնաման, ի մեծ բարեպաշտութեան Վարդգիսոյ՝ Սիւնեաց տիկնոջէ յառաջ քան զհայ թուականն, յանուն սրբոյ Լուսաւորիցն: Եւ առաջեւ վանացն ի մէջ քաղցրահայեաց մեղրանին դնեն իշխանքն տուն արքունի եւ ապարանք իշխանանիստ, եւ յամենայն աւուր ասեն զայն ի ժամ պատարագին»¹:

«Թառաջ քան զհայ թուականն» արտահայտությունը նշանակում է, որ Լուսավորչի տաճարը (Սիւնի վանք) կառուցվել է նախքան Հայոց մեծ թվականի պաշտոնական կիրառության մեջ դնելը 584 թվականին:

Ջի Անդրեաս Բյուզանդացու 200-ամյա տոմարական աղյուսակի ժամկետը 552 թվականին լրանալուց հետո, ֆրիստոյա բառը ժողովուրդներն սկսեցին «շփոթել տոնք եւ ամենայն արհեստ, տոմարականք», ինչպես գրում է Հակոբ Ղրիմեցին:

Տոմարական շփոթը կարգավորելու համար 561 թվականին նգիպոսի Ալեքսանդրիա ֆաղաֆում հրավիրվեց 36 հայտնի տոմարագետների ժողով՝ էսս Ալեքսանդրացու գլխավորությամբ: Ժողովը կազմեց տոմարական նոր աղյուսակներ:

Հարկ է նշել, որ «էսս Ալեքսանդրացու կազմած տոմարական աղյուսակները Հայաստանում պաշտոնական ընդունելություն են գտել 584 թվականին Դավիթում հրավիրված ժողովում: Ժողովի հանձնարարությամբ հայ տոմարագետները, Աթանաս Տարոնացու ղեկավարությամբ, եամածայնեցիքն են էսս Ալեքսանդրացու աղյուսակները հայկական շարժական տոմարի հետ»²:

Ուրեմն, ինչպես վկայում է Սյունյաց պատմիչը, Սյունի վանքը՝ Սիսիանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ տաճարը, կառուցվել է նախքան 584 թվականը, մի շրջանում, «եբր Լուսավորչի անունը առաջ էր քաշվում որպես մի կոչ՝ երկիրը Հայոց նկեղեցու գերիշխանության տակ միավորելու համար: Գրիգոր Լուսավորչի

¹ Օրբելյան Ստ., «Պատմությունն ճահանգին Սիսական», Թիֆլիս, 1910, էջ 338:

² Արքահայրապետ Ա. Գ., Հայոց գիր ու գրչություն, Երևան, 1973, էջ 105:

անվան պրոպագանդան սկսվեց 555 թվականի ժողովից հետո, հակառակորդականության հողի վրա...»³:

Տաճարի կառուցման ժամկետները ճշգրտելու նպատակով, դիտարկեցի նրա վիմագիր արձանագրությունները:

Տաճարի վրա կան 33 արձանագրություններ, որոնցից 11-ը անվիճելիորեն Զ դարին են վերաբերվում: Ըստ վիմագրագետ Ս. Բարխուդարյանի, «այդ բանին ապացույց են նախ՝ նրանց տեղադրությունը, գրված են բարձր ֆիվերի նեղ շրթունքներին, շինության ընթացքում պատերի մեջ հատկապես ագուցված են այն բարձրախառնակների տակերին, որոնք պատկերում են շինարարությունը հովանավորող և ղեկավարող անձանց»:



Սիսիանի Ս. Գրիգոր Լուսավորչի տաճարը

Գրչագրական տեսակետից պատկանում են հնագույն բուլղարաձև երկաթագրի ոճին և, վերջապես, նրանց մեջ երևան եկող անունները և նրանց գրության ձևերը կապվում են հայոց մեջ գործածական հնագույն անուններին և հնչական առանձնահատկություններին»⁴: Նրա կարծիքով տաճարը «իր նարտարապետական առանձնահատկություններով վերաբերում է այդ տիպի վաղագույն հուշարձանների խմբին և ամենայն հավանականությամբ Զ դարի վերջերի գործ է»⁵:

Տաճարի կտուրի ելուստի հարավային և արևմտյան ֆիվերի վրա փորագրված է. «ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՈՂՈՐՄԵԱՅ / ԳՐԻԳՈՐԻ ՍԻՒՆԻՈՅ ԵՒ ԿՈՐՈՒՍԱԼ ՌՈՍՏՈՍՈՅ»⁶:

³ Ադոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Երևան, 1987, էջ 326:

⁴ Բարխուդարյան Ս., Դիվան հայ վիմագրության Հ. 2, Երևան, 1980, էջ 85:

⁵ Նշված աշխատություն, Հ. 2, էջ 85:

⁶ Բարխուդարյան Ս., Դիվան հայ վիմագրության, Հ. 2, Երևան, 1980, էջ 86:

Արձանագրության մեջ հիշատակվում են 637 թ. արաբների դեմ Կադիսի ճակատամարտում մարտնչած և զոհված Սյունյաց տեր Գրիգոր իշխանը (621-637) և Ատրպատականի մարզպան Ռուստամը⁷:

Ս. Բարխուդարյանի նշած 11 հնագույն արձանագրություններից երեքը, ամենայն հավանականությամբ, շինարարական բնույթի են: Դրանցից երկուսն ունեն նույն բովանդակությունը՝ «Յոհանէս եկեղեցւոյն»⁸ մեկը փորագրված է արևմտյան պատի հարավային մասում, «Յոհանէսին» պատկերող րարձրա-
 ֆանդակի (մոտ 50×60) կողքին՝ երկու տողով, իսկ մյուսը՝ եկեղեցու բեմի հարա-
 վային պատի ճեքի մասում: Արձանագրությունը երեք տող է, առաջին տողի
 միջին մասում ֆառակուսի փորվածք է նկարի համար, որն այժմ բացակայում է:
 Երրորդ արձանագրությունը գտնվում է Լուսավորչի տաճարի բեմի հյուսիսային
 պատի ճեքի մասում՝ հինգ տողով:

ՅԻՇԵԱ ՔՍ/ԱԾ. ՎԱՐ/ԱՋՈ ՍԻՆ/ԵԱՅ ՀԱԶԱՐ/ԱՊԵՏՏ⁸:

Երկրորդ տողի միջին մասում ֆառակուսի փորվածք է նկարի համար, որն այժմ
 բացակայում է:

Նշված երեք արձանագրությունները իրենց հնագրական և լեզվական
 առանձնահատկություններով և կից պատկերաքանդակներով աներկրայորեն
 վերաբերում են տաճարի կառուցմանը: Դրանք գրված լինելով բուն մեսրոպյան
 բուրբուռի երկաթագիր տառատեսակով, ամենախոշոր չափերն ունեն, քան
 մյուսները: «...Շինարարական արձանագրություններ V-VII դարերում ունեցել են
 տեղադրման որոշակի եղանակներ: V-VII դարերում շինարարական արձանա-
 գրությունները գետնի վրա են արևմտյան պատին, մուտքի կամ պատուհանի
 վերևը»⁹:

Ովքե՛ր են արձանագրություններում հիշատակվող «Յոհանէս եկեղեցւոյն» և
 «Սիւնեաց հազարապետ Վարազը»:

Ճարտարապետ Ստեփան Մնացականյանը գտնում է, որ «միայն եկեղեցւոյն
 լինելը դեռ շատ քիչ էր տաճարի պատի վրա պատկերաքանդակ ունենալու համար,
 և թվում է, որ Հովհաննեսը, անշուշտ, որոշ մասնակցություն պետք է ունեցած
 լինի տաճարի շինարարության գործում»¹⁰: «Յոհանէսը» եղել է աչքի ընկնող
 հոգևորական, կրոնական գործիչ, որովհետև հայտնի են մի շարք դեպքեր, «երբ
 նահանգների կամ նախարարական տների եպիսկոպոսները (իսկ առանձին
 դեպքերում նույնիսկ կաթողիկոսները) հանդես են գալիս որպես նշանավոր
 եկեղեցւոյնների դերում»¹¹: Հիշենք, որ Հոփսիմի տաճարի շինարարական
 արձանագրությունը, որում կառուցողը՝ հայոց կաթողիկոս Կոմիտաս Ա Աղեցեցին
 (616-628), հանդես է գալիս որպես «եկեղեցւոյն»:

⁷ Սեբեոս, Պատմութիւն Սեբեոսի, Երևան, 1979, էջ 132-137:

⁸ Բարխուդարյան Ս., Դիվան..., Հ. 2, էջ 88:

⁹ Մանուչադյան Ա., Քրոնոլոգիա Հայաստանի IV-XI դարերի շինարարական
 վկայագրերի, Երևան, 1977, էջ 53:

¹⁰ Մնացականյան Ստ., Սիսավանքի պատկերաքանդակները և տաճարի կառուցման
 ժամանակը, Տեղեկագիր հասարակական գիտությունների, Երևան, 1981, թիվ 10, էջ 71-
 73:

¹¹ Մնացականյան Ստ., Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը, Երևան,
 1960, էջ 204:

«Յոհանէսի» պատկերաֆանդակը հաստատում է, որ նա եղել է հայկական: Ամենայն հավանականությամբ նա եղել է Մոսկվա գավառի հայկականը և ոչ թե վաճառի երեքը: Սյունի վանքը, ըստ երևույթի, կաթողիկոսանիստ վայրի եկեղեցու օրինակով, վանքից չի ունեցել, այլ միայն եկեղեցապան¹²:

Զ դարի երկրորդ կեսին Սյունիքում ապրած Հոհանես անունով կրոնական գործիչը հայտնի Հոհան Սյունական Ա հայկականն է, որը 590 թվականին Մոսկվայի կողմից նշանակվեց Հայաստանի բյուզանդական մասի Կաթողիկոս¹³:

«Սիւնական» (Սյունական) անունը երկու իմաստ ունի.

1) «Սիւնական» նշանակում է «սիւնակեաց», այսինքն՝ ճգնաժողով, որ ապրում է սյուն վրա:

2) «Սիւնական» նշանակում է «Սյունիքի»: Սյունական գավառ՝ ճախարարություն¹⁴: Բացառվում է Հոհանես Սյունականի սյունակյաց (ճգնաժողով) լինելը, որովհետև սյունաբնակությունը ոչ ֆաղկեղդական միջավայրում տարածված կրոնական շարժում էր: Սյունակյացները, ի տարբերություն երկարակալ ֆաղկեղդականների, միաբնակ են:

«Սիւնական» անվամբ հայտնի է նաև Սյունյաց հայկական Հովհաննես Սյունականը (գահակալել է 689-711 թթ.)¹⁵:

590 թվականին, Բյուզանդիայի հաղթանակով ավարտված պարսկա-բյուզանդական 18-ամյա պատերազմից հետո, Մարզպանական Հայաստանից պարսկական գերիշխանության տակ էին մնացել հիմնականում Սյունիքը, Վասպուրականը և Մոկքը, նահանգներ, ուր պարսկական ազդեցությունը (հատկապես Սյունիքում) կասկած չի հարուցում: Եվ, քննականաբար, Բյուզանդիայի կայսրը, դա հասկանալով, պիտի փորձեր հակաթու կաթողիկոսության գահին քաղվեցնել ճանաչված հոգևորականի.

«Նոր կաթողիկոսարանի հաստատության նպատակն էր լինելու մի կողմից թուլացնել և սահմանափակել Դուրեմում նստող կաթողիկոսների իշխանությունն ու ազդեցությունը, իսկ մյուս կողմից ամրապնդել հաղորդակցությունը կապել Սիւնեաց և Աղուանից երկիրների հայկականների հետ՝ այս անունների մասերն էլ Հայոց Եկեղեցուց խլելու համար»¹⁶:

Սերեոսը գրում է, որ Հոհան Սյունականը Կաթողիկոս է ձեռնադրվել իր ծերության ժամանակ, երբ նախնական ու հեղինակավոր հոգևորական էր¹⁷:

Հոհանը պետք է ծնված լիներ 520-525 թվականներին: Նա, ինչպես գտնում է Կ. Ղաֆադարյանը, «երկար ժամանակ զբաղվել է շինարարությամբ»¹⁸: 571-584 թվականներին կառուցել է Սիսիանի Սր. Բրիգոր Լուսավորիչ տաճարը (Սյունի

¹² Ղաֆադարյան Կ., Պատմաեկեղեցական դիտողություններ Ավանի տաճարի վերաբերյալ, ՊՐՀ, 1988, թիվ 3, էջ 84:

¹³ Կաղանկատվացի Մ., Պատմություն Աղուանից աշխարհի, Երևան, 1983, էջ 268:

¹⁴ Մալխասյան Սա., Հայերեն բացատրական բառարան, Հ. 4, Երևան, 1945:

¹⁵ Սեադյան Հ., Հայոց անձնանունների բառարան, Հ. 9, Երևան, 1946, Մայր ցուցակ Հայերեն ձեռագրաց, Հ. Ա, գիրք Բ, Կիևնա, 1895, էջ 272:

¹⁶ Սեդրակյան Ա., Հայաստանից եկեղեցու պատկերաշարգրությունը, մասն Ա, 1904, էջ 178:

¹⁷ Սերեոս, Պատմություն Սերեոսի, Երևան, 1979, էջ 112:

¹⁸ Ղաֆադարյան Կ., Երևան. Միջնադարյան հուշարձաններ, Երևան, 1975, էջ 85:

«տաճարի ներքևի մասերը կառուցվել են նախան արարական արշավանքները, իսկ վերին մասերը՝ VII դարի երկրորդ կեսին»²²:

Ա. Մանուշարյանը չնայած տաճարի կառուցումը թվագրում է 663-682 թվականներով, սակայն միաժամանակ կարծում է, որ Կոհազատ իշխանի և Տեր-Հովսեփի օրոք կատարված շինարարական աշխատանքը «եղել է նորոգում և որպես ոչ մեծ իրադարձություն չի արժանագրվել մատենագրության մեջ ու նույնիսկ վրիպել է այնպիսի մանրագրին պատմիչի տեսադաշտից, ինչպիսին Ստ. Օրբելյանն է»²³:

Արշակունյաց և մարզպանության շրջանում (428-ից հետո) Հայաստանում հարկային գործի վարչական գերագույն իշխանությունը, իրբև հատուկ «գործակալություն», կոչվել է «հազարապետություն»: Հազարապետը վարել է ոչ միայն հարկահավաքման գործը, այլև պարտավոր է եղել աջակցել երկրի շինարարական աշխատանքներին, երկրի շինամասերը՝ պետական եկամուտների ավելացման նպատակով²⁴:

Սյունյաց հազարապետ Վարազը, որը բնականաբար իշխան է եղել, ակտիվորեն օժանդակել է Լուսավորչի տաճարի կառուցմանը: Հնարավոր է, նա մասնակցել է 554-555 թթ. Ներսես Կաթողիկոսի օրոք հրավիրված Դվինի Բ ժողովին²⁵: Դատելով ժողովին մասնակից իշխանների անուններից, երևում է, որ «Վարազ Յոհան ի Յոհանան» ստորագրությունը կրող իշխանը Սյունիների նախարարական տոհմից է²⁶: Ստ. Օրբելյանի հիշատակած Սյունյաց տիկին Վարազդուխտը Վարազ հազարապետի դուստրն է, որը նույնպես օժանդակել է տաճարի կառուցմանը:

Ամփոփելով ասեմք, որ վերոհիշյալ շարադրանքը մեկ անգամ ևս ապացուցում է այն իրողությունը, որ հավաստի է Սիսիանի Ս. Գրիգոր Լուսավորչի տաճարի (Սյունի վանք) կառուցման թվականի վերաբերյալ Սյունյաց տան պատմիչ Ստ. Օրբելյանի վկայությունը, և ըստ մեզ, տաճարը կառուցվել է երկու փուլով:

Առաջին փուլում (555-584 թթ.) կառուցվել է փայտաշեն գմբեթով տաճարը՝ Հովհաննես եպս. Սյունեականի ղեկավարությամբ և Սյունյաց հազարապետ Վարազի և իր դստեր՝ իշխանուհի Վարազդուխտի օժանդակությամբ: Երկրորդ փուլում (670-680-ական թթ.)՝ Սյունյաց Կոհազատ իշխանի կողմից, Սյունյաց Տեր-Հովսեփ Եպիսկոպոսի (670-682) և վանական Թեոդորոսի օժանդակությամբ տաճարը վերակառուցվել է և փայտե գմբեթը փոխարինվել քարե գմբեթով:

²² Токарский Н., Архитектура Армении IV-XIV вв., Ереван, 1961, стр. 127:

²³ Մանուշարյան Ա., «Պատմություն Հայաստանի IV-XI դարերի շինարարական վկայագրերի», Երևան, 1977, էջ 82:

²⁴ Մանուշարյան Ա., Երկրորդ, 2. Գ, Երևան, 1981, էջ 79:

²⁵ «Գիրք թղթոց», ժողովածու, Թիֆլիս, 1901, էջ 42:

²⁶ Աղոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Երևան, 1987, էջ 277:

ԳԵՂԱՄ ՄԻՆԻՍԻ ԲԱԴԱԼՅԱՆ

ՏԱՐՈՆԻ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍԻ (ԵՂՐԴՈՒՏԻ) ՎԱՆՔԻ 1445 ԹՎԱԿԱՆԻ ԿՈՆԴԱԿԸ (պատմա-աշխարհագրական ակնարկ)

Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՎԱՆՔԸ ԵՎ ԿՈՆԴԱԿԸ. Տարոնի պատմա-մշակութային նշանավոր կենտրոններից մեկը՝ Ս. Հովհաննեսի վանքը, գտնվում էր Մուշ ֆաղափից 10 կմ արևմուտք, լեռնային գեղատեսիլ վայրում, Տարոն և Սասուն (Սանասուն) գավառների սահմանագլխին: Եկեղեցական ավանդությունը վանքի հիմնադրումը կապում է Թադեոս առաքյալի անվան հետ. որը Հայաստանում իր քարոզչական գործունեության տարիներին այստեղ եղողի (եղրդուտի) մշտադալար ծառի արմատների տակ թափցրել է հոչակավոր «շիշ իւղոյն»՝ այն սրվակը, որի մեջ լցված սրբազան նարդոսով վերակենդանացած Ղազարոսի փուլը Մարիամն օծեց Քրիստոսին: 4-րդ դ. սկզբին Գրիգոր Լուսավորիչը երամայեց նույն վայրում վանք կառուցել, ուր ամփոփվեցին Հովհաննես Մկրտչի մասունքները (այստեղից էլ՝ անվանումը): Վանքը հայտնի է նաև եղրդուտի (եղրդի), Շիշ-Յուղո, եղեգեհի, Արծվաքեր Ս. Նշան և այլ անվանումներով¹: Տարբեր ժամանակներում տիրույթներ ձեռք բերելով ո՛չ միայն Տարոնում, այլև հարակից մի շարք գավառներում, Ս. Հովհաննեսը դարձավ Հայաստանի խոշոր և հարուստ հոգևոր վանքներից մեկը: 15-րդ դ. նրա նշանակությունն այնքան էր մեծացել, որ այստեղ հիմնվեց առանձին եպիսկոպոսություն՝ Կարապետ արքեպիսկոպոսի գլխավորությամբ: Այդ փաստը վավերացված է Ամենայն Հայոց Կաթողիկոս Գրիգորիս Ժ Զատարեկյանց-Մակվեցու (1443-1485) 1445 թ. (Հայոց ՊՂԳ) կոնդակում: Թեև վերջինիս բնագիրը մեզ չի հասել (ոչնչացել է Մեծ եղեռնի տարիներին), բայց բարեբախտաբար պահպանվել են առանձին ընդօրինակություններ, որոնցից հայտնի են հետևյալները.

ա. Վիեննայի Մխիթարյան միաբանության մատենադարանում պահվող թիվ 784 ձեռագիր ժողովածուի (19-րդ դ.) 89ա-93բ թերթերում գտնվող և «Պատենն Սուրբ Յովհաննես վանուց հին մագաղաթեայ կոնդակին» խորագիրը կրող ընդօրինակությունը (այսուհետև՝ Ա)²:

¹ Թուրքերը Ս. Հովհաննեսի վանքը երջոքչում են Kızılkilise («կարմիր վանք»): Լատինատառ անվանումները վերցրել ենք արևմտագերմանական «Codex Kultur-Aldas»-ում (9-10 մասեր) գեոեղված բուրժական ռազմական ֆարտեզներից (մասշտաբ՝ 1:300 000): Վանքի մասին ափիլի հանգամանալից տե՛ս Հ. Ոսկեան, Տարոն-Տուրքերանի վանքերը, Վիեննա, 1953, էջ 91-129:

² Օգտվելով աղբիթից՝ մեր խորին շնորհակալությունն ու երախտագիտությունն ենք հայտնում Վիեննայի Մխիթարյան միաբան Հ. Օգոստինոս վ. Սեփուլյանին, որը Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրատան նախկին գլխավոր ավանդապահ

(ԳԱՐԱՆ ԻՆՏԵՐՆԱԿԱՆ)

УЛУЉСЉЕ И ЧИЊЊИ

ՀԱՅԴԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՆԿԱԴԱՐԱՆ

ბრატონი და მისი კომპანია

အရှေ့တောင်အာရှ

අනුමානානුකූලය

Ամբիոնի վրա հանդես եկավ Գրիգոր Բաբայանը՝ Երևանի Գեղարքունիքի մարզպետը։

8444
 8445

התאחדות
התאחדות

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊՐԵՑԵԴԵՆՏԻ ԱԿՏԻ

բ. Մշո առաջնորդարանի նախկին Բարտուղար Նազարեթ Մարտիրոսյանի 1914 թ. արտագրած օրինակը, որն ամփոփված էր նրա «Նշխարք Տարեռոյ» հրեփ տետրից բաղկացած գործում (ներկայացված էր Իզմիրլյան մրցանակի): Հանգամանքների բերումով այն հասել է Երուսաղեմ, որն էլ տասնամյակներ անց հրատարակել է Արա Գալաթյանը (այսուհետև՝ Բ)³.

գ. Հայտնի է, որ Նշված կոնդակը ժամանակին ընդօրինակել է նաև Արսեն Թոխմախյանը (1843-1892): Ի շարս այլևայլ ընդօրինակությունների և գրառումների (ծնագրական հիշատակարաններ, հիշատակագրություններ ևն), այն գտնվել է մի տետրում, որից էլ Ղևոնդ վարդապետ Փիրղալեմյանը կարևոր հատվածներ է տպագրել իր հայտնի «Նոտարք Հայոց»-ում (այսուհետև՝ Գ)⁴: Ուշագրավ է, որ դրանց և վերջ Նշված օրինակների համեմատումն ի հայտ է բերել մեծ ընդհանրություններ հատկապես Վիեննայի «Պատենեն»-ի հետ: Այսպես, Ա.-ում և Գ.-ում հանդիպում են ամբողջական պարբերություններ, որոնք քացակալում են Բ.-ում: Այսուհետև, այդ օրինակների տարբերությունները, որպես կանոն, համընկնում են (իհարկե, կան նաև տարբերություններ): Դա հատկապես ակնառու է Ա. Հովհաննեսի թեմի թվարկվող բնակավայրերի անվանումներում: Օրինակ, Բ՝ «Փարխու», Ա. և Գ՝ «Փարխու» «Արեւել»-«Առջիւն», «Սմայատ»-«Սմրատ», «Սերկելիկ»-«Սն/է/րկէվիկ», «Ստտոնց»-«Ատտոնց»-«Առտոնց», «Սնան»-«Սիւան», «Ընրսլալիմ»-«Ըռիսլալիմ», «Ատախ»-«Ադախ», «Թըրըլ»-«Թոնըլ», «Ճօգիկ»-«Ճաղիկ» < «Ճաւգիկ», «Ընկուգակ»-«Ընկուգակ», «Մսըրձոր»-«Մոսրձոր», «Հարութոյ»-«Հարութիոյ», «Կասգէ»-«Գագէ» ևն: Թե՛ Ա.-ում և թե՛ Գ.-ում Ուտուղի և Կորեկչրի միջև հիշատակվում է «Յողկունք (Յու-)» գյուղը: Գ.-ում հատուկ նշվում են 19-րդ դ. վերջին ֆառորդին ավերված կամ այլազգարնակ դարձած գյուղերը: Նույն բնակավայրերը ցույց են տրված նաև Ա.-ում (աստղանիշով): Եվ վերջապես Ա.-ում, «Պալըննէ» գյուղանվան վերևում գրված է «Անթղու Առաքելոյ թեմ», իսկ Գ.-ում, նույն տեղում, նշվում է «Անթղու» առանձին բնակավայր, ինչը թուրքիմացություն է (թերևս, ընդօրինակողի մեղմով): Մեր Նշած փաստերը լուրջ հիմքեր են տալիս ենթադրելու, որ Բ.-ն, եթե անգամ Ա. Թոխմախյանինը չէ, ապա գոնե արտագրություն է նրա օրինակից:

Հայոց վանքերի պատմության գիտակ և ուսումնասիրող Համազասպ Ոսկյանը կոնդակում տեղ գտած հակասություններից և անհշտություններից եզրակացնում է, որ դրանք ամենայն հավանականությամբ հետևանք են տեղի հոգևորականների հետագա միտումնավոր կեղծիքների և հետապնդել են մի նպատակ՝ հիմնավորել նրանց սեփականատիրական իրավունքները, դրանք պաշտպանել հարևան միաբանությունների հնարավոր հավակնություններից: Այս միտքը, անշուշտ, անհիմն չէ: Ա. Հովհաննեսի վանքապատկան տարածքի մեջ մտնող մեծ թվով

Գևորգ Տեր-Վարդանյանի խնդրանքով պատրաստեց և ներկան ուղարկեց թիվ 784 ձեռագրի եամապատասխան թերթերի լուսապատեններ (Գ. Բ.):

³ Տե՛ս Սահակ Ա. Մուրատեան, Նազարեթ Պ. Մարտիրոսեան, Ցուցակ ձեռագրաց Մշոյ Ա. Առաքելոց-Թարգմանչաց վանքի եւ շրջակայից, խմբ. Արա Գալաթյան, Երուսաղեմ, 1907, էջ 199-204:

⁴ Տե՛ս Նոտարք Հայոց, հաւաքեալ եւ ի լոյս ածեալ ձեռամբ Ղևոնդի վարդապետի Փիրղալեմեան Տոսբեցոյ Վարագայ վանաց վանականի, Կ. Պոլիս, էջ 139-145 (ա. ք.):

բնակավայրեր գտնվում էին զգալի հեռավորության վրա և ժամանակի ընթացքում կարող էին անցնել մոտակա վանքերին: Դա թույլ չտալու համար աներածնոթ էր ձեռքի տակ ունենալ իրավական փաստաթուղթ, որպիսին է կոնդակը: Ի դեպ, վիճենցայի Մխիթարյանների Մատենադարանի թիվ 784 ձեռագրի պատճենը ցույց է տալիս, որ Ս. Հովհաննեսի միաբանությանը հաջողվել էր տիրանալ Ադձնիքի նշանավոր Աթախու (Անթրոնու) Ս. Մակարայեցվոց կամ Ս. Առաքելոց վանքին պատկանող զորոջ գյուղերի: Այդ բայց «օրինականացնելու» համար նույնպես անհրաժեշտ էր իրավական հիմք: Մեր կարծիքով՝ գուր չէ, որ կոնդակում մատնանշվում է, թե Գրիգոր Մակվեցին սոսկ վերահաստատել է «զկարգեալ վիճակն արդոյ հռչակաւոր ուխտիս ի Սրբոյն Գրիգորէ մերոյ Լուսաւորչէն, այլեւ՝ ի Մեծէն ի Սահակայ Պարթեւէն...», եւ յետոյ վերստին հաստատեալ ի Յոհանն Ծձնեցւոյն... (ընդգծումը մերն է-Գ. Բ.)»⁵: Հայ Եկեղեցու մեծերի հիշատակումն արդեն պետք է օրինականացնեն սահմանյալ թեմի նկատմամբ Ս. Հովհաննեսի «ի վերուստ անտի» ունեցած իրավունքները: Հարկ է նշել, որ վանքում պահվում էին երկու ուրիշ նմանատիպ փաստաթղթեր: Դրանցից առաջինը, որ շնորհիվ էր խալիֆ Ալին, թվագրված էր, սակայն, Հիջրայից առաջ, ուստի կեղծ էր: Մյուսն ավանդաբար վերագրում էին Լեոնիքեմուրին, որ սակայն կրկին պատմական հիմք չունեն: Ամենայն հավանականությամբ այդ կոնդակները ևս նպատակ ունեին պաշտպանելու վանքի սեփականությունը, այս անգամ արդեն Հայաստան լցված ֆրդական և թուրքմենական զանազան ավագակարարո վաչկատուն ցեղերից: Ինչէւ, մատնանշելով վերոհիշյալ փաստաթղթերում, և մասնավորապես 1445 թ. կոնդակում առկա թուրքիմացություններն ու հակասությունները, Հ. Ոսկյանը հզրակացնում է, որ դրանցում կան նաև «պատմական ուղիղ կետեր»⁶: Ընդ որում, կոնդակը մեծ կարևորություն ունի հատկապես պատմական աշխարհագրության տեսանկյունից: Այստեղ մեծ թվով գավառների ու գավառակների, բնակավայրերի, անգամ ագարակների, հանդամասերի ու արտերի մասին հիշատակություններն ուշագրավ տեղեկություններ են պարունակում պատմական Հայաստանի հարավ-արևմտյան մի ընդարձակ տարածքի տեղանվանագիտության (տոպոնիմիկայի), ինչպես նաև վարչա-հաղափական, էթնո-դեմոգրաֆիական, սոցիալ-տնտեսական որոշ հարցերի վերաբերյալ:

Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԹԵՄԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԵՆԹԱԿԱ ԳԱՎԱՌՆԵՐԸ. վանական կոնդակներում սովորաբար հանգամանալից նշվում են տվյալ թեմի սահմանները, ընդգրկած տարածքն ու գավառները՝ իրենց բնակավայրերով, կալվածքներով, հանդամասերով, արտավայրերով ևն: Այդ տեսանկյունից քաջառություն չէ նաև ֆենարկվոզ փաստաթուղթը: Ընդ որում, կոնդակի հաղորդած տվյալները հնարավորություն են տալիս, որոշակի դժվարություններով հանդերձ, ֆարտեզագրական նյութի հիման⁷ վրա բավական ճշգրիտ կերպով

⁵ Մեկ այլ տեղ հիշվում են ներսես Մեծը և Գրիգոր Տաթևացին: Ի դեպ, թեև կոնդակը ստորագրել է Կաթողիկոսը, սակայն հայտնի չէ՝ կնքված եղե՞լ է, թե՞ ոչ:

⁶ Ոսկյան, էջ 108:

⁷ Բացի արդեն հիշատակված արևմտագերմանական «Atlas»-ից, օգտվել ենք նաև հետևյալ ֆարտեզներից. «Копия турецкой карты Азиатской Турции, изданной в

որոշել Ս. Հովհաննեսի թեմի սահմանները 15-րդ դ. 1-ին կեսին: Ներկայացնում ենք այդ հատվածը. «Այսիցն, նախ՝ ի Զրոյ Հինջիմոյ իջանէ ի Մեղրագետ, Արածանի գետովն, որ Եփրատ անուանի, Սեռոֆով լերամբ՝ մինչեւ ի Զուրն Ճապաղի անունովն եւ Ռապատիւ մինչեւ ի գիւղն, որ Յիսին կոչեն, Բաղին գաւառաւ, եւ Սեւան դղեկաւ, Տպնով եւ Ապարաւն, Աթաղ դղեկաւն, Թըրջըլ անունաւ՝ Միերնկաւն հանդերձ, Սրգոնրանով, Նփրկերտաւ, որ է Մուֆարդին՝ Մարտիրոսաց քաղաքն, Պաթմանաւ եւ Ռապատ անհիովն, Փարչանց գետովն, Պողոտային՝ Կողբայ գաւառան հանդերձ, ընդ առաջ Անթանիոյ, ի յարեւմտեան կողմանէ Զրովն Հինջիմոյ շրջի ի դաշտն Տարաւնոյ: Այսոքիկ կարգեալ եւ սահմանեալ վիճակօ սուրբ հոգակաւոր մեծաստանիս, որ Շիշ իւղոյ վանս յորջորջի»⁸: Ուսումնասիրութիւնը ցույց է տալիս, որ թեմական սահմաններն ընթացել են խիստ որոշակի կարգով. շրջանաձև՝ արևմուտք-հարավ-արևելք-արևելք-հյուսիս: 1-ինը հիշվող Հինջիմո-ջուրը («Զուրն Հինջիմոյ»), փաստորեն, կազմել է Ս. Հովհաննեսի թեմի հյուսիս-արևելյան եզրասահմանը: Մեր կարծիքով, դա վանքի արևելքում գտնվող Փեթար գյուղի մոտից սկիզբ առնող գետակն է (այժմ՝ Հաջ), որն այնուհետև իջնելով Մշո դաշտ՝ Մեղագոմ կամ Մղագոմ գյուղի մոտ միանում է Մեղրագետին (պատմ.՝ Մեղ, այժմ՝ Karasu): Այնուհետև սահմանն ընթացել է վերջինիս հոսանքով՝ շարունակվելով Արածանի գետով (Արլ. Եփրատ, այժմ՝ Murat): Արածանին Ս. Հովհաննեսի հյուսիսային եիմնական սահմանն էր, քանի որ նրան ենթակա քնակավայրերը, բացառությամբ մի փոքր մասի, գտնվում էին գետից հարավ (ձախափնյակում)⁹: Արածանու հոսանքով իջնելով հարավ՝ թեմական սահմանը, Ուռուղ գյուղ չհասած, շրջվել է արևմուտք և Սեռոֆով լեռով ձգվել մինչև Ճապաղջուր («Զուրն Ճապաղի»)՝ ընդհատվելով Գինեկ (այժմ՝ Gönök կամ Gönük) գետի մոտ: Կասկած չի կարող, որ վերոհիշյալ Սեռոֆովը ներկայիս Աբրոխ-դաղ լեռնաշղթան է, ափի միջոց՝ վերջինիս Արածանուն գլուգահեռ ձգվող հարավային մյուղը¹⁰: Գինեկի հոսանքով իջնելով հարավ և հատելով Ռապատ արտավայրի (թրք.՝ Rabat-düzü) տարածքը, սահմանը հասել է Արածանուն և կրկին թեմվել արևմուտք: Շարունակելով ընթանալ նույն ուղղությամբ՝ այն կտրել է Սևան բերդաքաղաքից հյուսիս գտնվող Սևան-Մադենի լեռները և հասել մինչև Բալահովտի Թրիս (թրք.՝ Tırha) գյուղը՝ Արածանու ափին: Սա Ս. Հովհաննեսի թեմի ծայր արևմտյան սահմանակետն էր: Այս շրջանը կոնդակում կոչվում է Բաղին (համանուն գյուղի

масштабе 1:200 000 в 1330 году Гиджры, т.е. в 1911-12 гг.», м. 1:210 000, Тифлис, 1915-17, IV-15, V-13-14 պլանշետները: «Eastern Turkey in Asia», Scale 1:250000, Sheet 18, [London], 1920: Կարմիր քանակի գլխավոր շտաբի 1970-80-ական թթ. հրատարակած քարտեզի 10-37-11, 12, 10-37-16, 17, 18 պլանշետները (մասշտաբ՝ 1:200000):

⁸ Ա. թերթ 91աբ: Բ, էջ 202: Գ, էջ 143: Տվել ենք տեղանունների ստուգված և նշտված տարբերակները (Գ. Բ.):

⁹ Արածանուց հյուսիս ընկած քնակավայրերը մտնում էին Ս. Կարապետի թեմի մեջ:

¹⁰ Տե՛ս ոռոսական 10-վերստանոց քարտեզ, II-81 պլանշետ: Վերոհիշյալ լեռնանյուղը ներկայումս կոչվում է Սոլխան (նաև՝ Սոլադան)՝ ամենայն հավանականությամբ համանուն դալիկական ցեղի անունով (թրք.՝ Solhan-dagı):

անուցով, չշփոթել Պաղմատուն գավառի հետ, որը գտնվում էր ավելի հյուսիսում: Թրեխի մոտից շրջվելով հարավ-արևելք՝ սահմանը վերջինիս գետակով, ապա նույնանուն ձխին (հետագայում՝ Սրին) լեռան և գյուղի մոտով իջել է Անգեղ-տուն՝ ներառնալով նրա հյուսիսային մի փոքր մասը: Այնուհետև սահմանը շրջվելով արևելք՝ հասել է Տիգրիսի Տրեի (Ջիրեհեն) և Ամբար վտակները, ընդգրկել Սիվանի կամ Սիլվանի (հայկական աղբյուրներում՝ «Ներքին դաշտ») հյուսիսային լեռնոտ հատվածը, այդ թվում՝ Նփրկերտ կամ Մուֆարդին (Միաֆարկին, այժմ՝ Silvan) ավանը և հասել Բաթման (այստմ. Բադրիթ) գետ: Վերջինս հատելով ամենայն հավանականությամբ նշանավոր Փրեքաթման կամրջի մոտ՝ թեմական սահմանը ներառել է Սանասուն-ջրի ձախափնյակում գտնվող փոքրիկ Ռապատ «ճահիթան» (գավառակ, գյուղախումբ): Սա Ս. Հովհաննեսի թեմի ծայր հարավ-արևելյան կետն էր: Այնուհետև սահմանն ընթացել է «Փարչանց գետով», Պողոտայի՝ Կողբայ գառառան համդերծ: Սա, բերևս, կոնդակի առավել դժվար որոշելի հատվածներից է, ինչը կապված է Փարչանց գետի և «Պողոտայ»-ի տեղադրության հետ: Թվարկման հերթականությունը ենթադրել է տալիս Փարչանցը նույնացնել Ռապատ ճահիթայի հյուսիսային սահմանագլխով հոսող այժմյան Սեբան կամ Սեյբանե (թրք.՝ Seybanc) գետակի հետ: Հաջորդը հիշվող «Պողոտայ»-ն, մեր կարծիքով, Հագգո գյուղաֆաղափը (այժմ՝ Kozluk) Խաբըլդոգ (Գապընդոգ, այժմ՝ Sasun) ձգվող հանապարհն է: Ամենայն հավանականությամբ իր կարևորության և բարեկարգ լինելու պատճառով այն կոչվել է ուղղակի «պողոտա», մանավանդ եթե հաշվի առնենք, որ Սասունում գերակշռում էին լեռնային դժվարանցանքի արահետները՝ ու կածանները: Ուշագրավ է, որ անմիջապես հետո հիշվում է Կողբ գավառը, որն ավելի ուշ հայտնի էր Խուլփ (Կողբ>Կուլփ>Խուլփ) անունով (տես ստորև) և գրավում էր զգալիորեն արևմուտք հոսող Կողբաձոր (Խուլփ) գետի հովիտը: Այս տվյալն ուղղակիորեն ցույց է տալիս, որ 15-րդ դ. կեսերին Կողբն ուներ բավականին մեծ ընդգրկում՝ հասնելով մինչև Սանասուն-ջուր և ներառնելով հետագայի Խիամ գավառակի տարածքը:

Փարչանց-Պողոտա հատվածով թեմական սահմանն ամենայն հավանա-կանությամբ հասել է մինչև Սանասուն-ջրի Բացի (թրք.՝ Bekis) ճափնյա վտակին, որի հոսանքով շրջվել հյուսիս-արևմուտք: Փաստորեն Բացին եղել է Սուրբ Հովհաննեսի և Սասունի եղանակավոր Գոմոց կամ Մատին-Առաքելո վանքի թեմերի սահմանաքաժանը: Շարունակելով ընթանալ նույն ուղղությամբ՝ սահմանագիծը ձգվել է Ջանդուս գետակով, հասել Տավորիկի-ջուրը (Բաթմանի վտակներից), այնուհետև՝ բարձրացել հյուսիս, բաժանելով Իշխանաձորը Տավորիկից, և Կեփին ու Անդոկ լեռնագագաթներով հասել Կողբաձորի վերին ակունքները: Այստեղից, ինչպես հաղորդում է կոնդակը, այն ընթացել է «ընդ առաջ Անթա-նիոյ»¹¹, որը Ս. Աթանագիների (Անթանիայի) վանքն է՝ Սիմ-սարի հարավային ստորոտին¹²: Կտրելով Սիմ-սարը՝ վանքի թեմական սահմանը, արդեն հիշատակ-

¹¹ Համգիպում է նաև «ընդ առուով» տարբերակումը (տե՛ս Գ. էջ 149):

¹² Այս վանքը գտնվում էր Սասունի Գեղաշեն գյուղի մոտ, Կողբաձոր (այդ մասում՝ Սեմալ) և Շատախ գետերի ջրբաժանում (տե՛ս «Тарон в древности и в средние века» ֆարսեզը Ղ. Այվազյանի «История Тарона и армянская литература IV-VII вв. (Ереван, 1976). գրքում):

ված Հիմնչինո-ջրով դարձյալ մտել է Տարոն («ջրքի ի դաշտն Տարաւնոյ»): Այսպիսով, նշված սահմաններում Ս. Հովհաննեսի թեմն ընդգրկում էր Տարոնի հարավ-արևմուտքը, Մոփիի մի մասը և հյուսիսային Ադճնիքը՝ մինչև Սանասնո-ջուր:

Կարևոր նշանակություն ունեն վանքին հեթանոսական և քաղաքական կենտրոնի մասին հանդիպող տեղեկությունները: Կոնդակը հաստատում է, որ նորընծա Կարապետ արքեպիսկոպոսն առաջնորդելու էր «Ջրուրխիկն և իւր երկրին, Մուֆարդնայ և իւր երկրին, Այեմանկին և իւր գաւառացն, և Նախիալին, որ և Կողբ անուանի, Գազկու և իւր գաւառացն, Խաչկաւնաց և իւր մզրային, Կճնան և իւր գաւառին, և մասն ինչ ի Տարաւն գաւառին»: Սրանցից բացի, թեմի սահմանները նշելիս, հիշատակվում են նաև Բաղին գավառը, Միհրանիկը (գործիական հոլովով՝ «Միհրնկաւն») և Ռապատ «նախիան»¹³: Այժմ ավելի մանրամասն:

ա. ԶՐՈՐԸՆԻԿ. Քրդերեն՝ Ziriqan¹⁴: Քրդական զրուրկի (zirîq) ցեղի տիրույթն էր՝ օջախը (իշխանությունը), որտեղից էլ՝ անունը: Կենտրոնը Թարջիլ (Թերջիլ, Թըրըրլ) բերդն էր, որի անունով նույնպես հայտնի էր: Զրուրկցիներն Ադճնիքում հաստատվել էին բավականին ընդարձակ տարածքի վրա՝ բաժանվելով մի քանի նյուղերի՝ Աթախ, Թարջիլ (Ջրուրխիկ), Ռուրդաֆան, Դերգնի կամ Դարգնի¹⁵:

բ. ՄԻՀՐԱՆԻԿ. Թրք.՝ Mihrani, Mihraniye: Ընկած էր Զրուրխիկից արևելք՝ Միհրանի (Մեհրանի) ավանով: 15-րդ դ. 2-րդ կեսին, ինչպես երևում է կոնդակից, կազմել է Զրուրխիկ-Թարջիլի մի մասը (գավառակը)¹⁶: Ավելի ուշ (16-րդ դ.) Միհրանիկն առանձնանալով՝ կազմել էր զրուրկցիների նյուղերից մեկի օջախը:

գ. «ՄՈՒՑԱՐԴՆԱՍ ԵՐԿԻՐ». Համանուն ավանի (նաև՝ Միյաֆարկին, ֆարկին, պատմ.՝ Նփրկերտ) շրջակա գավառը: Ինչպես ցույց են տալիս կոնդակի տվյալները, Ս. Հովհաննեսի թեմի մեջ էին մտնում մինչև Քաղիթթ (Բաթման) գետն ընկած գյուղերը:

դ. ՍԼԵՄԱՆԻԿ. Սուլեյմանի քրդական ցեղի անունից (քրդ.՝ Silêmanî կամ Silîvanî թրք.՝ Silvanî)¹⁷: Շարաֆխանի տվյալներով, այս ցեղն Ադճնիքում սկզբնապես հաստատվել էր Կողբաձորի և Տալկորիկի-ջրի միջագետքում գտնվող Խոխ հովտում¹⁸: Վերջինս հիշատակվում է դեռ վարդան Արեւելցու «Աշխարհացոյց»-ում (13-րդ դ.): «Կողովիտ (ընդգծումը մերն է-Գ. Բ.) և Մանախու ձորն ի Սասուն է» պարբերությունում¹⁹: Կարծում ենք, որ այստեղ էլ պետք է

¹³ Ա. Բ. 91աբ: Բ, էջ 201-202: Գ, էջ 143:

¹⁴ Տեղանունների քրդական տարբերակներն՝ ըստ Հ. Օրբելու համակարգի (տե՛ս Օրբելի И. А., Фольклор и быт Мокса, Москва, 1982, стр. 141-143):

¹⁵ Шараф-хан ибн Шамсаддин Бидлиси, Шараф-наме, перевод, предисловие, примечания и приложения Е. И. Васильевой, М., 1967, т. 1, стр. 300: Ի դեպ, Դերգնին նույնպես կաշվել է Զրուրկան (սումանյան 16-17-րդ դդ. ցուցակներում՝ Zeriki):

¹⁶ Հմմտ. «Թըրըրլ անանան՝ Միհրնկաւն հանդերձ» պարբերությունը (Գ. Բ.):

¹⁷ Шараф-хан, стр. 500:

¹⁸ Ն. տ., стр. 314, 526:

¹⁹ «Աշխարհացոյց վարդանայ վարդապետի», քննական հրատարակություն Հայկ Պերպերեանի, համեմատութեամբ 24 ձեռագրի և տպագրի, Բարիդ, 1980, էջ 21:

տեղադրել Սլեմանիկ գավառը՝ նրա մեջ ընդգրկելով նաև Գաղիքի (այդ հատվածում՝ Թեփե կամ Գըր) աջափնյակում գտնվող Սլեմանի ավանի շրջանը՝ Մուֆարդից հյուսիս-արևմուտք։ Հետագայում սուլեյմանիները հայ ավատատերերից աստիճանաբար խլեցին Կիճնից (Գեճնից) մինչև Դիարբեքի ընկած տարածքի վրա գտնվող բազմաթիվ բերդեր ու գավառներ, այդ թվում Կիճնը (Գեճնը), Կողբը (Կուլփը), Գազկե (Ջասկե), Ռապատը²⁰, Մուֆարդի, Բոթիանը (Բիդիանը)²¹ ևն։ Ամենայն հավանականությամբ այս ցեղի տիրույթներն արևմուտքում հասնում էին մինչև Ակլ (պատմ.՝ Անգղ) բերդաֆառաքի շրջանը։ Դրա վկայությունն են Տիգրիսի աջ ու ձախ փեղերին մեր օրերում էլ պահպանված Սուլեյմանց (թրք.՝ Süleymanan, ֆրգ.՝ Silēmana) և Սեման (թրք.՝ Selman) գույգ գյուղերը։ Ամենայն հավանականությամբ սուլեյմանիներին են ենթարկվել նաև Հալեին և Լեհե՝ իրենց շրջաններով։ Սլեմանիկ տեղանունը պահպանվել է Սիլվան կամ Սիլվան ձևով։

Ե. ԿՈՂՐ ԿԱՄ ՆԱՀԻԱ. Արդեն ճշել ենք, որ այս գավառը 15-րդ դ. ընդգրկում էր Կողբաձոր և Սանասնո-ջուր գետերի միջև ընկած շրջանը։ Ինչպես տեսանք, այն համապատասխանում էր Սասունի Խուլփի (Կողբի աղավաղումից) և Խիանք գավառակներին։ Կոնդակում հանդիպող երկրորդ անվանումը ամենայն հավանականությամբ հանդես է եկել սուլեյմանիների նվաճումից հետո (արաբ.՝ حبلان) «շրջան, մարզ, երկիր, գավառ, գավառակ, թրք.՝ նաև «գյուղական համայնք», «գյուղախումբ»։ Իմա՝ բուն Սլեմանիկի գավառակը)²²։

Գ. «ԳԱՋԿՈՒ ԳԱԻԱՒ» Գազկե (Կասե, Գասգե, թրք.՝ Cäske կամ Cıksı) գյուղաֆառաքի շրջանը, Կողբից արևմուտք՝ նրա անմիջական սահմանակցությամբ։ Ղ. ԻՃԵՆԵՅԱՆԸ հիշում է Իսյան (Իսփյան) կամ «Պանօֆոց երկիր» անուններով։ Տեղի ռազմատեմչ, բայց ֆրդախոս հայերը, 18-19-րդ դդ. պառլամեն էին իրենց անկախությունը։ Նույն հեղինակի մեկ այլ վկայությամբ՝ «այս երկիր Պանօֆոց» է թեմ Սուրբ Յոհաննու, որ ի Մուշ»²³։ Հետագայում՝ Հավետիկ (ֆրդեբեն՝ Havēdan)²⁴։

Ջեռագրերում հանդիպում են նաև այլ տարբերակներ՝ «Կոզովիտ/դ», «Կոկովիտ», «Գոգեովիտ» (իմա՝ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. թիվ 2292(81ա), 2370(237բ), 2748(124ա), 3887(228բ), 5123(180բ), 6485(82ա) ևն)։ Կարծում ենք՝ Շարաֆ-խանի հիշատակած ձևը պահպանվել է այդ շրջանի Գրեխոխի գյուղանվան մեջ (ֆրգ.՝ «Խոխի բլուր»)։

²⁰ 1487 (ՋԺՋ) մի Ավետարանի հիշատակարանում կարդում ենք. «Շնորհիւ Տեառն, կատարեցի զգիրս Գրիստոսական մատենիս... ի գառս Սլեմանիկ ի քաղաքս որ այժմ կոչի Ռապատ...» (ընդգծումը մերն է — Գ.Բ.)։ Տե՛ս Բ, էջ 123։

²¹ Սարափ-խան, ԵՊ. 314։

²² Լժմո. Բագրևանդի «Նահեա» կամ «Նահին» գավառը, որն անջատվել էր Ալաշկերտից՝ ընդգրկելով Կարափլիսայի շրջակա բնակավայրերը։ Ի ղեկ. 18-րդ դ. վ—19-րդ դ. սկ. այն երբեմն կոչվում էր նաև Ալաշկերտ (Ղ. ԻՃԵՆԵՅԱՆ, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, մասն Ա, հտ. Ա, վեճեռիկ — Ա. Ղազար, 1808, էջ 115)։

²³ Ն. տ., էջ 245։

²⁴ Հարկ է ճշել, որ թե՛ պանոֆի (բանուֆի), թե՛ հավեդի (հավեյդի) սուլեյմանի ցեղի

է. ԿԻՆՃ(Ն). Թրք. Genç կամ Genç: Տարոնից արևմուտք: Ինչպես երևում է կոնդակի տեղեկություններից, Ս. Հովհաննեսին էին պատկանում Արածանուց հարավ ընկած գյուղերը (միայն մի փոքր մասը գտնվում էր հյուսիսում, այն էլ՝ ամհիջապես գետափին): Հիշատակվող «Խաչկաւնք»-ը ոչ այլ ինչ է, եթե ոչ Կիցնի բնակավայրերից մեկը: Ըստ երևույթին Կիցնի մեջ էին մտնում նաև ավելի հարավում՝ Սատում գետի հովտում ընկած և կոնդակում հիշվող մի շարք բնակավայրեր, որոնք ավելի ուշ կազմում էին Փեջարի գյուղախումբը (դրանց մասին՝ իր տեղում):

ը. ԲԱՂԻՆ. Պատմական Բալահովիտ գավառի (Մոփի) հարավային շրջանը, Յխին (Արին) լեռից մինչև Արածանի: Այդ մասը հայտնի էր նաև Աշմուշատ անունով (պատմ. Արշամաշատից):

թ. ՌԱՊԱՏ ՆԱՀԻԱ. Թեմի սահմանները նկարագրելիս ճշել ենք, որ մի փոքր շրջան էր՝ Սանասոն-ջրի ձախափնայկում: Ավելի ուշ, դառնալով նույն քրդական ցեղի բոշտեղին, վերանվանվեց Բագրաւն (Բաքրան):

ժ. ՏԱՐՈՆ. Ս. Հովհաննեսի թեմի մեջ էին մտնում գավառի ծայր հարավ-արևմտյան՝ վանքին անմիջապես սահմանակից, գյուղերը՝ Հինջինո-ջրից մինչև Կիցն:

Ինչպես տեսնում ենք, այս տեղեկությունները կարևոր են ոչ միայն վանքի թեմի վերաբերյալ պատկերացում կազմելու, այլև Մեծ Հայքի հիշատակած նահանգների, և հատկ.՝ Ադձնիքի, 15-րդ դ. 1-ին կեսի վարչական բաժանման ուսումնասիրության համար: Այն էապես տարբերվում էր հին, աշխարհացույցյան գավառաբաժանումից՝ արտահայտելով տվյալ ժամանակահատվածում այս շրջանի էթնո-ֆաղափական իրավիճակը: Սելջուկյան և, մանավանդ, մոնղոլական արշավանքների ընթացքում (11-13-րդ դդ.) զգալի թվով քրդական և թուրքմենական վաչկատուն ցեղեր հաստատվեցին Հվ. Հայաստանում, այդ թվում և վերոհիշյալ գավառներում՝ աստիճանաբար ենթարկելով տեղի նստակյաց բնակչությանը (գերազանցապես հայ, նաև՝ ասորի): Ճիշտ է, 14-15-րդ դդ. քրդ. ցեղերն իրենք ընդունում էին թուրքմեն ակ-կոյունլուների, իսկ ապա՝ կարա-կոյունլուների գերիշխանությունը, սակայն վերոբերյալ փաստերը ցույց են տալիս, որ հիշյալ ժամանակաշրջանում նրանք ձեռք էին բերել այնպիսի ազդեցություն, որ արդեն իրենց անուններն էին փոխանցել ժառանգական տիրույթների վերածված մի շարք գավառների: Անգամ ավանդապատ Հայ եկեղեցին ստիպված էր արձանագրել այդ փաստը՝ նախապատվությունը տալով օտար անվանումներին (Ջըռըխիկ, Միհրանիկ, Սլեմանիկ ևն): Փաստորեն այս շրջանից սկսվել էր Հայաստանի «քրդացումը», որը հատկապես մեծ թափ ստացավ օսմանյան նվաճման ժամանակ: Այս գավառներում էր, ուր նախապես ստեղծվեցին քրդական կիսանկախ ժառանգական իշխանությունները: Հարկ է նշել, որ նոր վարչական բաժանումը կենսունակ գտնվեց՝ հարառեկելով մինչև 19-րդ դ. 1-ին կեսը: Հետևաբար եղավ այն, որ տեղի հայ բնակչության մի մասն աստիճանաբար դուրս մղվեց կամ ուժացվեց նոթեկ քուրդ տարրի կողմից: Նույնը տեղի ունեցավ ավելի հյուսիսում գտնվող գավառներում, հատկապես Կիցնում (Գեցն), ուր 16-19-րդ դդ. իշխում

նյուղերն էին (Տե՛ս Սարաք-աօն, սր. 314): Ի դեպ, 1-ինը պահպանվել է Կողբաձորի վերին հոսանքի շրջանում գտնվող Բանոկ կամ Պանոկ գյուղի անվան մեջ:

էին դմել (դըմիկ կամ զազա) իրանական ցեղերը: Վերջիցս մինչև Բալախովիտ և Դերսիմ իրենց ենթարկելով բնիկների՝ հետագայում հոծ հատվածներով ձուլեցին նրանց: Զուր չէ, որ դմիկների մի զգալի մասն իրեն համարում էր հայերից սերված: Այսպիսով, Ս. Հովհաննեսի վաճի 1445 թ. կոնդակը հետաքրքիր և ուշագրավ աղբյուր է Արևմտյան Հայաստանի նաև էթնիկական պատմության ուսումնասիրության համար: Այն համադրելով այլ սկզբնաղբյուրների հետ՝ կարելի է ավելի հանգամանալից լուսաբանել, մասնավորապես, տվյալ կամայական Տարոնի և Աղձնիքի էթնո-դեմոգրաֆիական իրավիճակին առնչվող բազմաթիվ հարցեր:

Ս. Հովհաննեսի Թեմի ԲԱԼԱԿԱՎԱԹՐԻԸ Կոնդակում ամենից արժեքավորը վաճիին ենթակա բնակավայրերի շարքն է, որը ստորև ներկայացնում ենք ամբողջությամբ, ըստ երեք ընդօրինակությունների՝ ֆենական համեմատության. «Էջանէ աստուածային ծորումն արեւուքեան... նախ՝ ի Պէլ, (ի) Խոր(աւ)նք, ի Քուտ, ի Փողրկով, ի յերկուս Ան)ձնուտ, ի յԱրթիւանք, ի յԱզաղբիր, ի Շեխանք, ի Գլաղան, ի Տարմածին, ի Մլաջուր, ի Մաղկունք, ի Հովիտ, ի յՈւտուղ, ի Կորեկշուր, ի Կծու, ի Խորձավանք, ի Փարխաւ եւ յիւր մզրէնք, ի Վերս, ի Ճալկնուտ, ի յԱղջիշէն, ի Բերդ, ի Քարուտ եւ յիւր մզրէնք, ի յԱրծնք, ի Քիւմուտ, ի Խաչկանք, ի Սմալար, ի Սերկելիկ, ի Մոզանք, ի յԱուտնոց, ի Կարմրիկ, ի Փէշար, ի Ճանածոր, ի դղեակն յիսպատ, ի յԱրգելք, ի Հերիքն, ի Քարուտ, ի յերէգ, ի յԱնտու, ի Մզակ, ի Սառնէս, ի Յոփում, ի գիւղաֆաղաֆն Լճէ, ի Գումայ, ի դղեակն Սեւան, ի Բաղին եւ յիւր մզրէնք, ի Թիլ, ի Յիսին, ի Թրիսէ, ի Հրէտան, ի Սրտէ, ի Հայնի ֆաղաֆ, ի Տպնէ, ի յԱպար, ի Զոռայ, ի Պալընքնէ, ի յԸնդսլայիմ, ի յԱտախ, ի Ճումարիկ, ի Նումեաս, ի Քարոզ, ի Մըշրիկ, ի յԱրաւսք, ի Վանք, ի Զոլիսիկ, ի Հաւտնաւ, ի Հըզրաւ, ի Վանք, ի Թըրնըլ, ի Քըրքան, ի Զըկըշէն, ի Մուֆարդին, ի Հըսունք, ի Պատմանք, ի Պաշաք, ի Պաշմըքէ, ի Պաշխայ, ի Սլէմանի, ի յԱրտայ, ի յԱրխունք, ի Ճալգիկ, ի Սրէպայ, ի Պասմ, ի Պախընցաւ, ի Պաքմըքէ, ի յիսպատ, ի Բացի, ի Պերմ, ի Հոնիկ, ի Վանք, ի Ճանանք, ի Սանտայ, ի յիշխնձոր, ի յԸնկուզնակ, ի Սեւիք, ի յԱրտկանք, ի Հեղին, ի յԱրս, ի Մեծ Փառկայ, ի Փառկայ, ի Սաղտունք, ի Շուղէք, ի Կէրէնտիկ, ի յԱհրանք, ի Գեղըվան, ի յԸնձաք, ի Վանք, ի Մարձոր, ի Կից, ի Յեհոր, ի Հարուիթոյ, ի Տըլիքթաւ, ի Փասուր, ի Կակուաս, ի յԱպտակէս, ի յԱպիգոզէ՝, եւ ի գիւղաֆաղաֆն Կասգէ եւ յիւր գաւառաւքն»²⁵: Հիշված են ընդամենը 118 բնակավայրեր (չհաշված չորս մզրե-ագարակները), որոնցից ստույգ հայտնի է 108-ի, կասկածելի՝ 8-ի տեղագրությունը: Զի հաջողվել նշտել միայն 2-ը՝ Պասմ և Ապիգոզէ՝²⁶: Բնակավայրերի քվարկումը սկսվում է Տարոնից և ընթանում թեմական սահմանների վերը նշված կարգով: Բնակավայրերը համակարգել ենք ըստ հետևյալ գավառների.

ա. ՏԱՐՈՆ. Ինչպես նշել ենք, Ս. Հովհաննեսին էին պատկանում գավառի հարավ-արևմտյան այն գյուղերը, որոնք գտնվում էին վաճիի անմիջական հարևանությամբ՝ Հիմշիմայ-ջրից մինչև Արածանի: Կոնդակում դրանք 14-ն են՝

²⁵ Ա., ք. 80աբ: Բ, էջ 200-201: Գ, էջ 141-142:

²⁶ Բ, էջ 201. «յԱպիգոզն»:

Պլել, Խոր(ա)նք, Գոռուտ, Փողրկով, Ս(ն)ծնուտ(2), Արթխանք, Աւգադրիւր, Շեխանք, Գզլաղան, Տարմածին, Մլխաջուր, Մաղկունք, Հովիտ, Ուռուղ, որոնց տեղադրությունը, բացառությամբ Հովիտի, ստույգ հայտնի է: Տեղանունները հիմնականում անադարտորեն պահպանվել էին մաև 20-րդ դ. սկզբին, թեև մասամբ աղավաղվել կամ փոխվել էին²⁷: Ինչ վերաբերում է Հովիտ գյուղին, ապա բնակավայրերի թվարկման հաջորդականությունը թույլ է տալիս ենթադրաբար այն տեղադրել Մաղկունքից հարավ, Արածանու ոլորանի մոտ, ձախ ափին: Հարկ է նշել, որ այս շրջանում, որը 20-րդ դ. սկզբին հայտնի էր Հագնախ անվամբ, նույնպես հանդիպում է նույնանուն գյուղ²⁸: Եվ մի դիտողություն: Առում և Գռում, Ուռուղի ու Կորեկջրի միջև հանդիպում է «Յողկունք» («Յողկունք») գյուղ, ինչը, մեր խորին համոզմամբ, «Մաղկունք»-ի ձեռագրային աղավաղումն է, եետևաբար՝ թուրքիացաբար է մոցվել ընդօրինակության մեջ: Այն առանձին բնակավայր չենք դիտել, ուստիև ֆարսեզում չի հանդիպում:

բ. ԿԻՆՃ ԵՎ ՓԵՉԱՐ. Կոնդակում հիշատակվող 26 բնակավայրերից (Կորեկջրից մինչև Մզակ ներառյալ) 14-ը բաժին են ընկնում Կիննյան, մնացածը՝ Փեչարին: Նկատի ունենալով, որ վերոհիշյալ երկու գավառները գրեթե անձանոթ են ընթերցողին, դրանց բնակավայրերի մասին կխոսենք ավելի մանրամասն: Կիննյի բնակավայրերից մեզ հաջողվել է վերջնականապես նշտել 11-ի տեղադրությունը՝ Կծու, Փարխաւ (այժմ՝ Ferik), Վեքս (Virsek), Ճապկնուտ (Ganut), Առչիշեն (հետ.՝ Արշեն, թրք.՝ Arduşun)²⁹, Բերդ (հայտնի է մաև Կինն կամ Գինջ անունով, գավառի կենտրոնը, թրք.՝ Kaleköy կամ Genç), Բարուտ, Արծնք, Բիսմուտ, Խաչկանք (Haçık), Սերեկելիկ (Serkevil): Որոշակի դժվարություններ են առաջանում միայն Կորեկջուր, Խորձավանք և Սմալար գյուղերը տեղադրելիս: 1-ինը հիշվում է Տարոնի բնակավայրերից անմիջապես հետո: Ըստ հաջորդականության՝ այն տեղադրել ենք Կծու գյուղից մի փոքր հարավ, Արածանու ձախ ափին գտնվող Gölcük լեռան մոտ (կարծում ենք՝ վերջինս Կորեկջուր տեղանվան թրք. աղավաղումն է): Ամենայն հավանականությամբ 1878 թ. ապրիլի 14-ին Դիարբեքիրի թեմի առաջնորդ Փիլիպոս Նաջարյանցի՝ Կ. Պոլսի պատրիարքարան ուղարկած գյուղացանկերում (ֆաղված Օսմանյան տարեգրից) Գիննի («Կենն») կազմում հիշվող Խորջուր գյուղը³⁰ նույն Կորեկջուրն է: Խորձավանքը հաջորդում է Կծուին: Փ. Նաջարյանցի արդեն նշված գյուղացանկերում ևս այն («Խոսրո-

²⁷ Այդ գյուղերն են՝ Գոռուտ>Գարոն (թրք.՝ Kâsar), Տարմածին>Փուրգմեյդան (տե՛ս Բ. էջ 201), Մլխաջուր>Նավալիմուլ (ֆրդ.՝ «մլխաձոր», «ջուր»>«ձոր»>«գետ» համարժեքից: Հմմտ. թրք. Güzel-deresi, Sapor-deresi, Sason-deresi, Talori-deresi գետանունները ևն), Մաղկունք>Ջանգո (թրք.՝ Zengöç: Հմմտ.՝ Մոկունք>Mankok, Հոնկունք>Heriנגöç, Հավկունք>Hevingöç ևն):

²⁸ Վ. Պետոյան, Սասունի քարքառը, Եր., 1954, էջ 186:

²⁹ Վերջին ձևն ամենայն հավանականությամբ «Առչիշեն»-ի տարբերակներից է (արդյո՞ք դժվարեքն):

³⁰ Գրականության և արվեստի թանգարան, Թորոս Ազատյանի ֆոնդ, ցուցակ 3, գործ թիվ 50, թերթ 18 (այսուհետև՝ Նաջարյանց):

վանք» գտնվում է նույն գյուղից («Կազու») հետո³¹: Հաշվի առնելով այս փաստը՝ խորձավանքը տեղադրել ենք վերջինից մի փոքր հս.-արևմուտք՝ նույնացնելով Vrsik գյուղի հետ³²: 3-րդը բնագրում հանդիպում է «Սմպատ» ձևով: Մեր կարծիքով՝ սա գրչական սխալ է, որն առաջ է եկել ձեռագիր «բ»-ի և «տ»-ի հանախ հանդիպող շփոթից: Ուստի՝ գյուղի անունը սրբագրելով «Սմպար»՝ այն տեղադրել ենք «Խաչկանք» և «Սերկելիկ» բնակավայրերի մոտ (մանավանդ, որ հիշվում է դրանց հետ)՝ նույնացնելով ժամանակակից Sindar-ի հետ (իմ.տ.՝ վասպուրականում Բերկրու գյուղերից Սըմբ>Սընդ>Sind):

Փեչարի գյուղերից մեզբիտ տեղադրությունը որոշ չափով բարդացնում է նրանց անկանոն հերթականությունը: Բացի այդ, նույն շարքում հիշատակվող Ջանածոր և Ռապատ («Ռապատ») բնակավայրերը գտնվում էին գավառակի սահմաններից դուրս: Դրանցից 1-ինը ներկայիս Cînzur կամ Cinezur (Փ. Նաջարյանցի մոտ՝ «Ճնեգուր»)՝³³ գյուղն է՝ Լճե գյուղախաղաքից հարավ: 2-րդը, որի մասին արդեն խոսել ենք (տե՛ս վանքի թեմի մեջ մտնող գավառներից վերաբերող մասը), Աղճնիքի 15-րդ դ. նշանավոր բերդախաղաքներից էր և գտնվում էր Փեչարից արևմուտք՝ պատմական Կոնստուր՝ լեռնանցքի շրջանում, ներկայիս Քաղֆիկ գյուղից շուրջ 5 կմ հյուսիս-արևելք՝ մտնելով սուլեյմանի քրդերի տիրույթի մեջ: Բերված փաստերը ցույց են տալիս, որ կոնդակի այս մասում կան հետագա միջամտություններ (Հ. Ոսկյանը ևս մատնանշում է այդ): Ձի քացառվում, որ մի քանի բնակավայրեր ավելի ուշ են ավելացվել, ինչն էլ խախտել է դրանց աշխարհագրական հերթականությունը: Ինչևէ, չնայած այս ամենին, մեզ հաջողվել է ճշտել հիշատակված 12 բնակավայրերից 10-ի տեղադրությունը: Դրանցից 4-ը՝ Մոզան (այժմ՝ Mezrun), Առևոնց (Abdos), Արգելի (Arkilir), Հերֆին, գտնվում էին Սառում գետի վերին, նույնացնելով՝ Փեչար (Pîçar), Երեզ (Herezin), Անտու (Endif), Մզակ, միջին հոսանքի շրջանում: Ջանածորը և Ռապատը, ինչպես վերը ցույց տվեցինք, չէին մտնում Փեչարի կազմի մեջ: Մի փոքր կասկածելի է միայն հետևյալ երկու գյուղերի տեղադրությունը:

1. ԿՈՐՄՐԻԿ. Բնագրում՝ «Կորմրիչ»: Մեր կարծիքով՝ սովորական գրչական սխալի հետևանքով վերջին «կ»-ն կարդացվել է «չ»³⁴: Կատարելով վերոնշյալ սրբագրումը, այն նույնացրել ենք Փեչարի հարավային սահմանագլխին գտնվող ժամանակակից Կորմրիկ (Kormik) գյուղի հետ³⁵:

2. ՔԱՐԱՔ. Մեր կարծիքով Փ. Նաջարյանցի գյուղացուցակներում հանդիպող «Քարաք» գյուղն է³⁶, որը, նկատի առնելով բնակավայրերի հերթականությունը,

³¹ Նաջարյանց, ք. 20:

³² Չշտթել Բերդի կամ Գեյջի մոտ, Արածանու հանդիպակաց ափին գտնվող նույնանուն գյուղի հետ (կոնդակում հանդիպող վերսը):

³³ Նաջարյանց, ք. 16:

³⁴ Ի դեպ, փիրղալեմյանի մոտ այս ձևով «Կակուաս»-ը դարձել է «Կաչուաս» (տե՛ս Գ, էջ 142):

³⁵ Նաջարյանցի մոտ «Գուրմըք», Լճեի կազմում (ք. 15):

³⁶ Նաջարյանց, ք. 24:

նույնանում է ներկայիս Xoz լեռան հյուսիս-արևելյան ստորոտին գտնվող Արգաթ (Argat) բնակավայրի հետ:

գ. ԲԱՂԻՆ ԵՎ ՍԵՎԱՆ. Կոնդակում Բաղին գավառի բնակավայրերից հիշվում են ընդամենը 4-ը՝ Բաղին, Թիլ, Թրխե, Յիին՝ որոնց բոլորի տեղադրությունը ստույգ հայտնի է: Դրանցից միայն Յիինն է ժամանակի ընթացքում աղավաղվել՝ դառանալով Սրին (թրք. Serin): Սևան բերդաֆաղաֆը («դղեակն Սևան») գտնվում էր Բաղինից արևելք՝ Դրնի գետի վերին հոսանքի շրջանում, Սևան-Մադենի լեռների մոտ: 19-րդ դ. վերջի երբեմնի նշանավոր այս բնակավայրը անշուք դժիկարմակ մի գյուղակ էր և կոչվում էր Ավնիկ³⁷: Սևան (Սիվան, Սևին) անունն անցել էր շրջակա երկու տասնյակից ավելի գյուղերից կազմված նահիիին, որը մտնում էր Դիարբեքրի վիլայեթի Բալուի կազայի մեջ:

դ. ՀԱՅՆԻ, ԼՃՆ ԵՎ ՍԼԵՄԱՆԻԿ. Կոնդակում հիշատակվում են այս գավառ-ների 12 բնակավայրեր, այդ թվում՝ Հայնին («Հայնի ֆաղաֆ»)՝ իր հինգ (Սրտե, Տպնե, Ապար, Ջըռայ, Պալըննե), Լճն («գիւղաֆաղաֆն Լճն»)՝ մերձակա երեք (Սառնե, Յոփում, Գուլայ) գյուղերով, ինչպես նաև Սլեմանին: Այս շարքին ենք միացրել նաև Հրետան գյուղը՝ Ալլի (պատմ.՝ Անգղ, Անգեղ-բերդ) գավառից:

19-րդ դ. վ. - 20-րդ դ. վերոհիշյալ բնակավայրերի մեծագույն մասը պահպանել էր կոնդակում ավանդված անվանումները: Անցնան փոփոխություն էր կրել միայն Ապարը (Anbar>Ambar): Հարկ է նշել, որ թրք. աղբյուրներում հանդիպում են նաև որոշ գյուղանունների տարբերակներ՝ Յոփում>Fum, Գուլայ>Cum, Հայնի>Hani:

ե. ՄՈՒՖԱՐԳԻՆ. Հիշատակված են համանուն ավանն իր շրջակա 5 գյուղերով (Հըսուն, Պատման, Պաշաթ, Պաշմըթե, Պաշխայ), որոնց բոլորի տեղադրությունը նույնպես ստույգ հայտնի է: 19-րդ դ. վ.-20-րդ դ. սկ. աղբյուրներում վերոհիշյալ բնակավայրերից փոփոխված անվանումներով հանդես են գալիս հետևյալ 3-ը՝ Պատման>Malabadi (-o) կամ Malabari (-beri)³⁸, Պաշմըթե>Basimi³⁹, Հըսուն>Hersan (-san)⁴⁰:

զ. ՋՐԴԸԻՏԻԿ ԵՎ ԱԹԱԽ. Ս. Հովհաննեսի թեմին էին պատկանում 15 բնակավայր, որոնցից 8-ը՝ Ջըրդիկում (Ըոըսլայիմ, Ջըրիկ, Հոտնա, Հըզրաւ, Վանֆ, Թըրնըլ, Քըրֆան, Զկըշեն), 7-ը՝ Աթախում («դղեակն») Ատախ կամ Աթախ⁴¹, ձումարիկ, Նունեսա, Քարոզ, Մըշքիկ, Արաւֆ, Վանֆ):

³⁷ Այս գյուղը Ա. Մ. Կոլլուբակի Մոտ հիշված է Ազըվնիկ ձևով (տե՛ս «Материалы для военно-статистического обозрения Азиатской Турции», т. 3, часть 2, Т., 1890, стр. 78): Հիշյալ ձևն առաջ է եկել Սևանի աղավաղումից՝ Սևան+իկ>Սևնիկ>Ջևնիկ>Ջըվնիկ, որտեղից առական «ա»-ի հավելումով՝ Ազըվնիկ > Ավնիկ (եմֆ. Քղիի գյուղերից՝ Վարդենիկ > Ավրդենիկ):

³⁸ Ռուսական 5-վերստանոց քարտեզ, Դ-11 պլանշետ: Ամենայն հավանականությամբ Malabari (مالابري) ձևն առաջ է եկել արաբ. ا ل ل տառերի շփոթից: Գյուղը կոչվել է նաև Փրեբաթման (Գ. Սրվանձոյանց, Նրկեր, հտ. 1, նր., 1978, էջ 75):

³⁹ Հայկ. աղբյուրներում՝ «Պաշմըթե» կամ «Պաշմըթ»:

⁴⁰ Գտնվում էր համանուն լեռան (թրք. Hizin) ստորոտին:

⁴¹ Աթախը պատմ. Հայաստանի նշանավոր բերդաֆաղաֆներից էր՝ հայտնի դեռ 4-5-րդ

Հետաքրքրությունն են ներկայացնում հետևյալ բնակավայրերը.

1. ԶԸՌԻԽԻՎ. Համանուն գավառի գյուղերի շարքում նշվում է առաջինը, ապա հաջորդում են «Հոտնու»-ը, «Հըզրու»-ը, «Վանք»-ը ևն: Նման հերթականությունը մեզ թույլ է տալիս գյուղը նույնացնել Միհրանի (թրք. Mihran) կամ Mireni) բնակավայրի հետ, որի անունով, ինչպես նշել ենք, շրջակա գավառակը կոչվում էր Միհրանիկ: Վերջինս 15-րդ դ. 1-ին կեսին, ինչպես տեսանք, դեռ Զըռըխիկի մի մասն էր (արևելյան հատվածը): Մեր կարծիքով՝ ավելի ուշ, երբ Միհրանիկը (Միհրանին) առանձնացել և դարձել էր ինքնուրույն գավառ (օջափլք), անունը փոխանցեց կենտրոնին՝ Զըռըխիկ (ինչը սովորական երևույթ էր). որն էլ այդուհետ սկսեց կոչվել Միհրանի: Զըռըխիկ (Զըռըկան) անունը պահպանվեց նախկին գավառի արևմտյան մասի վրա, որը 16-19-րդ դդ. կոչվում էր նաև Թարջիլ կամ Թերջիլ՝ կենտրոնը հանդիսացող համանուն բերդաֆաղաֆի անունով (կոնդակում «Թըռզըլ» կամ «Թըրճըլ», եիշվում է որպես «աւան»): Ավելի ուշ, 19-րդ դ. 2-րդ կեսին, Թարջիլի անկումից հետո, Զըռըխիկի (Զըռըկանի) կենտրոնը տեղափոխվեց հարևան Հազրո (կոնդակում՝ «Հըզրու») գյուղաֆաղաֆ:

2. ՎԱՆ-ԲԵՐ. Սրանցից 1-ինը Ս. Մակարայեցվոց կամ Առափնոց (Աթխու) վանքն է՝ Աթախից մի փոքր հյուսիս-արևելք, որն իր հերթական գյուղերի հետ 15-րդ դ. 1-ին կեսին անցել էր Ս. Հովհաննեսի գերատեսչությանը (տե՛ս 1-ին հմթագույնը): 2-րդը Հազրոյի մոտակա Այնըրըրդի Ս. Աստվածածնի վանքն է (թրք. İbnik)⁴²:

3. ՄՇՐ-ԲԻԿ. Տեղադրել ենք ներկայիս Mustif գյուղի տեղում: Մեր խորին համոզմամբ՝ սա «Մշրֆիկ»-ի արաբագիր ազավաղման հետևանքն է, որ գալիս է յ և յ տառերի շփոթից (مشرّف)⁴³: Ժամանակի ընթացքում սխալ տարբերակը պաշտոնականացանալով՝ դուրս է մղել ճիշտ ձևը:

Նշված գավառների բնակավայրերի մի մասի անվանումները ևս 19-րդ դ. վ. 20-րդ դ. սկ. փոփոխվել էին՝ Հոտնու>Hondof⁴⁴, Բըրֆան>Kekan⁴⁵, Զկըշեն (նախնական Զուկ/ս/ուր+շեն)>Zur⁴⁶, Բարոզ >Kervez⁴⁷, Արաւս >Aruszazam):

դդ.: Ումմեյյան տիրապետության ժամանակ (մինչև 19-րդ դ. 1-ին կեսը) համանուն օջափլքի (թրք. Atak) կենտրոնն էր: 19-20-րդ դդ., աստիճանաբար տեղափոխվելով, Աթախը վերածվել էր հիմնականում բրդաբնակ գյուղի: Հայկ. աղբյուրներում հանդիպում է Անթաղ կամ Այնթաղ անուններով (թրք. Atak կամ İntak):

⁴² Նաջարյանց, Թ. 39՝ «Վումանե Այնիպրգ»: Կոչվել է նաև Գուման (Գ. Սրուսանձտեանց, Թորոս-աղբար, հտ. 2, Կ. Պոլիս, 1884, էջ 237: Տե՛ս նաև՝ ԳԱԹ, Գ. Սրվաճաթյանցի ֆոնդ, «Լրացուցիչ նյութեր», գ. Թիվ 23, Բ. 3):

⁴³ Ի դեպ, Ասիական Թուրքիայի ֆարսեզի ռաւսերեն պատեններում այս գյուղը նշված է «Мишрак» ձևով («V-14: Папы» պլանշետ):

⁴⁴ Հայկ. աղբյուրներում՝ Հոտնով:

⁴⁵ Նաջարյանց, Թ. 37՝ «Բաւան»:

⁴⁶ Գյուղի մոտ, 20-րդ դ. սկ. դեռ պահպանված վանքը կոչվում էր «Զիսի» (Յարուբին Դազարեան, Հազրոյ, ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆ., ց. 3, գ. 12, Բ. 1):

⁴⁷ Կարծում ենք՝ սա նույնպես արաբատառ գրության սխալ ընթերցման հետևանք է. Կարեի է կարդալ և՛ «Բարոզ» և՛ «Բերվեզ»:

է. ԿՈՂԲ(ՆԱՀԻԱ)⁴⁸ եւ «ԳԱԶԿՈՒ ԳԱԻԱՌ»։ Կոնդակում հիշվում են 39 բնակավայրեր, որոնցից Կոթրում էին 34-ը՝ Արաայ, Արխունք, Ճաւգիկ, Սրեպայ, Պասմ, Պախըռնաս, Պաքըմթէ, Ռապատ, Բացի, Պերմ, Հոիկ, Վանք, Ճաճանք, Սանտայ, Իշխնոք, Ընկուզնակ, Սեիթ, Արտկանք, Հեղիճ, Արս, Մեծ Փառկայ, Փառկայ, Սաղտուն, Շուղէք, Կերեճակ, Ահրանք, Գեղրվան, Ընձաք, Վանք, Մաքըռոք, Կից, Յեհոր, Հարուիթայ, Փասուր։ «Գազկու գաւառ»-ի բնակավայրերը 5-6 հմ՝ համանուն գյուղաքաղաքը (կոնդակում՝ «Կասգէ»), Տըլիքթաւ, Կակուաս, Ապտակէս, Ապիգողէ՝ Նշված բնակավայրերից չի հաջողվել նշտել միայն հետևյալ 2 գյուղերի տեղագրությունը (քարտեզում տեղ չեն գտել)։

1. ՊԱՍՄ. Ըստ Ղ. Փիրդալեմյանի՝ 19-րդ դ. վերջին բառարդին ավերակ էր⁴⁹։ Անունն արտաքին նմանություն ունի Հագրոյից հարավ-արևելք գտնվող Bazzmar-ի հետ, սակայն թվարկման հերթականությունը բացառում է այդ։

2. ԱՊԻՋՈՂԷ(ԱՊԵՂՈՂՆ). Աղբյուրների պակասը հնարավորություն չի տվել անգամ վերջնականապես նշտել գյուղի անունը։ Կարծում ենք, այն նույնական է 1688 թ. գրված մի Ավետարանի հետագայի հիշատակարանում հանդիպող «Ապտոզողան» («Ապտոզողան» - Գ. Բ.) բնակավայրին⁵⁰։ Կասկածից վեր է միայն, որ գյուղը գտնվում էր «Գազկու գաւառ»-ում և, ինչպես ցույց է տալիս բնակավայրերի թվարկման հերթականությունը, այն պետք է փնտրել «Ապտակէս»-ի (հետագայում՝ Թիախս) և «Կասգէ»-ի (Գազկե) շրջանում։ Ի դեպ, դրանցից առաջինը, ըստ ժամանակակից քարտեզագրական նյութերի, 20-րդ դարասկզբին կազմված էր առանձին գյուղակ-«թաղերից», ինչը սովորական երևույթ էր ինչպես Սասունում, այնպես էլ մյուս հայկական լեռնագավառներում։ Ձի բացառվում, որ «Ապիգողէ» - «Ապեղոլն» - «Ապտոզողան» գյուղը ժամանակի ընթացքում, միաձուլվելով «Ապտակէս» - Թիախսին, դադարել է դիտվել որպես առանձին բնակավայր։ Ցավոք, այդ գյուղակ-«թաղերի» անվանումները մեզ հայտնի չեն, ինչը, մեր կարծիքով, կտար հարցի վերջնական պատասխանը։

Որոշակի հետաքրքրություն են առաջ բերում երկու «վանք»-երը։ Դրանցից առաջինը, որը հիշված է «Ճաճանք» գյուղից առաջ, նույնացրել ենք վերջինիս մոտակա Հեշտերի (Հեշթերի) հետ, ուր 20-րդ դ. սկզբին դեռ պահպանված ավերակ եկեղեցու շրջակայքի հողերը («Ջավիա դերե» («վանքի ռոդ», ընդգծումը մերն է - Գ. Բ.) էին կոչվում⁵¹)։ Երկրորդ «վանք»-ը նշված է «Ընձաք»-ից հետո, որն էլ մեզ թույլ է տալիս նույնացնել այն գյուղի նշանավոր Սուրբ Գևորգի հետ։

Ստանյան տիրապետության ընթացքում վերածիշյալ բնակավայրերի մի մասը ձեռք էր բերել նոր անվանումներ, որոնք հանդիպում են գերազանցապես պաշտօնական վավերագրերում, ինչպես նաև տեղի բուրդ բնակչության մոտ։ Ստորև ներկայացնում ենք այդ բնակավայրերը՝ Սրիպայ>Herir, Բացի>Bekis, Պերմ>Parmis, Արխունք>Herent, Հոիկ>Hells⁵², Վանք>Hester, Ճաճանք>Cacas⁵³,

⁴⁸ Կողրի մեջ ենք ընդգրկել նաև Ռապատ Սահիամ։

⁴⁹ Գ, էջ 142։

⁵⁰ Բ, էջ 180։

⁵¹ Պետոյան, էջ 183։

⁵² Ըստ երևույթի, եղել է Սաև Հոիկ > Հր(լ)իկ տարբերակը, որից էլ առաջ է եկել

իշխնոք>Akcasir, Սեւիք>Süit, Ընկուզակ>Güzak, Հեղին>Helin, Արս>Ersik, Փառկայ>Firke, Սաղուն>Saltan, Շուղէֆ>Şinaz, Կերէնտիկ>Girindis⁵⁴, Ահ-բաւնիֆ>Hinzi, Ընծաք>Askar, Մսընոք>Gelimansur⁵⁵, Կից>Kiz, Հարուի-թու>Herbat, Տըլերէթաւ>Tildir⁵⁶, Ապտակէս>Tiyakus⁵⁷, Կասգէ (Գասգէ, Գազկէ) >բրֆ. Ciks:

Կոնդակը մանրամասն տեղեկություններ է հաղորդում նաև Ս. Հովհաննեսի անմեջական մերձավոր կապվածների, ազարակների և արոտավայրերի, մի խոսքով՝ հողային տիրույթների մասին: Հաշվի առնելով այդ հատվածի տեղանվանագիտական առումով ներկայացնող եետաբեկությունը, ավելորդ չենք համարում ստորև այն ներկայացնել ամբողջությամբ (ինչպես միշտ՝ կոնդակի 3 ընդօրինակությունների համեմատությամբ)։ «Այլև, Սուրբ Աթոռոյս հանդեւ սինաւն⁵⁸ այս է՝ առաւելանն Յերկէն, Արաւսիկ, Դարբնաձոր, Հորու-Ձորովն մինչև ի Ղզլաղանն, Վերին Դերանատրապասայ մինչ ի Սնճուտայ վերեւն, Քաշուրովն մինչ յէմին Թափանն եւ Քուտսն Տերընաղբիւր մզրայ է, ջրի անդին Խորանից է, ալսդին՝ վանից: Երեք աղբիւր կայ ի Բըլէլի ձորն՝ վանիցն է, մինչև ի յառուականն Քարխըջի Ջուրն՝ վանիցն է, քամ Տատրիսգումու, սինաւ խոտընճին հանտակն, Գետի փուլ, Պաւլոսի երնի, նաւապարեն, Նուկնին՝ մինչև ի հանտակն»⁵⁹: Յովսէփ, նշված հատվածը շատ կողմերով մուծ է մեզ համար, քան որ եիշվող առվակների, հանդամասերի, աղբյուրների, ձորակների և ազարակ-մզրանների մեծագույն մասի տեղադրությունն անհայտ է: Այն հնարավոր կլինէր նշանել միայն ժամանակին կազմված ճշգրիտ և մանրամասն տոպոգրաֆիական քարտեզների, ինչպես նաև հանգամանալից տեղեկագրերի հիման վրա, որոնք բացակայում են: Չպետք է մոռանալ նաև տեղի հայ բնակչության գրեթե գլխավոր բնաջնջման փաստը 1915 թ., որը նույնպես վնասական դեր է ունեցել եիշյալ տարածքի միկրոտոպոգրիկայի մոտացման կամ հիմնովին փոխվելու համար: Այնպես որ կարելի է ասել, որ այդ տեղանունները գերազանցապես անդառնալիորեն կորած են: Այնուամենայնիվ առանձին ճշխարհներ պահպանվել են, և դա հիմնականում տպատեղ ավելի ուշ տոտաջացած նոր գյուղերի շնորհիվ: «Ճատրիս-գում»-ը (տարբերակ՝ «Տատրագում», բրֆ. Dazikom), որը նույնպես մինչև Մեծ

վերսիշյալ ձևը:

53 Նախնական «Ճամնց» ձևից:

54 «Կերենտիկֆ» տարբերակից:

55 Ըստ էության սա տեղանվան ֆրոնտիս պարզ բարգամությունն է: Ընդ որում, 19-20-րդ դդ. հայկական աղբյուրներում հանդիպում է նեմց երկրորդ ձևը (Գալիսմասուր, Գելիսմասուր ևն):

56 19-20-րդ դդ. հայկ. աղբյուրներում՝ Թըլթաֆ, Թըլթըվ ևն:

57 19-20-րդ դդ. հայկ. աղբյուրներում՝ Թիախս:

58 «Սինոռ» բուն իմաստով նշանակում է «սահման» (հունարենով՝ σύνορος-ից): Սակայն այստեղ այն ունի «աջտապար», «ամստառնիւր արածացնելու տեղ» իմաստը: Ի դեպ, բառս երկու իմաստով՝ առ ցայսր հաստատվում է Ջավախքի գյուղաբնակ հայերի շրջանում (Գ. Բ.):

59 Ա, Բ. 81բ: Բ. էջ 202: Գ. էջ 143:

նդեռնը հայաբնակ էր, վանքի հարավակողմում էր՝ Սասունի նախալեռնային գոտում (որոշ աղբյուրներ այն հիշատակում են հենց լեռնագավառում)⁶⁰։ Ենթադրելի է, որ «Հորու-Ձոր» է կոչվել Ա. Հովհաննեսից մինչև Կզըլաղաչ գյուղ ձգվող ձորահովիտը, իսկ Վարդենիք (սեռ.՝ «Վարդենից») և Վերին Վարդենիք տեղամասերն ամենայն հավանականությամբ գտնվել են Խորոմքի հարևանությամբ ևն։

Այսպիսով, կոնդակի ճշված հատվածները խիստ հարուստ նյութ են պարունակում ինչպես տեղանվանագիտության, այնպես էլ լեզվաբանության, սոցիալ-տնտեսական հարաբերությունների պատմության վերաբերյալ, ինչը լրացուցիչ անգամ քարծրացնում է այդ եզակի փաստաթղթի արժեքն ու նշանակությունը։

Ա. ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՎԱՆՔԻ ԹԵՄԸ ՀԵՏԱԳԱ ԴԱՐԵՐՈՒՄ. Կոնդակում հիշատակվող գավառները, գրեթե առանց քաղաքային, վանքի հոգաբարձությանը շարունակեցին պատկանել նաև հետագա հարյուրամյակների ընթացքում։ Այսպես, 18-րդ դ. վերջի - 19-րդ դ. սկզբի վարչա-ֆառափական վիճակն արձանագրած Ղ. Իճեհյանը նշում է, որ «թեմ մեծաստանիս են գիւղօրայք Մշու՝ որք անկանին ի հարաւակողմն Եփրատայ, սկսեալ յարևմտից գաւառին մինչ ի գիւղն Խորոմք, և Քարծոր. նաև վիճակքն Կիճն և Խուլիս»⁶¹։ Ինչպես արդեն նշել ենք, հեղինակը վանքին ենթակա գավառներից հիշում է նաև Իսլանը («Պանօցոց երկիր»)՝⁶²։ Լճնի, Հայնիի և Սիվանի թեմական պատկանելության մասին Ղ. Իճեհյանը մեզ անհայտ պատճառներով ոչինչ չի հաղորդում։ Ինչ վերաբերում է Բաղին գավառի 4 գյուղերին, ապա դրանք այդ ժամանակաշրջանում լիովին անցել էին Բալախովտի նշանավոր Քաղցրահայաց Ա. Ասովածածին վանքին (Հավալ գյուղի մոտ)⁶³։ Հույժ կարևոր տեղեկություններ է պարունակում «Հայկի գործոց Տիգրանահան Մկրտիչ վարդապետի և առաջնորդի Քիրտիսթանու» գիրքը (Կ. Պոլիս, 1864)։ Հեղինակի տվյալներով՝ 1840-50-ական թթ. (իր առաջնորդ եղած ժամանակ) Ա. Հովհաննեսի թեմին էին պատկանում «Տէրիկ, Տարայ, Հայնի, Լճն, Հագրոյ, Մէրալնի, Սիլվան, Խիւան, Գուլք, Յաւետի, Փեչար, և Մշոյ դաշտին մէջ ալ տասը կտար գիւղօրայք. 100 գիւղ. տունք 3700. անձինք 29600»⁶⁴։ Ինչպես տեսնում ենք, Ա. Հովհաննեսի վանքը ոչ միայն պահպանել էր 1445 թ. կոնդակում հիշատակված գավառները, այլև ձեռք էր բերել նորերը՝ Դարան և Դերիկը (Մծրինի շրջանում)⁶⁵։ Ուշագրավ են Մ. Տիգրանյանի այն տեղեկությունները, որ Հայնին, Լճն, Փեչարը սկզբնապես պատկանել են Աթախի Ա. Մակարայեցվոց-Առաքելոց վանքին, և «ապստամբութեան Քրթաց ժամանակին, սուրբ Օհաննէսիք յափշտակած են»⁶⁶։ Ինչպես երևում է, թեմերն ընդարձակելու համար պայքարը երկու վանքերի միջև

60 Տատրիսգոմի մասին տե՛ս նաև Խաչուրի ենթագլխում։

61 Իճեհյան, էջ 198։

62 Ն. տ., էջ 249։

63 Իճեհյան, էջ 226։

64 Տիգրանյան, էջ 7։

65 1878 թ. Դերիկը («Տէրեկ») Դիարբեքիրի առաջնորդությամբ ենթակա թեմերից մեկն էր (Գ. Սրվանձությանց, Թորոս-աղբար, էջ 232)։

66 Տիգրանյան, Գ. տ.։

շարունակվել է նաև հետագայում⁶⁷։ Մ. Տիգրանյանի տվյալները ցույց են տալիս, որ Ս. Մակարայեցվոց վանքի միաբանությանը, այնուամենայնիվ, հաջողվել է հոսքերի կորցրած տիրույթները, որոնք, սակայն, նշանավոր Բաղր-խանի ապստամբության ժամանակ (1840-ական թթ.) վերստին անցել են Ս. Հովհաննեսին⁶⁸։ Հետաքրքիր է նաև, որ 19-րդ դ. 2-րդ կեսին վանքին ենթակա գյուղերի թիվը գրեթե չի տարբերվում կանոնակամ նշվածից։ Ս. Հովհաննեսի մասին տեղեկություններ է հայտնում նաև արևմտահայ նշանավոր հասարակական-հաղափական գործիչ Գեղամ Տեր-Կարապետյանը (Մշո Գեղամ)։ Խոսելով, մասնավորապես, վանքի թեմի 1880-ական թթ. վերջի վիճակի մասին, նա գրում է. «Թեմերն ալ ընդարձակ են, 12 գիւղ Մշոյ դաշտին մէջ, որք վանքին են սահմանակից, իսկ ի ներքին դաշտ (Տիգրանակերտ) նոյնպէս թեմ են հետեւեալ գաւառներն իրենց բոլոր հայաբնակ գիւղերով։ 1. Խուլի, 2. Խիան, 3. Հավետան, 4. Սլիվան, քանի մը գիւղ ի Պշերի և Զըռքան, Հազրո, Լնէ, Հայնէ գիւղախառններն...»⁶⁹։ Ցավոք, նոր շրջանի վերաբերյալ այլ աղբյուրներ մեզ հայտնի չեն։ Կարելի է միայն ենթադրել, որ հետագա տասնամյակներին՝ ընդհուպ մինչև 1915 թ., թեմական սահմաններն էական փոփոխություններ չեն կրել։ Մեզ հայտնի չէ նաև Ս. Հովհաննեսին ենթակա բնակավայրերի քանակը 20-րդ դ. սկզբին (այս տեսակետից կանոնակարգող եզակի է)։ Եթե շուրջ 480 տարվա ընթացքում թեմի որոշ գյուղեր անցել են այլ վանքերի (Բաղին գավառակի օրինակը), ապա եղել են նաև նոր ձեռքբերումներ։ Ստույգ հայտնի է, որ վանքն ընդարձակ կալվածքներ ուներ շրջակա Ավագիող կամ Ավգուխ (Աւծնող=Օծնող, հմմտ. նույն Տարոնում Ավգադբուր<Աւծադբուր, Ավգուտ<Աւծուտ տեղանունները), Կյալախուլի (Կյալախուլի) և Տատրագում (Տատրքագում) գյուղերում⁷⁰։ Եթե դրանցից առաջին երկուսը կոնդակում ընդհանրապես չեն հիշատակվում, ապա երրորդը, ինչպես վերև արդեն գրել ենք, նշված է օրացես տեղավայր։ Այս բնակավայրերն առաջ են եկել բավական ուշ, ընդ որում նախապես եղել են գոմեր, ինչպես հուշում են Տատրիսագում (Տատրագում) տեղանունը և Ավագիողի Աիրոյիգումբ երկրորդ անվանումը։ Ի դեպ, մեր խորին համոզմամբ, վանքապատկան էր նաև մոտակա Գոմեր գյուղը, որն իր անունը ստացել է տեղում սկզբնապես վանքի անասնազոմբը լինելու պատճառով։ Լուրջ փոփոխություններ էին տեղի ունեցել նաև բնակչության ազգային կազմում։ Տարբեր աղբյուրների տվյալների համաձայն⁷¹, 1870-ական թթ. վերջին, կոնդակում հիշատակված 118

⁶⁷ Հայտնի է, որ դեռ 1782 թ. ամառըյում փորձեր են եղել Հազրո, Հայնի և Լճի գավառները հանձնելու Ս. Մակարայեցվոց վանքին (Ոսկյան, էջ 125)։

⁶⁸ Ձեռք բացառում, որ վանքի միաբանությունն այդ արել է վերոհիշյալ ազդեցիկ քրդի զգույթյամբ։

⁶⁹ Գեղամ, Մշոյ Ս. Յովհաննես վանքը, «Արևելք», Կ. Պոլիս, 1889, թիվ 1882, էջ 3։

⁷⁰ Ոսկյան, էջ 127։

⁷¹ Ոգտագործել ենք հետևյալ աղբյուրները՝ Նաշարյանց, Թ. Գ-41։ Պ. Նախունեան, Արտուր Հայաստանի կամ Տեղեկագիր Բալուայ, Պարբերդու, Զարսանագի, Ճապաղ-չուրի և Երզնկայու, Կ. Պոլիս, 1883։ Գ. Սրուճանեանց, Թորոս-աղբար, հտ, 2, Կ. Պոլիս, 1884, էջ 186-187, 234-241։ Ա. Տեր-Սարգսեանց (Տեկեանց), Այցելութիւն ի

բնակավայրերից (առանց «Ապիգոդէ»-ի և «Պասմ»-ի) հայեր բնակվում էին միայն 80-ում, որից 42-ում՝ քրդերի, գվիկների, մասամբ նաև ասորիների և հույների հետ: Լրիվ հայաթափ էին եղել 28, ավերվել՝ 8 գյուղեր⁷²: Բնակացարար, այլազգաբնակ՝ դարձած գյուղերն այլևս չէին ենթարկվում վանքին (որոշ վերապահումով՝ նաև ավերված և ամբարդաբնակ դարձածները): Այս ամենով հանգեւոր, Ս. Հովհաննեսը շարունակում էր մնալ Արևմտյան Հայաստանի խոշոր վանական հաստատութիւններից մեկը, որին 20-րդ դ. սկզբին դեռ պատկանում էին տասնյակ բնակավայրեր՝ բազմահազար հայ բնակչությամբ:

Մեծ Եղեռնի ժամանակ Ս. Հովհաննեսի վանքը կողոպտվեց և ավերվեց, ոչնչացվեցին նրա արժեքավոր ձեռագրերը, այդ թվում՝ կոնդակը: Բնաջինջ եղավ նաև վանքապատկան բնակավայրերի հայութունը, որի սոսկ անցնշան մասը փրկվեց՝ աշխարհասփյուռ լինելով:



Հայաստան, Մաշտոցի անվան Մատենադարան, «Զանգակատի հեղինակների ֆոնդ», թղթապանակ թիվ 54, վավերագիր 13/5, ք. 14ա-19բ:

⁷² Առանձին բնակավայրերի մասին տեղեկությունները վերցրել ենք Ղ. Քիրաչյանից:

ԽԱՉԻԿ ՍԱՄՎԵԼՅԱՆ

ՈՍԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

(Ուսումնառություն 365-ամյակի առիթով)

«Աղաչեմ զՁեզ եղբայրք, ճանաչել զվաստակաւորս ձեր...»:

(Ա. Թեոադ. Ա.- 12)

Ոսկան վարդապետի ինքնակենսագրությունից հայտնի է, որ նա ծնվել է 1614 թվականի հունվարին, Սպահան քաղաքում: Ապագա հոգևորականը հասակ է առնում Հայաստանից Պարսկաստան բռնագաղթված մի բարեպաշտ ընտանիքում: Իբրև գերդաստանի ավագ որդի, Ոսկանը եղել է ծնողների ուշադրության կենտրոնում, ուստի պետք է ենթադրել, որ նա տառաճանաչության առաջին քայլերն արել է ընտանիքում, իսկ երբ փոքր-ինչ մեծանում է, ծնողները նրան կրթության են տալիս իրենց ծխական քահանայի մոտ «քահանայիցս աշխարհականաց», որտեղ նա լրացնում է իր գրաճանաչությունը, սովորում ժամականությունը և այլն:

Նոր Ջուղայի հայության կրթության գործում բախտորոշ նշանակություն է ունենում Մովսես վարդապետ Սյունեցու այցելությունը Սպահան: Նրա անմիջական նախաձեռնությամբ Ամենափրկիչ վանքում 1624 թվականին սկսում է գործել հոգևոր առաջնորդ խաչատուր Կեսարացու դպրանոցը:

Ամենափրկիչ մենաստանի դպրանոցի այս ժամանակահատվածի մասին գրավոր աղբյուրներում եղած տեղեկությունները խիստ սակավ են ու ոչ բավարար: Սակայն, իբրև բացառություն, որոշ կցկտուր փաստեր տեղ են գտել Ոսկան Երևանցու ինքնակենսագրականի մեջ: Այս վավերագրից հայտնի է դառնում, որ պատանի Ոսկանը ներքին մղումով ցանկություն է ունեցել ոչ միայն սովորելու այդ դպրոցում, այլև ընդունելու հոգևոր կարգ. «յաւէտ տոշորմասը ըղձայր, - ասված է ինքնակենսագրականի մեջ, - կարգին եւ ուսմանն»: Ծնողները, տեղեկանալով իրենց որդու մտադրությանը, ոչ միայն ընդդիմացում, այլև արգելք են հարուցում նրա առաջ: Սակայն տասնամյա պատանու մեջ կրթություն ստանալու և հոգևոր կոչման հասնելու բաղձաճքը այնքան բրուճ ու գայթակղիչ է լինում, որ նա ծնողներից գաղտնի, «ծածուկ ի ծնողացն» գնում է մենաստան «...առ վարդապետն Խաչատուր քանս ուսման և կրօնպարտութեան»¹: Տեղեկանալով այդ մասին, ծնողները գնում և տուն են բերում անհնազանդ որդուն: Սակայն նրանց ջանքերն արդյունք չեն տալիս: Ոսկանը համառորեն շարունակում է հաճախել դպրոց և մասնակցել դասերին, և ստիպված ծնողները վհատվում ու ընկրկում են. «... Զանձրացեալցք ծնողացն թույլ ետուն մնա մնալ պնդր»²,

¹ Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, Ամստերդամ, 1888, էջ 890:

² Նույն տեղում:

ասված է ինքնակենսագրականի մեջ: Կրթությունը ստանալու հարցում Ոսկան Երևանցու այս՝ մոլորացքի հասնող բաղձաճըքը ավելի է բորբոքվում մահ հետագայում և ճակատագրական դեր կատարում նրա կյանքում՝ ունենալով իր թե՛ դրական և թե՛ բացասական հետևանքները:

Ամենափրկիչ մեծաստանի դպրոցում Ոսկանը մի որոշ ժամանակամիջոց ուսանում է Սաղմոսի մեկնություն և Հայոց Եկեղեցու շարականները, այնուհետև՝ Ս. Գրքի մեկնությունը, և հատկապես Պողոս առաքյալի թղթերն ու Եսայու մարգարեությունը:

Ծառ Աբասի մահից հետո Պարսկաստանում գահ բարձրացած նրա թոռանը, Ծառ Սաֆիին շնորհավորելու և Էջմիածնի վրա բարդված հարյուր թուման պարտքի խնդիրը կարգավորելու նպատակով, Սպահան է մեկնում Ամենայն Հայոց Կաթողիկոս Մովսես Գ Տաթևացիին: Նույն թվականի աշնանը հայրենիք վերադարձող Կաթողիկոսը իր հետ Էջմիածին է բերում խաչատուր Կեսարացու դպրոցի աշակերտ տասնհինգամյա արեղա Ղլիճեց Ոսկանին: Էջմիածնում նա ծանոթանում է Լիմ անապատից Մայր Աթոռ եկած «արտաքին գիտություն» ամսվանվող առարկաների հմուտ գիտակ Մելքիսեթ վարդապետ Վժանցու հետ³: Վժանցին Լիմ անապատից Էջմիածին էր եկել, որպեսզի տարիների ընթացքում համառ տքնությամբ ամբարած իր գիտելիքները դասավանդման միջոցով փոխանցի տեղի ճոգևորականությանը: Սակայն Էջմիածնում նա ապրում է մեծ հիասթափություն՝ հանդիպելով անտարբերության:

Մայր Աթոռում երիտասարդ Ոսկանը, ծանոթանալով Մելքիսեթ վարդապետի հետ, թվում է, թե պետք է օգտվեր ընձեռված պատենությունից և Վժանցու միջոցով լրացներ իր գիտելիքների պաշարը, սակայն նա ընդունում է այս տրամաբանությանը հակառակ որոշում: Էջմիածնում նրա ակամեջին են հասնում բավականին աննպաստ տեղեկություններ Մելքիսեթ վարդապետի գիտության ու գիտելիքների վերաբերյալ: Այս պարագայում հասկանալի է, որ երիտասարդ ու անփորձ պատանին չէր կարող այլ կերպ վարվել, որովհետև գտնվում էր վաճառական միջավայրում տարածում ստացած աննպաստ խոսակցությունների ազդեցության տակ:

Այն, ինչ իր պատմության մեջ գիտակցաբար շրջանցել է Առաքել Դավրիժեցին⁴, իր համար ոչ շահեկան մանրամասնություններով, մտաբերում է

³ Մելքիսեթ վարդապետ Վժանցու մասին միակ մատենագրական աղբյուրը հանդիսանում է Առաքել Դավրիժեցու Պատմության ԻԹ գլուխը: Նրա հատկապես երևանյան գործունեության վերաբերյալ զգալի, որոշ առումով լրացնող տեղեկություններ կան Ոսկան Երևանցու ինքնակենսագրության մեջ (տե՛ս Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, Ամստերդամ, 1669, էջ 631):

Դավրիժեցու Պատմությանից որոշ մեջբերումներ է կատարել Լ. Ն. Ակեմյանը իր «Մովսես Գ Տաթևացի Հայոց Կաթողիկոսը և իր ժամանակը» աշխատության մեջ (տե՛ս ԱՊՀԵԳ, 1936, իջ 201, 205): Նույնպիսի մեջբերումներ կան նաև Լեոյի «Հայոց պատմության» մեջ (տե՛ս Երկերի ժողովածու, Լ. Գ. Երևան, 1969, էջ 270, 285, 416, 436: Տե՛ս նաև Երկերի ժողովածու, Լ. Ն. Երևան, 1986, էջ 183, 188, 189, 210, 215, 217): Տե՛ս նաև Եզնիկ վրդ. Բալայան, Ոսկան վարդապետ Երևանցի..., «Հասկ», Անթրիպս, 1986, թիվ 3-5, էջ 89-97:

⁴ Առաքել Դավրիժեցու Պատմության մեջ ոչ միայն անտեսված են Ոսկան Երևանցու կողմից դիտարկված փաստերը, այլև մատենագիրը զարգացնում է տրամագծորեն եակառակ տեսակետ: «Մելքիսեթ վարդապետը, գրում է նա, Լիմ անապատից եկավ... հանդիպեց Մովսես Կաթողիկոսին և սրա աշակերտներին, որի գալով ամենքը

Ոսկան Երևանցիի չորս տասնամյակ ամաց Ամստերդամում հրատարակած Դավրիժեցու պատմությանը կցած իր ինքնակենսագրականում: «Հայոց մեջ, - գրում է նա, - ո'չ ոք տեղյակ էր այդ գիտությանը. մասնավորապես հայոց երևելի-նեքը կարծում էին, թե իրենք տեղյակ են ամեն գիտությանը և դատապարտում էին նրա (Մելքիսեթ վարդապետի, Խ. Ս.) ուսմունքը: Նրանք ասում էին այդ գիտությունը, - շարունակում է կենսագիրը, - մեղադրում էին այդ անձնավորու-թյանը, որովհետև այդքան բան ըմբռնելու կարողությունից զուրկ էին»⁵: Գտնվելով այս ամնպաստ մտայնության անդեգրության տակ, ինչպես ասացինք, «...Ոսկանը երբեք չմտաբեց հետևել նրա գիտությանը, որովհետև տակավին փոքր էր մանավանդ... տեսնելով մեծագույն պարսավողներին»⁶:

Լուր ստանալով Լվովի հոգևոր թեմում տիրող խառնակ կացության մասին, Մովսես Կաթողիկոսի հաջորդ քայլը լինում է այն, որ նա էջմիածին է կանչում Նոր Ջուղայի հոգևոր առաջնորդ Խաչատուր Կեսարացուն: Տալով համապա-տասխան հաձձնարարականներ, Կաթողիկոսը Խաչատուր վարդապետին, նրա առաջադեմ աշակերտ Սիմեոն Ջուղայեցու ուղեկցությամբ, իբրև էջմիածնի մվիրակ ուղարկում է Լվով: Թե իմ է տեղի ունենում Լվովում, թե իմ անարգ ու խայտառակ վարքագծով է իրեն դրսևորում Նիկոլ Թորոսովիչը, մենք դրան չենք անդրադառնա: Սակայն այս պատմության մեջ կա մի դրվագ, որը կարևոր համարելով չենք ցանկանում անուշադրության մատնել: Էջմիածնի մվիրակին Լվովի ժողովրդի աչքում մեծացնելու, նրանք վրա քարոշական ճնշում գործադրելու մպատակով կաթոլիկ դարձած հայ կրոնավորները կազմակերպում են մի յուրատեսակ մրցույթ- հակահառություն: Մրցորդները Խաչատուր վարդա-պետին առաջարկում են պատասխանել. «Վարեն բառը ամու՞մ է (գոյակա՞մ է - Խ.Ս.), թե բայ»⁷: Ո՛չ Խաչատուր վարդապետը և ո՛չ էլ Սիմեոն Ջուղայեցի չեն կարողանում պատասխանել հարցադրմանը: «Մերոնք, - գրում Առաքել Դավրիժեցի, - հմուտ չլինելով այլևայլ պատասխաններ տվին: Այդ ժամանակ, - շարունակում է պատմագիրը, - նրանք արհամարհելով ճաղրեցին մերոնք: Եվ շատ օրեր հակահառության համար այսպես են արել, իսկ մերոնք սրտով ու հոգով խոցվել են և հասկացել, թե այն, իմ է գիտեն, գիտություն չէ, այլ իրենք պարտավոր են քերականություն տվողել: Եվ այստեղ, - ավարտում է իր խոսքը Դավրիժեցին, - հաստատ մտադրվում են թե գնանք Մելքիսեթ վարդապետի մոտ, ամեն իմ է թողած, նրա միջոցով արտաքին գիտությանը գրքեր կարդանք»⁸:

Առանց հառնելու որևէ դրական արդյունքի, 1631 թվականի սկզբին էջմիածին են վերադառնում Լվով մեկնած մվիրակները և ամփոփապես ձեռնամուխ լինում իրենց մպատակադրման իրականացմանը: Էջմիածնում միաբանության անդամներից ոմանք միանալով նրանք, մեկնում են Երևան և, դիմելով Մելքիսեթ վարդապետին, դառնում նրա աշակերտները:

Կաթողիկոսական մվիրակի Լվովում հակահառության մեջ կրած պարտու-թյունը շարժառիթ է դառնում, և 1631 թվականի մարտի սկզբին Երևանում, Ա. Ամանիա առաքյալի մեծաստանում (այժմ՝ Ջորավոր եկեղեցի), ձևավորվում է

«Ոսկան Երևանցիի չորս տասնամյակ ամաց» (ընդգծումը իմն է, Խ. Ս.): Տե՛ս, Առաքել Դավրիժեցի, Պատմություն, Ե, 1988, էջ 312:

⁵ Առաքել Դավրիժեցի Գիրք պատմութեանց, Ամստերդամ, 1689, էջ 631:

⁶ Նույն տեղում:

⁷ Առաքել Դավրիժեցի, Պատմություն, Երևան, 1988, էջ 313:

⁸ Նույն տեղում, էջ 311:

Մելքիսեթ վարդապետ վժանեցու դպրոցը: Նույն օրվանից Մելքիսեթ վարդապետի վարած դասընթացին մյուսների հետ մասնակից է դառնում մաս մեծաստանում ապրող երիտասարդ արեղա Ղիճենց Ոսկանը:

Երևանյան դպրոցի հիմնադրումով իրականություն է դառնում Մելքիսեթ վարդապետի տարիների ընթացքում իր կյանքի համար մպատակ դարձած քաղձաճը: Երևանում բացված դպրոցը միջոց է դառնում, որ կուսակրոն վաճական վժանեցիմ մեկնկես տասնամյակի ընթացքում ամբարած գիտելիքները եկող սերնդին հաճձնելով, արդյունավետ «կացուցանի» իր մվիրումն ու տառապանքը:

Ուսման ընթացքին հետամուտ պատմագիրը՝ Առաքել Դավրիժեցին, անհրաժեշտ է համարում և տեղյակ պահում վժանեցու դպրոցում ավանդվող առարկաների մաս հերթականությունը: «Նախ, - գրում է նա, - քերականություն սովորեցին»: Այս առարկայի դասավանդումից հետո պետք է ենթադրել, որ վժանեցու աշակերտները արդեն կարող էին Լվովյան հակաճառողներին պատասխանել, թե ինչ խոսքի մաս է «վարեն» բառը: Սակայն Մելքիսեթ վարդապետը դրանով չի սահմանափակվում և որոշ ժամանակ անց իր աշակերտներին սկսում է ավանդել փիլիսոփայություն: Ըստ Առաքել Դավրիժեցու հավաստիացման, այս առարկայի ուսուցումը վարդապետը սկսում է Դավիթ Ամհաղթի «Սահմանք իմաստասիրության» գրքով, ապա քննության առարկա դարձնում հույն փիլիսոփա Պորփյուրի «Վերլուծութիւն ցերածութեանը», որին հաջորդում է Արիստոտելի «Կատեգորիաների մասին» և «Պերիարմենիասը», որը հայերեն թարգմանվել է «Յաղագս մեկնութեան» վերնագրով: Այս գրքերի մեծագույն մասի ուսուցումը, պետք է ենթադրել, որ տեղի է ունեցել Երևանում, միջնդեռ Դավրիժեցին դրանք մերկայացնում է իբրև էջմիածնում ավանդված առարկաներ⁹: Ծարուհակելով «դասառությունը», մրանք ուսումնասիրում են մաս խորեմացուն վերագրվող «Գիրք աշխարհացը» և այլ աշխատություններ: Փիլիսոփայական գրքերի դասավանդումից բացի Մելքիսեթ վարդապետը իր աշակերտներին ուսուցանում է մաս տարբեր ազգերի տոմարները:

Մելքիսեթ վարդապետի երևանյան դպրոցի համբավը փոխում է էջմիածնի վաճակաճների միջավայրում տիրող բացասական վերաբերմունքը: Հոգևորականների մի սովվար խումբ, որոնք նրկու տարի առաջ թերահավատ վերաբերմունք է բացասական կարծիք ունեիմ Մելքիսեթ վարդապետի գիտելիքների հանդեպ, առաջարկով դիմում են Կաթողիկոս Մովսես Տաթևացուն և խմդդում են, որ մա կա՛մ իրենց թույլ տա գնալու Երևան՝ վժանեցու դասընթացին հետևելու և կա՛մ մրա դպրոցը տեղափոխի էջմիածին, որպեսզի իրենց ևս ուսանեն մրա մոտ:

Մովսես Տաթևացին որոշում է ընդառաջել այս հոգևորականներին և 1631 թվականի հուլիսի վերջերին Մելքիսեթ վարդապետի դպրոցը, բացի աշակերտներից երկուսի, Երևանից տեղափոխվում է էջմիածին¹⁰: Այս պատճառով, շուրջ

⁹ Ըստ Ոսկան Երևանցու՝ ինքնակենսագրականում եղած գրառման Պորփյուրի և գրան հաջորդող աշխատությունների դասավանդումը Մելքիսեթ վարդապետը ավանդել է Երևանում: Տե՛ս Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, Ամստերդամ, 1669, էջ 833: Ամեհավանակն չէ, որ վժանեցին աչգ ամենը կրկնած լինի մա էջմիածնում, մկատի ունենալով մոր աշակերտների մասնակցությունը:

¹⁰ Առաքել Դավրիժեցին կանխատեսված շարժառիթով իր աշխատության մեջ շրջանցել է Մելքիսեթ վժանեցու Երևանում ապրած լինելու փաստը: Ինչպես կնկատի ընթերցողը, այդ գրվագները մեծ տարաբերել են հենվելով Ոսկան Երևանցու ինքնակենսագրության վրա: Այս նշանակու՛մ է արդյո՞ք, թե պատմագիրը մտնելյակ է եղել վժանեցու կյանքի պատմության այդ իրադարձությանը: Ո՛չ մտնելին... Դավրիժեցին կամեցել է, որ մրա դպրոցի բացման ութամսյա պատմությունը ամբողջովին կապված լինի էջմիածնի անվան հետ, ինչը թերևս եղել է մախ և առաջ Մելքիսեթ վարդապետի ցանկությունը:

հինգ ամիս ուսանելուց հետո, ընդհատվում է Ղլիճեցի Ոսկան արքեպիսկոպոսի օգնությամբ Երևանում: Ոսկան Երևանցու ինքնակենսագրականից հայտնի է դառնում, որ ընդհատման պատճառը կապված է եղել խաչատուր Կեսարացու ցնդումած որոշման հետ: Երբ վերջինս չի ցանկանում մեկնել Էջմիածին, նրա երկու աշակերտներից մեկնում ենք պետք է նրա հետ մնար Երևանում: Այս առիթով Սիմեոն Ջուղայեցու և Ոսկան արքեպիսկոպոսի միջև տեղի է ունենում հետևյալ խոսակցությունը. «Մեր երկուսից մեկը, — ասում է Սիմեոնը Ոսկանին, — պետք է մնա խաչատուր վարդապետի մոտ... Այս գիտությունն էլ շատ կարևոր է մեզ համար, որովհետև Սպահան գնալուց հետո միմյանց կսովորեցնենք: Եթե կամենում ես սովորել, դու գնա Էջմիածին, ես կմնամ այստեղ սպասարկելու (խաչատուր Կեսարացուն), իսկ եթե չես ցանկանում, ես կգնամ և դու վարդապետից սպասարկիր: Ոսկանը, — շարունակում է կենսագիրը, — անիորձ լինելով և տարիքով էլ դեռևս փոքր, Սիմեոնին ավագություն շնորհելով մնում է Երևանում վարդապետի մոտ, իսկ Սիմեոնը Մելքիսեթ վարդապետի հետ մեկնում է Էջմիածին»¹¹:

Էջմիածնում դարոց ունենալու պատեհությունը և աշակերտների թվի ավելացումը գոհունակություն է պատճառում Լիմ անապատում վարդապետական գավազան ու պարտավորություն ստանձնած նվիրյալին, և նա իր սիրտը բացում է պատմաբանի առաջ¹², ու վերջինս իր աշխատության մեջ, բառացիորեն, մեջ է բերում նրա խոսքերը. «Ո՛չ մի այլ մտածմունք ու խոհ չկար իմ մտքում, — չակերտների մեջ բերում է Վժանցու խոսքերը մատենագիր Առաքել Դավրիժեցին, — բացի միայն այս իմաստության համար (մտածելու), որ երկար ու անհաշիվ տալանքով հագիվ գտա, այն էլ Տիրոջ շնորհով, վախճանում էի, թե առանց մեկին սովորեցնելու մեռնեի, և այս պանծալի ու չքնաղ գիտությունը իմն հետ հողը մտներ, ամփոփվեր... Բայց արդ՝ որովհետև դաս տվի՝ ձեզ... այսուհետև փոխանակ տրտմության միտքարություն ունեմ, որովհետև թեպետ ես կմեռնեմ, բայց ձեզ մեջ սերմանված Տիրոջ խոսքը կմնա աշխարհում և այն իմ է ես տանահինգ տարի և էլ ավելի մեծ տաժանքով հագիվ կարողացա գտնել, արդ՝ հեշտ ու դյուրին ուր ամսի ընթացքում ձեզ հանձնեցի:

Բայց ձեզանից խնդրում եմ... Ինչպես ձեզ պատվիրեցին մեր նախնի վարդապետները՝ կտակ անելով և մեր վրա պարտավորություն դնելով, նրանց մնաց ես էլ այսօր ձեզ պատվիրում և նույն պարտականությունն եմ դնում ձեր վրա, որպեսզի չթուլանաք և հանգիստ չտաք աչքերին և միմե՝ արտևանդներին, այլ բռնելով այս իմաստության շավիղը ձեր կյանքի օրերում ամուրի ու անդադար աշխատեցեք սրա վրա մինչև ձեր վախճանի օրը»¹³:

¹¹ Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, Ամստերդամ, 1669, էջ 633:

¹² Եթե բացառվի Մելքիսեթ վարդապետի և պատմագիր Առաքել Դավրիժեցու մտերմությունն ու հանդիպման հավանականությունը (որի մասին փաստարկներ չկան), ապա անբացատրելի կդառնա այն փաստառատ մանրամասների առկայությունը Վժանցու մասին, որոնք տեղ են գտել Դավրիժեցու Պատմությունում: Պետք է հերքարել, որ աշխատության մեջ Ամիրզուլու վանքի, Ներսես Մոկացու, Լիմ անապատի և Մելքիսեթ վարդապետի վերաբերյալ պատմմաները Դավրիժեցին չարդարել է Վժանցու եղբորդած տեղեկությունների հիման վրա: Անվանի մատենագիրը իր պատմության մեջ վկայակոչում է այնպիսի ստուգապատում մանրամասներ, որոնց կարող էր տեղյակ լինել միայն անձնական ծանոթության դեպքում: Առաքել Դավրիժեցու և Մելքիսեթ վարդապետի հանդիպումը կարող էր տեղի ունենալ ինչպես 1630 թվականի ամռանը՝ Թավրիզում, երբ գերության մեջ գտնվող եղբորորդուն որոնելու նպատակով վերջինս գտնվում էր Ատրպատականում, այնպես էլ 1631 թվականի աշմանը՝ Էջմիածնում: Հավանական է թե՛ մեկը և թե՛ մյուսը:

¹³ Առաքել Դավրիժեցի, Պատմություն, Երևան, 1988, էջ 314:

Տեղափոխվելով Էջմիածին և համալրելով աշակերտների կազմը, մույն թվականի օգոստոսի սկզբից Մեղքիսեթ վարդապետը սկսում է իր դասավանդությունը: Ըստ Սիմեոն Զուղայեցու պատմածի, այդ ընթացքում նրանք ուսանում են Պորփյուրի («Վերլուծությունը») և «Ստորագրությունը» [Արիստոտելի], իսկ «Պերիարմենիա» ուսանում են մինչև 14-րդ գլուխը¹⁴:

Էջմիածնում դասավանդման ընթացքում Մեղքիսեթ վարդապետը Լիմ ամապատում կրած «ծանրատար ճգնությունների» հետևանքով սկսում է հաճախ հիվանդանալ: Հոկտեմբերի վերջերին նրա առողջական վիճակի վատթարացման պատճառով Էջմիածնում ընդհատվում են դասերը:

★ ★ ★

1631 թվականի մոյսեմբերի սկզբին Սպահանից պատվիրակություն է գալիս Էջմիածին՝ խնդրելու Ասենայն Հայոց Կաթողիկոս Մովսես Տաթևացուն, որպեսզի նա իրենց համար թեմական առաջնորդ կարգի խաչատուր վարդապետ կեսարացուն:

Կաթողիկոսը հարգում է նրանց միջնորդությունը, և մույն օրերին խաչատուր կեսարացին, իր հետ առնելով Ղլիճենց Ոսկանին, պատրաստվում է մեկնել Նոր Զուղա: Քանի որ Մեղքիսեթ վարդապետի հիվանդության պատճառով Էջմիածնում դադարեցվել էին դասերը, Սիմեոն Զուղայեցին ևս միանում է նրանց, և երեքով միասին մեկնում են Սպահան:

Սխալ բուժման հետևանքով Մեղքիսեթ Վժանեցու առողջական վիճակի մեջ առաջ են գալիս մոր բարդացումներ և 1631 թվականի դեկտեմբերի սկզբներին նա վախճանվում է Երևանում¹⁵: Թաղումը կատարվում է Կոզեռ կոչվող գերեզմանատանը, ուր պետք է որոշ ժամանակ անց հանգչեր նաև երջանկահիշատակ Կաթողիկոս Մովսես Գ Տաթևացին:

¹⁴ Առաջին Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, Ամստերդամ, 1669, էջ 633: Պետք է հենարդել, որ հայտնի գլուխների ուսուցումը ընդհատվել է Վժանեցու առողջական վիճակի վատթարացման և նրան տեղափոխման պատճառով:

¹⁵ Դավրիժեցու Պատմության աշխարհաբար հրատարակության մեջ (Երևան, 1988, էջ 315) Վժանեցու մահը վերագրված է 1557 թվականին: Սխալը առաջացել է նրանից, որ աշխարհաբարի վերածողը իբրև քննադրի հիմք է ընդունել Դավրիժեցու Պատմության հերոսի հրատարակությունը (1896 թ., Վաղաշապատ), որտեղ Մելքիսեթ վարդապետի մահվան թվականը ՌՁ-ի փոխարեն տրված է ՌՁ տառերով: Այս վրիպակի հետևանքով էլ նրա մահվան թվականը 1631-ի փոխարեն թվարկվել է սխալ: Ճիշտը տե՛ս առաջին հրատարակության մեջ, Ամստերդամ, 1669, էջ 398: Տե՛ս նաև երկրորդ հրատարակության մեջ, Վաղաշապատ, 1884, էջ 308:

Ցավալի է, որ այս ծանրակշիռ գիտելիքների տեղ վաճական-մտավորականը՝ Մելքիսեթ վարդապետ Վժանեցին, տեղ չի գտել Հ. Ս. Հանրագիտարանի մեջ: Ցանկալի է, որ նրան պատշան էք հատկացվի Հայկական համառոտ հանրագիտարանում:

Մելքիսեթ վարդապետի անցած ուղու հետազոտությունը առանց երկրաբանության տրամաբանական է դարձնում, որ նա պետք է ունենա նաև մատենագրական վաստակ: Սակայն, եսկառակ եռսագրող փաստերին, մեզ չհայտնվեց ո՛չ «Ժէ դարի Հայերեն ձեռագրերի հիշատակարանների» երեք հատորներում և ո՛չ էլ բուն ձեռագրացուցակների մեջ որևէ հետ կամ հիշատակություն հայտնաբերել նրա մատենագրական ծառագուլթան մասին: Միակ փաստը, որ ի հայտ եկավ հետազոտության ընթացքում, հանդիսանում է Ջաֆարի Սարկավագ Բաճաճեցու գրառումը: Խոսելով Հովհաննավանքի վանահայր Հովհաննես Կախկոպոսի Լիմ անապատում ունեցած գործունեության մասին, պատմագիրը ավելացնում է. «Ջալս մեք ուսաք ի գրոյն, գոր Մելքիսեթն գրեալ է զպատմութիւն նորին յամախ՝ աւելի քան զՍաղմոսն: Եւ էր գիրքն այն ի գրատանն Յովհաննէս վանից, և աշակերտք մտրին խնդրեցին, և առեալ տարան, և ո՛չ գիտեմ գի՞նչ արարին»: Տե՛ս «Ջաֆարի Սարկավագի պատմութիւն», հատոր առաջին, Վաղաշապատ, 1870, էջ 81:



Հողվածի սկզբում մեծ առիթ ունեցանք ասելու, թե ինչու՞ պատահի ու տղայամիտ Ոսկանը, լինելով շրջապատի ազդեցության տակ, թերաֆավատ վերաբերմունք է դրսևորում Մելքիսեթ վարդապետի գիտության հանդեպ: Նաև ծանոթացրինք այն իրողությանը, որ Լվովից վերադարձող պատվիրակների ընկերակցությամբ Ոսկանը շուրջ հիմզ ամիս ուսանում է Մելքիսեթ վժանեցու Երևանում հիմնադրած դպրոցում:

Այս ամենից հետո հարկ ենք համարում ծանուցում տալ, թե ինչպես հասունության տարիքում, այդ ամենից չորս տասնամյակ անց, երկրորդ թարգմանիչ հոչակված Ոսկան Երևանցին փոխում է Մելքիսեթ վժանեցու հանդեպ երիտասարդության շրջանում ունեցած հոռի ու անմպաստ կարծիքը և գնահատում ու արժեքավորում իր ստացած կրթությունը:

1668 թվականին, երբ Ոսկան Երևանցին Ամստերդամում տպագրության է նախապատրաստում Առաքել Դավրիժեցու «Գիրք պատմութեանց» խորագրով աշխատությունը, ծանոթանալով գրքի ԻԹ գլխում գետեղված Մելքիսեթ վարդապետի կենսագրությանն ու կտակին, անհրաժեշտ է համարում այդ աշխատության վերջում գետեղել իր մի քանի էջից բաղկացած «Պատմութիւն կենաց Ոսկանայ վարդապետի Երեսնցոյ» վերնագրով ինքնակենսագրականը: Պետք է դիտել տաճը, որ իր այդ ոչ մեծ ծավալ ունեցող գրության շուրջ մեկ քառորդը Ոսկանը նվիրում է վժանեցու հետ կապված այն իրադարձությունների լուսաբանմանը, որոնք շրջանցվել էին Առաքել Դավրիժեցու աշխատության մեջ և ապա, այլևայլ պարզաբանումների հետ մեկտեղ, անդրադառնում մեկ վարդապետ վժանեցու ուսմունքի գնահատմանն ու վերաարժեքավորմանը¹⁶: Նա բարձր է գնահատում Մելքիսեթ վարդապետի ամբարած գիտելիքների պաշարն ու քերած մորությունը գիտության բանականացման հարցում. «...զԱյր կորովի և բանիքում, - գրում է նա, և ապա ավելացնում է, - զԳտողն հանճարոյ բնաբանականին մասնատրաբար»: Բնութագրմանը տալով միայն ձևակերպում Ոսկանը իր ուսուցիչ Մելքիսեթ վարդապետի մոտեցման մեջ ի հայտ է բերում միջնադարյան վերացականությունը շրջանցելու միտում, և նրա դասավանդման մեջ նշմարում է բնական գիտության հանդեպ դրական հակումի դրսևորում, ինչը պետք է համարել Ոսկանի գնահատման ու արժեքավորման կարևորությունը ընդգծող չափանիշ: Ոսկան Երևանցին ո'չ միայն «...լուսավոր ու աստվածապարգև» է համարում Մելքիսեթ վարդապետի տիրապետած գիտությունը, այլև գործնականում առարկայական դարձնում իր գնահատականը. «Առանց այդ գիտության, - ընդգծված շեշտադրությամբ գրում է նա, - անհմարից է իրողությունները ճիշտ կերպով հասկանալը և Աստվածաշունչը բացատրել»¹⁷: Հիշեցման կարգով պետք է կրկնենք, որ այս խոսքերը պատկանում են այդ մույն օրերում Աստվածաշունչի հրատարակությունը խմբագրող և տպագրությունը իրականացնող, երկրորդ թարգմանիչ հոչակված Ոսկան Երևանցուն:

¹⁶ Պետք է ավստոսել, որ Ոսկան Երևանցու մասին տպագրված աշխատությունների մեջ պատշաճ տեղ չի հատկացված Մելքիսեթ վարդապետի ու Ոսկան Երևանցու ծանոթությանը, նրանց միջև եղած ընդհանրությանն ու աղբյուրներին:

¹⁷ Առաջել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, Ամստերդամ, 1668, էջ 631:

Հիմքեր կան ասելու, որ Ոսկան Երևանցու ձեռնարկած հրատարակչական առաքելության, այդ գործում մեր հանդես բերած ամսագրորդ Գվիրումի և Մելքիսեթ վարդապետի կտակում առաջադրված խնդիրների միջև կան շփման եզրեր: Այս մտայնության արժարժույթը կարող է մեզ հեռում տանել, սակայն եթե ցանկանանք աղերսներ որոնել, ապա կարող ենք զուգահեռներ հայտնաբերել Ոսկան Երևանցու հանդես բերած առաքելության և կտակի մեջ Վժանեցու՝ իր աշակերտներից իբրև պատգամ թողած համաձայնարականի միջև:

Մի դիտարկում ես...

Երկու տարի մեկ ամիս ապրելով Երևանում, այդ ընթացքում շուրջ հիմզ ամիս ուսանելով Ս. Ահաճիայի անապատում, այս համազամանքը կյանք մտնող Ղլիճենց Ոսկանին իրավունք է տալիս իր անվանը իբրև երկրորդ բաղադրիչ հարակցելու Երևանցի մականունը, որը մեր անվանը ուղեկցում է ապրած կյանքի հետագա բոլոր տարիների ընթացքում: Իսկ երբ մա իրականությունը է դարձնում երկար ու ձիգ տարիների ընթացքում կաթողիկոսների ու մտավորականության մտահոգության ու ապարդյուն ջանքերի առարկան դարձած Աստվածաշունչ մատյանի հրատարակությունը, այդ մեծագույն խնդրի ավարտից հետո մեր ահուհում ու մականունը միասնության մեջ փառահեղ պանծացումով ամրագրվում են հայ ժողովրդի հոգևոր ու մշակութային կյանքի պատմության ու տարեգրության մեջ:

Ոսկան Երևանցին գիտակցված առաքելությամբ է Գվիրումի աստանդական կյանքին ու Գվիրումով էլ, կնքում իր մահկանացուն օտար ափերում, հայրենիքից հեռու՝ հայրենիքի համար:

Նրա ձեռնարկած գործի դարակազմիկ մշամակությունը մերս է բերում իր ապրած օրերի ամենիկ սահմաններից ու պատվավոր տեղ հատկացնում մեր հոգևոր ու մշակութային կյանքի 1700-ամյա պատմության մեջ, մեծ ու փառաբանված անհատների շարքում:

★ ★ ★

Ավարտելով հոգվածը կուզեմայիմք, որ մեր խոսքը արժանաձայն Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա-ի ուշադրությանը...

Ոսկան Երևանցու իրականացրած գործի դարակազմիկ մշամակությունը մերս բարոյական իրավունք է տալիս դառնալու պահանջատեր, որ Երևանի Զորավոր եկեղեցում, իբրև 1700 ամյակի Գվիրված միջոցառում, հուշատախտակ դրվի 365 տարի առաջ մեր այդ մեծաստանում, երկու տարի ապրած լինելու և Մելքիսեթ վարդապետի հիմնադրած դպրոցում սովորելու մասին:



ՀՈՒՇԱՆԻԿ և ԱԶԱՐՅԱՆ

Քանաասիրական գիտությունների դոկտոր

ՆԱՐԵԿԱՑԻԱԿԱՆ ՀԱՐԺՄԱՆ ՎԵՐԵԼՔԸ

18-ՐԴ ԴԱՐՈՒՄ

Գրիգոր Նարեկացու հանդեպ հայ ժողովրդի ունեցած դարերի պաշտամունքը Նարեկացիական շարժման մի յուրօրինակ կերպարանք է ստանում 18-րդ դարում: Ընդօրինակվում, միաժամանակ հատուկ հոգատարությամբ հրատարակվում և վերահրատարակվում են նրա անունով մեզ հասած երկերի մեծագույն մասը՝ «Մատեան ողորբգութեան» պոեմը, մի շարք ճառեր, ներբողյաններ, մեկնություններ, գանձեր: Տպագրվում են Նարեկացուց նվիրված գրույցներ, բանաստեղծություններ, երկերի մեկնությունները, լուծմունքները, գրվում են նորերը: Կատարվում է մի անցանկալի երևույթ. միայն «Մատեան ողորբգութեան» երկը 18-րդ դարում տպագրվում է ավելի քան տասն անգամ: Նարեկացու կյանքի և գրական ժառանգության ճանաչման ու գնահատման հարցում առանձնահատուկ սեր, նախանձախնայություն են հանդես բերում հայ կրոնա-ազգային լուսավորական, կրթական շարժման նվիրյալները՝ մատենագետներ, աստվածաբան-փիլիսոփաներ, բանասերներ, բանաստեղծներ, ուսուցիչներ, բժիշկներ, վաճառականական մտավորականության ներկայացուցիչներ, ժամանակի նշանավոր հրատարակիչներ, տպարանատերեր, սրբագրիչներ և այլք:

Հոգևոր գործիչ, մատենագետ-բանաստեղծ, սուրբանական բուհայինության դատավճռով գլխավորված Կոմիտաս Քեմալյանը ընտիր գրչությամբ ընդօրինակում է Նարեկացու վարքը, «Մատյանի» լուծմունքն ու բացատրությունը և այլ նյութեր: «Գիրքս է ձեռամբ գրեալ յերանկելոյն Կոմիտաս Քեմալյանեան քահանայ է և նախապես... Յամենայն ժամ փառք և գլխաբան և քեմալյան Քրիստոս,» ասվում է գործի Հիշատակարանում, որ ոչ թողեր անկատար մնալ հոգեւորք բուրաստանիս և յոգնածաղկեաց պարտիզիս, այլ հուր կարողութիւն ինձ մեղաւորիս, ըստ բարեխօսար կամաց իմաց հասանիլ ի վնար և ի յաւարտ»¹: Ժողովրդական ուսուցիչ, բանաստեղծ «Արդար վարժապետ մականուանեալ» Հովհաննես Կարնեցի, դարձյալ ընտիր գրչությամբ, համառոտում է «Մատեան ողորբգութեան» երկը և նրանից մի գեղեցիկ փունջ, Նարեկացու դիմապատկերով և այլ զարդանկարներով հանդերձ, հանձնում ընթերցողին: «Կարողութեամբն Աստուծոյ,» գրում է նա, աւարտեցաք այս ամենացանկալի գրքոյկս հոգեցոյց և լուսափայլ բանից սրբոյն Գրիգորի Նարեկացոյ հրեշտակական վարդապետի, սակայն ո՛չ բոլորովին, այլ մասն ինչ: Իբրու մտեալ ի լուսափայլ ծաղկալի բուրաստանս, այսինքն ի հոգեկեցոյց մատեանս նորին և առեալ քանի մի ազնիւ, անուշահոտ, կենսաբայր ծաղիկ և վարդ գեղեցիկ՝ փոխադրեցաք աստ և գրեցաք

¹ Վենետիկ, Մխիթարեան Միաբանութեան Մատենադարան, ձեռ. քիվ 119, էջ 1ա:

սոյն տօմսակիս, ի խնդրոյ ազնիւ հղօր մերոյ վայելչանկատ մետաքսագործ տիրացու Յովհաննիսի, որ յոյժ փափագանօք եւ ըզձատոյշոր սիրով գրել ես...»²:

Հնդկահայ գործիչ և բանաստեղծ Իգնատիոս Ջուղայեցիին իր տարագիր կյանքի ողջ ընթացքում, «իրքեւ վշտաց մխիթարութիւն», իր մոտ է պահում «Մատենան ողբերգութեան» մի ընտիր ձեռագիր և, 1763 թվականին գալով Վենետիկ, իր խնայած միջոցներով և Մխիթարյանների օգնությամբ տպագրում այն: «... Ես ջուղայեցի մահտեսի Տէր Իգնատիոս Ջաղատեանց տրուպ քահանայ, գրում է նա, որ բազում ժամանակս ի Հնդկիս կեցեալ եմ... սրբոյն Սաղիմայ շրջեսլ եւ ի սուրբ Աթոռն Հոռվմայ հասեալ եւ անտի ի Վենետիկ, յայս ամենայն վայրս պանդխտութեան զայս գիր կալայ ինձ վշտաց մխիթար եւ խթան հեղձացեալս անձին, այժմ ի փոխարէն բազմապատիկ երախտեաց ի բարերար Տեառնէ, առ իս հղելոց զամենայն ժամանակս պանդխտութեան իմոյ, յօժարեցայ զհոգնանուագ բանս ինչ աղօթից գրոյս տպագրեալ յօժարամիտ ծախիւք՝ նուէր ընծայել բարեպաշտութեան աղօթասէր հղբարցդ, ի հոգեւոր յիշատակ ինձ եւ իմոցս առհասարակ»³:

Իգնատիոս Ջուղայեցիին տպագրում է «Մատենան»-ը ոչ ամբողջությամբ, այլ, իրրեւ հմուտ նարեկագետ, գործնական ցկատառումներով ընտրում առավել ազդու և գեղեցկագույն հատվածները և մի ընտիր փունջ կազմում. «Ո՛չ զամենայն բովանդակ..., այլ քաղեալ ընտրանաւ զառաւել կարեւորսն եւ վստակարգեալ լատ պատշանի շարթու աւուրց, եւ ըստ պէս-պէս պիտոյից հայցուածոց, եւ որպէս թէ լընդարձակ բուրաստանէ՝ փունջս փունջս ծաղկանց հաւաքելոց առաջի ընծայեալ, զի ի պատրաստի ունիցին՝ որք փափաքինք վայելել յանուշահոտութիւն զուսրբութեան բանիցս»⁴:

Իգնատիոս Ջուղայեցիին իր թափառական կյանքի պատմությունը հանգամանորեն ներկայացնում է նաև «Մատենան»-ին կից՝ «Յիշատակարան ոտանաւոր չափով» բանաստեղծության մեջ: Այստեղ հեղինակը պատմական ուշագրավ տեղեկություններ է հաղորդում նաև Մխիթարյան Միաբանության մասին՝ մեծապես գնահատելով այն դերը, որ Միաբանությունը կատարում էր Հայոց գրական, կրթական շարժման և տպագրության մարզերում.

Վայելուչ վանք կայ արքայեան,
չորք անկիւնի եւ պատուական,
եղբարք ամեն ի սէր միաբան,
առաջնորդին հրպատակ կան:

Տէր Ստեփանէ Հայր հոգեւոր,
նոյնոյ վանիցն մեծաւոր,
հիփոյս պատիւ եցոյց՝ յուղով,
զխնդիր սրտիս կատարելով⁵:

² Մաշտոցյան Մատենադարան, ձեռ. թիվ 8422, էջ 93ա:

³ Բանք աղօթից սրբոյն Գրիգորի նարեկայ վանից վանականի, Վենետիկ, 1763, էջ 4:

⁴ Անդ, էջ 4-5:

⁵ Անդ, էջ 309: Տե՛ս նաև Հ. Ա. Ղազիկեան, Հայկական մեր մատենագրութիւն եւ հանրագիտարան հայ կեանքի, Վենետիկ, Ս. Ղազար, 1908-1912, էջ 485-488:

Իգնատիոս Զուղայեցին այստեղ էլ ջերմ տողեր է ձագնում Մխիթարյանցների ջանքերով տպագրված (1763) «Մատեան ողբերգութեան» պոեմի աճման հեղինակի հիշատակին: Տարագիր հայ բանաստեղծը ռոմանտիկ պարզ հանգի ու չափի մեջ, պատմողական հղանակով ներկայացնում է այն ընդհանուր սերը, որով համակված է եղել հայ մտավորականությունը «Մատեան ողբերգութեան» երկի նկատմամբ և այն մեծ պահանջը, որ եղել է ժողովրդի մեջ «Մատեանը» կրկին ու կրկին տպագրված տեսնելու համար:

Րարուն պայծառ և ցանկալի,
Տէր սուրբ Գրիգոր Նարեկացի,
Միշտ առ Աստուած հոգւով խօսի,
Բանք իւր ընտիր՝ հանուրց յայտնի,
Ցանկացայ ես կաթոզնելով,
Ձիւր սուրբ աղօթս տըպագրելով,
Բանգի կայի յայն կարօտով,
Բազմաց ի նոյն փափագելով⁶:

Տարագիր հայ մտավորականը իր սրտի խոսքն է ասում Նարեկացու մասին, «Մատեանը» գնահատում իբրև մարդկանց «թմրած հոգիները» սթափեցնող, արիություն ներարկող մի ստեղծագործություն, որի կենսական ուժը զգացել է և ինքը իր ողջ իմացական կյանքում:

Զթմրեալ հոգիս առնէ զգաստ,
Որք մտանեն ի յայս դարաստ:
Ձի վատասիրտ եմ, չունիմ յոյժ,
Վասն այն յաւէտ յանախէ տոյժ...
... Մարդասէր Տէր, ինձ ողորմեա,
Աղայանօք սուրբ Նարեկայ⁷:

Նույն՝ 1763 թվականին «Մատեանը» ամբողջությամբ, լուծմունքի և բացատրության հետ միասին, տպագրվում է նաև Պոլսում՝ Ակնցի մատենասի ուղղի հացագործ Նրամի արդյամբ և ջանասիրությամբ: «Մատեանը», - գրում է հրատարակիչը, - քաղցր է քան զմեզու խորիսխ՝ կրից հաշակելեաց, ասործալի քան զսեղան յոգնախորտիկ՝ աչաց տեսանելեաց եւ յանախագին քան զակունս պատուականս հոգեւորական վաճառականաց: Հիշատակադիրը գնահատում է «Մատեան»-ի քարճը արվեստը, որ հույժ ուշագրավ է, ընդգծում է նրա հարակցության փաստը Աստվածաշնչի հետ: «Ձոր գեղեցիկ յօրինեալ մարգարտօրէն շարահիւսեաց երանելի վարդապետս... սուրբ գրաց վկայութեամբ, խորագոյն մտօք, ոլորեալ ոճով, քառակապ յօրինուածով եւ հոռոտական պերճաբանութեամբ, իբրեւ մարգարիտ լուսափայլ եւ պատուական վերաբերեալ զսա յանյատակ ծովէ Աստուածաշունչ գրաց... որ զսիրտս մտառու վերածնողացն իւրաց ի տիպ կարողութեան՝ մամոյ փոխարկեալ, յաչաց անտի նոցին մաքուր արտասուս թորացուցանէ»:

⁶ Աճղ., էջ 309-310: Մատենադարանի թիվ 8793 ձեռագրում, էջ 185ա-186բ, Հարություն Տեր Սիմոնյանը: Իգնատիոս Զուղայեցու պոյն չափածո հիշատակարանը ոգտագործում է՝ հարմարեցնելով իր կենսագրությանը:

⁷ Գրիք աղօթից..., Պոլիս, 1763, էջ 638:

Ինչպես տեսնում ենք, մարեկագիտությունը թևածում է նաև հիշատակարանային գրականության մեջ. դա գալիս է հենց և 18-րդ դարում մի մոր որակ ստանում:

1763 թվականին Պոսում վերահրատարակվող «Մատեան»-ի վերջում Հակոբ Նալլանը գետեղում է նաև Նարեկացուն վերագրվող «Բան խրատու վասն ուղիղ հաւատոյ...» երկը՝ ֆաղելով մի հին ձեռագրից. «Յաւելեալ ի սմա, գրում է հրատարակիչը.՝ զգիրք իմն փոքրիկ սոյն հեղինակիս, որ կոչի ըան խրատու վասն ուղիղ հաւատոյ եւ մաքուր վարուց առաքինութեան, ի խնդրոյ Վարդանայ դիւանադարի յօրինեալ, որ ֆաղափս մեծի աստուածաբան պատրիարհն շնորհելովն եղաւ ի վերջոյ»⁸:

Նալլանը իր վրա է վերցնում նաև քննարկ սրբագրության դժվարին գործը: «Ձեզ Նարեկեմիս, գրում է նա,՝ «Մանուցումն առ աստուածասէր եւ ընթերցասէր անձինսդ» խորագրով իր առաջարանում,՝ եւ զայս զանձս ծածկեալ եւ գաղբիւրս կենեալ կամելով ի լոյս ածել եւ իբր յոսկեղեն սափառոջ գաղեալս մանանայ ախորժափորձ կոկորդաց ձերոց ի զմայլումն տալ, այսինքն, գտեսրակս լի արդեամբք՝ արդիւնաւոր հրեշտակական վարդապետին եկեղեցւոյ՝ սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ, զոր ի խնդրոյ Վարդանայ դիւանադարին Անճեֆարիմայ Աթուրուհեաց արքայի՝ արքունական հրովարտական գծագրողին յարմարեալն էր՝ մեք ըստ խնդրոյ ումանց հոգեսէր քարեպաշտաց հրաման տալով տպեցման, զոր եւ սրբագրեալ ձեռք մերովք, ի լրումն քաղճանաց նոցա ըստամբայել թոյլ տուաք»⁹: Մի կողմ թողնելով երկի հեղինակային պատկանելության հարցը, նկատենք միայն, որ Նալլանը քարոյագետ-պատմագետի հայացքով է գնահատում այս երկը և արժանի հարգանք հատուցում ոչ միայն հեղինակին, այլ նաև մեկնասին՝ «քարեպաշտ իշխանապետ Վարդան դիւանադարին»: «Ուրեմն, գրում է Նալլանը,՝ այսու գրեւելաւ ոչ միայն գովելի է սուրբն Գրիգոր Նարեկացին, ...այլ եւ գովելի է անձն խնդրողին, քարեպաշտ իշխանին Վարդանայ դիւանադարին, որ թողեալ գեոգս արքունեաց գործոց (ոչ ըստ մոլեկանաց՝ յԱստուծոյ զգանձս խնդրեաց ի լրումն անկատարից մեղաց), այլ ի պաշտօնէ է նորա գեոգեկեցոյց տեսրակս զայս աղերսեաց...»¹⁰:

«Մատեան»-ի այս հրատարակությունը ուշագրավ է նաև մի այլ կողմնակի պատմությամբ: Նրա մի օրինակը, որ այժմ պահպանվում է Մաշտոցի անվան Մատենադարանի հնատիպ գրքերի 580 թվահամարի տակ, անձնապես պատկանել է 18-րդ դարի զինվորական նշանավոր բժիշկ «Ի գնդի զինուորաց» «Պետրոս Յովհաննէսի Քալանթարեանին» (ծն. 1735 թ. Ջուղայում): Նա «Մատեան»-ի վերջին ազատ թերթի վրա թողել է «Ազգաբնութիւն կարնառօտ վասն ցեղին իմոյ» սկսվածով հիշատակարան, որն օգտակար է նաև այս դարի հայ բժշկության, հայ-ռուսական հարաբերությունների պատմության ուսումնասիրության համար: «Մատեան»-ի իր այս օրինակը, ահա, զինվորական բժիշկ Պետրոս Քալանթարյանը շերմագին սիրով նվիրում է իր միակ դուստր Մարիամին: «Աստուծոյ պատուիրելով պատուիրեմ քեզ, սիրելի և գեղեցիկ դուստրդ իմ Մարիամ, գրում է հայրը աղջկան,՝ զի այս հրաշագործ եւ երկնապարգեւ սուրբ Նարեկ աղօթից գիրքս յազգաց յազգս, ի տանէ մերմէ մի՛ պակասեսցի, զի ահա

⁸ Աճղ, էջ 439:

⁹ Աճղ, էջ 440:

¹⁰ Աճղ, էջ 442:

գայս լիցի քեզ յիճէն աւանդութիւն, որ զսա ունիցիս պահել պատուով. որ եւ պարտի միշտ յաւիտեանս յաւիտենից մնալ ի յագգի մերում ի պահպանութիւն տանց եւ ի յաջողութիւն վայելողաց: Արդ. խնդրեմ ի ձեզ ո՛վ ընթերցողք, զի ի յընթերցումն ձեր գտոյն հրաշագործ սուրբ Նարեկս եւ ի օգտիւն ի սմանէ, յիշեալիք եւ զիս միով Հայր Մերիւ, որով եւ դուք յիշեալ լիցիք ի Քրիստոսէ, ամէն: Որ եւ ամենախոնարհ ծառայ ճուստս քիշկ Պետրոս՝ որդի Յովհաննիսէ Քալանթարեան Յուդայեցի, ի քիւն Փրկչին 1804. յամսեան Մայիսի 20, Մօսկով»¹¹:

Ողբ միջնադարում «Մատեան»-ի նկատմամբ ունեցած պաշտամունքը 18-րդ դարում այնքան է ուժեղանում, որ հրատարակիչները «Մատեան»-ը տպագրելու ժամանակ Նարեկացու դիմապատկերը «Կանոնական եւ փառագրական յօրինուած-ով», «բազում ջանասիրութեամբ» փորագրում են և անվճար քաժառույժ ժողովրդին: Ազգանվեր այս գործի նախաձեռնութեան պատիվը պատկանում է Պոլսի հռչակավոր տպարանատեր Աստվածատուր Կոստանդնուպոլսեցուն: Նրա մահից հետո այս գործը շարունակում են իր ծառագեցերը՝ որդին՝ Հովհաննես Դպիրը, և թոռները՝ Հակոբն ու Կարապետը: «Եւ արդ. գրում է Հովհաննես Դպիրը 1755 թվականին Պոլսում տպագրված «Մատեան»-ի եիշատակարանում. մտքեմ յիշել ընդ պատճառի տպեալ տուողաց գրոյս... եւ զհանգուցեալ հայրն իմ զԱստուածատուր յոգնաշխատ ծառայն ձեր, որ ի կենդանութեան պատուէր տուեալ իմումս յետնութեան թէ՛ ջանասէր միւս անգամ տպել գտուրք գիրքն Նարեկ՝ զգուշանալով յամենայն պարագայս նորին...: Յիշեալիք ընդ նմին եւ զիս՝ զանիմաստ որդի նորին լոկ անուամբ կոչեցեալ Յօհաննէս Դպիրս զձերն պաշտօնեայ ի մանկութենէ զտպագրող գրոյս, որ ծառայեալ եւ ծառայելոց եմ՝ որքան եւ իցեմ: Յիշեցի ընդ մեզ եւ թոռն նորին համբակահասակ որդի իմ Կարապետն՝ աւելածու ընդ եղբոր իւրում Յակոբայ դեռաբուսիկի, որ զաշխատանս դժուարին յանձն առեալ երկայն աւուրք է քազմաւ զգուշութեամբ՝ առ ի սէր և ի պատիւ սրբոյ վարդապետին՝ զպատկեր նորին, որ զսկզբան փորագրեաց, հանդերձ կանոնական եւ փառագրական յօրինուածովք, զոր վաճառեալ մատուցաւ ի ծառայութիւն ազգիդ առանց գնոյ (որպէս եւ հայր մեր՝ ծառայս ձեր, թէև այս անհանդ ոմանց թուիցի)»¹²: Այս պատկերով է քաջվում 1755 թ. Պոլսում տպագրված «Նարեկ»-ը եւ այլ հրատարակություններ՝ դրանից առաջ և հետո:

Սակայն «Մատեան ողբերգութեան» երկի 18-րդ դարի տպագիր և ձեռագիր օրինակների մեջ առանձնանում է Պոլսի 1726 թ. հրատարակությունը: Այդ հրատարակության նախաձեռնողներն են եղել Բաղեշի հռչակավոր դպրոցում մատենագիտական բարձր կրթություն ստացած հայկաբաններ՝ Պոլսի Պատրիարք Հովհաննես Բաղիշեցին (Կոլոտ) և Նրոսաղեմի Պատրիարք Գրիգոր Շիրվանցին (Շղթալակիր): Պաղտասար Դպիրն ահա, այս նշանավոր մատենագետների և այլ միաբանների ու աշակերտների մասնակցությամբ, իրականացնում է Նարեկացու «Մատեան»-ի և այլ երկերի վերտեղիչալ տպագրությունը: Այս տպագրությունը նախորդի համեմատությամբ ներկայացվում է մի նոր ձևի մեջ: Հրատարակիչներին մտահոգում է «Մատեան»-ի քնագիրը ներկայացնել Աստվածաշնչային հղումներով: Սա ինքնին հույժ դժվարին և կարևոր քննադատական աշխատանք էր, որ սկսում են նրանք և ավարտում 1726 թ. դեկտեմբերին. «Ուստի որովհետև ըստ վկայութեան քազմաց սրբազանից գրոց հաւատի՝ կամ եղև մեզ

¹¹ Տե՛ս Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի գրադարանի թիվ 580 հնատիպ գրքի ձեռագիր եիշատակարանը:

¹² Գիրք աղօթից ասացեալ սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ, Պոլիս, 1755, էջ 572-574:

նուստ և անպիտան ծառայիցս Տեառն և սրբոց տնօրինականաց տեղեաց նորին և Ամլորդւոյն Կարապետին յիրոյ սրբոյ յետեալ սպասաւորացս, այսինքն՝ Գրիգորի եպիսկոպոսի և սրբոյն Սաղիմայ վերադիտողի՝ Յոհաննու վարդապետի և դիտողի Կոստոնդնուպօլսոյ, տպել և ի լոյս ածել զգեղեցկայարմար շարս աղօթից և արտասուաբեր բանից առն Աստուծոյ սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ, երիցս երանեալ սրբազան և աստուածաբան վարդապետի և ճգնասէր կրօնաւորի»¹³:

1726 թ. «Գիրք աղօթից» երկի Պոլսի այս տպագրութեան մասնակիցները միաժամանակ երկու նպատակ էին հետապնդում. առաջինը՝ բավարարել նարեկասեր ընթերցողին, քանզի նախորդ տպագրութեան վերջին օրինակները սպառված էին. «Գոյր քեպէտ սուրբ Մատեանն այս աղօթից տպեալ ի միջի մերում, սակայն վասն յոյժ պատուականութեանն» ոչ էր մնացեալ թէ որ գտանիցէր զնա»¹⁴: Երկրորդ՝ ինչպես նկատեցին, «Մատեան»-ը բաղդատել Աստվածաշնչի հետ: «Հուսկ յետոյ, քան զամենեսին, գրում է Պաղտասար Դպիրը այդ տպագրութեան իր հիշատակարանում. « և զիս սրբագրող սրբոյ Մատենիս, զմեղապարտ Պաղտասար չնչին Դպիրս, և զանձանձիր վարժապետն իմ՝ զՖահրապատցի Աղանի Աստուծատուր վարդապետն, և ծնողսն մեր յիշեսչիք ի Տէր, յորմէ և դուք անմոռաց լիջիք ողորմութեամբ. ամէն»¹⁵: Այս հրատարակութեան Առաջաբանի և Հիշատակարանի հանգամանալից ուսումնասիրութիւնը հավաստում է, որ Պաղտասար Դպիրն այստեղ էլ է կիրառում 1719 թ. Պոլսում «Մաշտոց»-ի տպագրութեան իր սկզբունքները և, օգտվելով սրբագրիչի անսահմանափակ իրավունքներից, ընդլայնում իր բնագրագիտական, բանասիրական աշխատանքի չափերը: «Կարողութեամբն Աստուծոյ և ողորմութեամբ Նորին, կարդում ենք Հիշատակարանում, տպեալ սուրբ գիրս աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ և ճգնագգաց վարդապետի, ի բազում լաւ օրինակաց, բազմաշխատ երկամբ սրբագրութեան, զայլ և այլ օրինակսն ընդ միմեանս համեմատելով, որ և ի խնամոցն Աստուծոյ գտաք հին օրինակ մի, որ գեր ի վերոյ էր քան զայլսն, յորմէ բազում ինչ սխալանս և պակասութիւնս բառից և բանից ուղղեցաք շնորհիւն Աստուծոյ»¹⁶:

«Մատեան»-ի լուսանցային նշումները իրականացվում է շնորհիվ միաբանութեան աշակերտների՝ ջանքերով տիրացու Հարությունի, «որ էր հմուտ Աստուածաշունչ տառից» և «բազում երկունս կրեաց ի ժողովելն զվկայութիւնս... ընդ նմին և զփոքրիկ Աւետիք եղբայր նորին, զհոգեծին որդեակն մեր ի Տէր հանգուցեալ, որ և նա ի տղայական հասակին ընթեռնոյր Աստուածաշունչ տառս, մինչ գտանէր զբանս ումանս համեմատս բառից աղօթական գրոյս այսորիկ՝ ասէր խնդալով, անա վկայութիւն մի այլ գտի. իսկ մեք վասն շահելոյն զորդորդ միտ նորա, ոչ ձգեաք յետս թէ այդ չէ պիտոյ»: Աղբյուրների լուսանցային նմուշները, բնականաբար, կատարվում էին Հովհ. Բաղիշեցու, Գրիգոր Շիրվանցու հսկողությամբ, իսկ «նարեկացիագէտ, հայագէտ» Պաղտասար Դպիրը սրբագրում էր՝ բառիս բուն և ոչ զուտ սրբագրիչային իմաստով:

¹³ Գիրք աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ... Պոլիս, 1726, էջ Բ (2):

¹⁴ Անդ, էջ Բ (2):

¹⁵ Անդ, էջ ՆԼԱ (431):

¹⁶ Անդ, էջ ՆԻԼ (427):

Նարեկացու «Գիրք աղոթից»-ի Պոլսի 1726 թ. տպագրության վերոհիշյալ գործիչներն ահա մեզ հայտնում են նաև, որ «Մատեան»-ը Աստվածաշնչի հետ բաղդատելու առաջին պատիվը պատկանում է Ոսկան Երևանցուն: Դա նրա բանասիրական մտանդացումների արգասիքն է, նրա գրչի առաջին փորձը: «...Ջի գրնարանս ոմանս յոյժ հարկաւորս, որք յիշեցեալք են ի սուրբ Մատեանս, կարդում ենք Պոլսի 1726 թ. տպագրության նախաբանում, գտեալ գորքանս դիզէ հանդէպ իւրաքանչիւր տողիցն համարովն հանդերձ ի լուսանցսն, որպէս լուսաւորեալ հոգի Ոսկան վարդապետն սկսեալ էր ու չէր կատարեալ՝ յինչ եւ իցէ պատճառէ»¹⁷: Հայագիտության մեջ շարունակ ֆենարկվող այն հարցին, թե Նարեկացին ինչպես և որքան է ռզմովում Աստվածաշնչից, 250 տարի առաջ ստուգապես պատասխանում են հայագիտական մտքի վերոհիշյալ մշակները (ըստ Երևույթին ճարեկացիագետներին հայտնի չի եղել այս կարևոր փաստը): Ուշագրավ է նաև, որ «Նախըզարար առ ջերմեռանդ ընթերցող» խորագիրը կրող առաջաբանը ավարտվում է Պաղտասար Դպրի «Աղեքս առ սուրբ Հոգիս Աստուած» խորագրով բանաստեղծությամբ: Ազգային ֆեարեբգակը աղերսում է երկնային թագավորի օգնությանը՝ «Հառաչանքների մատեան»-ի տպագրությունը հաջող ավարտին հասցնելու համար:

Առ անփութիս Աստուածութիւն,
Հոգւոյդ սրբոյ հրգօրի,
Աղեքս անկեալ աղաղակեմք
Եւ անկանիմք առաջի:

Յօղեա՛ ի քոյ շնորհաց ցօղմոյ,
Ի մեր հոգիս մեղսավի,
Տալով մեզ յայս ներքսկգրան,
Այսմ երջանիկ մատենի:

Ջի կարասցուք առ հասանիլ
Յաւարտ սորին բերկրալի,
Յօգուտ եանուրց մերազնէից,
Մանկանց սրբոյն Սիօնի:

Որ է Մատեան հառաչանաց
Նարեկացւոյն Գրիգորի,
Աստուածաբան վարդապետի,
Եւ նգնասէր հըսկողի¹⁸:

Այսպես, ուրեմն, 18-րդ դարում, երբ ավելի քան տասն անգամ տպագրվում է Նարեկացու «Մատեան»-ը, Պոլսի 1726 թ. հրատարակությունը, Պաղտասար Դպրի սրբագրությամբ, առանձնանում է նաև իրրև Աստվածաշնչի հետ բաղդատության

¹⁷ Անդ, էջ Գ (3): Որքան հայտնի է, Ոսկան Երևանցու տպագրած «Մատեան»-ի առանձին օրինակներ պահպանվում են միայն վենետիկի Մխիթարյան Միաբանության գրադարանում: Այստեղ պահպանվում է նաև «Մատեան»-ի 1726 թ. տպագրության համար հիմք դարձած ձեռագիրը՝ թիվ 896: Ձեռագրում Պաղտասար Դպրի բանաստեղծության տեղն ազատ է:

¹⁸ Անդ, էջ Գ (3):

հնթարկված առաջին ամբողջական օրինակ: Նարեկացու «Մատենան»-ի այս հրատարակությունը նկատի են ունեցել և ռուսերեն թարգմանել 1755, 1763 և այլ թվականների տպագրության հեղինակները: Այսպես, օրինակ, 1755 թ. Պոլսի տպագրության «Մանուցում վկայութեանց» խորագրի տակ նշանավոր հրատարակիչ Աստվածատուր Կոստանդնուպոլսեցու որդի Հովհաննես Դպիրը գրում է, որ զանազան պատճառներով՝ կրճատումներով են ներկայացվում նախորդ հրատարակության լուսանցային վկայությունները. «Նախ գի ումանց ասացուածոց բանից՝ որք էին անմիջապես ի մոյնոյ բնարանէն, քարց անկանելոյ է մէջն այլ բնարան, համարութիւն միայն եղաւ. ոչ կրկնելոյ գնոյն...: Եւ ումանց, ուր միջոցն հեռագոյն էր, կամ անդրանցեալ ի միւս տուփն եղաւ...: Ումանց տեղեաց վկայութիւնքն երբեւին ոչ գոյ համաձայն պատասխանողքն նկարագրին...: Զի ուր միում բանի երկու եւ երեք վկայութիւն գոյին՝ մինն եղեալ ի երկուց զանց արարաւ...: Զքազմաց ևս ոչ արարաք փոյթ՝ սակս չբաւելոյ տեղոյն ի լուսանցան»¹⁹:

**

18-րդ դարում Նարեկացու երկերի ձեռագիր և տպագիր օրինակների ժողովրդականացման այս ընթացքի մեջ զարգանում է նաև նարեկացիագիտությունը: Ժողովրդի մեջ դարձնում մտած, ժողովրդից սիրված ու պաշտված «Մատենան ողբերգութեան» երկը ստանում է գիտական մոր ճանաչում: Նարեկացիագիտական մի յուրատեսակ շարժում է սկիզբ առնում, և այդ շարժման կենտրոններն են դառնում Վենետիկը, Պոլիսը, Էջմիածինը և մի շարք այլ վայրեր:

Դարի կրթական, լուսավորական շարժման նշանավոր գործիչներ Մխիթար Սեբաստացին, Գրիգոր Շիրվանցին, Հովհաննես Բաղիշեցին, Կոմիտաս Բեռնարդյանը, Հակոբ Նալյանը, Պաղտատ Դպիրը, Պետրոս Նախիջևանցին, Իգնատիոս Զուղայեցին, Հովհաննես Կարենցին և այլք, յուրաքանչյուրը յուրովի են ներկայացնում Նարեկացու «Մատենան»-ը, նրա անձն ու վաստակը: Նրանք հավատալորի եռանդով շարունակում ու զարգացնում են Նարեկացու գրական ժառանգությամբ խանդավառված միջնադարի նշանավոր գործիչներ Վարդան Հայկազնի, Ներսես Շնորհալու, Ներսես Լամբրոնացու, Գեորգ Սկևռացու, Հովհաննես Բանասիրի, Գրիգոր Խլաթեցու և այլոց սկսած գործը՝ Հայոց նոր և ընդհանուր վերամորթվող գրական կյանքի բուռն պահանջներին համապատասխան:

¹⁹ Գիրք աղօթից..., Պոլիս, 1755 թ., էջ 575:

ԱՐՓԵՆԻԿ ՂԱԶԱՐՈՍՅԱՆ

Պատմ. գիտ. թեկնածու

ՍԵՎԱՆԻ ԱՆԱՊԱՏԸ ԺԷ - ԺԹ ԴԱՐԵՐՈՒՄ

Հայաստանում քրիստոնեության ընդունումից անմիջապես հետո Սևանա կղզին ևս դուրս չի մնում ծավալված ընդհանուր քրիստոնեական շարժումից: Հենց առաջին տարիներից սկսվում է կղզու անապատական կյանքը: Տրդատ թագավորի անմիջական հովանավորությամբ, Գրիգոր Լուսավորիչը կղզու մեհյանի տեղում կառուցել է տալիս Սուրբ Հարություն տաճարը և Սուրբ Կարապետ եկեղեցին ու կատարում նրանց նավակատիկը, կարգում Կեսարիայից բերված հոգևոր սպասավորներից մեկին¹: Կղզում վանական կյանքի համար նպաստավոր պայմաններ կային. այն հեռու էր բնակավայրերից, որը միաբանների հնարավորություն էր տալիս առանձնանալու, ազոթներով և ժամասացությամբ ու պատարագով իրենց ծառայությունը կատարելու: Իր հնությամբ ու տևականությամբ այս միաբանությունը Հայաստանի ամենահին և երկարակյաց անապատն է, որը գոյատևում է մինչև 20-դ դարի 30-ական թվականները:

Կղզու վաղ շրջանի պատմության վերաբերյալ մատենագրական տեղեկությունները 7-դ դարից են: Արաբական իրար հաջորդող արշավանքներից մեկի ժամանակ բշտամունդի մարտիրոս Սյունիքի անառիկ ամրոցների թվում հիշատակվում է նաև Սևանա կղզին (702):

Այնուհետև կղզում անապատական կյանքի վերածնունդ նկատվում է 9-րդ դարում և այն իրավացիորեն կապվում է Սուրբ Առաքելոց միաբանության առաջնորդ Մաշտոց եղվարդեցու հետ: Նրա անմիջական ղեկավարությամբ և Սյունյաց Մարիամ Բագրատունի իշխանուհու միջոցներով 871 թ. անապատում կառուցվում են Սուրբ Առաքելոց և Սուրբ Աստվածածին եկեղեցիները, բացվում դպրոց, հարստացվում տեղի մատենադարանը՝ "...ստանալով զբազմաթիւն գրոց սրբոց՝ զի լուսաւոր եղիցին աշխուժոց..."²: Այստեղ է. որ նա կարգավորում է Հայոց ժիսարանը, որն իր ամուսնով կոչվում է Մաշտոց³:

11-րդ դարում Սևանում հիշվում է Սարգիս Սևանցին՝ Գրիգոր Մագիստրոսի ժամանակակիցը և արժանավոր գաղափարակիցը, որին նա դիմում է հատուկ նամակով: Նորագույն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նա Սարգիս Անեցի նշանավոր գիտնական վարդապետն էր, որ բյուզանդական տիրապետության ժամանակ թողել էր Բաղախամայր "Անի" և Բաշվեղ Սևան, գլխավորել տեղի վանական միաբանությունը⁴:

¹ Ս. Փիլոյան, Սևանա վանքի պատմությունը, "Հովի" շաբաթաթերթ, 1906, էջ 132:

² Ա. Ղազարոսյան, Մաշտոց եղվարդեցի կաթողիկոս, "Էջմիածին", 1991, Ա. Գ. էջ 110-118: Ստ. Ասողիկ, Պատմություն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1895, էջ 180:

³ Կ. Գաճակեցի, Պատմություն Հայոց, Երևան, 1961, էջ 81:

⁴ Գրիգոր Մագիստրոսի Թղթերը, Այնթափդրապոլ, 1910, էջ 66-69: Կ. Մաթևոսյան, Սարգիս վարդապետ Անեցի, "Անի", 1992, թիվ 1, էջ 45:

13-րդ դարում աղբյուրներում հիշվում է Սարգիս մեծակյացը, որը մասնակցել է Ջաֆարիա Սպասալարի հրավիրած եկեղեցական ժողովին⁵: Դրանից հետո, 14-րդ դարի վերջին և 15-րդ դարի սկզբին, Հայաստանը ընկնում է կարակոյունլուների իշխանության տակ: Հավանաբար 14-րդ դարում, բուրք պարսկական կոթիկներից մեկի ժամանակ, պաշարվում է ամրոցը և թշնամին դիմում է խորամանկության. 40 արկղերով երկու բուրք վանառականներ ապրանք բերելու պատրվակով մտնում են Սևան և միայն պատահականությունն է փրկում կղզում հավաքված բնակչությանը⁶:

Լեմնի Թեմուրի մահից հետո նրա լայնածավալ կայսրությունը բաժանվում է որդիների միջև, և արյունալի պատերազմներ են սկսվում ավելի շատ տարածքներ ու ազդեցության ոլորտներ ձեռք բերելու համար: Իրանի հարավային և արևելյան մասերի տիրակալ Շահուդին պատերազմների ու ասպատակությունների ժամանակ դադարում է գործել Տաթևի վարդապետարանը: Հայոց արևելյան վարդապետարանը 15-րդ դարի 50-ական թվականներին հաստատվում է Սևանում՝ Դանիել Սևանցու բարոնապետությամբ, «Արևելեան տան վարդապետարան» անունով, որն իր գործունեությամբ իրավամար շարունակում է «Արևելեան համալսարանի»՝ Տաթևի կրթական ու մշակութային ավանդույթները մինչև 16-րդ դարի սկիզբը⁷:

17-րդ դարի սկզբին սկսվում է Իրանի Շահ Աբասի արշավանքը Հայաստան, որն ուղեկցվում է Հայոց մեծ տեղահանությամբ. դատարկվում են գավառներ, լճվում են շենքեր, ամայանում բալաֆներ, փակվում միաբանություններ: Դեպքերին ակնառես Առաքել Դավրիժեցի պատմագիրը գրում է. «...եկեղեցիք և վանորայք, ամենեքեան անշում և անպատիւք, բնաւին կողոպտեալք ի զարդուց և ի սպասուց...: Բազմաժամանակեայ փակեալ դրամքք խաւար...»⁸: Օրհասից հետո անտարբերության մատնված վանքերում լրիվ մոռացության էր տրվել դպրությունը, մշակութային կյանքը.⁹ Ոչ բնաւ ընթերնուին գիրս, այլ էին փակեալ և լռեալ մատենաքանդանայինք...⁹:

Այսպիսի հոգեկան և քաղաքական անկման ժամանակներում սկսվում է Հայոց անապատական կյանքի վերածնունդը՝ ավերածությունից ամենից քիչ տուժած Այուրեղաց աշխարհի, Տաթևի Հարանց Մեծ անապատում: Հայոց աշխարհում անապատական կյանքի երկրորդ վերածնունդը կապվում է Սարգիս եպիսկոպոս Սաղմոսավանցու և նրա աջակից, մաքրամաքուր վարժով հայտնի Կիրակոս Բահանայի անունների հետ: Նրանք 17-րդ դարի սկզբին Հարանց Մեծ անապատում հիմնեցին միաբանությունը, աղոթասեր կրոնակիցներից և աշխարհականներից: Սարգիս եպիսկոպոսը Կիրակոս Բահանայի հետ միասին, վերակազմեցին հայ լուսավորչաշեն անապատական կյանքը՝ սահմանելով դրա համար 7 հիմնական

⁵ Կ. Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1961, էջ 172:

⁶ Մ. Կիւմուշխանեցի, Պատմութիւն անցից անցելոց Սեվանայ վանուց, Վաղարշապատ, 1871, էջ 33-37: Այսուհետև Մ. Կիւմուշխանեցի, Պատմութիւն անցից:

⁷ Ա. Ղազարոսյան, Դանիել Բարոնապետը և Սևանի դպրոցը, ՊՐՀ, 1986, թիւ 3, էջ 99-107:

⁸ Ա. Դավրիժեցի, Պատմութիւն, Վաղարշապատ, 1896, էջ 290: Այսուհետև Ա. Դավրիժեցի, Պատմութիւն:

⁹ Նույն տեղում:

կանոններ¹⁰: Հաղթանակ անապատ գալիս էին Հայաստան աշխարհի բոլոր խոյրերից, նրանք՝ ում համար թանկ էին ավանդաբար քրիստոնեական առաջին դարերից եկող խստակրոն քարքերն ու մաքուր, անբասիր կյանքը: Այդպես էլ էջմիածնի հայրապետական Աթոռից, գծովվելով Մելիխեղեկ կաթողիկոսի հետ, Մարգարի մոտ անապատ է գալիս կարապետ եպիսկոպոս էջմիածնեցին: Սակայն Սարգիս առաջնորդի մահից հետո նրա ստեղծած անապատը գրեթե կորցնում է նախկին վեհափայլունը: Նրա սաներից շատերը մեկնում են այլ անապատներ, վերածնելու հայ ճգնական կյանքի ավանդույթները: Ներսես Մակաջու (գործել է Հիմ և Կոտուց կղզիներում) նման, կարապետ եպիսկոպոսը ևս գալիս է Սևանի անապատ՝ միաբանների կյանք մտցնելով Սարգսի սահմանած կանոնները ու քարեփոխումները, չրացառելով, իհարկե, անապատի հիմնադրաման ժամանակից եկող՝ համակեցության Բարսեղ Կեսարացու կանոնները: Սակայն, վանականները միայն ճգնական կյանքի խստությունները չէ, որ տանում էին, այլև աշխատում էին լուսավորություն մտցնել իրենց խցերը. «...Հատկապես արտաքին գիտությունները սովորելով, այն է. օտարազգի հեղինակների գրածները կարդալով, թարգմանելով և նրանց հետևելով մոտերը կազմելով»: Փոխադասությունը, փերականությունը, տոմարագիտությունը դառնում էին ուսուցման հիմնական առարկաներ:

Սևանավանքում ևս վերածնվում են Մաշտոց նվարդեցու, Դանիել Բարսեղյանի ուսուցման ավանդները, դպրոցը վերակենդանանում է, իսկ մատենադարանը համալրվում է նոր ձեռագրերով: Կարապետ եպիսկոպոսի սաներ Մխիթար եպիսկոպոսը և Բարսեղ վարդապետը շարունակում են իրենց ուսուցչի գործունեությունը:

Չնայած պարսկական իշխանությունների կատարած բռնություններին ու պատնետած զրկանքներին և վաճառականական հողերը գրավելուն, որի պատճառով ու անապատը զրկվել էր հայ բնակչության օժանդակությունից, գոյության տարրական միջոցներից, Սևանավանքի միաբանությունը իր գոյությունը պահպանում էր Հայաստանում և Վրաստանի հայաբնակ վայրերում ժողովավարությամբ հայրապետի միջոցների հաշվին¹¹:

Անապատական կյանքն այստեղ շարունակվում է հետագա դարերում ևս: 17-րդ դարի 50-ական թվականներին թիֆլիսեցի Սուլթան, Ջալ, Ջոհրապ Ջիթաղյան եղբայրների միջոցներով վերականգնում են Սևանի եկեղեցիները, իսկ նույն ժամանակից Խոջա Բեյրութ իշխանը հինգ կրպակ է նվիրում միաբանությանը¹²:

Այդ տարիներին Սեբաստիայից Մխիթարը (պապա Մխիթար Սեբաստացին), որ ուսանելու և լուսավորությունը տարածելու նպատակով շրջում էր

¹⁰ Նույն տեղում, էջ 288: 1. Հնագանդ լիճի առաջնորդի: 2. Ամեն գիշեր խոստովանություն անել: 3. Ամեն իմջ չուտել, խմամբ տաճել առաջին հերթին Աստուծո, ապա առաջնորդի Ոկատմամբ: 4. Պատ պահել, րացի շաբաթ, կիրակի և տերունական օրերից: 5. Որը մեկ ամսով հաշվել, հավասար րաժանելով կերակուր մեծի և փոքրի միջև, անպայման հաշանդանը շուրջ համապատասխան աղօթքն ասելուց հետո միայն: 6. Ամեն շաբաթ և տերունական օրերը հսկմամբ անցկացնել և երեկոյան անխափան պատարագ մատուցել: 7. Կոչնակի ազդից հետո, բոլորը միաբան՝ եկեղեցի գնալ լուսություն և խոնարհություն (Հմմտ. Մ. Կիրմուշխանցի, Պատմություն անցից, էջ 50-51):

¹¹ Ս. Փիլոյան, Ուլ. աշխ., էջ 619:

¹² Մ. Կիրմուշխանցի, Պատմություն անցից, էջ 618: Ս. Փիլոյան, Ուլ. աշխ., էջ 474:

Հայաստանում, 1692 թվականից սկսած շուրջ երկու տարի մնում է Սևանա կղզում՝ կրոնավորելու¹³:

18-րդ դարի 40-ական թվականներին Սևանի առաջնորդ Մարտիրոս Ջերեբեղյանցը ժողովրդից հավաքած միջոցներով նորոգում է Սուրբ Աստվածածին եկեղեցու տանիքը¹⁴:

1751 թ. աֆղան Ազատ խանը արշավում է Հայաստան: Նորից տարածվում է ավեր ու սով, դատարկվում են հազիվ վերականգնված շենքերն ու բնակավայրերը: Հրոսակները հասնում են Սևանա լիճ: Ափամերձ բնակչությունը պատսպարվում է Սևանա կղզում. «իբրև յամրոցի անմատոյց... յորս էին ումանց յերևելեաց, որպէս Մելիք Սարգիսըանն Գեղարձունայ և Ալահվերդի իւզբաշին, այսինքն հայր Գարրիէլ իւզբաշուն, ուր և Գարրիէլն էր մանուկ հասակաւ յայնժամ, շուրջ զամաւ փրկչին 1755»¹⁵:

Կղզում հավաքված մարդիկ Մենդյան տոների նախօրեին, պատարագի ժամանակ տեսնում են, որ ստոած ջրերի վրայով լեզգիները դանդաղ մոտենում են եկեղեցուն: Խուճապահար ժողովուրդը օգնություն է հայցում Հովհաննես վարդապետից. «...տալ ինքեանց հրաման փախչելոյ ի վերայ սառին...»: Վարդապետը, սակայն, հանգստացնում է հավաքվածներին և սառնասրտորեն շարունակում պատարագը: «Շնամին դանդաղ մոտենում է կղզուն. հանկարծ սառույցը կոտրվում է և միայն հատուկեմտ զինվորների է հաջողվում փրկվել: «Չսոյն նշմարիտ պատմութիւնս ասաց ինձ Նիկողոս անուն ումն քանաքեղացի հարիրաւմեան, որ տակաւին կենդանի է», հավաստում է հեղինակը¹⁶:

1750 թվականին Սիմեոն կաթողիկոսը այցելում է անապատ:

1825 թ. Սևանա կղզի է գալիս «իբրև խաղաղ նաւահանգիստ» Զաքարիա-Ռեհրության Տփիսխեցին: Մի քանի տարի անց, Սևանի առաջնորդ ընտրվելու կապակցությամբ, էլմիածնից միաբանություն է այցելում Մանվել Կյումուշխանեցին:

1828-1829 թթ. ռուս-պարսկական, 1829 թ. ռուս-թուրքական պատերազմներից հետո, Ռուսաստանի կայսրությանը միացված Արևելյան Հայաստան արտագաղթ սկսվեց ոչ միայն Պարսկաստանից, այլև Արևմտյան Հայաստանի տարածքից: Ներգաղթողները հաստատվեցին նաև Գեղարձունիում «... եեղան զեղան ազգ մեր ի զանազան կողմանց և ի գաւառաց օտար տէրութեանց... յորոց ի վիճակեալ

¹³ Մեզ է հասել մի ավանդություն. Սևանա անապատ այցելած 16-ամյա պատանու տեսողությունը վատանում է: Հուսահատված Մխիթարը Աստվածածնի եկեղեցում աղերսագին աղոթում է, Տիրամորից հայցելով, վերագտնելու կորսված իր տեսողությունը: Աստվածածինը խոստանում է օգնել պատանուն: Մխիթարը վերագտնում է իր տեսողությունը: Որոշ ժամանակ անց Ս. Աստվածածին եկեղեցում դրվում է Տիրամոր նկարը, որը 1898 թ. Մկրտիչ կաթողիկոսի երաւանով Սևանից տեղափոխվում է էլմիածնի վեհարանի նորարաց թանգարան, այս Երևանի պետական պատկերասրահ: Այսօր Ս. Առաքելոց վանքում եղած Տիրամոր պատկերը արված է Բիժմանի որդի Ավանեսի պատվերով, Սևանում Մխիթարի լինելուց 109 տարի հետո: (Ս. Փիլոյան, Եշվ. աշխ., էջ 475):

¹⁴ Մ. Կիլմուշխանեցի, Պատմութիւն անցից, էջ 59:

¹⁵ Զ. Գուլապան-Տփիսխեցի, Վէպ ծովակին Գեղամայ և երջանիկ կղզւոյ Սևանայ և որսյ բնակչացն, Մատառադարան, ձեռ. 10655, էջ 58բ: Այսուհետև՝ ձեռ. 10655: Մ. Կիլմուշխանեցու մոտ Ազատ խանի արշավանքը 1747 թ. է: (տե՛ս Մ. Կիլմուշխանեցի, Պատմութիւն անցից, էջ 60):

¹⁶ Ձեռ. 10655, էջ 59ա:

գիւղօրային Սեվանա եղեն բազմամարդ մերազն բնակչօք, և ամենեհեան շերմեռանդ յօժարութեամբ արդիւնատուք են սրբոյ անապատիս¹⁷:

Շաֆիից վերաբնակեցված հայութեան միջոցներով նորոգվում է կղզու Ս. Աստուածածին եկեղեցու տանիքը: 1836 թ. միաբանների կենցաղային պայմանների բարելավման նպատակով, թիֆլիսահայերի դրամական օգնությամբ, կառուցվում են խցեր: Միաբաններից մեկի՝ Ստեփանոս Լիմեցու մահից հետո, կտակով նախատեսված միջոցներով հիմնովին նորոգվում է Ս. Աստվածածին եկեղեցին՝ 1836 թ.¹⁸:

Հովհաննես Ղազախեցու վանահայրության տարիներին Սևանի անապատը դեռ առանձին թեմ էր, բայց 1830 թ. սկսած եկեղեցական հատուկ՝ «Պոլոժենիա»-ով Սևանի թեմը մտնում է նրևանի կոնսիստորիայի իրավասության տակ: Միաբանությունը պարտավոր էր ամեն տարի հաշվետու լինել տարեկան եկամուտի՝ մուտֆի և ելֆի մասին: Նոր օրենքով վանքին արտոնություն էր տրվում եկամուտի ավել լինելու դեպքում, ըստ իր ցանկության օգտագործել այն. իսկ պակասի դեպքում, հոգևոր առյուծ ինքը պետք է հոգար լրացնելու պակասը: Միաբանության գոյության աղբյուրները մնում էին միայն վանքի կալվածքները ու ժողովրդի կամավոր նվերները: Այդ տարիներից սկսած Սևանի կառավարիչը ընտրվում էր միաբանության կողմից ու հաստատվում բարձրագույն առյուծով, ապա նոր միայն կարգվում վանահայր¹⁹:

40-ական թվականներին Հովհաննես Անտոնյան Տփլիսեցու վանահայրության տարիներին Սևանավանք է այցելում Հովհաննես եպիսկոպոս Շախաբունյանցը:

Մինչ Մկրտիչ Շիրակցու վանահայրությունը կանանց մուտքը Սևանի անապատ արգելվում էր, թեև եղել են բացառություններ (Մարիամ բարեպաշտ իշխանուհին ու այս կամ այն աղետների ժամանակ կանանց և երեխաների պատսպարություններ), սակայն սրանք մասնավոր դեպքեր էին: 50-ական թվականներից ներսես կաթողիկոսի հրամանով գավառապետի այցելությամբ վերացվում է այս արգելիք²⁰:

Ներսես Առաքակեցի կաթողիկոսի ժամանակ գավառներում մտցվում է «տեսուչ հոգևոր գործոց» պաշտոնը. պաշտոնյան նշանակվում էր գավառների աշխարհիկ ազդեցիկ տներից: Նոր Բայազետում պաշտոնավարում էր Բարսեղ աղա Արծրունին: Կային նաև, այսպես կոչված, վանական կառավարության երեք անդամներ՝ տեղի միաբաններից: Հիշյալ կոնգակով կաթողիկոսը կարգի էր բերում վանական համակեցությունը (երահանգներ 10 կետից):

Այս տարիներին Սևանավանք կրոնավորելու է գալիս թիֆլիսեցի Ղուլի Թալրոյանցը: Նա թողնելով կնոջը և երեխաներին՝ դառնում է կրոնավոր Ղազար անունով: Նրա մահից հետո որդին՝ Ալեքսանդրը, 3500 ռուբլի է կտակում Սևանավանքին, պայմանով, որ այս գումարը 30 տարի հետո միայն պետք է հանվի բանկից և օգտագործվի Սևանում դպրոց բացելու համար²¹:

17 Մ. Կիւմուշխանցի, Պատմութիւն անցից, էջ 86:

18 Ս. Փիլոյան, Նշվ. աշխ., էջ 663:

19 Նույն տեղում, էջ 620-621

20 Ս. Փիլոյան, Նշվ. աշխ., էջ 664-665:

21 Նույն տեղում, էջ 665: Կտակագիրը կազմված է եղել 1890 թ. և ժամկետը լրացնում էր 1920 թ.:

Վանքի միջոցներով կղզում 1861 թ. շինվում է մառան և կանաչապատվում ամրոցը տարածքը, իսկ Ցամաքաբերդում՝ «դսի աներ» կոչվող հյուրանոցը և մի ամբար²²:

Կարապետ Բլրուլյանի (ավելի գործարար էր իր նախորդներից) վանահայրության տարիներին միաբանության միջոցներով և նվիրատվությունների հաշվին կառուցվում են մի շարք շինություններ²³:

1869 թ. սկսած, Սևանում բացվում է դպրոց, որն իր գործունեությունը շարունակում է մինչև 1880 թվականը²⁴:

1877-1878 թթ. ռուս- բուրժական պատերազմից հետո սկսվում է հայոց երկրորդ մեծ արտագաղթը Արևմտյան Հայաստանից, եկածների մեծ մասը հաստատվում են Սևանի ավազանում: Ռուսական կայսրության հրամանով 1879 թ. Գեղարձունիքը մտնում է Նոր Բայազետ գավառի մեջ, որն էլ իր հերթին մտնում է Երևանի նահանգի մեջ: Վերաբնակիչների մեծ մասը Արևմտյան Հայաստանի կոզովիտ գավառի Բայազետ ֆաղախից էին²⁵:

Դարավերջին, Գրիգոր վարդապետ Ակոռեցու վանահայրության տարիներին՝ 1892 թ. Սևանա կղզի է գալիս Սահակ վարդապետ Ամատունին, որն ցուցակագրում է վանքի ունեցվածքը, կազմում մուտքի և ելքի նախահաշիվը, հաշվառում ձեռագրերը²⁶:

1895 թ. Սևանի միաբանության առաջնորդ է դառնում Նոր Բայազետցի դպիր Սարգիս Փիլոյանը: Այս վանահոր ժամանակ վանքի հոգևոր պայմանները բարելավելու, միաբանների կրթական մակարդակը բարձրացնելու նպատակով դարաբաղի մեծահարուստ Ավետիս Ղուկասյանի միջոցներով 1897 թ. սկսվում է 1898 թ. ավարտվում է դպրոցական շենքի շինարարությունը: 1900-1901 թթ. կառուցվում է վանահոր կացարանը՝ Մովսես Բարսեղյանի ծախսերով, 1899-1910 թթ. հյուրանոց և մառան՝ Բայազետցիների միջոցներով, 1903 թ.՝ միաբանների խցեր²⁷:

²² Այս տարիներին մահանում է Մելիսն ճգնավորը, որն ապրում էր Սևանավանում միաբաններից հեռու Ս.Առաքյոց եկեղեցու մոտ, իր ձեռքով կառուցված խցում: 45 տարուց ավելի ապշխարել է Սևանի միաբանությունում, անդադար աշխատելով, ճանապարհներ բացելով, սենյակներ ավելացնելով: Նրա ձեռքերով փլատակների տակից առաջին անգամ բացվում է քրի գացաթին գտնող Ս. Հարություն կամ Գրիգոր, Լուսավորիչ եկեղեցին: Նա դարավերջի վերջին ճգնավորն էր, որ սնվում էր միայն հաց ու ջրով, հագնում քրդյա վերարկու, աղոթասեր էր ու ընթերցասեր և իր ամրոցը կյանքում կնոջ երես չէր տեսել ու անապատից չէր հեռացել: (Մ. Սմբատյան, Տեղագիր Գեղարձունի գաւառի, որ այժմ Նոր Բայազետ գաւառ, էջմիածին, 1898, էջ 118, 393): Այսուհետև Մ. Սմբատյան, Տեղագիր:

²³ Կառուցվում է երկու ֆարավանատուն Ելենովկայի ճանապարհին, երեք կրպակներ են ավելանում Նրևանում, ու մի ջրաղաց՝ Բայազետում, երկու տուն՝ Նրևանում: Դրանից հետո վանքապատկան են դառնում երկու գյուղ՝ Ցամաքաբերդ և Գումաձոր, երկու այգի՝ Նորքում ու Քարվանսարայում, երկու ֆարավանատուն և մի թերակղզի Ելենովկա գյուղի մոտ, վեց ջրաղաց Նոր Բայազետում ու Զանգվի վրա, չորս խանութ և երկու տուն Նրևանում, հինգ խանութ Թիֆլիսում: (Ս. Փիլոյան, նշվ. աշխ., էջ 776):

²⁴ Մ. Սմբատյան, Տեղագիր, էջ 128-127: Ս. Փիլոյան, նշվ. աշխ., էջ 775:

²⁵ Մ. Սմբատյան, Տեղագիր, էջ 36:

²⁶ Նույն տեղում, էջ 128-130:

²⁷ Ս. Փիլոյան, նշվ. աշխ., էջ 775:

Սակայն ո՛չ նվիրատվությունները, ո՛չ էլ նոր վանահոր շինարարական գործունեությունը չկարողացան վերականգնել միաբանության հին ավանդույթները: Եվ Խրիմյան Հայրիկի 1901 թ. կոնգակով Սևանավանքը անապատից վերածվում է աղաթատեղիի:

17-րդ դարից սկսած անապատում նկատվում է նաև մշակութային վերելք, չնայած որ այդ շրջանից մեր տեղեկությունները շատ քիչ են և միայն երկու ձեռագիր է հասել մեզ: Առաջինը Ս. Առաքելոց միաբանության վանականներին է նվիրել Մխիթար Եպիսկոպոսը 1644 թ. ժամագիրք, Սաղմոսարան՝ սովորելու և ծառայությունը կարգավորելու համար²⁸:

1660 թ. "ի առաջնորդութիւն Սուրբ ուխտիս Սևանայ Բարսեղ վարդապետի" մի Բառգիրք է ընդօրինակվում Մելիսեթ և Գրիգոր արեղաների համար: Բառգիրքը մի դասագիրք է, որ նրանք ստանում են միասին ոգտագործելու համար, իսկ նրանց մասից հետո էլ ձեռագիրը "անընդ յիշատակ լինի երկոյտասան սուրբ առաքելոցն...և այլ միաբան եղբարցն", որ "ի միասին վայելեցեն"²⁹: Բառգրքի գրիչն անհայտ է: Ձեռագրի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ընդօրինակմանը մասնակցել են երկու գրիչներ, որոնք էլ կատարել են ձեռագրի նկարագրադրումը:

Այս ժամանակ նորոգվում են Սևանի մատենադարանի ձեռագրերը³⁰, և դպրոցի սաների համար անհրաժեշտ նոր ձեռագրեր են ձեռք բերվում:

18-րդ դարում Սևանում ընդօրինակված ընդամենը մեկ ձեռագիր է հասել մեզ: Այն ժողովածու է, որ կազմել է իր օրդու համար Հովհաննես տիրացուն. "...քաղում աշխատանօք գործածելով ժողովեցաք ի սուրբ գրոց ի պէտա աստուածահան եկեղեցականաց և մանկանց Սիմփի... և թողաք զսա ի վայելում որդւոյ իմոյ Յովագիրմին..."³¹: Ժողովածուն իր մեջ ամփոփում է Ստեփանոս Այուսեցու, Սարգիս Շնորհալու, Գևորգ Երզնկացու, Գրիգոր Տաթևացու, Ներսես Լամբրոնացու մեկնությունները և բարոզները: Ձեռագրում եղած նյութերը ցույց են տալիս, որ այն ծառայել է որպես դասագիրք: Գրիչ Հովհաննեսը բավական հմուտ և վարժ նոսրգրով է ընդօրինակել նյութերը: Նրան հավանաբար ընդօրինակելիս օգնել է նաև որդին (ժողովածուի 51բ-52ա էջը գրված է անվարժ բոլորգրով): Հովհաննես գրիչը ձեռագրի ընդօրինակումը սկսել է Ս. Ամենափրկիչ վանքում և ավարտել Սևանա կղզում. "Գրեցաւ ՌՄՁԷ (1738) Բվին, արդ, սկիզբն մատենիս արարաք ի դուռն Սուրբ Ամենափրկչին և աւարտն" ի Սուրբ Սէվան գրդգին, ընդ հովանեաւ Ս.Աստուածածնին և Սուրբ Կարապետին և Սրբոց երկոյտասան առաքելոցն և Սրբոյ Սարգսի զօրավարին"³²: Ժողովածուում հավաքված հարուստ բովանդակությամբ բարոզները և մեկնությունները ենթադրել են տալիս, որ գրիչ Հովհաննեսն ոգտվել է Սևանի մատենադարանից:

18-րդ դարի վերջին և 19-րդ դարի սկզբին Սարգիս վարդապետի վանահայրության տարիներին Սևանավանքում փայլում էին երեք վարդապետ՝ Ռաֆայել, Մխիթար և Մակար: Ռաֆայել վարդապետը ծնվել է 1765 թ. Գանձակում, նախապես ուսանել է Հարանց մեծ անապատում, ապա կրոնի և

28 Ձեռ. 4106, էջ 186բ:

29 Ձեռ. 533, էջ 235բ:

30 Ձեռ. 7839, էջ 359ա::

31 Ձեռ. 6958, էջ 270ա-270բ:

32 Նույն տեղում, էջ 270բ-271ա:

գիտության մեջ կատարելագործվելու նպատակով հաստատվում է Սևանավան-
ում: 1793 թ. ձեռնադրվում է արեղա և ապրում առաքինի կրոնական կյանքով և
էր "վարժապետ կրօնաւորաց"³³:

19-րդ դարում նոթից ընդօրինակվում և նկարագրողվում էին ձեռագրեր:
Մեզ հայտնի են հետևյալ գրիչները և նրանցից մեզ հասած ձեռագրական
ժառանգությունը:

ա. Մխիթար և Աստվածատուր գրիչներ- Ռափայելի մոտ էր սովորել և իր
ուսուցչի նման "գրասէր և աղօթասէր" էր Մխիթար վարդապետ Շամբորեցին³⁴:
Նկատելով վանքի մատենադարանում Ս. Գրգորի պակասը, նա ընտիր օրինակներ է
բերել տալիս և հանձնարարում ընդօրինակել: Այդպիսի ընդօրինակություններից
մեկի գրիչն էլ ինքն է: Դա ներսես Լամբրոնացու Սաղմուսաց մեկնությունն է,
պատվիրատուն՝ Եփրեմ կաթողիկոսն է³⁵: Գործը մնացել է անավարտ, բե ինչու՝
պարզում է նույն գաղափար օրինակից կատարված մի այլ ձեռագրի հիշատա-
կարան: Այս ընդօրինակության գրիչը Աստվածատուրն է՝ Մխիթար վարդապետի
աշակերտը: Նա երևանցի Հովհաննես Քեալյան իշխանի որդին է: Սովորել է
Սևանավանում, աշակերտել Ռափայել և Մխիթար վարդապետներին: Ուսուցիչ-
ների մեկից հետո հաստատվում է Լիւմ և Կտուց անապատներում, ուխտագնա-
ցության մեկնում նրուսաղեմ, տունդարձի ճանապարհին լինում Կիպրոս
կղզում³⁶:

Աստվածատուր Քեալյան-Հարությունյանի ընդօրինակությամբ միայն այս
ձեռագիրն է հասել մեզ: Մեկնությունը գրիչը սկսել է 1815 թվականին և
ավարտել 1819 թ. "ի լուսաւորչակերտ և յառաքինէջ, ի հրեշտակաբնակ սուրբ
անապատս Սէվան, որ է ի Ժովակիս, մէջ Գեղամայ"³⁷: Հիշատակարանից
իմանում ենք, որ Աստվածատուր գրիչը իր ուսուցչի՝ Մխիթար վարդապետի հետ
Եփրեմ կաթողիկոսի պատվերով սկսել են ընդօրինակությունը դեռ 1815 թ.:
Կաթողիկոսը գրիչներին տրամադրել է ընտիր օրինակ և թուղթ: Նրանք գործը
րաժանել են իրար մէջ (առաջին չորս կանոնները Մխիթար վարդապետը պետք է
որտագրեր, իսկ մնացած չորսը՝ Աստվածատուրը): Արտագրելիս, սակայն
գրիչները նկատում են, որ թուղթն անորակ է և դադարեցնում են աշխատանքը:
Ստանալով անհրաժեշտ ֆանկությամբ նոր թուղթ, որ նրանց տրամադրել էր
բարեպաշտ Մեսրոպը (նա է հոգացել նաև ձեռագրի ստեղծման համար բոլոր
ծախսերը), նրանք վերսկսում են ընդօրինակությունը: Մխիթար վարդապետը
երկու կանոն գրելուց հետո, անառողջ լինելու պատճառով կիսատ է թողնում
ընդօրինակությունը և այդպես անավարտ վիճակում այն ամփոփում է մի
մատյանում³⁸: Նա հանձնարարում է իր աշակերտին կատարել կաթողիկոսի
ցանկությունն ամբողջելին:

Գրիչը մեկ առ մեկ հիշում է նրանց, ովքեր օժանդակել են իրեն ավարտին
հասցնելու համար սույն ձեռագիրը. պարոն Մերոպին, երուսաղեմցի Զաֆարիա

³³ Ձեռ. 1850, էջ 80բ: Մ. Կիւմուշխանեցի, Պատմութիւն անցից, էջ 71:

³⁴ Մ. Կիւմուշխանեցի, Պատմութիւն անցից, էջ 71:

³⁵ Ձեռ. 3760, էջ 100բ:

³⁶ Մ. Կիւմուշխանեցի, Պատմութիւն անցից, էջ 76-77:

³⁷ Ձեռ. 3809, էջ 514բ-515ա:

³⁸ Ձեռ. 3760:

վարդապետին, տիրացու կարապետին և "զառ Քրիստոս փոխեցեալ" իր Մխիթար ուսուցչին: Ավարտելով այն, Աստվածատուրը նվիրում է "ի վայելս և ի շահ" Սևանա անապատին³⁹:

բ. Զաքարիա Գուլասայան Տփխիսեցի - Սարգիս վարդապետի առաջնորդութեան տարիներին այստեղ է գալիս Զաքարիա Գուլասայան-Բեհրուքյան Տփխիսեցին, գծոված կաթողիկոսի և Ներսես Աշտարակեցու հետ ու, հավանաբար, վտարված էջմիածնի միաբանութիւնից: Տեսնելով միաբանների անտեղյակութիւնը Սևանի անապատի անցյալին, Սարգիս վանահոր պատվերով գրում է Առաքելոց միաբանութեան պատմութիւնը՝ դեպքերի շարադրանքը հասցնելով մինչև 1825 թ.: Գուլասայանի սույն աշխատանքը՝ "Վէպ ծովակին Գեղամայ և երջանիկ կղզւոյն Սևանայ և որոյ բնակչացն" ունի երկու՝ ընդարձակ և համառոտ խմբագրութիւններ: Այն շատ կարևոր սկզբնաղբյուր է ոչ միայն այս անապատի, այլև հայ անապատական կյանքի ուսումնասիրութեան համար: "Վէպի" երեք հիմնական գլուխներում՝ "Յաղագս եկեղեցական պաշտամանց այժմեան եղելոց", "Յաղագս բարուց և վարուց նոցին", "Յաղագս ապրելաց թէ ուստի" ունին՝ հեղինակը հանգամանորեն տալիս է անապատի տնտեսական և հոգևոր կյանքի բոլոր մանրամասները: Գրքը բաղկացած է ժԲ գլխից, ունի համառոտ առաջաբան և վերջաբան: "Վէպի" համառոտ խմբագրութեան մեջ աշխատանքն ավարտվում է Հայկ նահապետին նվիրված մի գողտրիկ բանաստեղծութեամբ⁴⁰:

1828 թ. Սարգիս վարդապետը տասնմեկ տարի վանահայր լինելոց հետո կամավոր հրաժարվում է միաբանութիւնը գլխավորելուց: Միաբանները նոր թեկնածու են առաջադրում Հովհաննես Տեր-Մարտիրոսյան Ղազարեցուն: Նա, սովորելով Հովհաննես Տեր-Ավետիսյանի դպրոցում, 17 տարեկան հասակում գալիս է Սևան և ուսանում Ռաֆայել, Մակար ու Մխիթար վարդապետների մոտ, ինչպես նաև աշակերտում է Աստվածատուր Քեալյան դպրին: Տեր Հովհաննեսի վանահայրութեան նշանակման առիթով, միջնորդագրով, էջմիածնից անապատ է գալիս Մանվել Կյումուշխանեցին: Նրա այցը շատ նպաստավոր է լինում անապատի համար: Երկու ամսում նա ուսումնասիրում է միաբանութեան իրական վիճակը, կազմում միաբանութեանը պատկանող եկեղեցական անոթների, վանքապատկան ունեցվածքի ու մատենադարանի ձեռագիր և տպագիր մատյանների ցուցակներ⁴¹:

գ. Մանվել Կյումուշխանեցի - 1830 թ. Սևանավանքում ավարտում է անապատի պատմութեանը նվիրված իր երկը. "Պատմութիւն անցից անցելոց Սեվանա վանուց" վերտառութեամբ: Սա վանքին նվիրված առաջին հրատարակված մենագրութիւնն է: Աշխատանքի ինքնագիր օրինակը պահվել է Սևանի մատենադարանում⁴²: Հեղինակը սկսում է կղզու պատմութեան շարադրանքը Գրիգոր Լուսավորչի կողմից անապատի հիմնադրումից (առաջին անգամ շրջանառութեան մեջ է դնում նաև վիմական արձանագրութիւնները) և հասցնում է մինչև 1830 թ.:

39 Նույն տեղում, էջ 515բ:

40 Զեռ. 8074, էջ 27բ:

41 Մ. Կյումուշխանեցի, Պատմութիւն անցից, էջ 80, 83: Ս. Փիլոյան, Եզվ. աշխ., էջ 820:

42 Մ. Կյումուշխանեց, Պատմութիւն անցից: Զեռ. 7554

դ. Անտոն գրիչ - Նորընտիր վանահայր Հովհաննես վարդապետը նախորդներից ավելի քայստավոր եղավ: Սևանի ավազանը նորից բնակեցվեց հայերով, և հայկական տարրը գերիշխող դարձավ, որը նպաստեց վանքի կենսական միջոցների մեծացմանը: Միաբանության 22 անդամներից առանձնանում էին Հարություն սարկավագ Թիֆլիսեցին, որը ծանոթ էր "Քերականութեան, նարտասանութեան և թուրքանութեան", միաժամանակ "ջանացող դասասել" էր⁴³: Կարապետ Երևանցին, թեև կուրացել էր մանուկ հասակից, սակայն անգիր գիտեր ժամերգությունը, սաղմոսներն ու շարականները: Մեխնոն Թիֆլիսեցին՝ "թագմարուեստ, արի և անձանձիր աշխատաւոր ի շինուածս վանուց, հիւսնութեան, որմնադրութեան, մոմկազմութեան և յարակալ պարտիզպանութեան"⁴⁴:

Եվ վերջապես "արագագիր, ընթերցասէր" Անտոն արեղա Թիֆլիսեցին: Նրա ընդօրինակությամբ երեք ձեռագիր է հասել մեզ, մի մեկնություն էլ գրվել է նրա պատվերով: Անտոն արեղան 1828 թ. Սևանա կղզում գրիչ Հովհան Վանանդեցու օրինակած "Կոռնելիոս Ալափիտացու Մեկնութիւն գրոյն Մովսիսի" գործի ստացողն է: Սկսելով աշխատանքը, Հովհան Վանանդեցին տեղեկացնում է. "Եւ նորոգ ընդօրինակեալ ի Յօհաննու Միրզոյեան Վանանդեցոյ... յամի Տեառն 1828 և ի թուին Հայոց ՌՄՀԷ (1828), ի նոյեմբերի 28 սկսեալ յերջանիկ կղզին Գեղամայ": Այստեղ էլ ավարտում է ձեռագիրը 1829 թ. փետրվարին⁴⁵: Ստանալով մեկնությունը, Անտոն արեղան միայն 7 տարի անց հանձնում է անապատին ի պահ, պատվիրում չվանառել, չնվիրել, այլ պահել անապատում: "Այս հինգ տարիցն Մովսեսի Մեկնութեան գիրքս ես՝ Անտոն արեղայս եդի յիշատակ ի սուրբ անապատս Սևանու, ըստ խնդրի ի միաբանութեանց, ոչ ի վառհառ հանիլ, և ոչ քաշիել ումեք, և ոչ իւրացանել, այլ ի հասարակութեան միջի պահպանել, 1836, 14 յուլիսի"⁴⁶:

Աւանդին ձեռագիրը, որ մեզ է հասել Անտոն արեղայի ընդօրինակությամբ, Հակոբ Կարենցու (Սիմոնյանի) "Մեկնութիւն Երզոց Երզոյն Սողոմոնի" գործն է: Գրիչը աշխատանքը սկսում է Հակոբ Կարենցու աշակերտ և պատրիարքարանի նոտար (Երուսաղեմի) տիրացու Հովհաննեսի խորհրդով և ինքնագիր օրինակից: "Ձոր օրինակեալ ի բուն օրինակէ և ի ձեռագրէ հեղինակի ի նորին աշակերտ և պատրիարքարանի նոտար տիրացու Յովհաննիսէ և ի պաշտօնեայէ խորհրդոյ"⁴⁷: Մեկնությունը գրիչը ավարտում է մեկ ամսում՝ սկսելով "յամի Տեառն 1833 մայիսի 6... ի նոյն վասն յերջանիկ կղզւոջն Սևանու" ու ավարտում՝ "...1833 յունիսի 12-ի..."⁴⁸: Երկու տարի անց, 1835թ. Անտոն արեղան Երզ Երզոցի Մեկնությունը հանձնում է Սևանավանքի մատենադարանին՝ ի պահ⁴⁹:

Այդ նույն թվականի ապրիլի 5-ին Անտոն արեղան սկսում է մեկ այլ ձեռագրի ընդօրինակություն՝ "Գևորգ Սկևռացու Մեկնութիւն Յսայեայ" և ավարտում է

43 Մ. Կիւմուշխանեցի. Պատմութիւն անցից, էջ 89:

44 Նույն տեղում, էջ 89-91:

45 Ձեռ. 4030, էջ 1ա, 1բ:

46 Նույն տեղում, էջ 1բ:

47 Ձեռ. 4031, էջ 1:

48 Նույն տեղում, էջ 424:

49 Նույն տեղում:

կարճ ժամանակամիջոցում՝ ու արդեն 1833 թ. հուլիսի 17-ին հանձնում է Սևանի մատենադարանին՝ ի հիշատակ⁵⁰:

Վերջին ձեռագիրը, որ հասել է մեզ 1835 թ. ընդօրինակված Պետրոս Բերդուլյանի "Աղբյուր բացեալն" է: Անտոն Թիֆլիսեցին նաև ձեռագրի ստացողն է: Այս ձեռագիրն ևս գրիչը սկսելով փետրվարի 20-ին ավարտում է 10 օրում⁵¹: Անտոնը հմուտ և փորձված գրիչ էր, ուստի պատահական չէ, որ այս ձեռագրում նա միջամտում է ձեռքի տակ եղած գաղափար օրինակին, օժտելով այն համապատասխան ցանկերով, հեշտացնում է ձեռագրից օգտվելը: "Վերջ ցանկիս Աղբյուր բացեալ գրքոյս, որոյ առաջին գաղափար ոչ ուներ ցանկ. բայց դիւրագոյտ լինելոյ գհարկաւոր խնդրելին, մեք ըստ մտաց մերոց յօրինեալ եղաք գլխահամարով և բոթահամարով հանդերձ, ընդ որ ունի ընթերցողն ընդունայն ոչ շեղիլ շրջըրջելով բերթս սորին"⁵²: Ցանկի վերջում Անտոն արեղան բողբ է հիշատակարան, ուր խնդրում է ընդօրինակության մեջ հանդիպող սխալների համար մերել իրեն. "գի ըստ որում զբաղեալ եմ հօգւոյ ցաւօք և մտածմամբ գանազան ելից կենցաղոյս, որ իբրև վիշապ պաշարեալ զելս ընթացից"⁵³: Ավարտելով ձեռագիրը, 1835 թ. հունիսի 17-ին գրիչը նվիրում է այն Սևանի անապատին, նույնատիպ պատվիրաններ տալով միաբանության անդամներին, ինչ նախորդ ձեռագրերի նվիրման ժամանակ տրվել է. "խնդրի ի միաբանութեանց ոչ ի վաճառ հանել և ոչ բաշխել ումէք և ոչ իւրացուցանել, այլ ի հասարակութեան միջի պահել"⁵⁴:

Դժվար է ասել, թե քանի այլ ձեռագիր է ընդօրինակել Անտոն արեղան, սակայն մի բան ակնհեր է, նա շատ հմուտ, արագագիր և գեղեցկագիր գրիչ է: Ինչպես տեսանք հիշատակարանային վկայություններից, նրա ոչ մի ձեռագրի ընդօրինակությունը մեկ ամսից ավել չի տևել: Գրչի շատ փորձված լինելը ժամանակին նկատել է և Մանվել Նյումուշխանեցին և խնդրել Սևանավանքի պատմությանը նվիրված իր աշխատանքը նորից արտագրել. "Անտոն արեղայ Թիֆլիսեցի աշաւուրք, խորախորհուրդ, արագագիր, ընթերցասէր, որ խոստացեալ է՝ զայս Պատմութիւն միւսանգամ իւր գեղեցիկ գծիւքն ծրել, առ ի դիւրընթերց լինել բանասիրաց և ածանցեալ ի մէջ միաբանութեանց..."⁵⁵:

Ե. Պողոս Սևանցի գրիչ-Վոտայքի Բարձրաբի գյուղի Ղազարի և Աննայի որդին կրթվել է Սևանի անապատում և զբաղվել գրչությամբ: Նրա ընդօրինակությամբ մի ձեռագիր է հասել մեզ, Աղոթագիրք, որն արտագրվել է մահտեսի Խաչատուր Թիֆլիսեցու խնդրանքով: Գրիչն այն ընդօրինակել է տպագիր օրինակից և կատարել զարդանկարները: Աղոթագիրքն ավարտվում է "ի թվին ՌՄԾԵ (1808), ի գոգին Սուրբ Սէվանայ..."⁵⁶:

գ. Սիմեոն Օաջեցի գրիչ- Հովհաննես առաջնորդի ժամանակ Սևանում ձեռագիր է ընդօրինակել միաբանության անդամ մահտեսի Սիմեոն Տեր-Հովհան-

50 Ձեռ. 3761, էջ 3ա:

51 Ձեռ. 4018, էջ 1ա, 74բ:

52 Նույն տեղում, էջ 75բ:

53 Նույն տեղում, էջ 75բ:

54 Նույն տեղում, էջ 1բ:

55 Մ. Կիւմուշխանցի, Պատմութիւն անցից, էջ 88:

56 Ձեռ. 2530, էջ 48բ:

նրսյան Շաֆեցին: Նրա ընդօրինակությամբ մեզ է հասել 4 ձեռագիր: Շաֆեցին համարվել է նաև մատենագիր՝ ինքնուրույն հեղինակ աստվածաբանական բնույթի "Յուպ ֆահանայից" և "Կերակուր ֆահանայից" գործերի, որոնց ձեռագրերն էլ քնակամաքար հեղինակային ինքնագրեր են⁵⁷:

Ջորս ընդօրինակություններից երկուսի տեղը անհայտ է, սակայն բոլոր ձեռագրերի հիշատակարաններում անփոփոխ ճանաչողական վկայությունների առկայությունը մեզ հնարավորություն է տալիս պնդելու, որ այս երկու ձեռագրերը ևս գրվել են Սևանում:

Սիմեոն Շաֆեցու մեզ հասած ընդօրինակություններից առաջինը "Հարցմունք Աթանասի և Պատալիսանի Կիւրղի Նրուսաղէմացոյ" երկն է, օրինակված 1838 թվականին: Ձեռագիրը նվիրված է Սևանի անապատին. "...բարեպաշտ և սրբակրօն եղբարցն իմոյ նախ՝ տէր Սարգիս և տէր Յարութիւն Տէր-Յօհաննէսեան և երկրորդ՝ Պետրոս և Պօղոս Մինասեան, նաև Հայրապետ դպրի հոգևորն իմոյ"⁵⁸:

1846 թ. նա Սևանում Նոյազար Վանեցու համար օրինակում է Գրիգոր Տաթևացու "Քարոզգրիքը: Քարոզները վերցված են Զմեռան հատորից, նյութեր կան նաև այլ վարդապետների"՝ նաև այլոց սրբոց գրոց՝ գործերից: Ավարտելով ձեռագիրը Սիմեոն Շաֆեցին հանձնում է այն ստացողին՝ ի վայելումն "յորդուց որդիս"⁵⁹:

Երբեմն ձեռագրերի հիշատակարաններում միարանության անդամների թվարկումն էլ բավական է լինում նրանց գրման վայրը որոշելու համար: Սիմեոն գրչի մյուս երկու ձեռագրերը հենց այդպիսիք են:

Մատենադարանի թիվ 3164 ձեռագիր՝ "Խրատանք եւ հոգեշահք քարոզ երանելոյն Բարդուղիմէոսի և Պետրոսի Արագօնացոյն" մատյանի թվականը հայտնի է, գրության վայրը՝ ոչ: Նախագաղափար օրինակը գրչին տրամադրել է պարոն Գասպարը: Ընդօրինակումն ավարտվում է 1838 թ. մայիսի 16-ին և ընծայվում "բարեպաշտ և սրբակրօն եղբարցս իմոյ նախ՝ տէր Սարգիս, և տէր Յարութիւն Տէր Յօհաննէսեան, երկրորդ Պետրոս և Պօղոս Մինասեան նաև Հայրապետ դպրի հոգևորն իմոյ" և այլ հոգևոր այրերի:

Քանի որ նախորդ երկու ձեռագրերը, ինչպես և այս քարոզները գրված են միարանության միևնույն անդամների համար, ու ընդօրինակող գրիչն էլ այդ միարանության անդամներից է, "ի միարանութենէ անապատին Սևանայ", ուրեմն այս ձեռագրերն էլ գրված են Սևանում:

Մշտոցի անվան Մատենադարանի թիվ 9728 ձեռագիրը Հովհան Ոսկերբրանի "Մեկնութիւն Մատթէի" գործն է: Չունի ժամանակը և վայրը հաստատող վկայություն: Մատենադարանի ձեռագրերի համառոտ ցուցակում այն համարել են մինչև 1835 թ. ընդօրինակված: Դրա համար, հավանաբար, հիմք է ծառայել ձեռագրի վերջում կցված "1835 հունիսի 1-ին Ցամաքաբերդ գիւղի վարելահողքն, չափեալ գրեցաւ այսմ ցուցակի յանուանէ իւրաքանչիւր անձանց" ցուցակը (175ա-180բ)⁶⁰: Ձեռագրի ուսումնասիրությունից պարզվեց, որ այն ձեռագրին կցվել է կազմելու ժամանակ և կարող է ձեռագրի ընդօրինակումից տարիներ առաջ գրված լինել: Ցուցակի բուղթը շատ է տարբերվում ձեռագրի թղթից, այն ավելի

⁵⁷ Ցուցակ ձեռագրաց Մատենադարանի (համառոտ), Կ. Ա., էջ 1040:

⁵⁸ Ձեռ. 3398, էջ 1բ, 113բ:

⁵⁹ Ձեռ. 5703, էջ 1ա:

⁶⁰ Նույն տեղում, էջ 175ա - 180բ:

հին է, խունացած և կորստից փրկվելու համար կցվել է ձեռագրին: Ավարտելով **ձեռագիրը**. "յորժամ շահեսքի՜ք ինչ ի սան է և անդ յիշեսքի՜ք և դուք անարժան. անպիտան և ապարան վարձկանս Սիմեոն Տէր Յովհաննէսեան" խնդրում է գրիչը և նվիրում մատյանը նույն միաբաններին⁶¹:

1841 թ. Սիմեոն Շաֆեցու ընդօրինակությամբ մեզ է հասել երկու ձեռագիր "Դուպ ֆահանայից" և "Կերակուր ֆահանայից" խորագրերով: Գրիչն այն ընդօրինակել է տպագիր օրինակից: Աշխատանքի հեղինակը Պողոս ֆահանա կաղզվանցի է. որ կազմել է սույն գործերը "ազնվազարմ Միրինանեսան Մկրտչի" պատվերով: Առաջին երկի սկզբում եղած նախաբանից իմանում ենք, որ հեղինակը հավաքել է նյութերը "ի սրբոց մատենից աստուածայնոց և ի սրբոց վարդապետաց իմաստնոց ... հրամանաւ տեառն Զաֆարիայ ազգասէր և քարեկարգ պատրիարքի ի Կոտանդնուպոլիս"⁶²: Այն քաղկացած է Ա-ԺԷ (1-17) պրակից և 55 գլխից ("Գլուխ Ա, Յաղագս վկայութեանց սերտելոց" (ճա-ճա) և ավարտվում " ՄԻ "Վասն արժանութեան մարդոյ" (132բ-134ա), վերջում ունի "Ցանկ գրոյս" (134բ-136ա): Այստեղ ավարտվում է ԺԷ պրակը (ցուցիչ էջի ստորին լուսանցքում), իսկ էջի վերևում գրչի ձեռքով գրված է անավարտ մնացած՝ հաջորդ գործի խնդրագիրը. "Կերակուր"⁶³: Ուրեմն գրիչը նպատակ է ունեցել օգտագործել ԺԷ պրակի վերջին էջը և ամբողջացնել աշխատանքը, սակայն հարմարությունից ելնելով, "Կերակուր ֆահանայից"-ն օրինակել է առանձին: Այս ենթադրությունը հաստատում է հաջորդ ձեռագրի ուսումնասիրությունը: Այն գրված է նույնորակ քղթի վրա, նույն նոսրգրով: Բաժաված է պրակների, "Ա" պրականիչը դրված է նախորդ ձեռագրի համար նախատեսված "ԺԸ" պրականիչի կողքին, ապա "Բ" պրակ և պրակակալումը շարունակվում է հաջորդաբար⁶⁴: Այս երկու ձեռագրերի նյութերը հավաքել է Զաֆարիա պատրիարքի եղբորորդին՝ Պողոսը: Առաջին ձեռագրի սկզբում եղած նախաբանից իմանում ենք նաև, որ գործի կազմման ժամանակ Պողոս կաղզվանցից օգտվել է Հին և Նոր Կտակարաններից, Գրիգոր Լուսավորչի, Ներսես Շնորհալու, Հովհաննես Երզնկացու, Գրիգոր Տաթևացու գործերից: Խմբագիրը դրանք "դասաւորեալ ըստ պատշանին, որ կոչի Յուպ ֆահանայից": Մաշտոցի անվան Մատենադարանի համառոտ "Յուցակ ձեռագրացի" մեջ սույն աշխատանքն իր երկու մասով (ձեռ. 3558, 3559) սխալմամբ համարել են Ամեհոն Շաֆեցու խմբագրություն, իսկ ձեռագիրն էլ, հեղինակային⁶⁵: Սակայն հիշատակարան-նախաբանի վերջում եղած "յառ հուսկ յետոյ միայն Հայր վերիւ յիշեցէ՜ք մեղապարտ և անպիտան մահտեսի Սիմեոն Յովհաննէսեան" տողերն են գրչինը և այս հիշատակարանն ամփոփող, սույն աշխատանքի իմաստն ամբողջացնող 12 տող չափածո խոսքը⁶⁶:

61 Նույն տեղում, էջ 173բ:

62 Ձեռ. 3558, էջ 2ա:

63 Նույն տեղում, էջ 136ա:

64 Ձեռ. 3559, էջ 3աբ:

65 Յուցակ ձեռագրաց Մատենադարանի (համահոտ), Կ.Ա. էջ 1040:

66 Ձեռ. 3558, էջ 5ա:

Գրքոյկս ազնիւ յոյժ գովական,
Քահանայից տառշահական ...

"Կերակուր ֆահանայիցը" (ձեռ. 3559) ավելի ստվարածավալ է, ունի 26 գլուխ, (Գլուխ Ա Վասն արքայապատիւ արժանապատուութեան ֆահանայից (2ա-3ը) մինչև Գլուխ ԻԶ Վասն արքայապատիւ ֆահանայութեան՝ պատմութիւն վասն որդաց և վասն խորութեան նոցա) վերջում՝ "Յանկ գլխոց գրքանս": Կից ունի նաև "Վասն ներելի մեղաց" (61ը-62ը), "Վասն ժամանակի" (62ը-63ա), "Ասացեալ սրբոյն Յակոբ պատրիարգի" (64ա-66ա) գործերը: Ձեռագրում բացակայում է ավարտման թվականի վկայությունը⁶⁷: Սակայն մի բան պարզ է, որ սույն ձեռագիրն օրգանական շարունակությունը լինելով նախորդի, պետք է որ նույն տարում ավարտված լինի, ինչ "Յուպ ֆահանայիցը": Ավարտելով այն գրիչը մի հիշատակարան է թողնում պահպանակի վրա. "Արդահանեալ գրոց Կերակուր ֆահանայից աշխատսիրութեամբ մահտեսի Սիմէոնէ Տէր Յօհանէսեան Շահնջույ, ի միարանութենէ Սուրբ անապատին Սևանայ"⁶⁸: Ընդհանրապես այս գրչից մեզ հասած քոլոր ձեռագրերը նույն թվանդանությունն ունեցող հիշատակարան ունեն և իրարից տարբերվում են լոկ գրման ժամանակով:

1840-ական թվականներին Հովհաննես Անտոնյան Տփիսիսեցու վանահայրության տարիներին Սևանավանք այցելեց Հովհաննես Եպիսկոպոս Շահիսանթունյանցը, երբ ամբողջացնում էր իր "Ստորագրութիւն էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ" մեծածավալ աշխատանքը: Մեծապես օգտվելով Զ. Գուլասայանի՝ վանքում պահվող աշխատանքից, իր ուսումնասիրության մեջ տեղ հատկացրեց նաև միարանութեան ներքին կյանքի շարադրանքին: Պատմությունից խմանում ենք, որ վանքում դեռևս շարունակական են համակերպության հնուց եկող Բարսեղյան կանոնները⁶⁹:

է. Պողոս Պետրոսյան կոտանդնուպոլսեցի— Սևանավանքում 1850 թ. գրում է "Ստորագրութիւն Սևանայ" մեծագրութիւնը, որն իր մեջ ընդգրկում է "Կանխագեկոյց տեղեկութիւնք", "Ստորագրութիւն Սևանայ", "Զի"նչ էր առ հնովք այս կղզի, և ուստի անունս Սևան" այսպիսի 16 փոքր գլուխներ մինչև Սարգիս վարդապետի վանահայրությունը⁷⁰:

ը. Հարություն Մարմանյան գրիչ— Հովհաննես Տփիսիսեցուն փոխարինած Մկրտիչ վարդապետ Շիրակացու առաջնորդության տարիներին, միարանության անդամ Հարություն արեղան (հետագայում՝ 1861 թ. դառնում է միարանության առաջնորդ) ընդօրինակում է մի ձեռագիր. "Աւարտեցաւ Կանոնգիրքս ի փառս... ի յօգուտ մանկանցն եկեղեցւոյս, Աստուածաբան ազգին յամի Տեառն 1855": Նույն թվականին էլ Հարություն արեղան այն նվիրում է իր հոգևոր եղբայրներին. " Ի վալելս ընդհանուր միարանից անապատին Սևանայ"⁷¹: Կանոնգիրքը, ինչպես երևում է, ծառայել է որպես դասագիրք՝ "յօգուտ մանկանցն եկեղեցւոյս": Բացի դրանից, ժողովածուում ուսուցման նպատակով էր արտագրված նաև "Սարգիս ֆահանայի յաղագս առ շահի և մասնաւոր իրաց" նյութը:

Ձեռագիրը նույն տարում դառնում է Հովհաննես Տեր Հարությունյանի, Տեր Հովհաննիսյանի, Տեր Ավագով Զորեքչիշյանցի սեփականությունը՝ տես պահպանակ Գ)

⁶⁷ Ձեռ. 3559, էջ 1ը:

⁶⁸ Նույն տեղում:

⁶⁹ Հ. Շահիսանթունյանց, Ստորագրութիւն էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, Կ. Բ. էջմիածին, 1842, էջ 210:

⁷⁰ Ն. Պողոսյան, Յուզակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, Կ. Ժ, Երուսաղէմ, 1990, էջ 804: (Երուսաղէմ, Ձեռ. 3578, ԻԶ, Զ):

⁷¹ Ձեռ. 4028, էջ 2ա, 138ը:

Ձեռագրի հիշատակարանից իմանում ենք, որ Հարություն արեղան անապատի ռեհիկ միաբաններից է՝ Հարություն արեղա Խաչատրյան-Մարեանյանցը, որ ընթերցողներից խնդրում է հիշել իրենց մաքրափայլ աղոթքներում ձեռքներին ու մաքրակենցաղ կարապետ վարդապետին⁷²:

Թե էլ որքան ձեռագիր է ընդօրինակել Հարություն արեղան, դժվար է ասել, սակայն այս մեկ օրինակումից էլ երևում է, որ մենք գործ ունենք գրչության արվեստի հմտություններին ծանոթ վարժ գրչի հետ:

թ. Կարապետ Բլրուլյան գրիչ- Մկրտիչ վանահորը փոխարինած Կարապետ Բլրուլյան առաջնորդը, ակտիվ շինարարական գործունեություն ծավալելուց բացի, զբաղվել է գրչությամբ: Նրա ընդօրինակությամբ մեզ է հասել մի ձեռագիր՝ "Վարժ և պատմութիւն Մխիթարայ Գոշի" գործը⁷³: Ձեռագրի գրման ժամանակը և տեղն անհայտ է, պետք է ենթադրել, որ այն գրվել է Սևանավանքում մինչև 19-րդ դարի 80-ական թվականները:

Այս դարասկզբից մեզ է հասել նաև ժամանակը և տեղը հայտնի, բայց գրիչն անհայտ մի ձեռագիր ևս: Այն Քարոզգիրք է. "Հաւաքեալ ի գանազան գրոց յումեմնէ բանասիրէ ի միաբանութենէ վանուց Սրբոյն Սևանայ, որ ի մէջ կղզոյն ծովուն Գեղամայ"⁷⁴: Հիշատակարանից պարզվում է, որ գրիչը նաև ձեռագրի խմբագրողն է ու նյութերը հավաքել է "յումեմնէ բանասէր"-ը Սևանավանքի մատենադարանում պահվող մատյաններից: Դժբախտաբար, ավարտելով ձեռագրի սկզբում եղած հիշատակարանը, միայն ամփոփում է "թուին 1801 հոկտեբերի սկսեալ" խոսքերով՝ անհայտ թողնելով իր ինքնությունը, ինչպես նաև մատյանի ավարտման ժամանակը: Քարոզգրքի գրիչը վարժ է և հմուտ, ընդօրինակելիս նա կիրառել է գրչության արվեստի հետ կապվող բոլոր հմարձները:

Հարություն Մարեանյան վանահոր տարիներին Սևանա անապատ է գալիս Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցը, որը շրջում էր իրեն վստահված գավառի ողջ տարածքով և նյութեր հավաքում իր ապագա "Տեղագիր Գեղարքունեայց ծովազարդ գաւառի, որ այժմ՝ Նոր Բայազիտ գաւառ" աշխատանքի համար: Նրա վկայությամբ 1865թ. Սևանավանքում կային 20 վարդապետ, սարկավագ և դպիր, որոնք "միայն գիտէին հայերէն կարդալ և գրել դպրոցական Բ կամ Գ կարգի աշակերտաց չափով" այն է միդասեան դպրոցի ուսումն, և այն ոչ կանոնաւոր": Եվ որ ամենացավալին է՝ ոչ մի ցանկություն չէին ցուցաբերում ուսում ստանալու և ժողովրդին պիտանի լինելու, քարոզչություն և ուսուցչություն անելու: Միակ ելքը արքեպիսկոպոսը գտնում էր վանահոր կողմից վանական դպրոց բացելու և ողջ գավառի համար քահանաներ պատրաստելու մեջ, այնպես, ինչպես Մաշտոց, Ստեփանոս Գ և Սարգիս Ա հայրապետները⁷⁵: Այդ մտահոգությամբ նա հատուկ ջանքերով դիմում է Գևորգ Գ կաթողիկոսին, այստեղ դպրոց բաց անելու, կղզու անապատական ավանդույթները վերակազմելու համար: Շուտով կաթողիկոսի հատուկ հրամանով Սևանավանքում նախատեսվում է դպրոց բանալ 1869 թ. սպտեմբերի 18-ին: Նորարաց դպրոցում դասավանդելու համար նա էջմիածնից ուսուցիչներ է ուղարկում Սևան՝ Հովակիմ սարկավագին, Նդիա վարդապետ Ջալալյանցին, ապա՝ Հովակիմ վարդապետ Ղամբեյանցին: Այստեղ

⁷² Նույն տեղում, էջ 139թ:

⁷³ Ձեռ. 8147:

⁷⁴ Ձեռ. 5574, էջ 2ա:

⁷⁵ Մ. Սմբատյանց, Տեղագիր, էջ 128-127:

ուսուցանում էին կրոն, հայոց լեզու, պատմություն և երգեցողություն: Դպրոցն իր գործունեությունը շարունակում է մինչև 1880 թ.⁷⁶:

1895 թ. Սևանավանքի վանահայր դարձած Սարգիս Փիլոյան արքեպիսկոպոսը շարադրում է անապատի պատմությունը ("Սևանի վանքի պատմություն"), դեպքերի շարադրանքը հասցնելով մինչև իր օրերը⁷⁷:

Սակայն անցան այն ժամանակները, երբ երանությանը հիշում էին, ինչպես գրում է Ս. Զալալյանը, "...այս վանքն մինն ի հռչակաւոր մենաստանաց Հայոց ծաղկեալ յութն և յինն դարուն, պերճացեալ փիլիսոփայական և աստուածաբանական մակացութեամբ և լցեալ միանգամայն հրեշտակական ժուժկալութեամբ, յորում ծաղկեցան ի զանազան ժամանակս արքանուանիք և ականաւորք"⁷⁸:

Անապատի մշակութային կյանքը շարունակվում է նաև հաջորդ դարում, որին կանդրադարձանք մեկ այլ հոդվածով:

⁷⁶ Գիւտ եպիսկոպոս Սեւանայ վանքը, Հանդէս ամսօրեայ, 1929, էջ 300: Ս. Փիլոյան, նշվ. աշխ., էջ 775:

⁷⁷ Ս. Փիլոյան, Սևանի վանքի պատմություն, "Հովիւ" շաբաթաթերթ, Թիֆլիս, 1906 թ.:

⁷⁸ Ս. Զալալյան, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան", Տփլիս, 1858, մ. Բ, էջ 109:

ԴԱՎԻԹ ԳՅՈՒՐՋԻՆՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱԿԱԶՄՈՐԵՆ «ԱՄՈՒԼ» ԿՐՈՆԱԿԱՆ ԲԱՌԵՐԸ

Հայերենի բառապաշարի մեջ յուրահատուկ մի համակարգ են ստեղծում կրոնական բովանդակություն ունեցող բառերը, որոնք հատկանշվում են իմաստային-հասկացական և գործառության առանձնահատկություններով: Կրոնական բառերը տարբերակվում են ըստ ծագման, կազմության, իմաստի, ձևաբանական արժեքի, գործածության ոլորտի և այլն: Հետազոտողներին առավելապես հետաքրքրել է սրանց ստուգաբանությունը¹, մասամբ՝ իմաստաբանությունը², այս բառերը նաև առանձին բառարանի նյութ են դարձել³: Կարևոր է նաև կրոնական բառերի բառակազմական արժեքի քննությունը⁴:

Հայերենագետներն իրենց ուսումնասիրություններում ցարդ ուշադրություն են դարձրել բառակազմական տեսանկյունից արդյունավետ բառային միավորների (արմատների) և կենսունակ ածանցների վրա, մինչդեռ լեզվի բառակազմական համակարգի ամբողջական պատկերը ստանալու համար անհրաժեշտ է հետազոտել ոչ միայն բառակազմորեն արգասավոր արմատներն ու բառերը, այլև նրանք, որ արդյունավետ չեն կամ պարզապես «ամուլ» են: Այսինքն՝ տվյալ միավորներով այլ բառեր չեն բաղադրվում, նրանք բառակազմական որևէ փնջի մեջ չեն մտնում. միայնակ են: Այդպիսի բառերի համար նպատակահարմար է գործածել բառակազմորեն մեկուսի (կամ մեկուսացած) տերմինը: Երևույթն առավել ցայտուն կերպով մեկնաբանվում է «ամուլ» բառը անվանման միջոցով:

Գիտական հետաքրքրություն է ներկայացնում այն հարցը, թե բառակազմորեն մեկուսի բառերը լեզվի պարզացման ո՞ր փուլին են առնչվում և ժամանակային ինչպիսի՞ ընդգրկում ունեն, բառիմաստային ո՞ր խմբին են պատկանում, ինչպիսի՞ն է նրանց նկարագիրն ըստ խոսքիմաստային պատկանելության, կա՞ն արդյոք գործոններ,

¹ Հ. Սճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1-4, Երևան, 1971-1979: Ս. Մեյե, Հայագիտական ուսումնասիրություններ, Երևան, 1978: Գ. Բ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987:

² Դ. Գյուրջինյան, Եկեղեցական հոգևոր-կյանքին առնչվող կացարանների անվանումները, «Էքմիածին» հանդես, 1992, Ը:

³ Մաղաքիա արք. Օրմանյան, Միական քառասուն, Երևան, 1992:

⁴ Դ. Գյուրջինյան, Քրիստոս անվան բառակազմական արժեքը հայերենում, «Էքմիածին» հանդես, 1992, ԺԲ:

որոնք խոչընդոտել են բառի բաղադրելիությանը և այլն: Բառակազմորեն մեկուսացած բառերի ցանկերի ստեղծումը կնպաստի հայերենի բառակազմական օրինաչափությունների մասին համապարփակ պատկերացում կապելուն, շնորհիվ որի հնարավոր կլինի որոշակի ճշգրտումներ մտցնելու բառապաշարի ներքին դասակարգման մեջ:

Ներկա ուսումնասիրության նյութն ընդգրկում է հայերեն մատենագրության մեջ, բառարանագրական և այլ աղբյուրներում վկայված կրոնական բովանդակության «ամուլ» բառերը⁵, որոնք բաշխվում են նախագրային շրջանից մինչև աշխարհաբար ընկած ընդարձակ ժամանակի մեջ:

Ըստ այս կամ այն կրոնին առնչվելու հատկանիշի կամ ըստ կիրառության ասպարեզի՝ հայերենի «ամուլ» բառերը կարելի է տարբերակել հետևյալ ձևով՝ նախաքրիստոնեական (որոշ յափով պայմանական անվանում է, քանի որ մատնանշվում է ժամանակագրական կողմը), քրիստոնեական, մահմեդական և բուդդայական: Տվյալ դեպքում շրջանցում ենք այն հանգամանքը, թե այդ բառերը տեսակարար ի՞նչ կշիռ ունեն հայերենի բառապաշարի մեջ, որքանով են յուրացված նրա կողմից. կարևորը հայերենում նրանց փաստացի արձանագրումն է:

Նախաքրիստոնեական շերտի մեջ մտնող միավորներն իրենց հերթին բաժանվում են երկու խմբի: Դրանցից մի մասը վերաբերում է հին հայոց հեթանոսական կրոնին, իսկ մյուսը՝ պրադաշտականությանը: Վերջիններս փաստորեն իրանական իրականությունն արտացոլող բառեր են և առանց բացառության՝ իրանյան փոխառություններ, ինչպես՝ բարսմոց «կապուկ, որ կրակապաշտները բռնում են կրակ վրա», քոզպայիտ «պարսից կրոնական գրքի անուն», քատուկ «վիռլ կահարդ», ռատ «իմաստուն», պետմոգ և պաքտջաշ / ամպաքտջաշ «պարսկական աղանդների և գրքերի անուններ», կեշտ «կրոն, հավատ» և այլն:

Նման կարգի բառերից մի քանիսը բառակազմական արժեքից գրեթե չուրկ են, սակայն միայնակ չեն. հմմտ. մազդեզմ «Որմիպդի պաշտոնյա. մոզ» և մազդեզակամ «մազդեզներին բնորոշ. պարսկական», քէշ («վրադաշտական») կրոն» և քէշակարկատ «աղանդ, կցմցող, հնարող (կարկատող)», յաշտ «չոհ. ուխտ» և յաշտածիմ «չոհ անելուց ծնված»:

Չբաղադրականության տարբեր հասկացություններ արտահայտող «ամուլ» բառերը հատկանշվում են մի շարք առանձնահատկություններով՝ խիստ ցածր հաճախականությամբ (ընդ որում եզակի կիրառություններն էլ նեղ իրադրական բնույթ ունեն), հայերենին պնդաբանական հնչյունական ձևավորմամբ, իմաստի գրեթե անըմբռնելիությամբ և չպատճառաբանվածությամբ, որոնք էլ նպաստում են

⁵ Գ. Ալեքսիքեան, Խ. Սիւրմէյեան, Մ. Ալգերեան, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1-2, Վենետիկ, 1836-37: Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս 1-2, Երևան, 1940-1951: Ռ. Ս Ղազարյան, Հ. Մ. Ալեքսիպյան, Միջին հայերենի բառարան հ. 1-2, Երևան, 1987-1992: Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Ա («Բառագիտություն»-Մ. Հ. Մուրադյան», Երևան, 1972:

հայերենով հաղորդակցվող հանրության կողմից այդ միավորները չյուրացնելուն: Նշված առանձնահատկությունները վերածվում են բառի բաղադրելիությանը խոչընդոտող գործոնների: Հարկ է նշել, որ այս կամ այն բառը միայնակ է մնում միայն թվարկված բոլոր (կամ մի քանի) գործոնների անկախության պարագայում, երբ դրանց ավելանում է ամենակարևորը՝ բառ կերտելու հասարակական պահանջ-մունքի բացակայությունը: Այսպես, օրինակ, ատրուշան «կրակապաշտների մեկան. կրակատուն» բառը, որ վկայված է Ե դարում, գործածական է նաև նոր և ժամանակակից գեղարվեստական գրականության մեջ, իմաստային տեսանկյունից քիչ թե շատ ընկալելի է, ձայնավորների և բաղաձայնների հարաբերակցությամբ՝ որոշակիորեն բարեհունչ, հայերենի վանկակազմիչ կաղապարներին հարապատ, հայերենում բառակազմորեն մեկուսացված է (եթե բացառենք ատրուշանաման դիպվածային կազմությունը): Որովհետև չի եղել նոր բառ ստեղծելու անհրաժեշտությունը: Հարկավոր է նաև ավելացնել, որ ծագումնաբանորեն միննույն ատր- («հուր, կրակ») բաղադրիչն ունեն նաև գրաբարում վկայված ատրագոյն, ատրաշեկ, ատրորակ բառերը, այնուամենայնիվ ատրուշան-ը իրանյան բառակազմական իրողություն է և հիշյալ բառերի հետ բառակազմական փունջ չի կազմում:

Հետաքրքրական մի իրողության մասին նս: Հին հայերենում ունենք դեմ «կրոն, հավատ» և դեմիմագդեմ//դեմիմազդէն «պարսից հին կրոնը», դեմպետ «կրոնապետ» նույնարմատ բառերը՝ բոլորն էլ փոխառյալ: Դեմ-ը բառակազմական հիմք է դարձել դեմադարձ և դեմակորոյս «ուրացող, հավատափոխ» հոմանիշ բառերի համար, իսկ վերջին երկուսը բառակազմորեն մեկուսացած են, թեկուզև արմատները որոշակիորեն գիտակցվում են (հմմտ. դեմպետ):

Հայերի նախաքրիստոնեական հավատալիքներին առնչվող բառերի մեջ մեկուսացած են մեկ-երկուսը, ինչպես՝ յուշկապարիկ «այս. ոգի. առասպելական կենդանի», ճամբարու «պարիկ», որոնք նս իրանյան փոխառություններ են (այդպիսին է նաև պարիկ բառը):

Հայ հեթանոսական կրոնին վերաբերող բառերը բառակազմական տեսանկյունից առհասարակ արդյունավետ են: Օրինակ՝ մեհեան «հեթանոսական տաճար» բառից գրաբարում բաղադրվել են մեհեմագիրք, մեհեմակալ, մեհեմական, մեհեմատեղի, մեհեմաշեն և մի շարք այլ բառեր, բազմ «սոհասեղան, կոստուն» բառից՝ քազնայարկ, քազնածու և այլն: Արգասավոր են իրանյան ծագման նաև այն բառերը, որոնք անցան քրիստոնեական բառապաշարին, ինչպես՝ մարգարե, հրաշ(ք), զոհ, հրեշտակ և այլն: Մեկ բացառությամբ թերևս՝ ճառակատիք («եկեղեցու») հանդիսավոր բացում, տարեդարձ»: Ավելորդ չենք համարում նշել, որ մի կողմից հայերին օտար զրադաշտականությանը, մյուս կողմից՝ հայ հեթանոսական կրոնին և քրիստոնեությանը վերաբերող իրանյան փոխառությունների բառակազմական արժեքի համեմատությունից կարելի է եզրակացնել, որ մեկուսացած մնալու մեջ թերևս դեր են խաղացել հոգեբանական որոշ ազդակներ:

⁶ Լ. Ե. Հովհաննիսյան, Հայերենի իրանական փոխառությունները, Երևան, 1990, էջ 140:

Թե՛ նախաքրիստոնեական, թե՛ քրիստոնեական և մյուս շերտերի բառակազմվածքն մեկուսի բառերը փոխառություններ (և օտարաբանություններ) են, այնինչ հնդեվրոպական ժազույմ ունեցող բնիկ հայերեն կրոնական բառերից և ոչ մեկը «ամուլ» չէ։ Թեկույն դրանք բավական սակավաթիվ են՝ (Տոգի, սուրբ, երեց և այլն)։

Քրիստոնեությանն առնչվող բառաշերտն ամենաընդհանուրն է, որն ինքնին հասկանալի է։ Այստեղ առանձնանում են նախ երկու խումբ փոխառություններ՝ սեմական լեզուներից (ասորերեն և եբրայերեն) և հունարենից։ Պարզ է, որ հենց այն լեզուների փաստերի առկայությունը պայմանավորված է մի կողմից Սուրբ Գրքի և կրոնական գրականության թարգմանություններով, իսկ մյուս կողմից էլ՝ կենդանի շփումներով (քարոզչություն և համակենցություն)։

Գործուն և բառակազմական տեսանկյունից արդյունավետ բառերի կողքին՝ քաճաճ, արեղաց, սրովբե, սատանայ (ինչպես և քուրմ, ճեթանոս) և այլն, կան այնպիսիք, որոնցից հայերենում ածանցմամբ կամ բարդումով նոր բառեր չեն ստեղծվել։ Դրանցից են՝ ասորական փոխառություններ՝ ատեսարոն «չորս Ավետարան», պրակսաթայթ «Գործք Առաքելոց», քուսիթ «կրոնավորի գլխարկ, կնգուղ», մծղմեայ «աղանդի անուն», խարամանի «չար հրեշտակ, դև, սատանա», իբրամե «Մնացորդաց գիրք», սիդա «բուրվառ», բուտ//երուտ «կրոնական տեսուչ», եբրայական փոխառություններ՝ ամոն «վարդապետ», բամա «բարձր պոհասեղան, բեմ», բեղզեբուղ «սատանայապետ», ամեմ «ճշմարիտ, արդարև, իրավամբ», որ վերածվել է ժայնարկության աղոթքների վերջում՝ իբրև հաստատում ասվածին՝ «ճշմարիտ է, այդպես է» (ինչպես որ եբրայերենում է), բելիար «սատանա», հունարենից՝ պեմոեկոստե «հոգեգալուստ, հիսնօրյակ», աղաբողոմոս «վարդապետների թիկնոց. փիլոն»։

Բառաստեղծման անհրաժեշտությունից ելնելով՝ հայերենի բառակազմական ճկուն հնարավորությունների հիման վրա նմանատիպ բառերից մեկ-երկու բաղադրություն է կերտվել՝ դրանք դուրս բերելով բառակազմական մեկուսացումից։ Հմմտ. ալելու//ալելուիա/յ/ «աստվածային, փառաբանական օրհներգություն» և ալելուել «օրհնաբանել», ովսանեայ «օրհնություն» և ովսանայաբեր «օրհնաբեր», սադայել «սատանա, սատանայապետ» և սադայեղական «սատանայական», որը համեմատաբար նոր բառ է։ Վերջին բառը հուշում է, որ բառակազմվածքն մեկուսի բառերի մեջ հնարավոր են տեղաշարժեր, այսինքն՝ լեզվի վարգացման որևէ փուլում մեկուսի համարվող բառը այս կամ այն ժամանակ կարող է ածանցյալներ (լայն իմաստով) ունենալ։ Չենք կարող անտեսել այն հանգամանքը, որ այսօր «ամուլ» ընկալվող որոշ բառերով բաղադրություններ կարող են «թաքնված լինել» ձեռագիր մատյաններում, հիշատակարաններում և այլ սկզբնաղբյուրներում։

Միայն մեկ ածանցյալ ունեցող բառերը կարելի է անվանել բառակազմվածքն մենարժեք։ Սրանք փաստորեն միջակա մի դիրք են զբաղում բառակազմվածքն մեկուսացած և արդյունավետ բառերի միջև՝ որպես բառակազմական ներունակության իրացման առաջին աստիճան։

Բառը մեկուսացած ենք համարում՝ որպես կանոն ելնելով գրական-գրավոր լեզվի իրողություններից։ Պատկերը կարող է փոխվել, եթե

հաշվի առնենք նաև բարբառային բառապաշարը: Բառն այս դեպքում միայն պիտի համարենք լիովին մեկուսացած:

Բարբառային նյութը բառային-բառակազմական հետաքրքրական առնչություններ է բացահայտում: Այսպես, օրինակ, դերի «վանք» ասորական փոխառությունը պահպանվել է միայն բարբառներում՝ «գլուղական տոնակատարություն դեպի վանքերն ուխտագնացության կամ տոնական օրերի ժամանակ», այսպիսով՝ «մի տեսակ պար», և քաղաղորվել է միայն հատուկ անուններում՝ դերեն «վանքի որդի» կամ ռեթանիկ «ուխտավոր Կավակ»⁷: Նույն ձևով՝ շուշփայ «սուրբ մասունքների ծածկոց, սկիհը սրբելու շոր» բառը (կրկին ասորերենից) գրական հայերենում քաղաղորված ենք տեսնում միայն շուշփայակաճ-ի մեջ, որ վկայված է մեկ կիրառությամբ⁸, սակայն ունենք նաև բարբառային օրինակափական կազմություններ՝ շուշփացու «ընտիր կտոր, որից շուշփա են պատրաստում», շուշփայել «մասունքը, հաչը կամ Ավետարանը մետաքսահյուս ընտիր շորի մեջ փաթաթել»:

Եբրայական փոխառությունների մեջ առանձին խումբ են կազմում Աստուած բառի հոմանիշները՝ Էլ//Էլոհիմ, Ելովա, սաբաուվթ, յաֆ /<Եհովա/, սադա «ամենակարող Աստված», աֆիաֆ «Եհովա, Աստված»՝ բոլորն էլ բառակազմորեն մեկուսացած: Հնչյունական անսովոր ձևավորումից բացի մեկուսի մնալու կարևոր պատճառ է հայերեն Աստուած բառի առկայությունը:

Բառի մեկուսի մնալուն նպաստող գործոններից մեկն էլ այն է, որ տվյալ փոխառությունը փոխառու լեզվում ունեցել է բառակապակցության կամ նախադասության արժեք: Այսպես, մարաճաթայ «նզովք» բառը հունարեն նույնահունչ նախադասության տառադարձությունն է (սա էլ իր հերթին՝ արամեերենի) և նշանակում է «մեր տերը եկավ»⁹: Հմմտ. ալեղուիայ՝ եբր. «գովեցե՛ք, փառաբանեցե՛ք Աստծուն», ադոնա՝ եբր. «Տէ՛ր իմ»: Վերջինս գործածվում է սովորաբար Տէր բառի հարադրությամբ. գործառությանին նման սահմանափակվածությունն էլ խոչընդոտում է բառի քաղաղորելիությանը: Հարկ է նշել, որ ադոնա «Տէր, Տէ՛ր իմ» միավորը միայն որոշակի վերապահությամբ պիտի բառ համարենք:

Քրիստոնեությանն առնչվող հին բառաշերտից տարբերվում են հիմնականում միջին հայերենին առնչվող բառային իրողությունները: Ոչ միայն ժամանակագրական առումով (վկայվել են առավելապես ԺԳ դարից սկսած), այլև գործածության տարածքային սահմանափակվածությամբ (հանդիպում են հիմնականում Կիլիկյան Հայաստանում ստեղծված դիվանական թղթերում կամ պատմագրական երկերում): Եվ, վերջապես, մեկ-երկու բացառությամբ, արտահայտում են հիմնականում հունարավան և կաթոլիկ եկեղեցիներին բնորոշ հասկացություններ: Հետևաբար, պատահական չէ, որ դրանք փոխառություններ են հունարենից՝ դիակոն «սարկավագ», եմփոթոն «եպիսկոպոսական խաչապարդ ուրար», էմելոյիս «եպիսկոպոս»,

⁷ Հր. Աճառյան, Հայերենի արմատական բառարան, հ. Ա, էջ 655-656:

⁸ Նշվ. աշխ., հ. Գ, էջ 537:

⁹ Գ. Բ. Ջահուկյան, Նշվ. աշխ., էջ 466:

եպիմանիկոս «պատարագչի բազմանը», իկոն «սրբապատկեր», մոնոգոն «մենակյաց», մեսեդի «երեկոյան ժամերգության ժամանակ միջանկյալ կամ կցուրդ սաղմոսերգություն» (սրանք, օրինակ, ավելի վաղ են վկայվել), լատիններենից կամ իտալերենից՝ բոլ «պապական կոնդակ», դադմատ «կաթոլիկ», վիճիլ «գիշերային աղոթք», լիկաթ «պապական նվիրակ», քլայուստր «վանք», էնչեմիայ «սրբագործություն, եկեղեցու օրհներգություն», ֆրանսերենից՝ արծուէք «արքեպիսկոպոս», բրաջուր «ունիթոր քարոսիչ», ջաբրոն «վեղար», դրավերս «խաչի թները», դամփլ «տաճար» և այլն:

Կան նաև ավելի ուշ շրջանի փոխառություններ, որոնք ևս բառակազմորեն մեկուսի են, ինչպես՝ լատիններենից՝ գորփուրայ «մարմնակալ»՝ Բրիստոսի մարմինն իր վրա ընդունող, բոնոդ ճերմակ կտոր կաթոլիկ եկեղեցում», մեսա «կաթոլիկ եկեղեցու պատարագ» և այլն:

Բառ ստեղծելու հասարակական պահանջմունքի բացակայությունը, հայերեն համարժեքների առկայությունը և արդեն թվարկված այլ գործոններ նպաստել են հիշյալ բառերի մեկուսի մնալուն: Ի դեպ, սրանցից ընդամենը մի քանիսն են փոխանցվել նոր հայերենին:

Հայերի բազմադարյա շփումները մահմեդականների հետ, նրանց համակեցությունը պատճառ են դարձել, որ միջնադարից սկսած հայերենում գործածվել են բազմաթիվ բառեր, որոնք արտահայտում են մահմեդականությանն առնչվող հասկացություններ: Դրանց զգալի մասը բառակազմորեն մեկուսացած է:

Ժամանակագրական առումով այդ բառերը բաժանվում են երկու խմբի՝ միջինհայերենյան և աշխարհաբարյան: Սոաջինի մեջ մտնող բառերը փոխառություններ են հիմնականում արաբերենից, մասամբ նաև պարսկերենից (կամ նրա միջնորդավորումով), ինչպես՝ մձիրայ//միճարայ «մինարեթ», գեիա «մահմեդական կրոնավորների վանք», իպլիս «սատանա», կուրան//դուրան «մահմեդականների սուրբ գիրքը», ճեմիայ//ճամի «մզկիթ», մամբար «մզկիթի բեմը կամ խորանը», մեզար «սրբի գերեզման», սոլլայ «մահմեդականների կրոնավոր», մզկիթ «մահմեդականների աղոթատեղի», թուդայ «մահմեդականների աղոթք» և այլն:

Նամագ «մահմեդականների աղոթք» բառը հանդես է գալիս միայն նամագ անել «աղոթել», «դանդաղել» հարադրության մեջ, որն ավելի շատ բարբառային բնույթ ունի:

Բովանդակային կողմով սրանց մեջ առանձնակի է մաճրասայ «քրիստոնյաների վարդապետ» բառը:

Աշխարհաբարյան բառախմբի միավորները հայերենին են անցել ուսերենի միջնորդավորումով, ինչպես նաև թուրքերենից և պարսկերենից: Այսպես՝ ջիհադ և դազավաթ «պատերազմ հանուն հավատի», «սրբական պատերազմ», մեչիդ «մզկիթ», շարիաթ «մահմեդական իրավունք»: Սրանք հիմնականում հասկանալի են հայերեն խոսող հանրությանը, որոշակիորեն յուրացվել են մեր լեզվի կողմից, սակայն հասարակական պահանջմունքի բացակայությունից ելնելով՝ մնացել են մեկուսի: Այդ հարցում, անշուշտ, վճռական դեր են խաղացել արտալեզվական գործոնները:

Բուդդայականությանը և այլ կրոնների առնչվող բառակազմորեն մեկուսի բառերը հատկանշվում են նախ գործածության խիստ

սահմանափակվածությամբ (հանդիպում են հիմնականում գիտական և տեղեկատու գրականության մեջ), բառիմաստների անհասկանալիությամբ, հնչյունական անսովոր կառուցվածքով և, կարելի է ասել, ազգային-կրոնական բնույթի օտարաբանություններ են: Օրինակ՝ ճիճայա «փրկության նեղ ուղի», մահայա «փրկության լայն ուղի», սանգիս «կրոնական համայնք», պաշտամունքային կառույցների անվանումներ՝ ստուպա, պագոդա, դագորա¹⁰: Այդպես էլ՝ հինդուիզմի կրոնական բառերից՝ սանսարի «հոգու վերամարմնավորում», կարմա «հատուցում, փոխհատուցում» և այլն:

Այս բառախմբի մեջ է մտնում նաև ճիրվաճա (սանսկրիտից) «հոգու բարձրագույն երանության վիճակ» բառը, որ հայերեն գեղարվեստական խոսքում գործածվում է ոչ կրոնական բովանդակությամբ:

Հայերենի բառակազմորեն «ամուլ» կրոնական բառերի քննությունն ավարտենք մեկուսացած մնալու ընթացքին նպաստող գործոնների մատնանշումով.

ա) լեզվական նշանի անսովոր դերությունը համանման այլ միավորների հետ.

բ) բառի արտաքին-հնչյունական անհարապատությունը հայերենին.

գ) գործածման ոլորտի սահմանափակությունը.

դ) գործածման խիստ ցածր հաճախականությունը.

ե) իմաստային չպատճառաբանվածությունը կամ ստուգաբանական անհասկանալիությունը.

յ) հայերեն համարժեք (հոմանիշ) բառի առկայությունը.

է) փոխատու լեզվում փոխառությունների ոչ բառային բնույթը՝ կապակցություն, նախադասություն.

ը) գործածման տարածքային սահմանափակությունը.

թ) բառիմաստից բխող անբաղադրելիությունը.

ժ) գործածման ժամանակային սահմանափակությունը.

ժա) արտայեզվական հանգամանքներից՝ բառակերտման հասարակական պահանջմունքի բացակայությունը.

ժբ) հոգեբանական ազդակները:

¹⁰ Հայկական սովետական հանրագիտարան, հ. 2, Երևան, 1976, էջ 584-585:

ՄԸՅՐ ԷԹՈՌՈՒՄ
ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

«ՎԱՀԱՆ ԵՎ ԱՆՈՒՇ ՇԱՄՆՅԱՆ» ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԿԱՅԱՐԱՆԻ ՀԻՄՆՕՐՀՆԵՔԸ՝ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հոկտեմբերի 4-ին Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում տեղի ունեցավ Գևորգյան Ժեմարանի սամերի համար կառուցվող մոր կացարանի հիմնօրհները: Նորին Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոսը օրհնեց ապագա շենքի 4 հիմքերը՝ «Զի եղիցի կառուցումն սորա խաղաղությամբ և յաջողությամբ»:

Հիմքերից մեկում Վեհափառ Հայրապետը տեղադրեց մի հուշագիր՝ վկայությունը հիմնօրհներքի ու տեր և տիկին Վահան և Անուշ Շամյանների բարերարության, որի շնորհիվ էլ կառուցվում է մոր կացարանը: «Եղան հիմունս հանրակացարանիս կոչեցեալ «ՎԱՀԱՆ ԵՒ ԱՆՈՇ ՇԱՄՆՅԱՆ», Գեորգեան Հոգևոր Ժեմարանիս ի Ս. Էջմիածին, ի թուին Հայոց ՌՆԽԶ և յամի Տեառն 1997 ի չորրորդ օր ամսեանն հոկտեմբերի, ի Հայրապետության Տեառն Տեառն Գարեգնի Ա Կաթողիկոսի Ամենայն Հայոց»:

Արարողությանը ներկա էին Մայր Աթոռի Միաբանության անդամները, Գևորգյան Հոգևոր Ժեմարանի տեսչությունը, դասախոսական կազմը և ուսանողությունը, Սբ. Էջմիածնի ճարտարապետական խորհրդի անդամները և Էջմիածնի քաղաքի հավատացյալ բնակիչները:

Բարձր գնահատելով հեռավոր Ֆրեզնոյում բնակվող Շամյանների բարերարությունը, Վեհափառ Հայրապետը տեղեկացրեց, որ դեռևս անցած տարի, սեպտեմբերին, լինելով Սբ. Մյուռոնօրհների կնքահայրը, պրն. Շամյանը որոշեց «առ Աստված արժեցնել իր կնքահայրությունը՝ ազգին և Մայր Աթոռ Սբ. Էջմիածնին ընծայելով այս շենքը 1 մլն. դոլլարի նվիրատվությամբ»: Ի պատիվ բարերարների, կացարանը կկոչվի Վահան և Անուշ Շամյանների անունով:

Եռաճյուղային կացարանը նախատեսված է 120 ուսանողների համար: Շենքի ճարտարապետն է Մայր Աթոռի գլխ. ճարտարապետ Արծրուն Գալիկյանը: Վեհափառ Հայրապետը հույս հայտնեց, որ մոր կացարանի բարեկեցիկ պայմանները կնպաստեն ուսանողների ուսման առաջադիմության բարձրացմանը, հոգևոր կյանքի և ծառայության ամրապնդմանը:

ՄԱՍԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆՅԱՑ ԹԵՄՈՒՄ

Պատմական նոր ժամանակաշրջան է թևակոխել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին: Վերադարձվում են նախկինում բռնությամբ ու անիրավությամբ գոցված եկեղեցիների դռները, ծառայության կոչվում երիտասարդ և գործելու եռանդով լեցուն հայորդիներ: Այսպիսի ծառայասեր ու եկեղեցանվեր երիտասարդներից մեկի ձեռնադրությունը կատարվեց Գեղարքունյաց թեմի Գեղաեռվիտ գյուղի Թուխմանուկ մատրան մեջ սույն թվականի հոկտեմբերի 26-ին, շաբաթ օրը՝ ձեռամբ Գեղարքունյաց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Անանիա եպս. Արարաջյանի:

Կոչումն ընծայության

Ուրբաթ օրը, երեկոյան ժամերգությունից հետո, գերաշնորհ Անանիա եպիսկոպոս Արարաջյանի արարողապետությամբ, թափորը «Նայեաց ի մեզ» շարականի երգեցողության ներքո շարժվում է առյալ: Սկսվում է «Կոչումն ֆահանայութեան յերեկայէ» արարողակարգը: Ապա խարտավիլակության պաշտոնը ստանձնած Տ. Մեսրոպ ֆահանան, խոսելու հրաման ստանալով, ասում է. «Հայր սուրբ, խնդրե՛ ի քեզ մալրս մեր սուրբ Եկեղեցի զի ձեռնադրեսցես զԳևորգ սարկաւազս գոր ընծայէ քեզ յաստիճան ֆահանայութեան»:

Այնուհետև հրապարակայնորեն քննվում է նորընծա Գևորգ սարկավազ Կյուրեղյանի հոգևոր, իմացական պատրաստվածությունը: Վերջինս, համաձայն ձեռնադրության Մաշտոցի, հանդիսավորապես հանձն է առնում «ամենայն պատրաստութեամբ և առանց ձանձրանալոյ կալ ի պաշտօնն Աստուծոյ, և ոչ խափանել զգործն Աստուծոյ վասն մարմնաւոր գործոյ»:

Հավարտ հանձնառության, նորընծա Գևորգ սարկավազը ենթարկվում է նաև դավանական քննության: Նա արտասանում է. «Ունիմք զդաւանութիւն ուղղափառ հաւատայ... ընդ սուրբ հայրապետսն»՝ խոստանալով խորշիլ ըլլոր խոտոր ու ծուռ վարդապետություններից և հետևել Եկեղեցու ուղղափառ ու աստվածաբան Հայրապետներին՝ Բարսեղ Կեսարացուն, Հովհան Ոսկեբերանին, Գրիգոր Աստվածաբանին, Գրիգոր Լուսավորչին, Հովհան Օսնեցուն և Ընդհանրական Եկեղեցու միւսս երանաշնորհ Հայրերին:

Արարողության վերջում ծառայության կոչվող սարկավազը հրապարակայնորեն կատարում է իր «հաւատայ խոստովանութիւն»-ը, ըստ Գրիգոր Տաթևացու սահմանած քանոնի:

Ձեռնադրության և օծման կարգ

Շաբաթ օրը Գեղարքունյաց թեմի Գեղաեռվիտ գյուղի Թուխ Մանուկ մատրան մեջ մատուցվում է Սուրբ Պատարագ և կատարվում «Կանոն ձեռնադրութեան


ֆահանայի» արարողության կարգը: Պատարագիչն է Գեղարքունյաց թեմի քարեխնամ առաջնորդ Տ. Անանիա եպս. Արարաշյանը: Առավոտյան ժամը 11-ին սկսվում է Ս. Պատարագը և շարունակվում մինչև «Ջի ռդորմած և մարդասեր ես Աստուած» մաղթանքը: Ապա հնչում է «Այսօր Աստուածութիւն զուարեանայ» հաղթական շարականը՝ ազդարարելով ձեռնադրության սկիզբը: Այնուհետև նորընծա Գեղորգ սարկավազը մատրան ծախակողմյան աստիճանով ձնկաչոփ քարձրանում է վեր և հավատացելոց բազմության առջև քարձրացնում ձեռքերը՝ ի նշան աշխարհից հրաժարման «ի սարկաւագութենէ ի ֆահանայութիւն սրբոյ եկեղեցւոյ ի սպասաւորութիւն»: Այս ընթացքում հնչում է «Աստուածային և երկմաւոր շնորհ» շարականը: Երգեցողությանը հաջորդում են ձեռնադրող սրբազանի խոսքերը. «Ես դեռ զձեռս ի վերայ սորա, և դուք ամենեքեան աղօթս արարեք. զի արժանի լիցի սա զաստիճան ֆահանայութեան. ամառատ պահել առաջի սեղանոյ Տեառն Աստուծոյ»:

Այնուհետև սրբազան հայրը «ձեռամբ քերէ զուրարն զպարանոցաւն ի ծախմէ ի յաջ»՝ ասելով. «Առ զլուծ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. զի լուծ նորա քաղցր է, և բեռն նորա փոքրոգի»: Այստեղ ձեռնադրության կարգը ընդհատվում է և Պատարագը շարունակվում մինչև «Ողջոյն տուք միմեանց» հատվածը. որից հետո նորընծան աղոթքով և սրբությամբ ստանում է ֆահանայական փիլոնը և պատարագչի զգեստները:

Ձեռնադրության արարողությունը հոգևոր վերադարձն է իր քարձուհին և հասնում այն պահին, երբ ձեռնադրող սրբազան հայրը, ֆահանայական լրիվ զգեստավորմամբ, նորընծայի թակատն ու ձեռքերը օծում է Ս. Մյուռոնով՝ նրան վերանվանելով Տ. Գալիթ ֆահանա: Ապա նորընծա Դավիթ ֆահանան իր առաջին ֆահանայական օրհնությունն է քաշխում ժողովրդին՝ «Խաղաղութիւն ամենեցուն»:

Հավարտ ձեռնադրության կարգի կատարման, շարունակվում է Ս. Պատարագը. որի վերջում կատարվում է հոգեհանգստյան պաշտոն՝ ի եիշատակ «վաւն հայրենեաց» զոհված մերօրյա ազատամարտիկների, որին, ինչպես և ամբողջ Ս. Պատարագի արարողությանը, ներկա էին Ազգային ժողովի պատգամավոր Վազգեն Պողոսյանը, Թուխ Մանուկ եկեղեցու քարեքար Ջոնրապ Պողոսյանը, գյուղապետ Ռուրիկ Մանուկյանը և «Երիտասարդաց կազմակերպության» անդամները: Հոգեհանգստյան կարգի վերջում, «Քրիստոս Որդի Աստուծոյ...» աղոթքի մեջ, եիշատակվում են իրենց կյանքը Հայրենիքի պաշտպանությանը նվիրած գեղարքունիքի ազատամարտիկների անունները:

ՍԱՄՎԵԼ ՍԱՐԿԱՎԱԳ ԽԱՉԱՏՐՅԱՆ



Տ. ԴԱՎԻԹ ԶԱՀԱՆԱ ԿՅՈՒՐԵՂՅԱՆ

(ավագանի անունը՝ Գևորգ)

Ծնվել է 1973 թ. հոկտեմբերի 3-ին, Վրաստանի Հանրապետության Նինոծմինդայի (Բոգդանովկայի) շրջանի Փոֆր Արագյալ գյուղում:

1979 թ. ընդունվել է Փոֆր Արագյալի ութամյա դպրոց:

1984 թ. ուսումը շարունակել է Բոգդանովկայի հմր. 1 միջնակարգ դպրոցում:

1980 թ. ընդունվել է Հոգևոր ճեմարան:

1986 թ. մայիսի 19-ին, ձեռամբ Գեոր. Տ. Ամանիա եպս. Արարաջյանի, ձեռնադրվել է սարկավագ:

1986 թ. հունիսին ավարտել է Հոգևոր ճեմարանի վեցամյա ուսումնական շրջանը և աշխատանքի նշանակվել Վեհաբանում որպես ֆարտուղար:

1987 թ. սեպտեմբերի 1-ից ծառայության է նշանակվել Գեղարքունյաց թեմում:

1987 թ. հոկտեմբերի 26-ին, Գեղարքունյաց թեմի բարեխնամ առաջնորդ Գեոր. Տ. Ամանիա եպս. Արարաջյանի ձեռամբ, ձեռնադրվել է ֆահանա և նշանակվել հոգևոր հովիվ Մարտունու շրջանում:

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆՅԱՑ ԹԵՄՈՒՄ

Ն.Ա.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի բարձր անօրինությանը և Սյուլյաց թեմի բարեխնամ առաջնորդ Տ. Արքաեամ եպիսկոպոս Մկրտչյանի ձեռամբ, սույն թվականի հոկտեմբերի 26-ին Տաթևի նշանավոր վանքում տեղի ունեցավ երկու երիտասարդ հագևորականների՝ Հայկ սրկ. Մարտիրոսյանի և Արգիշտի սրկ. Հովսեփյանի ֆահանայական ձեռնադրության կարգը:

Համաձայն Ձեռնադրության Մաշտոցի, ձեռնադրության նախորդ օրը, շաբաթօրյա հանդիսավոր ժամերգությունից հետո, կատարվեց «Յերեկոյէ կոչումն ֆահանայութեան» կարգը՝ խարտովիակությամբ Տ. Մարտիրոս ֆհն. Ավետիսյանի: Վերջինս վկայում էր նորընծաների հոգևոր և մտավոր պատրաստվածության և բարեմասնությունների ու արժանիքների մասին՝ նրանց ներկայացնելով արժանի ֆահանայական ձեռնադրության:

Հավարտ արարողության, նորընծաները հրապարակավ տվեցին իրենց «հաւատոյ խոստովանութիւն»-ը՝ ըստ Գրիգոր Տաթևացու սահմանած բանաձևի (Մաշտոց, Վաղարշապատ, 1876, էջ 36-37):

Հաջորդ օրը մատուցվեց Սուրբ և անմահ Պատարագ. հընթացս օրի տեղի ունեցավ նորընծաների ձեռնադրության արարողությունը: Ս. Պատարագի սկզբում բարեշնորհ սարկավագները, դպիրների կողմից կատարված «Աստուածային եւ երկնային շնորհ» շարականի երգեցողության ներքո, ծմրադիր առաջնորդվեցին և բարձրացան Ս. Խորան ու, «յարեւմուտս» դառնալով, բարձրացրեցին «զձեռնս ի վեր ափ ի բաց»՝ հրաժարվելու աշխարհից, կոչվելու «ի սարկաւագութենէ ի ֆահանայութիւն սուրբ եկեղեցւոյ»:

Այնուհետև ընծայացուները բռնակցեցին ձեռնադրող Տ. Արքաեամ եպիսկոպոսի շուրջ: Ձեռնադրող սրբազանը, ձեռքերը խաչածն դնելով յուրաքանչյուրի գլխին, արտասանեց. «Ես դնեմ զձեռնս ի վերա սորա, և դուք ամենեքեան աղօթս արարե՛ք, զի արժանի լինիցի սա զաստիճան ֆահանայութեան, ամարաւ պահել առաջի սեղանոյ Տեառն Աստուծոյ» ձեռնադրության աղոթքը: Դպիրները միաձայն վկայեցին՝ «արժանի են»:

«Ողջոյն»-ից առաջ կատարվեց երիտասարդ սպասավորների ծման կարգը. հընթացս օրի նրանք աղոթքով և օրհնությամբ ստացան ֆահանայական փիղոն, սաղավարտ, փորուրար, շուրջառ:

Այնուհետև ձեռնադրող սրբազան հայրը, ֆահանայական լրիվ զգեստավորմամբ, երկու նորընծաների նակատն ու ձեռքերը ձեռք սրբալույս Մյուռոնով և վերակոչեց նրանց նոր անուններով:

Այսպիսով, Հայկ սրկ. Մարտիրոսյանը վերանվանվեց Ջ. Ատեակ ֆահանա, իսկ Արգիշտի սրկ. Հովսեփյանը՝ Տ. Գրիգոր ֆահանա:

Ապա նորընծաները ձեռնադրող եպիսկոպոսից օրհնությամբ ստացան «զսկիին և զմաղզմայն»՝ որպես Ս. Պատարագ մատուցելու իշխանության նշանակ և, դառնալով դեպի ժողովուրդը, տվեցին իրենց անդրանիկ ֆահանայական օրհնությունը: «Ողջոյն»-ի պահին զատարագիչ ֆահանան, ողջագուրվելով, շնորհավորեց նորագ ձեռնադրյալներին, և Ս. Պատարագը շարունակվեց մինչև վերջ:



Տ. ՍԱՀԱԿ ՔԱՀԱՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

(ավագանի անունը՝ Հայկ)


Ծնվել է 1970 թ. դեկտեմբերի 9-ին, էջմիածին քաղաքում:

1977-1988 թվականներին սովորել և ավարտել է էջմիածնի թիվ 2 միջնակարգ դպրոցը, ապա ընդունվել Երևանի մեքենաշինական տեխնիկումի ավտոնանա-պարհային մեքենաներ և սարքավորումներ բաժինը: Մեկ տարի սովորելուց հետո, ծառայել է խորհրդային բանակում:

Ծառայությունից հետո, 1991-ից շարունակում է ուսումը և ավարտում այն:

1994 թվականից ծառայել է Ա. Հոփսիմե վանքում որպես դպիր և կատարել լուսարարի պարտականություններ:

1997-ին Այուճյաց թեմի առաջնորդ Արքահամ եպիսկոպոսի ձեռամբ ձեռնադրվել է սարկավագ: Նույն թվականի հոկտեմբերի 26-ին, Գյումրի Խաչի տոնին, Տաթևի վանքում, ձեռամբ թեմի առաջնորդ Տ. Արքահամ եպսկ. Մկրտչյանի, օծվել է քահանա և ծառայության նշանակվել Կապան քաղաքում:



Տ. ԳՐԻԳՈՐ ՔԱՀԱՆԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ
(ավագանի անունը՝ Արգիշտի)

Ծնվել է 1968 թվականի նոյեմբերի 4-ին, Երևան քաղաքում, ծառայողի ընտանիքում:

Սովորել է Երևան քաղաքի թիվ 174 միջնակարգ դպրոցում:

1987-89 թթ. ծառայել է խորհրդային բանակում: 1992 թվականին ծառայության է անցել Երևան քաղաքի Սուրբ Զորավոր Աստվածածին եկեղեցում:

1994 թվականի ապրիլ-հուլիս ամիսներին Երևան քաղաքի «Մալաթիա» երկրապահ ջոկատի հետ մասնակցել է ԼՂՀ-ի ինքնապաշտպանությանը:

1994-ի դեկտեմբեր ամսին, Սուրբ Ստեփանոս Նախավկայի տոնին, Արաբառյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանի ձեռամբ, ստացել է ուրարակիր դպրի աստիճան:

1997 թվականի փետրվար ամսին տեղափոխվել է Սյունյաց թեմ: Նույն թվականի հոկտեմբերի 26-ին, Գյուտ Խաչի տոնին, Տաթևի վանքում (Ս. Պողոս-Պետրոս եկեղեցի), Սյունյաց թեմի առաջնորդ Տ. Արքածամ եպիսկոպոս Մկրտչյանի ձեռամբ, օծվել է ֆահանա:

Ծառայությունը շարունակելու է Սյունյաց թեմի Մեղրի քաղաքում:

ԳՈՐԻՍԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻԶ ԵԿԵՂԵՑՈՒ ԽԱԶԻ ՕԾՈՒՄԸ

Երբեմնի հպոր և հոգևոր ծառայությամբ բեղմնավոր Հայ Առաքելական Եկեղեցին այսօր հոգևոր նոր վերապարթոնք է ապրում, շնորհիվ որի եռանդուն գործունեություն է ծավալել թե՛ ներքին և թե՛ արտաքին թեմերում: Ասվածի խոստն հավաստումն է Սյունյաց թեմում հոկտեմբերի 27-ին առաջնորդանիստ Գորիս քաղաքի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու վերջին քարի տեղադրումը և խաչի օծման արարողությունը:

Այս եկեղեցու կառուցման աշխատանքները սկսվել են շուրջ 100 տարի առաջ: Սակայն կոմունիստական կարգերի հաստատումից հետո աշխատանքները դադարեցվել էին, ապա այն դարձվել էր թանգարան: Մի քանի տարի առաջ եկեղեցին հանձնվեց Սյունյաց թեմին, և արդեն մեկ տարի է, ինչ սկսվել են կառուցումն ավարտին հասցնելու աշխատանքները, որոնք իրականացվում են Գորիս քաղաքի գլխավոր ճարտարապետ Սևադա Չարդարյանի նախագծի համաձայն և Սյունյաց թեմի առաջնորդ Տ. Աբրահամ եպս. Մկրտչյանի անմիջական հսկողությամբ: Ընորհիվ մի քանի ամիսների հետևողական աշխատանքի, հոկտեմբերի 27-ին արդեն դրվեց եկեղեցու վերջին քարը և կատարվեց խաչի օծումը:

Արարողության ներկա էին տեղական իշխանությունների ներկայացուցիչները՝ գլխավորությամբ Գորիսի քաղաքապետ Սուրեն Խաչատրյանի, որն իր գործուն օժանդակությունն էր բերել կառուցման աշխատանքներին:

Ներկա էին նաև թեմի հոգևորականները, Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Պարթև քին. Աշուրյանը, Սյունյաց թեմի թեմական խորհրդի ատենապետ Արտաշես Հարությունյանը: Մեծաթիվ հավատավոր ժողովրդի ներկայությունը հույս էր ներշնչում եկեղեցի-ժողովուրդ կապի է՛լ ավելի սերտացմանը: Գորիսեցիները, ի հավաստումն իրենց նվիրվածության և ուրախության, երկաթյա խաչը ձեռքերի վրա տեղափոխեցին եկեղեցի:

Օծումը կատարվեց ձեռամբ Սրբազան Հոր: Հավարտ օծման, թեմական առաջնորդ Սրբազանն իր ուրախության խոսքն ասանց ժողովրդին, ապա հորդորեց այսուհետ է՛լ ավելի ջերմեռանդությամբ հաճախել եկեղեցի: Այնուհետև խաչը տեղադրվեց եկեղեցու գմբեթին:

ԸՆԴՈՒՆԵԼ ՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԼՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՍԵՆԱՏԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՅՅԵԼԵՑ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ. ԷԶՄԻԱԾՈՒՆ

Հոկտեմբերի 1-ին Մայր Աթոռ Սբ. Էջմիածին այցելեց Ռումինիայի Սենատի նախագահ Պետրե Ռումանի գլխավորած Սենատի պատվիրակությունը՝ ՀՀ ԱԺ-ի նախագահ Բարկեն Արարիցյանի ուղեկցությամբ: Պատվիրակության կազմում էին սենատորներ Կռուել Բոլանդիուն, Վասիլե Բյազան, Դորու Դալյան և Վարուժան Ոսկանյանը, որոնք ներկայացնում են նաև Ռումինիայի տարբեր կուսակցություններ:

Վեհափառ Հայրապետը քարժր գնահատեց Ռումինիայի և Հայաստանի միջև օրեցօր սերտացող ու զարգացող հարաբերությունները: Նորին Սրբությունը հույս հայտնեց, որ Ռումինիայի Սենատի և Հայաստանի ԱԺ-ի միջև կապը կտա իր գործնական արդյունքները երկու երկրների զարգացման ապարեզում:

Վեհափառ Հայրապետը մտաբերեց իր Ռումինիա կատարած այցը և Ռումինիայի Օրբոդոքս Նկեդեցու առաջնորդ Թեոկտիստ Պատրիարքի այցը Մայր Աթոռ Սբ. Էջմիածին:

Սենատի նախագահը հավաստիացրեց, որ երկու երկրների հարաբերությունները հետագայում ավելի կսերտանան: Պրն. Ռումանին միաժամանակ կարևորեց Նկեդեցիների դերը երկու ժողովուրդների բարոյական և հոգևոր տոկունությունն ամրապնդելու գործում:

Վեհափառ Հայրապետը հյուրերին նվերեց Էջմիածնի գանձերը պատկերող ալյում: Հանդիպման ավարտին Նորին Սրբության ուղեկցությամբ հյուրերը շրջեցին Վեհարանի բանգարանում:

ԱԳՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՇԵՐՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՆԵՐՆ ԱՅՅԵԼԵՑԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ. ԷԶՄԻԱԾՈՒՆ

Հոկտեմբերի 2-ին Մայր Աթոռ Սբ. Էջմիածինում Նորին Առաք Օծություն Տ.Տ. Գարեգին Ա Կաթողիկոսն ընդունեց Նրևանում կայացած ԱԳՀ երկրների Շինարարական աշխատանքների Փոխհամագործակցության Միջպետական Խորհրդի 7-րդ նիստի մասնակիցներին՝ Հայաստանի Քաղաքաշինության նախարար Ֆելիքս Փիրումյանի ուղեկցությամբ: Մասնակիցների թվում էին Ռուսաստանի Դաշնության նախարար, ՌԴ Պետշինի նախագահ Նիկոլ Բասինը, Բելառուսի Ճարտարապետության և շինարարության նախարար Վիկտոր

Վետրովը, Ուկրաինայի Շինարարության, ճարտարապետության և քնակարանային ճարտարապետության պետական կոմիտեի նախագահ Վլադիմիր Գուսակովը, որոնք մեծ ներդրում ունեն 1988 թ. երկրաշարժից հետո Հայաստանի ավերված քնակավայրերի վերականգնման աշխատանքներում: Հյուրերի թվում էին նաև համապատասխան նախարարությունների ղեկավարներ Վրաստանից, Տաջիկստանից, Ուզբեկստանից, Մոլդովայից, Ղազախստանից և ԱՊՀ այլ երկրներից:

Վեհափառ Հայրապետը բարձր գնահատեց Խորհրդի աշխատանքը, այն նկատելով իբրև ներդաշնակ մի միության արտահայտություն, կարևորեց ԱՊՀ երկրների միջև փոխհամագործակցության անհրաժեշտությունը:

Հանդիպման ընթացքում խոսվեց Հայաստանում բրիտանոնությունը որպես պետական կրոն հռչակման 1700-ամյա հոբելյանի, այդ առթիվ նրանում կառուցվող Մայր Տաճարի մասին:

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍԲ. ԷԶՄԻԱՇԽԻՆ

Հոկտեմբերի 3-ին Նորին Սր. Օծություն S.S. Գարեգին Ա Կաթողիկոսն ընդունեց Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեի 20 անդամներին:

Նրանց թվում էին հայաստանցիներ, ներկայացուցիչներ Ղարաբաղից, սփյուռքահայեր ԱՄՆ-ից, Լիբանանից, Կանադայից, Ֆրանսիայից, Շվեդիայից, Իրանից:

Կոմիտեի նախագահ Աշոտ Մելիք-Շահնազարյանը հայտնեց, որ նորաստեղծ այս կազմակերպության նպատակն է համախմբել աշխարհի բոլոր հայ մարզիկներին, նրանց մասնակցությամբ պարբերաբար կազմակերպել միջազգային մարզական մրցումներ, որոնցից առաջինը նախատեսվում է կազմակերպել 1999 թվականին, հաջորդը՝ 2001-ին, և այնուհետև՝ յուրաքանչյուր չորս տարին մեկ:

Վեհափառ Հայրապետը բարձր գնահատեց հայությանը միավորող այս գաղափարը, նկատելով այն ազգային գիտակցության ամրապնդման և ներանկախ Հայաստանի շուրջ սփյուռքահայության համախմբման միջոց:

Հանդիպման ավարտին Վեհափառ Հայրապետը կատարեց աղոթք և օրհնեց ողջունելի ձեռնարկը:

ՍԼՈՎԵՆԻԱՅԻ ԱՌԱՋԻՆ ԴԵՍՊԱՆՆ ԱՅՅԵԼԵՅ ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍԲ. ԷԶՄԻԱՇԽԻՆ

Հոկտեմբերի 4-ին Մայր Աթոռ Սր. Էջմիածին այցելեց Հայաստանում Սլովենիայի առաջին դեսպան Միհա Վրհունեցը:

Նորին Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոսը ողջունեց անկախ Սլովենիայի առաջին դեսպանի այցը հայոց հոգևոր կենտրոն: Զրույցի ընթացքում Վեհափառ Հայրապետը կարևորեց փոփոխ ազգերի համերաշխությունը:

Դեսպանը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց Սլովենիայի տնտեսական, ճարտարական ներկա իրավիճակը:

ԻՏԱԼԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍԲ. ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Հոկտեմբերի 8-ին Մայր Աթոռ Սբ. Էջմիածին այցելեց Իտալական Կառավարական պատվիրակությունը՝ Ռուսաստանի Դաշնությունում Իտալիայի արտակարգ և լիազոր դեսպան Հմանուելե Սկամակկա դել Մուրգո Է Դել Անյոնեի գլխավորությամբ: Պատվիրակության կազմում էին Ռուսաստանում Իտալիայի հյուպատոս Ջերարդո Կարանտե, Հայաստանում Իտալիայի թղթակից հյուպատոս Անտոնիո Մանտալոտե, Սկանսպեդ Կաստելլետտի ընկերության ներկայացուցիչ Էննիո Բարդելլին, Արտաքին առևտրի ինստիտուտի տնօրեն Ֆրանչեսկո Սերենին, Միլանի առևտրի տան ներկայացուցիչ Ջուզեպպե Լուիզին և ՖԻԱՏ ընկերության ներկայացուցիչ Ռիկարդո Կարանտե:

Նորին Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոսը հյուրերին ներկայացրեց Հայ Առաքելական Եկեղեցու ունեցած դերը հայ ժողովրդի հոգևոր, բարոյական, սոցիալական և տնտեսական կյանքի զարգացման գործում: Վեհափառ Հայրապետն ընդգծեց, որ ներկա ժամանակաշրջանը ոչ թե Եկեղեցիների մրցակցություն, այլ միասնական գործակցության շրջան է, ինչը և կոչվում է Էկումենիկ ոգի: «Դա նշանակում է, որ Եկեղեցիները միմյանց զորակցելու են առանց դավանաբանական տարբերությունների», - ասաց Վեհափառ Հայրապետը:

Հյուրերն իրենց հերթին Վեհափառ Հայրապետին ներկայացրեցին Իտալիայի՝ մասնավորապես իտալական ոչ կառավարական կազմակերպությունների կողմից Եկեղեցու միջոցով Հայաստանին արջակցություն ցուցաբերելու մի շարք ծրագրեր:

«ՋԻՆԻՇՅԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆՈՐ ՏՆՕՐԵՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Հոկտեմբերի 9-ին Մայր Աթոռ Սբ. Էջմիածին այցելեց «Ջինիշյան» ամերիկյան հիմնադրամի նախագահ գործադիր տնօրեն Դեյվիդ Նելսոնը՝ հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի տնօրեն Արմինե Ժամկոչյանի ուղեկցությամբ:

Գարեգին Ա Կաթողիկոսը հյուրերին ծանոթացրեց ընկերային ասպարեզում Հայ Առաքելական Եկեղեցու ներկայիս գործունեության հետ:

«Ջինիշյան» հիմնադրամը, որի խորհրդի անդամներ են Հայ Առաքելական, Ավետարանական և Կաթողիկե Եկեղեցիների ներկայացուցիչները, Հայաստանում իրականացնում է զարգացման ծրագրեր փափր բիզնեսի խթանման, հոգևոր դաստիարակության, առողջապահական, շինարարական և այլ մարզերում:

ՍԵՆԱՏՈՐ ՌՈԲԵՐՏ ԴՈՈՒԼԸ ԱՅՅԵԼԵՅ ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍԲ. ԷԶՄԻԱԾՆԻ

Հոկտեմբերի 14-ին Մայր Աթոռ Սբ. Էջմիածին այցելեց սենատոր Ռոբերտ Դուլլիի գլխավորած պատվիրակությունը: Պատվիրակության կազմում էին «Լինս» հիմնադրամի նախագահ Ջեյմս Ալջյանը, Միացյալ Հայկական Ֆոնդի գործադիր տնօրեն Հարութ Սասունյանը, սենատորի օգնական Ջոյս Քեմփելը, անձնական

բժշկի աղջիկը՝ Ալիս Քելիջանը, փաստաբաններ Հարթ Ֆրեյլիֆը և Մայքլ Գալսնբերը, հարկային հարցերով պատասխանատու Սյուզան Թեմփին:

Ամերիկյան պատվիրակությունը Հայաստան է ժամանել հայ գործարարներից տնտեսապես օժանդակելու նպատակով Քրեֆ Քրեֆոյանի կողմից 100 միլիոն ամերիկյան դոլլարի հիմնադրամի ստեղծման կապակցությամբ:

Նորին Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոսն իր երախտագիտությունն արտահայտեց Ամերիկայի կողմից Հայաստանին տրամադրված մարդասիրական օգնության համար: Միաժամանակ Վեհափառ Հայրապետը նշեց, որ ներկայումս առավել կարևորվում են զարգացման ծրագրերը, պատմեց Մայր Աթոռի կողմից իրականացվող նմանատիպ աշխատանքների մասին:

Ջրույցի ընթացքում Վեհափառ Հայրապետը խոսեց նաև աղետի գոտում իրականացվող աշխատանքների և դրանց հետ կապված խնդիրների մասին:

Անդրադառնալով խորհրդային իշխանության տարիներին տիրող անապատության մթնոլորտին, Նորին Սրբությունն ընդգծեց նաև ծավալված հոգևոր վերագարթոնքը, ներկայացրեց կրթության ոլորտին վերաբերող հարցեր:

Հանդիպման ավարտին հյուրերը շրջեցին Վեհաբանի թանգարանում:

Պատվիրակությանն ուղեկցում էին ԱՄՆ-ում Հայաստանի Հանրապետության դեսպան Ռուբեն Շուգարյանը և Հայաստանի Արտաֆին գործերի փոխնախարար Արմեն Բայրուրեթյանը:

ՄԱՋԻԴ ԱՐՈՒ ՍԱԼԵՀՆ ԱՅՅԵԼԵՅ ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍԲ. ԷԶՄԻԱԾԻՆ

Հոկտեմբերի 15-ին Մայր Աթոռ Սր. Էջմիածին այցելեց Սիրիայի Արաբական Հանրապետության Արտաֆին գործերի փոխնախարար Մաջիդ Արու Ասլեհը՝ Հայաստանում Սիրիայի Արաբական Հանրապետության գործերի ժամանակավոր հավատարմատար Համեդ Հասանի ուղեկցությամբ:

Նորին Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոսը, վերհիշելով Սիրիայում ապրած իր տարիները, նշեց, որ Հայոց նշեռնից հետո Սիրիան ու Լիբանանը դարձան վերապրող հայ ժողովրդի վերածնության օրրանները:

Վեհափառ Հայրապետը բարձր գնահատեց նորանկախ Հայաստանի և Սիրիայի Արաբական Հանրապետության միջև եղած սերտ հարաբերությունները՝ շեշտելով, որ նկեղեցին նույնպես իր բաժինը կրերի այդ հարաբերությունների զարգացման գործում:

«ԷԶԻԴԻՆԱՆԱ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐՆ ԱՅՅԵԼԵՅԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍԲ. ԷԶՄԻԱԾԻՆ

Հոկտեմբերի 17-ին Մայր Աթոռ Սր. Էջմիածին այցելեցին եզդիների «Էզդիդիսանա» հասարակական-ֆաղափական նորաստեղծ կազմակերպության ղեկավարները՝ Հայաստանի եզդիների հոգևոր խորհրդի նախագահ Հասան Հասանյանի ուղեկցությամբ: Կազմակերպության նախագահ Սիարանդ Բաֆոյանը Նորին Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոսին ներկայացրեց կազմակերպության խնդիրներն ու նպատակները՝ նշելով, որ դրանք ուղղվելու են Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացմանը: Պրն. Բաֆոյանն ընդգծեց, որ Հայաստանը

միակ երկիրն է. որտեղ բնակվող շուրջ 50 հազար եզդիները կարողացել են ստեղծել բազմակերպություն, շարունակում են պահպանել նաև իրենց հավատքը:

Վեհափառ Հայրապետը, բարձր գնահատելով Հայաստանի զարգացմանն աջակցելու եզդիների ցանկությունը, իր օրհնությունը տվեց նորաստեղծ կազմակերպությանը՝ միաժամանակ նշելով, որ Հայաստանի բարգավաճումը կնպաստի նաև եզդիական համայնքի ծաղկմանն ու բարգավաճմանը:

ԼԻԲԱՆԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏ ՌԱՅԻԿ ՀԱՐԻՐԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ. ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Հոկտեմբերի 20-ին Մայր Աթոռ Սբ. Էջմիածին այցելեց Լիբանանի Հանրապետության վարչապետ Ռաֆիկ Հարիրիի գլխավորած պատվիրակությունը: Պատվիրակության կազմում էին Լիբանանի Ֆինանսական Հարցերի պետ. նախարար Ֆաուզ Սենիորան, Վարչական Բարենդորգումների պետնախարար Բշարա Մըրեբը, Գաղափարային և Գովառական հարցերի նախարար Հակոբ Դեմիրճյանը, Լիբանանի Խորհրդարանի հայազգի անդամներ մեթր Խաչիկ Պապիկյանը, մեթր Հակոբ Ջուխադարյանը, տիար Սեպուհ Հովանյանը, տիար Նուրի Ճերեճյանը, պրն. Աբրահամ Դեդեյանը:

Նորին Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոսը, վերհիշելով իր անակտիվ կապը Լիբանանի հետ, շեշտեց այն իրողությունը, որ դարասկզբին Մեծ եղեռնից փրկված հայությունը Լիբանոնում գտավ իր ապաստանը, հույս հայտնեց, որ երկու երկրների հարաբերությունները հետագայում ևս կշարունակեն զարգանալ: Ապա Վեհափառ Հայրապետը բացատրեց, թե որքան ընդարձակ ու ծանր պարտականությունների առաջ է գտնվում Ամենայն Հայոց Կաթողիկոսության պատասխանատվությունը ստանձնելուց այս կողմ, անցնող շուրջ երեք տարիների ընթացքում: Նորին Սրբությունը ներկայացրեց Սբ. Էջմիածնի դերն ու տեղը ողջ հայության կյանքում:

Պրն. Հարիրին գոհունակությամբ ներկայացրեց Հայաստանի վարչապետի հետ ունեցած բանակցությունների արդյունքները և հավաստեց, որ դրանք կնպաստեն Լիբանան-Հայաստան հետագա բարեկամության ամրապնդմանը:

Լիբանանի վարչապետը բարձր գնահատեց նաև լիբանանահայության դերը իր երկրի հասարակական, տնտեսական և մշակութային կյանքում, ինչի արտահայտությունն է պաշտոնական պատվիրակության կազմում հայազգի մեծաթիվ անդամների ներկայությունը:

Հանդիպման ավարտին փոխանակվեցին նվերներ, հյուրերը շրջեցին Վեհարանի թանգարանում:

ՈՒՐՈՒԳՎԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՓՈՆՆԱՆԱՐԱՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ. ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Հոկտեմբերի 20-ին, ուշ երեկոյան, Մայր Աթոռ Սբ. Էջմիածին այցելեց Ուրուգվայի Արտաքին գործերի փոխնախարար Կառլոս Պերես Դել Կաստիլիոն՝ Հայաստանում հավատարմագրված Ուրուգվայի արտակարգ և լիազոր դեսպան Պեդրո Խոսե Դոնդոյի ուղեկցությամբ /նստավայրը՝ Մոսկվա/:

Նորին Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոսը զրույցի ընթացքում նշեց, որ

Ուրուգվայը մեկն է այն բացառիկ պետություններից, որն իր գորակցությունն է հայտնել Հայ դատին, դեռևս 1961 թվականին պաշտոնապես ճանաչելով հայոց ցեղասպանությունը: Վեհափառ Հայրապետը հույս հայտնեց, որ Ուրուգվայը կդառնա նաև նորանկախ Հայաստանի դաշնակիցը:

Փոխնախարարը հավաստեց, որ, ի դեմս Ուրուգվայի, Հայաստանը կունենա իր գործակից քարեկամը: Վերջինիս վկայությունն է այն միջպետական պայմանագիրը, որ կկնքվի պրն. Կաստիլիոյի այցի ընթացքում: Փոխնախարարի այցի ընթացքում Երևանում կրացվի Ուրուգվայի անունը կրող հրապարակը:

ԻՐԱՆԻ ՊԱՀԱՊԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ. ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Հոկտեմբերի 20-ին Մայր Աթոռ Սբ. Էջմիածին այցելեց Իրանի Իսլամական Հանրապետության Պահապան խորհրդի նախագահ Նորին գերազանցություն Այաթոլլահ Ահմադ Ջանաթի գլխավորած պատվիրակությունը՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի նախագահ Գաֆիկ Հարությունյանի ուղեկցությամբ:

Նորին Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոսը, ողջունելով Նորին Գերազանցության առաջին այցը հայոց հոգևոր կենտրոն, այն դիտեց իբրև երկու պետությունների միջև փոխհարաբերությունների զարգացման մի նոր փայլ, ինչը իր նպաստը կրերի միմյանց գորավիզ կանգնելու և տարածաշրջանում խաղաղության ամրապնդման գործին:

Այաթոլլահ Ահմադ Ջանաթը իր գոհունակությունն արտահայտեց այն հոգևոր վերազարթոնքի համար, որ ապրում է Հայաստանը խորհրդային կարգերի փլուզումից հետո, հույս հայտնեց, որ միջկրոնական երկխոսությունը կշարունակվի նաև Բրիստոնյա-իսլամ կրոնների միջև՝ ընդդեմ աշխարհում տարածվող քաղաքական և չարիքի:

Վեհափառ Հայրապետը փաստեց, որ Հայ Առաքելական Եկեղեցին միշտ էլ եղել է միջեկեղեցական երկխոսությունների ջատագովը, իսկ Երևանում վերականգնվող Կապույտ Մզկիթը կդառնա Բրիստոնյա-իսլամ երկխոսության կենտրոններից մեկը:

Իրանական պատվիրակության կազմում էին նաև Իրանի Իսլամական Հանրապետության Պահապան խորհրդի անդամ պրն. Ալիզադեհ և Իրանի ԱԳՆ ԱԳՀ երկրների առաջին վարչության պետ Հոսեին Նարագիան:

Հանդիպման ավարտին Վեհափառ Հայրապետը իրանցիկ հյուրերին նվիրեց «Իրան-Հայաստան. ոսկի կամուրջներ» ալբոմը, նրանց հետ շրջեց Վեհարանի թանգարանում:

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ՆԵՐԱՅԱՑՈՒՅԻՉԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ. ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Հոկտեմբերի 21-ին Մայր Աթոռ Սբ. Էջմիածին այցելեց գերմանական Կարմիր խաչի ներկայացուցիչ Գերհարդ Մայերը: Նորին Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոսին փոխանցելով գերմանական Կարմիր խաչի նախագահ՝ Բադեն-Վյուրտեմբերգի արքայազն Լյուդվիգի ողջույնը, պրն. Մայերը հայտնեց, որ այս

տարի ևս ձմեռան ամիսներին իրենց կողմից կիրականացվի «Գթության խոհանոց» կոլլեկտիվ թարեգործական ծրագիրը, որի ընթացքում հայաստանցի շատ ծերեր ու չճավորներ կապառնվեն տաք սնունդով:

Վեհափառ Հայրապետը քարձա գնահատեց պրն. Մայերի մարդասիրական ձեռնարկը: Միաժամանակ կարևորելով զարգացման ծրագրերը, Նորին Սրբությունը պատմեց Հայ Առաքելական եկեղեցու կողմից իրականացվող նմանատիպ ծրագրերի մասին, որոնք հնարավորություն են տալիս մարդկանց ոտքի կանգնել՝ ապավինելով սեփական ուժերին:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՍԵՄԻՆԱՐԻ ՄԱՍՆԱԿԻՅՆԵՐԸ ՄԱՅՐ ԱՔՈՒ ՍՐ. ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Հոկտեմբերի 24-ին Հայաստանի Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանի ուղեկցությամբ Մայր Աթոռ Սր. Էջմիածին այցելեցին Սահմանադրական դատարանների 2-րդ միջազգային սեմինարի մասնակիցները՝ սահմանադրական դատարանների նախագահներ և դատավորներ Ռուսաստանից, Բելառուսից, Ուկրաինայից, Ղազախստանից, Տաջիկստանից, Մոլդովայից, Վրաստանից, Լատվիայից, Սլովակիայից, Խորվաթիայից, Իտալիայից, Լեհաստանից, Բելգիայից, Ավստրիայից:

«Դուք քացառիկ դեք եք հատկացնում մարդու իրավունքների պաշտպանությանը, և սեմինարի առարկան էլ նույնն էր», – շնորհակալություն հայտնելով ընդունելության համար ասաց պրն. Հարությունյանը:

Ողջունելով հյուրերին, Նորին Սրբություն Գարեգին Ա կաթողիկոսը նշեց, որ Հայ եկեղեցու 1700-ամյա պատմության մեջ աննախադեպ է, երբ Հայոց Մայր Աթոռն ընդունում է իրավական մարզի ներկայացուցիչներին:

«Այսօր մենք շատ հենք խոսում իրավունքների մասին, բայց չենք խոսում պարտականությունների մասին: Մեր միասնական գործը պիտի լինի ներդաշնակել իրավունքը և պարտականությունը», – ասաց Վեհափառ Հայրապետը՝ շեշտելով եկեղեցու և իրավական մարմինների միջև համագործակցության անհրաժեշտությունը, ինչը և ներդաշնակություն կստեղծի իրավունքների և պարտականությունների միջև:

Վեհափառ Հայրապետը հյուրերին ներկայացրեց Մայր Աթոռ Սր. Էջմիածնի պատմությունը՝ նշելով, որ դարեր շարունակ այն, գտնվելով օտար բռնակալների լծի տակ, չի կարողացել ունենալ իր օրենքները: «Այսօր, սակայն, մենք ձեռք ենք բերել մեր անկախությունը», – ասաց Վեհափառ Հայրապետը:

Ընդունելության համար Վեհափառ Հայրապետին իրենց երախտիքը հայտնեցին Ռուսաստանի, Ուկրաինայի և Խորվաթիայի սահմանադրական դատարանների նախագահները:

Հանդիպմանը ներկա էին Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին արք. Ներսիսյանը, Արմավիրի թեմի առաջնորդ Տ. Ասողիկ եպս. Արիստակեսյանը, Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպս. Զուլյանը, Ուկրաինայի թեմի առաջնորդ Տ. Նաթան եպս. Հովհաննիսյանը: Հանդիպման ավարտին հյուրերը շրջեցին Վեհափառ թանգարանում: Տեղի ունեցավ պատշաճ հյուրասիրություն:

ԵՎՐԱՍԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՒ ՄԲ. ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Հոկտեմբերի 24-ին Մայր Աթոռ Սր. Էջմիածին այցելեց Եվրասխորհրդարանի խորհրդարանական վեհաժողովի և մարդու իրավունքների հարցերի ենթահանձնաժողովի պատվիրակությունը՝ ենթահանձնաժողովի նախագահ Լիդի Էռի /Լյուխեմբուրգ/ գլխավորությամբ:

Նորին Սրբություն Գարգին Ա Կաթողիկոսը հյուրերին ներկայացրեց Հայ Եկեղեցու դիրքորոշումը կրոնի ազատության, ինչպես նաև Հայաստանում ընդունված համապատասխան օրենքի նկատմամբ:

Պատասխանելով հյուրերի հարցերին, Վեհափառ Հայրապետը նշեց, որ Հայոց Եկեղեցին հարգում և մեծապես գնահատում է խղճի ազատությունը, որը Քրիստոսի Ավետարանի կարևորագույն ուսմունքներից մեկն է: Վեհափառ Հայրապետը միաժամանակ նշեց, որ կրոնական ազատությունը հաճախ չարաշահվում է որոշ օտար ֆարոգիչների և կազմակերպությունների կողմից, որոնք նյութական առավելություններով են ներկայացնում իրենց կրոնական համոզումները, ինչը հակասում է ազատության մասին քրիստոնեական ըմբռնումներին: «Քրիստոնեական առաքելությունը ոչ քրիստոնյաներին քրիստոնյա դարձնելն է, և ոչ թե մեկ կրոնական կազմակերպությունից մեկ այլ կրոնական կազմակերպությանը դարձնելը: Մեր ժողովրդի համար մի տեսակ անարգանք է լսել օտար ֆարոգիչների, որոնք գալիս են դրսից ու հայտարարում, թե դուք՝ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին ավելի քան 17 դարերից ի վեր սխալ է հասկացել Քրիստոսի հավատքը, և հիմա, պետք է որ դառնաք Ենոկայի վկա կամ աղվեսնոստ: Ավելի քան 1700 տարիներ մեր հայրերը տվել են իրենց կյանքը այդ հավատքի համար, իրենց մարտիրոսական արյունով են գրել իրենց քրիստոնեական պատմությունը», - անց Վեհափառ Հայրապետը: Նորին Սրբությունը նշեց, որ այսօր հայ ժողովուրդը հավատքի վերակենդանացման կարիք ունի, որին խոչընդոտում են դրսի ֆարոգիչները:

Ջրույցի ընթացքում Վեհափառ Հայրապետը անդրադարձավ նաև դարաքաղյան խնդրին՝ ընդգծելով, որ հակամարտությունը կրոնական հիմք չունի, և պետք է հարգվեն մարդու իրավունքները Ղարաբաղում:

Պատվիրակության կազմում էին նաև ներկայացուցիչներ Շվեդիայից, Թուրքիայից, Լեհաստանից, Բելգիայից, Իտալիայից, Նիդեռլանդներից, Ֆրանսիայից:

ՍԻՐԻԱՅԻ ԴԵՍՊԱՆՆ ԱՅՅԵԼԵՅ ՄԱՅՐ ԱԹՈՒ ՄԲ. ԷԶՄԻԱԾԻՆ

Հոկտեմբերի 31-ին Նորին Սրբություն Գարգին Ա Կաթողիկոսը Մայր Աթոռ Սր. Էջմիածնում ընդունեց Հայաստանում Սիրիայի Արաքական Հանրապետության գործերի ժամանակավոր հավատարմատար Համեդ Հասանին:

Ջրույցի ընթացքում շոշափվեցին Հայաստանի և Սիրիայի միջև հարաբերությունների զարգացմանը վերաբերող հարցեր: Վեհափառ Հայրապետը երախտագիտությամբ վերբիշխեց, որ Հայոց Մեծ եղեռնից հետո հայ ժողովրդի շատ զավակներ հանգրվան գտան Սիրիայում, մեկ անգամ ևս հաստատեց, որ Սիրիան հայերի համար կամա ամենասիրելի երկրներից մեկը:

Պրն. Համեդ Հասանը վստահեցրեց, որ երկու երկրների տնտեսական և մշակութային կապերի ամրապնդմանը նոր թափ է հաղորդվում:

Հանդիպման ավարտին պրն. Համեդ Հասանը Վեհափառ Հայրապետին նվիրեց գեղազարդ մի սեղան:

ՄՈՍԿՈՎԱՅՆ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ. ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

